

Անրև .
332

1/94



+

—

2004

1997

Սերբեր
332



ՐԱՓՓԻԻ „ԿԱՅԾԵՐԸ“

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

«Духъ анализа и изслѣдованія
— духъ нашего времени.

Теперь все подлежитъ критикѣ
даже самая критика».

Бѣлинскій.

Հրատարակեց

ՍԷՅԵԱԳ՝ ՄԷՐԻՐԵԱՆՅ՝

ԲԱԳՈՒ

ՏՊԱՐԱՆ ՎՈԼՉԿԻՆԻ

1884

Կառավարիչ տպարանի թաղէս Տէր-Մեքայէլեանց:

Дозволено Цензурою. Тифлисъ, 16-го Декабря 1883 года.



332-2004

10173-58

15331

ԿԱԹՈՂԻԿՈՍԵԿԱՆ

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ

Համախոյ թեմական պատուիրակին

Պ. ՍԱՐԳԻՍ ՏԵՐ-ՄԻԻԲԱՅԷԼԵԱՆ

ՎԱՐՇԱՄԵԱՆՑԻՆ

Մեկնաանկեղծ յարգանք

ՆՈՒԲԵՐՈՒՄԷ

ՀՐԱՏԱՐԵԱԿՈՒՄԷ

Ողորմած Տէր

Պ. Սարգիս Վարչամեանց:

Ներկայ հրատարակութիւնս Ձեր համակրելի անուան նուիրելով բաղդաւոր եմ, որ առիթ ունիմ մեծարել ու պատուել այն բարձր վստահութիւնը և հաւատարմութիւնը, որ իմ և Ձեր հայրենի—Շամախայ թեմի հայ հասարակութիւնը տածել է դէպի Ձեզ, յանձնելով Ձեր ողջամտութեան կաթողիկոսական ընտրութեան թեմական պատկամաւորի վսեմ պաշտօնը: Սա ինքն ըստ ինքեան բաւականին ապացոյց է, թէ որքան անհուն սիրով սիրում և նախանձախնդիր էք տեպի Հայ ազգային Սուրբ Եկեղեցւոյ, զիտէք նորա անցեալը և ճանաչում էք նորա վէճ սկզբունքները և էական շահերը:

Մի ընտիր աշխատութիւն, որ պաշտպանում է համազգային այդ հինաւանդ հաստատութեան նուիրական սկզբունքները մարդորսական խաբէութիւնից և ցնորական հարուածներից, Ձեր բարի և անբիծ անուան նուիրելը իմ սրբազան պարտականութիւնն համարեցի:

Ուստի խոնարհաբար խնդրեմ չ'մերժել իմ անկեղծ յարգանացս հաւաստիքը, որով

Մնամ խորին յարգանք
Սէյեադ Մեղրումեան Ամիրեանց:

ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐԻՆ:

Ենցեալ տարի «Մեղու Հայաստանի» լրագրի գլխաւոր աշխատակից պ. Հայկունին՝ մի շարք յօդուածներ գրեց պ. Բաֆֆիի «կայծեր» վէպի առթիւ: Եյդ յօդուածներն, զոնեա որքան մեզ յայտնի է, մտադիր սիրով և հետաքրքրութեամբ կարդացվում էին: Ափսոս միայն, որ «Մեղուի» №№-ների ընդհատմամբ՝ պ. Հայկունու յօդուածների տպաւորութիւնը, առաւել կամ՝ նուազ, սառչում էր: Հատերը ափսոսում էին, որ յիշեալ յօդուածներն միանուագ կարդալու առիթից զրկուած են: Ընթերցող հասարակութեան այդ իրաւացի պահանջը լցուցանելու նպատակաւ՝ մենք, պ. Հայկունուց նախապէս արտօնութիւն ստանալով, ահա՝ հրատարակում ենք յիշեալ յօդուածներն առանձին գրքոյկով:

Մենք բոլորովին հեռու ենք որ և է շահախնդրական նպատակից և մեզ բաղդաւոր կը համարենք, եթէ տպագրութեան ծախքն, որ այժմ մեր գրպանիցն ենք անում, ձեռք բերելից յետոյ, մնացեալ գրքերն կարողանանք հեղինակին իրան յանձնել, իբրև մի համեստ նուէր մեր կողմից:

Պ. Հայկունու առաջին յօդուածն տպուեցաւ

«Մեղուի» 1883 թ. 31, 32, 33, 34, 35 36, 37 և 39 №№-ներում: Երկրորդը՝ 88 և 90-ներում: Սա մի պատասխան էր, որ պ. Հայկունին տուեց պ. Աֆի յօդուածին, տպուած «Մշակի» նոյն տարուայ 118 և 119 №№-ներում: Պ. Հայկունու երրորդ յօդուածը տպուեցաւ «Մեղուի» 104, 105, 106, 107, 108, 109, 112, 113, 115 և 117 №№-ներում: Այս ընդարձակ յօդուածն էլ հեղինակի «Երկրորդ պատասխանն» էր պ. Փաւստոսի յօդուածին՝ տպուած «Մշակի» 141, 142, 143, 144, 145, 146, 148 և 150 №№-ներում:

Հրատարակել Սեյեադ Աֆեանց:

19 Վեդեմբերի, 1883 թ.

Բաբու.



Ծանօթութիւն: Խոնարհաբար խնդրում ենք ներողութիւն մեր յարգելի բաժանորդներէց, որ չկարողացանք նոյա անուն ու ազգանունները տպել մեր հրատարակած գրքոյի վերջին երեսներում շատ տեղերէց բաժանորդութեանը ուշ ստանալու պատճառաւ:

Հրատարակել:

Մտերիմ բարեկամ

Սիրելի Սեյեադ Աֆեանց: (*)

Այլընդին փոստով ստացուած «Մեղուի» 117 №-ի մէջ Հայկունին աւարտելով իւր պատասխանները, հրաժեշտ էր տուել: Չեմ կարծում, որ նա ուժասպառ եղաւ: Նա ամենամեծ ջանքով և բարեխղճութեամբ հաւաքել է այն նիւթերը, որոնք հարկաւոր էին Բաֆֆի «Վայժերը» բնութեան մաքրող բովից անց կացնելու համար: Աւելին մեզ չընթացաւ գրաբնական պայմանների մէջ անհնար է պահանջել:

Երևի մեր գրականական ասպարէզը առ ժամանակ թափուր կ'մնայ՝ մինչև նոր Փաւստոսների երևան գալը: Օգուտ քաղենք այս հանգամանքից և համար ու հաշիւ տանք, թէ ինչ տպաւորութեան տակ թողնեց մեզ Հայկունին իւր մատենախօսութիւնով և ինչ տեսակ մամուլներ յղանալու առիթ եղաւ:

Չգիտեմ իմ բարեկամները արդեօք իմ նման հետաքրքրութեամբ հետեւում էին այս պայքարին: Արդեօք նորա ևս այս գրուածի իմաստը ամբողջութեամբ ըմբռնելու և նրա արժանիքը գնահատելու համար՝ իրաւախօս մարդի նման բարձրանում էին նախապաշարմունքների հօրիզոնից:

Ես առանձին մտադրութեամբ լսում էի Հայկունի ձայնը: Նորա պատասխանները ինձ առանձին բաւականու-

(*) Պարոն Հայկունու ներկայ մատենախօսութեան առթիւ պատիւ ունեցանք ստանալ բազմաթիւ խրախուսական նամակներ այլ և այլ տեղերէց, որոնցից միմիայն արժան համարեցինք տպագրել այս տեղ մեր յարգելի բարեկամ Բաֆի պ. Մ. Ուրամեանցի նամակը, որպէս երկրորդ յառաջան, որը թէ իւր բովանդակութեամբ և թէ իւր յայտնած արժանքնախնդրութեամբ կարող է ամեն մի բանասէր հայի հետաքրքրութիւնը շարժել:

Հրատարակել:

Թիւն էին տալիս, — նոքա բանաւոր էին և արդարացի, մանաւանդ պատճառաբանական սահմանները և ծննդաբանական կարգը կարող եմ ասել, բոլորովին ազատ էին սոփեստական սեթևեթութիւններից և կամահաճ մեկնութիւններից, ենթադրութիւններից: Հայկունին իրաւունք ունէր ասելու, որ նորա խօսքը ճշգրիտ պատմութեան ձայնն է. իսկ զգացմունքը՝ ժողովուրդի խիղճը: Նորա ամեն մէկ պատասխանով, կարծես թէ՛ ես ազատ շունչ էի քաշում. կարծես թէ՛ ես ազատ վումէի մի անհաճոյ ծանրութիւնից, որի տակ մարդի միտքը տալու մէջ, զգացմունքը ընդարմանում և խիղճը հեծելով տողորում է:

Նրբէք իմ խիղճը ոչ մի տեսակ չարամիտ, կամ թեթևամիտ զրուածից այնպէս վերաւորված չ'էր՝ ինչպէս Բաֆֆիի «Այսծեր»-ից: Մեր սրտին անբուժելի ցաւ էր, որ Բաֆֆիի գողտրիկ գրչի նման մի ճարտար գրիչ, որ շատ տեսակ կատարելութիւն ունէր ժողովուրդը բեղմնաւոր ընթերցասիրութեան վարժեցնելով՝ գիտակցական կեանքի յանգուցանելու, — շարժվում է անմիտ և անիմաստ տէնդէնցիաների համար, շարժվում է՝ եղծելով և աղաւաղելով . . . :

Հատերը ասացին՝ թէ նրա գրչին ուժ տուողը հայրենասիրական եռանդն է: Պեղեցի՜կ. բայց ինչ արիութիւն, եթէ հայրենասիրական եռանդը պարուրումն ցնորքների և զառանցանքների տէնդէնցիաներ, որոնք չեն կարող արդարանալ ոչ պատմութեան փաստերով, ոչ փիլիսոփայութեան սահմաններով, ոչ կուլտուրայի պահանջներով և ոչ ևս քրիստոնէական մարդասիրութեան անունով, Բաֆֆին ծափահարումէ ռամկամիտ ամբոխի խօստացած բռնակալութեան: Նա տողորված է այս սիրով այն աստիճան, որ պատրաստ է ամեն ըոպէ եղծել, հարուածել այն, ինչ որ մարդկային բանականութիւնը դարերի ընթացքում ստեղծել է այդ բռնակալութիւնը սանձելու համար . . . :

Արդեօք խիստ չէ նորան աքացել մի հիմնարկութեան,

որի ջատագովը Մանդակունիներն են և Հնորհալիի նման՝ Ներսէսները: Խիստ չէ արդեօք առակ նշաւակի դնել մի դասակարգ՝ որ կարողացել է ծնել Պեղծիանի նման մի ամիրայ: Արդեօք փոքր ինչ աւել յարգանք, փոքր ինչ աւել զգուշութիւն, և փոքր ինչ աւել իրաւաստհոլութիւն հարկաւոր չ'էր սոցա պատմական նշանակութիւնը սահմանելու և որոշելու ժամանակ: Միթէ կարելի է գեղարուեստական ըստեղծվածների վերայից՝ անյաջող պարագաների շնորհքով նստած փոշին ամեն տեսակ քուռչով սրբել:

Բանականութեան այն պատգամներն են իրագործելի, որոնք սրտի ու խղճի կողմից քաջալերութիւն կտեսնեն: Որքան մոլութիւններ առաքինութեան դիմակ ունին, որով ռամիկը, ամբոխը գայթակղվում է . . . : Չկարծեմ, որ մենք Բաֆֆիից պակաս ցանկացող ենք, որ ժողովուրդը աւելորդապաշտութիւններից և սնոտիահաւատութիւնից ձեռք վեր առնէ, քանի որ այդ ժողովուրդը նոցա պատճառով չի կարողանում առաջանալ ինչպէս հարկն է: Բայց սոցա և կենդանի ու ջերմեռանդ հաւատ արծարծող Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ ինչ առնչութիւն կայ: Չէ որ Մանդակունիները մեզանից հարկաւոր տարիներ առաջ այդ բաների դէմ մաքառում էին:

Աւելորդ է իմ կողմից նամակիս մէջ երկարաբանել այն ամեն կէտերի վերայ, քանի որ Հայկունին մանրակրկիտ խնամքով բննել ու զննել է: Արդա՛ նորից, բայց կարգաւ միանվագ և անընդհատ ուշադրութեամբ, որ այս անաչառ զրուածը բոլորովին պարզ ու հասկանալի լինի: Որքան գեղեցիկ ու օգտաւէտ կ'լինէր աճող սերունդի համար՝ եթէ այդ «Այսծերի» առիթով Հայկունիի գրածի բոլոր կտորները՝ ի մի ժողովելով, ամբողջաբար, առանձին տետրակով՝ ընթերցողի ձեռք տրուէր: Չեմ վարանում ասելու, որ ամբոխի գիտակցութեան այս ծառայութիւն անողը պիտի աշխատէր անշուշտ այդ գրուածի մի քանի խորտուբուրդերը սրբազրելու,

որոնք թէև զայրացած «սրտի յաւելուածներ» են, բայց վա-
յելչութեան կանոնների զանցաւութիւն պիտի համարվին և
գրուածի արժանաւորութեան փաստն: Ամեն ժամանակ և ա-
մեն տեղ թափանցիկ ակնարկները անձնականութեան դէմ
առաւել վիրաւորիչ են՝ բան թէ Աշտարակցու կամ Ղարա-
բաղցու հեղեղուկ ու ճարտար հայհոյանքը . . . : Ալեկնէին
յաւելուածները, որոնք օտար են բանականութեան պայքարին,
Հայկունիի մատենախօսութեան արժանաւորութիւնը ըստ
ամենայնի յարմար կհամարէինք Աղեղէի խօսքերով որոշելու
«Աւ. ահա՛ պարզաբան լուսաւորութիւն՝ դիւրատար ի յական-
ջըս ամենեցուն» :

Աւերջացնումեմ նամակս մի մաքով՝ որ սկզբից կամե-
նում էի բարեկամներիս պարզել: Հայկունիի մատենախօսու-
թիւնը մեզ համար թող աւելորդ պարծենկոտութեան պատ-
ճառ չը լինի: Բնդհակառակը դա մի տեսակ նախատինք ու
առականք է մեզ համար . . . : Արբ որ այս գրուածքը ա-
ռանձին կտպուի և մեր մշտակայ կարդալու դիր կդառնայ,
նա անշուշտ պիտի յիշեցնէ մեր աններելի տղիտութիւնը:
Ապագայ սերունդը այդ գիրքը վկայ պիտի բերէ հաստատե-
լու համար՝ թէ որքան մենք տգէտ էինք՝ տասնեկիսներորդ
դարի վերջերում ազգային պատմութեան և հայրենագիտու-
թեան դպրութեան մէջ . . . : Մեր այս տղիտութիւնը այն-
քան մեծ էր, որ առանց պատասխանատուութեան երկիւղի
կարելի էր նորանից օգուտ քաղել ամեն տեսակ անմիտ, ան-
հեթեթ և փեսասկար մտքեր ու զաղափարներ տարածելու
ժողովրդի մէջ: Արդեօք այս տղիտութեան մէջ չէր Բաթ-
ֆիի ոյժը, որ ամենաճարպիկ սովետութեամբ եղծում է
պատմութիւնը, աղաւաղում է նորա իմաստը, նենգում է
փաստերը, այլանդալում է բնաւորութիւնները, պատճառը
հետեանքի հետ, պատահականը մշտականի հետ խառնում և
արտուղութիւնը որպէս կանոն ու սահման հրատարակում:

Յիշեցէք նորա նկարագրած պատկերներից մինը, որ վե-

րաբերում էր ս. Արուսաղէմի վանուց միաբանութեան պատ-
մական անցեալին: Ինչ տեսակ եղծանելի ներկերով նկարա-
գրուած էր այս պատկերը և որնքան յանդուգն յանձնապաս-
տանութեամբ, որ նենգութիւնը անպատեհ և անիմանալի
կ'մնայ . . . :

Աս առանց երկիւղի դրօշմում էր այդ պատկերի ճշ-
տութիւնը Հաննէ պատմագրի վաւերացուցիչ կնիքով, — լաւ
իմանալով՝ որ այսօրվայ հայր ոչ միայն աչքով տեսած չէ
այդ նշանաւոր պատմական յիշատակարանը, գուցէ և կարդա-
ցած չէ Չամչեանի մէջ գորանից չափերաներով դուրս բեր-
ված կտորը: Ի. հարկէ այնքան ևս մեծ կարեւորութիւն չկար
իմանալու, թէ ինչի համար էր այդ Հաննէի մէջ նկարա-
գրված Օրթա—գիւղի ազգային ժողովը և ինչ նպատակի
համար. բաւական էր կարդալ Չամչեանի մէջ առաջ բեր-
ուած կտորը, որ իմացուէր՝ թէ Մելիքզադէի համար սեւը
սպիտակ է, սպիտակը սև:

Բաւական է: Աշխատեցէք սիրել ազգային պատմութիւնը,
հայրենագիտութիւնը, ազգային դպրութիւնը: Աս Ձեզ հա-
մար ժողովել եմ ինչ որ հարկաւոր էր այս ուսումը հեշ-
տացնելու համար: Իմ վկայն է ընթերցարանի ցուցակը, ես
ինձ զօրկեցի Ձեզ համար:

Յուսով եմ, որ բարեկամներիս շրջանում կարդալով նա-
մակս՝ կ'յիշէք զես ի բարին և կ'ներէք

Ձեր մտերիմ ու բարեացակամ բարեկամ
Բժ. Արամեանցին:

19 Վեպրէ. 1883 թ.

ԲՅՈՒՆՊՐՈՄԻՍԱ:

(Արտատպած «Մեղու Հայաստանի» լրագրից:)

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻԻՆ:

Հէքէ'ած, հէքէ'ած, պապ'ըս.
Ղաշխա քուռակը տակըս,
Սերուն հարսը գաւակըս,
Պարկով գաթան շալակըս,
Մէկ հարսին պագնեմ
Մէկ գաթան խածեմ:

Ժողովրդ. հեւե'նի նախնային:

Պարսկաստանի մի զիւղի բնակիչ «Հայրապետի տղայ Սահակը» Ֆերրաշների և վաշխառու հաջի բաբայի պահանջ ու տանջանքներից հարկադրուելով ճամբայ ելաւ դէպի Ս. Պօլիս, այնտեղ փող աշխատելու համար: Ճանապարհին, Լըզուրումում, Սահակին սպանեցին: Խեղճ զոհին ընտանիքը, կինը-Նիգարը, աղջկեքը—Մարիամն ու Սաթաղը և տղան—Ֆահրատը (որի բերանով խօսում է, «Վայժերի» հեղինակը) իրանց ձեռքի աշխատանքով մի փոքր ժամանակ զիմադրեցին աղքատութեան: Բայց երբ հաջի Բաբան նրանց ձեռքից խլեց հայրենի տնակը, Սահակի այրին, իրան որբերի հետ չուեց զնաց Վեօհնայ—Շահար բաղաբը, Սալմաստում: Վեօհնայ—Շահարում կենում էր Նիգարի հայրը իրան բաղմաթիւ և ամուսնացրած որդիկներով, որոնք զենագործ-

ներ էին: Նիգարի հայրը Վեօհնայ—Շահարում ամենքից յարգուած էր դադա (հայր *) պատուաւոր տիտղոսով:

Ղադան աղջկանը լաւ չընդունեց: Իրան ընդարձակ տան մէջ դադան—Նիգարին և սրա որբերին—մի խրճիթ—տան անպէտք իրեղէններ պահելու մասը—միմիայն շնորհեց: Որբերի ապրուստի, հագուստ ու կապուստի հոգսը առաջուան նման Նիգարի վրայ մընաց էլի: Իրան սիրական աղջկան հետ այդ չափ անգուլթ կերպով վարվելու դադան պատճառ ունէր—Նիգարը մարդու գնացած էր հօր կամքին հակառակ: Թէեւ նեղութիւններով, Սահակի ընտանիքը էլի ապրում էր: Ժամանակ առ ժամանակ այդ թշուառներին օգնում էր—իրան Մարօ աղջկայ ձեռքով—որսորդ Ավօն, որը Վեօհնայ—Շահարում մի եկաւոր փախստական էր: Բացի Մարօյից որսորդ Ավօն ունէր նաև մի տնակալուչ կին—Խաթունը—մի ծառայ—Սըհէն—և մի որդեգիր—Հասօն:

Տասը տարեկան Փահրատը Վեօհնայ Շահարում յաճախում էր Տէր-Թօղիկի դպրոցը, ուր կային 40 մանուկներ: Ղլանցից Կարօն, Ասլանը, «էշի փալան» Հասօն, և «սատանի եղունգ» Սադօն մի օր թողին դպրոցը և փախան: Մնացածներն հետ Փահրատը երկար տարիներ Տէր-Թօղիկի «դժողբում» (դժողբ) տանջում էր: Մի անգամ, Ջատիկի ճրագալոյցի օրը, Փահրատը չը կարողանալով մի օրում անդիր անել «Ղանիէլի գիրքը» —ինչպէս այդ պահանջում էր «մանկավարժ քահանան» —վերջինիս կողմից պատժուեցաւ:

*) Դադա մեծակ հայր չէ նշանակում, այլ և հանձարեղ, խմատուն—օրինակ տառնակն աշըղ—դադա:

Տէր-Թօղիկը իրան տան ակոռումը բանդարից Փահրատին: Արկար ժամեր այդտեղ մնալով մանուկ Փահրատի վրայ մի տեսակ ժամանակաւոր կատաղութիւն ու խելակարութիւն եկաւ, բայց ինչ կարող էր անել: Տէր-Թօղիկը ակոռի դուռը պինդ կողպած էր:

Տէր-Թօղիկը մի աղջիկ ունէր. անունը Սօնա: Սօնան մի առանձին և փոխադարձ համակրութիւն ու սէր ունէր դէպի Փահրատը: Սօնան բաց արաւ ակոռի դուռը և Փահրատին աղատեց: Բանդից դուրս գալով Փահրատը գնաց Սօլա գետի մօտ և ուղում էր խեղդուիլ: Յանկարծ մի ձեռք բռնեց նրան: Ղա Կարօն էր, որ Ասլանի և Սադօյի հետ 12 տարի առաջ Տէր-Թօղիկի «դժողբից» փախած էր:

Կարօն վեր առաւ Փահրատին տարաւ դէպի քաղաքից «քառորդ մղոն հեռաւորութեամբ» աւերակների մի կանգուն մնացած մինարէթը (աշտարակ): Զը մոռանամ, ընթերցող, բեղ ասել, որ Փահրատը, որ այժմ պատանի է, իրան մանկութեան օրերում որսորդ Ավօյի մօտ երթեկեկելով, բաւական վարժուած էր գէնք գործածելումը և ձի հեծնելումը: Մինարէթում Փահրատը տեսաւ նախկին ընկերներին, Ասլանին և Սադօին, նմանապէս և երկու Ջէյթունցի հայերին—Սուրադին և Ջալլադին: Որսի մսից պատրաստած կերակուրը ուտելից և զինի լաւ կոնծելուց յետոյ, մինարէթի բնակիչները բնեցան:

Առաւօտուն երբ Փահրատը զարթեցաւ, Սուրադն ու Ջալլադը չը կային, իսկ միւսները դեռ ևս ննջում էին: Նրանց արեխներն ցեխերից երևում էր որ գիշերը ման ևն եկել և ո գիտէ թէ ինչ բաներ արել: Ընկերների բնած լի-

ներուցը օգուտ քաղելով Պահրատը սկսեց աւերակները հետազօտել: Մի ստորերկրեայ անցքում Պահրատը տեսաւ «մի քանի գաղտնի պահեստներ և խորին մթերանոցներ, որոց մէջ կային զէնքերի զանազան տեսակներ, ձիաների թամբեր իրանց պարագաներով, խուրջիներ լիքը զանազան բաներով, որոնք այնքան ծանր էին, կարծես ամբողջապէս լցուած լինէին մետաղներով: Մթերանոցներից մէկում Պահրատը տեսաւ նոյնպէս հրացանի փամփուշներ, զնդակների կապոցներ և վառօդ» (երես 137): Այդ «խորհրդաւոր ծածկապահութեան» (?) կշտից հեռանալով Պահրատը սկսեց զննել աւերակների միւս մասերը: Յանկարծ նրա ականջին զարկեց բուռի ձայնը: Պահրատը կռացաւ մի քար վերցրեց և ձգեց բուռի ձայնի լուծած կողմը, բայց (ոհ հրաշք և սոսկումն) յանկարծ մի աղամորդի ձիչ արձակեց: Փշտակների մէջ «կծկուել էր մի պառաւ կին, փաթաթուած մուգ—կապտադոյն սփածաններէ մէջ: Աինը մի այլանդակ կմախքի նման էր: Միակ կենդանութեան նշոյլը, որ նրկատվում էր թուխ դէմքի վրայ, էին զոյգ կրակոտ աչքերը, որոնք վառվում էին դիւական խորամանկութեամբ» (եր. 140): Այդ այլանդակ կմախքը, ընթերցող, վհուկ Սուսանն էր: Ահուկըն ու Պահրատը մօտեցան մէկմէկու. խօսեցան: Պահրատին Աարօյի տեղ ընդունելով վհուկ Սուսանը (լաւ վհուկ չէր, որ սխալուեց), սկսաւ մի քանի գաղտնիքներ բացանել: Այդ ժամանակ Աարօն էլ վրայ հասաւ: Սուսանը փոշմանեց իրան յիմարութեան վրայ: Ինչ և իցէ: Սուսանն ու Աարօն «առանձնացան մի կիսաւեր պատի ետեւի կողմը» և երկար խօսեցան: Արբ խօսակցութիւնը վերջացաւ, վհուկը յանկարծ» մի տեսակ ձայն արձակեց, որ ձիշտ նրման էր

բուռի ձայնին: Այդ ձայնի վերայ «մի փոքրիկ աղջիկ, խայտաճամուկ և ֆանդաստիքական հագուստներով, դուրս վազեց աւերակների միջեց, մօտեցաւ խօսողներին»: Աարօն զրկեց աղջկան և համբուրեց: Յետոյ «աւերակների այդ ոգիները» անյայտացան: «Այս երևոյթը այնքան յանկարծակի կերպով կատարուեցաւ, որ Պահրատը բոլորովին ապշած մնաց» (եր. 144—145 եւ էլ, ընթերցող, ապշած եմ):

Սուսանի և ֆանդաստիքական աղջկայ աներևութանալուց յետոյ Աարօն Պահրատին յայանեց, որ ինքը ընկերներով ուրիշ տեղ պէտք է գնան, ուստի Պահրատը լաւ կանի, եթէ դառնայ իւր մօր մօտ: Պահրատը չը համաձայնեցաւ: Պատանին կամեցաւ իրան ընկերներից չը բաժնուել խոստանալով, որ «խուլ կոյր գործիք կը լինի, անսիրտ առանց կամքի մեքենայ կը լինի» այն գաղտնի հիմարկութեան մէջ, որ Պարսկաստանում դեռ նոր էր կազմուել և կոչվում էր «Ֆարամուշխանայ» (եր. 149):

Տէր-Թօղիկի աշակերտը, այսպէս ուրեմն «Ֆարամուշխանայի» անդամ գրուեցաւ, ընթերցող:

Ժողովրդական առածը ասում է. «մատը լիկ իշուն, բեռմ արբեշում»:

Շարունակներ:

Մենք զիտենք, ընթերցող, որ Չէյթունցի Աւրադն ու Ջալադը մինարէթից վաղ առաւօտուն բացակայել էին: Հիմի, իրիգնապահին, նրանք եկան, և եկան չորս ձիերով: Աարօյի, Ասլանի և Սադոյի հետ Պահրատն էլ հեծան ձիերին և գնացին: Պահրատը, ինչ ասել կուզի, շորերը փոխած և սպառազինուած էր: Մեր կարիճները գնում էին որսորդ

Ավոյի խրճիթը, որ գտնուում էր «Վուշմանայ լեռների վրայ» : Հասան : Քանի տարիներին ի վեր որսորդ Ավոն Քեոհնայ—Շահարը թողած վերաբնակել էր Ա. գիւղը «Վուշմանայ լեռների վրայ» : Ավոն պարապում էր երկրագործութեամբ ու խաշնարածութեամբ : Բայց որսորդի նպատակը գիւղական այդ պարապմունքները չէին խկապէս, այլ կար մի ուրիշ նպատակ : Ավոն պատմական ծագում ունեցող մի անձն էր և իր սրտումը վրէժխնդրութիւն էր տածում դէպի իրան և հայրենիքի թշնամիները :

Որսորդ Ավոն Միր-Մարտոյի հինգ տանուտէրներին մէկն էր, ասում է Պահրատը : Իսկ Միր-Մարտոն պատկանում էր Ղարա-Մէլէքների ընտանիքին : Այդ ընտանիքի բաղդին էլ զարերի ընթացքում այնքան փոփոխութիւնների էր ենթարկուել, որքան փոփոխական և յեղյեղուկ եղել է Հայաստանի դրութիւնը (եր. 124) : Պարսիկներ, արաբացիք, մոնղոլներ և յոյներ եկան գրնացին Հայաստան, էլի եկան, էլի գրնացին և, ի թիւս այլոց, Ղարամէլիքների ցեղը անհետացրին : Բաղդի բերմամբ մնաց միմիայն Աարօն, որը մի քանի տարի Տէր-Թօղլիկի «դժոխքում» տանջուելից յետոյ, վերջապէս, իրան հօր տանուտիրոջ, որսորդ Ավոյի ձանկն ընկաւ : (եր. 115—131) : Այսինքն, ընթերցող, դժողբից ելաւ գեհեանը ընկաւ :

Շարունակներ : Որսորդը ուրեմն իրան գաղափարի իրագործման ետեւիցն էր ման գալիս միշտ, ինչպէս և Աարօն, Աւանը և Աագօն : Մըհէն հօ կար ու կար : Ավոյի խրճիթում հիւրերը կերան, խմեցին և ննջեցին :

Մենք գիտենք, ընթերցող, որ Պահրատը ծանօթ էր Մարոյին, որսորդ Ավոյի աղջկանը : Այժմ թէ Պահրատը և թէ Մարօն մեծացած են : Նրանց մէջ եղած ծանօթութիւնը,

տղայական համակրութիւնը, այժմ փոխարինուեցաւ սիրոյ :

Առաւօտուն, երբ Պահրատը զարթեցաւ, ընկերներին չը գտաւ այնտեղ : Նրանք Ավոյի հետ գնացած էին «Խա նա—Սօրի ձորը» որս անելու, Պահրատն ու Մարօն մնացին տանը : Սիրոյ թոթովանքներն սկսուեցան : Ի վերջոյ Մարօն Պահրատին նախաձառ բերեց, «որ բաղկանում էր սերից խառն մեղրի հետ», այսինքն այն կերակուրը, ընթերցող, որին հայեվար ասումեն մեղրած սեր : Յետոյ ձորի ձանապարհը ցոյց տալու համար Մարօն Պահրատին ուղեկցեց : Բաւական առաջ գնալուց յետոյ Մարօն յետ դարձաւ դէպի տուն : Բայց օրիորդը մի բարձր անդից ծածուկ դիտումէր իրան սիրականին, որը ձամբան կորցրեց : Այդ ժամանակ յանկարծ մի «ղաբան» (վարաղ) ելաւ Պահրատի առաջ : Անդանու հետ սկսուեցաւ կատաղի կռիւր : Պահրատի հրացանի առաջին գնդակը «թէկե դիպաւ իւր նպատակին, բայց հարուածը մահաբեր չ'եղաւ. նա անցաւ զաբանի աջ ոտքի աղդրից : Հրեշաւոր կենդանին, ամենեւին չ'զգալով իւր վէրքի ցաւը, դարձաւ դէպի ինձ (Պահրատը) : Յարձակմունքը այնքան շուտ եղաւ, որ նա ամենեւին միջոց չ'ը տուեց (ով կը տար, որ զաբանը տա) կրկին լցնել հրացանը : Ատաղի գաղանը, բարկացած, հրաբօրբօք աչքերով արդէն մօտեցել էր... ես մի կողմ ձգեցի հրացանը և պատուօնը, որ ձեռքիս ունէի. իմ պաշտպանութեան միակ գէնքը մնաց խէնջարս, որ նոյն ախնթարիթում խըրվեցաւ զաբանի կողքում : Նա արձակեց մի սարսափելի հաւաչանք, բայց դարձեալ չ'ը կորցրուց (վա՛հ, զաբանը ինչով պակաս է Տէր-Թօղլիկի աշակերտից) իւր զօրութիւնը (այսինքն ոյժը) : Նա (զաբանը) փորձ փորձեց դուրձ գնել իւր դուրս ցցուած ժանիքները, բայց հարուածն ան-

ցաւ անյաջող, որովհետեւ ես (Ֆահրատը) կայծակի արագութեամբ մի սաստիկ թռիչք (ПРЫЖОКЪ ?) գործեցի դէպի գաղանի գաւաղը, և նոյն ընդհանուր խենջարիս երկրորդ զարկը խիստ խորին կերպով անցաւ նրա փորի մէջ: Աս դեռ սարսափելի ընդդիմադրութեամբ պատերազմումէր: Այդ մահու և կեանքի զարհուրելի տակնապի միջոցին ինձանից ոչ այնքան հեռու, որոտաց մի հրացան. գնտակը անցաւ ուղղակի որսի գլխի մէջ. վիթխարին (վարաղի համար այս ածականը մի փոքր շուայլ է) մի քանի անգոր շարժումներ գործեց և (վերջապէս) զըլորվեցաւ գետին... Եւս (Ֆահրատը) յետ նայեցայ. տեսնում եմ Մարօն, հրացանը ձեռին, հեռու կանգնած, ժրպտումէր...» (եր. 186—187):

Իրավօ, բրավօ, օրիորդ Մարօ, Ղշմարիտ, որ ընթերցող, Ամերիկայի ամաղոնքաները մեր Մարօների առաջ «բէհէսաբ նամաղուլ են անում», Մարօն, ինչպէս էլ շուտ մօտեցաւ Ֆահրատին, նրա ձգած «պատրոնը գետնից վերջրեց, հրացանը լըրեց, դատարկեց և սպանեց» — «Եկի, տեսի, յաղթեցի»: Շարունակեմք:

Խանա-Սօրի որսորդները երևեցան: Մարօյի և Ֆահրատի քաջութիւնը Ավօն ինչ ասել կուզի, շատ գովեց: Եւ ոչ միայն գովեց, այլ և ջահիլներին օրհնեց ասելով. «դուք երկուսդ էլ արժան (արժանի) էք որսորդ Ավօյի որդիք կոչվելու» (եր. 158): Հօր այդ աշխարայ ակնարկութիւնը ջահիլների ապագայի մասին Ֆահրատի և Սադօյի մէջ «երկպառակութեան խնձոր» դարձաւ:

Ինչից դուրս եկաւ, որ Մարօյին տիրելու ցանկութիւն է ունեցել և «սատանի եղունգ» Սադօն Սրան ասում են, ընթերցող, կաթը փսրեցաւ: Տուն դառնալիս՝ պատանի

կտրիճների մէջ այդ փսրած կաթի համար կռիւ սկսուեցաւ: «Շուն, արջ, կատու» երկուստեք ասուած բառերին յաջորդեց Ֆահրատի «մերկայրած խենջարը»: Սարօն ու Ասլանը մէջ մտան և չը թոյլ տուն, որ շունն ու կատուն մէկմէկ «ձանկրուտեն», խածխծեն: Բարեբաղդաբար (ուղումէի ասել դիտմամբ) այդ խօսքերի ու խենջարների կռուի ժամանակ միլօրդ Ավօն և միլեդի Մարօն երիտասարդների առաջից գնումէին, բաւականին հեռաւորութեամբ, որպէսզի ոչ նրանց ձայները լսեն, ոչ խենջարները տեսնեն (192—193): Ստեղծան Հասօյի ազարակին: «Վիշերից բաւական անցել էր»: Ավօն և Մարօն գնացին իրանց տուն, իսկ միւսները մնացին Հասօյի ազարակում: Այնտեղ նրանք լաւ կերան, լաւ էլ կոնծեցին: Արծաբանութիւնը, ի հարկէ, առանց երգի չեղաւ: Թէ՛ solo և թէ՛ «խօրով» երգեր երգում էին (ափսոս, որ այդ երգերից ոչ մէկին էլ դուրս չէ բերած պ. Բաֆֆին): Խտալական առածը ասում է, ընթերցող, որ ձշմարտութիւնը գինու մէջն է: Եւս էլ ասում եմ, որ գինու մէջն է և հաշտութիւն, ռամիկների մէջ, իսկ լուսաւորեալների մէջ . . . ազգասիրութիւն, այսինքն ճառաբանութիւն: Պինու ազգեցութեան տակ Ֆահրատն ու Սադօն հաշտուեցան: Սարօն էլ «խիստ հանդարտ և ծանր եղանակով (արդեօք վառ ձայնով թէ չորրորդով) կարգաց մի փոքրիկ (այնքան փոքրիկ) ձառ» (եր. 197), որը միջադիր գրքում բռնումէ ամբողջ չորս ու կէս էջ: Սարօյի «խօսքերը, որոնք այնպէս ազդու և զօրեղ կերպով դուրս էին հոսվում, (հոսող խօսքեր?) մինչ այն աստիճան ներգործեցին Ֆահրատի վերայ, որ մինչև այսօր չէ մոռացել, թէ և այն օրից անցել է յիսուն տարի, այո, յիսուն տարի» (եր. 197):

Արօյի ճառը վերջացաւ: Մեր լօղի աղգասերները, ընթերցող, իրանց ձեռքի բաժակները երկիւղածութեամբ Ալօյի կենացը դատարկեցին և վեր ընկան քնեցին:

Պահրատի բունը չը տարաւ: Պատանին դուրս եկաւ և սկսաւ տաղաւարի շուրջը շրջել: Յետոյ երբ բունը եկաւ, մտաւ տաղաւարի մէջ և նոյնպէս քնեցաւ: Այդ գիշերը Պահրատը մի երազ տեսաւ: Սօլա գետի հեղեղատը յորդացել էր և ողողում ամեն բան, հայրենի տուն, աղգականներ ու բարեկամներ: Արօն, Ասլանը, Սադօն, Նիզարը, Մարիամն ու Մաթթաղը ջրի վերայ տարուբերվումէին: Վերջիններիս օգնելու համար Պահրատը ինքն իրան գետը ձգեց, բայց չը կարողացաւ իրան սիրելիներին փրկել: Յանկարծ, (ո՛հ այս յանկարծները) աղատարար հրեշտակների նման, Պահրատին օգնութեան հասան Մարօն և Սօնան, բայց արդէն ուշ էր: Խեղճ Պահրատը արդէն ընկըղմուած էր:

Պահրատը զարթեցաւ: Նրա կողքին կանգնած էր Արօն, որ լսել էր երազատեսի զառանցանքները: Արօն Պահրատին խորհուրդ տուեց առժամանակ, մինչև կազդուրուելը, որսորդի տանը մնալ, իսկ ինքը, Արօն, ընկերներով գնալու էին «ս. Բարդուղիմէոս առաքեալի վանքը մի գործի համար»: Պահրատը մնաց, միւսները գնացին:

Ընկերներին ճամբու դնելով Պահրատը այցելեց Հասոյի ագարակը: Այնտեղ նա լսեց «էշի փալանի» (Հասոյի) կարծիքները «աշխատանքի և հողի» մասին: (եր 210—220):

Յետոյ Փարամուշխանայի նորընտիր անդամը (Պահրատը) որսորդի տունը դարձաւ, և դարձաւ «մի նեղ շաւիղով»: Նա յոգնած էր և էլ մտաւանջուած էր: Սի «խումբ ծառերի» տակ

Պահրատը նստեց «ազատ շունչ քաշելու»: Յանկարծ (էլ՞ յանկարծ) մի ձայն լսուեցաւ: Պահրատը սոսկաց. տեսնում է ծառի բունի ետև կծկվել է մի կին: «Պատանան իւր բոլոր հրեշաւոր այլանդակութեամբ չէր կարող այնքան զարհուրել լինել, որպէս այն մռայլոտ կերպարանքը» (եր. 222): Այդ կինը, ընթերցող, մեր ծանօթ վհուկ Սուսանն էր: Մէկը մէկու մօտեցան Պահրատն ու Սուսանը և սկսան խօսել: «Նոյն ժամուն Սուսանը իւր նուրբ, շագանակի կեղևի դոյն ունեցող, շրթունքներից դուրս հնչեց (հնչեցրեց) մի օտարօտի ձայն, որ աւելի նման էր թռչունների ճլվլըրցին, և իսկոյն ոչ այնքան հեռու գտնված թռչների միջից լսելի եղաւ նոյնպիսի ձայն: Բոպէ չէր անցել, երբ այն տեղից դուրս վազեց փոքրիկ և խայտաճամուկ ու Փանդաստիբական աղջկը» — Հիւբբին, որին Արօն վաստկել էր Աղանստանի թէ Հերթի անապատում (եր. 223): Սուսանի առաջարկութեամբ Հիւբբին Պահրատի բաղդը և ապագան գուշակեց: Պուշակութեան ժամանակ «սիրուն» Հիւբբին սկսել էր իրան բերանիցը անդգոյշ խօսքեր թըռցնել: Այդ բանը ոչ Սուսանի սրտովն և ոչ էլ «Այծերի» հեղինակի կամքովը էր, ուստի վհուկը Հիւբբիի վրայ նեղացաւ և իսկոյն երկուսով միասին հեռացան, աներևութացան: Հիւբբիի գուշակութիւնները իրան բաղտի մասին, Հասոյի կարծիքները «աշխատանքի և հողի» մասին, Պահրատին միտքն ու սիրտը շատ շփոթեցին, այնպէս որ Տէր-Թօգիկի աշակերտը մնաց «պառկած սրբազան ծառերու հովանու ներքոյ, բայց չ'ուշացաւ բունը. նա վերջ տուեց իրան անհանգստութեանը» (եր. 228): — Պահրատը ուրեմն էլի քնեցաւ: Բարի գիշեր:

Երբ Պահրատը «զարթեցաւ արդէն գիշեր էր»: Պա-

տանին աչքերը շուռ տուեց դէպի «աստղազարդ երկինքը» :
 Աստղերի մէջ Փահրատը շատ անգամ տեսնում էր իրան սիրականների աչքերը, պատկերները և երբ հառաչում էր «*Մի, Սօնա, Մի, Սարօ*» — «ի՞նչ է, յանկարծ լսելի եղաւ մի ձայն և իմ (Փահրատի) առջև նկարվեցաւ մի պատկեր, որպէս կերպարանքը զիշերային ուրուականի: Մի սարսուռ վազեց բոլոր մարմնիս մէջ:— «*Նա եմ, Փահրատ*»:— «*Ա՛խ, Սարօ... Ա՛խ, Փահրատ*» :

Սիրահարները կրկին ուրեմն մէկմէկ դտան: «*Նրանք երկար ժամանակ խօսակցեցան, սիրախօսեցին, մէկմէկու ձեռքից բռնեցին, մէկմէկ զրկեցին—բայց... նրանք միմիայն մէկ զմէկ պաշտօնեցին (եր. 230—235):*

Վերջապէս ուշ զիշերով սիրահարները տուն հասան, իրիզնահաց կերան և քնեցան:

Փահրատը երբ առաւօտուն զարթեցաւ, «*գտնվում էր մի անսահման ուրախութեան մէջ*», որովհետեւ Սարօն սիրում էր նրան, ինքն էլ Սարօյին:

Այդ ժամանակ «*պատուհանից ներս ծագեց արեգական շողքը*», որը առիթ տուեց Փահրատին մի թեթեւ համեմատութիւն անել մտաւոր լոյսի և խաւարի հետ: Մի քիչ յետոյ պատուհանից ներս մտան «*ախտաբորբոք մի զոյգ ճընձղուկներ*»: Այդ երեւոյթն էլ ուրիշ մաքեր զարթեցրեց Փահրատի մէջ:

Մըհէն էլ, ընթերցող, այդ ժամանակ Փահրատի համար բերած կերակուրը անզգուշութեամբ թափեց. իրան տըրեխները ուտող շանն էլ սպանեց: Ուստի Սարօն նորից Փահրատի համար «*սեր ու կարագ*» բերեց: Սիրական-

ները էլի խօսքի բռնուեցան: Բանից դուրս եկաւ, որ Սարօյի մոլշտարիները թուով բաւական շատ են: *Պրանք են՝ Փահրատը, Սադօն և Մըհէն: Բայց Սարօն նախապատուութիւնը տալիս է Փահրատին, որովհետեւ «լաւ է նոր սատանան, քան հին քահանան» ասում էր օրիորդը (եր. 173): Վերջապէս օրը մթնեց, Փահրատը ընթրեց և ննջեց:*

«*Միւս աւուր երեկոյեան պահուն (որպիսի ճշտութիւն) ծերունի որսորդը, Ավօն տուն դարձաւ*»: «*Նա յայտնեց, «թէ մի անակնկալ դէպք առիթ տուեց տղերքին մի օրով յետ ընկնիլ այն դործից, որի պատճառով պէտք է գնային միտեղ (եր. 247): Այդ դէպքը, ընթերցող, հետեւեալն էր: Երբ Սարօն, Ասլանը և Սադօն Ավօյի հետ գնումէին դէպի Բարդուղիմէոս առաքելոյ վանքը «մի քանի կարևոր իրերի մասին խորհրդակցելու» . ճանապարհին «Հաբսթանու սարի» վերայ նրանք հանդիպեցան մի հայաբնակ գիւղի հովիւներին: Քուրդ աւազակները դրանց լաւ թակել, վերաւորել և հօտը ձեռքերիցը յափշտակել էին: Մեր կտրիճները հովիւներին և գիւղացիներին, դրանց թուլասրտութեան համար, մի լաւ յանդիմանելուց յետոյ, (Աստուած ողորմի Առիւծի հոգուն, յանկարծ իմ էլ միտս եկաւ նրա «УЧЕНЫЙ ПОВАРЬ»-ը) ընկան աւազակների ետքեիցը, մի կրճի մէջ սեղմեցին նրանց: Աւարը յետ առան, տարան հայ գիւղացիներին յանձնեցին, իսկ իրանք շարունակեցին իրանց ճանապարհը:*

Մի քանի ժամանակից յետոյ Ավօն Սարօյից մի նամակ ստացաւ, որը Փահրատը կարողացաւ պատահամբ կարդալ: Նամակի բովանդակութիւնը պարզաբանում էր մեր կտրիճների ներկայ և ապագայ գործունէութիւնը: Այդ նամակի զօրութեամբ Մըհէն գնաց Հոգուց վանքը, տեղական վանա-

հօր «հանգստացնելու» այսինքն սպանելու համար (վանահայրը դաւաճան է եղել)։ Ավօն գնաց եղեգների ցեղապետ Միր-Մասուկի մօտ բանակցելու։ Նամակումը Կարօն այս էլ էր գրում որսորդի տեղեկութեան համար, որ Ասլանը արդէն գնացած է Բաղէշի և Մուշի կողմերը, Սադօն Խնուս, Լէրզում և Խոյ։ Մուրադն ու Ջալադը Սօգաց և Սասնոյ կողմերը։ Ինքը Կարօն շտապում էր ճօլամերի ասորւոց Մար-հիմոն կաթուղիկոսի հետ տեսնուելու և դաշնակցելու համար. (եր. 321)։ (Մի ժամանակ պ. Ծերենցի Սուրէնն էլ գնաց Ասորեստանու թագուհու հետ դաշնակցելու (Թէոդորոս Ռուշտունու մէջ)։

Հօրը և Մըհէին ճանապարհ ձգելուց յետոյ Մարօն գնաց իրան սենեակը։ Մի քիչ յետոյ Պահրատն էլ մտաւ։ Երբ սիրահարները մէկգմէկ տեսան՝ Մարօն ասաց «մենք էլն մնացինք մինակ» ...— Հա, հոգեակ։

Սիրահարները այս տէմայով երկար սիրախօսեցին։

Մթնեց, Պահրատն էլի ննջեց։

Այդ սիրախօսութիւնների օրերից մէկում Պահրատը հանդիսատես եղաւ հայուհւոյ և բրդուհւոյ—Մարոյի և Գիւլի-Ճակատամարտերին և արիւնոտ կռիւներին։ Յետոյ Պահրատը որսորդի տան մէջ ծանօթացաւ Հասոյի կնոջ, Մարգարիտի և սրա Սալբի դստրիկի հետ։ Մարգարիտը փոքրիկ Սալբիի միջոցաւ խնդրում էր իրան տան հիւրից, Պահրատից, որ իրանց էլ, Մարոյի հետ ուխտ տանի ս. Աստուածամօր վանքը։ Այդ մասին բանակցութիւններ սկըսուեցան Պահրատի և Հասոյի մէջ։ Վերջինս զեջաւ։ Որսորդի և Հասոյի ընտանիքին իրան հետ վերցրած Պահրատը

նշանակած օրում գնաց ս. Աստուածամօր վանքը, ուր և հասան «շաբաթ աւուր երեկոյեան պահուն» : (որ ամսում և որ օրում)։

Հայերը ամեն կողմից ուխտի եկած էին։ Այն տեղ էին և Պահրատի մայրն ու քոյրերը, Տէր-Թօղիկը և Սօնան։ Տեսնուեցան, ուրախացան։ Վանքում յայտնուեցան և Ասլանը արեղայի ծըպտաց շորերով ևս և վհուկ Սուսանն ու Հիւբբին։ Պահրատը և Սօնան մէկգմէկու հետ rendez-vous նշանակեցին մի աղբիւրի մօտ, ուր Սօնան, նշանակեալ ժամանակից մի փոքր առաջ գալով, լօղանում էր արդէն, և ի հարկէ մերկ էր։ Պահրատը վրայ հասաւ։ Նա զմայլեցաւ օրիորդի տկոր մարմնոյ հրաշալիութիւնով։ Խորամանկ Մարօն այդ բանը տեսաւ և Պահրատից, ի հարկ է, շատ ցաւեցաւ։ Սօնան Պահրատին յայտնեց, որ հայ կորիճների գաղտնիքը յայտնուել է, թէ նրանց լրտեսում են։ Միւսնոյն բանը Պահրատին յայտնեց և Մարօն։ Բայց «խորհրդաւոր արեղան» Ասլանը, ինքը առաջուց ամեն բան զիտէր։ Նա մի Արդոս էր։ Վհուկը Պահրատին տարաւ սուտ արեղայի սուտ ձգնատեղին։ Ասլանը իրան դիմակը բաց արաւ և երկար «դատողութիւններ» (եր. 457—470) արաւ Պահրատի հետ։ Յետոյ Ասլանը բաշուեցաւ գնաց Վան բաղաբը, իսկ Պահրատը Մըհէի հետ գնացին եղեգների ցեղապետի մօտ, ուր էր և Կարօն։ Վերջինս եղեգների ցեղապետի հետ արդէն դաշնակցած պրծած էին և մի քանի հինաւուրց աշտարակներ ամրացնում էին։ Կարօն ունէր և ամբողջ Տակճահայաստանի բարոէզը, (չեմ կարծում թէ Արեւրթի գործարանից դուրս եկած)։ Յեղապետի կշից հայ կորիճները գնացին իրանց խորհրդակից մի ինչ որ «գիժ Տէր-Մեսրոպի տունը։ Այդտեղ էր և Ասլանը, որը հիմայ յայտնուեցաւ ինչպէս

Ամերիկայում ուսած մի լեզուագետ և բժշկապետ: Պատանի բժշկապետը հազաւ իրան եւրօպական շորերը, քիթը չեշմակով թամբեց, դեղօրէից արկղները ծառայի ձիուն բարձեց և ընկերների հետ ճանապարհ ընկան դէպի Վան, ուր և հասան գիշերայն» (եր. 522—538):

«Վայճերի» առաջին հատորը վերջացաւ.—երկրորդ հատորի բովանդակութիւնը յուսամ, ընթերցող, հիմի բեզ ևս յայտնի կը լինի, ինչպէս ինձ արդէն յայտնի է: Ի հարկէ ես չեմ կարող այժմեանից ըմբռնել մեր յարգելի հեղինակի ֆանթազիայի բոլոր ելեէջները, բայց ես ըմբռնում եմ վէպի գոնեա իրական, **РАЗВЯЗКА**-ն:

Այդ РАЗВЯЗКА-ն, իմ կարծիքով, պէտք է որ հեաւեայր լինի: **Ավօն**, **Սըհէն**, **Աարօն**, **Ասլանը** և **Սագօն** իրանց զաշնակիցներով պէտք է յարձակուին Վանայ բերդի վերայ և նրան պէտքէ տիրեն: Հայերից 70 հոգի վիրաւոր պէտք է ընկնին: Հայրենիքի այդ անձնազոհ կտրիճների համար «Սշակը», ինչ ասել կուզի, ստորագրութիւն կը բանայ և *finita comedia*:

Այսպէս թէ այնպէս, ընթերցող, իմ կարծիքները պ. Բաֆֆիի նոր աշխատութեան մասին, որ այսուհետեւ պիտի ասեմ, հասկանալի է, որ վերագրելի են միմիայն վէպի առաջին, արդէն հըրատարակուած, հատորին: Ամբողջ վէպի մասին, եթէ հարկ լինի, ես կը խօսիմ իւր ժամանակին: Եթէ դուրս եկաւ, որ ես սխալուած եմ, կարծիքներս յետո կը կոչեմ:

«Սեր վիպասանները երբեմն ձեռնարկում են այնպիսի կեանքին և երեւոյթին, որոնք ո՛չ թէ հիմնաւոր կերպով չեն ուսումնասիրել, այլ նաեւ չեն ճանաչում: Օրինակի յաղագաւ

պ. Բաֆֆիին մեզ խոստացել է Տաճկահայերի կեանքից «Վայճեր»: Եթէ ես չեմ սխալուում մեր բաղմաշխատ հեղինակը Տաճկահայերին ճանաչում է միմիայն լրագիրներից և մի քանի անկատար, անձիշտ գրքերից, գուցէ և մի քանի ծանօթներից, իսկ դոքա, իմ կարծիքով, երբէք բաւական չեն Տաճկահայերի կեանքից «Վայճեր» դուրս ցոլացնելու: Վայճ ասած բանը շատ նուրբ բան է, հեաւաբար կայծեր տեսնելու և դուրս բերելու համար պէտք է խորնրը, շատ խորնրը թափանցել...

Գուցէ այս դէպքում ես սխալուում եմ (և Աստուած տայ որ սխալուեմ), բայց եթէ ես սխալուում եմ պ. Բաֆֆիի վերաբերութեամբ, գուցէ չեմ սխալվում սիզբունքի ուղղութեան վերաբերութեամբ *) —այս ասացի ես մի օր, երբ «Վայճերի» մասին յայտարարութիւններ կարդացի լրագիրներում: Ուրախ եմ, որ յիշեալ աշխատութիւնը այժմ դրած է իմ սեղանի վրայ և ես առիթ ունիմ իմ ասածը հաստատելու, կամ նրան յետս կոչելու:

Գրքի երկրորդ հատորի հրատարակուած չը լինելը, ինձ համար, ինչպէս ասացի, մի առանձին, պիւտուր խոչընդոտ չէ կարող լինել, որովհետեւ «Վայճերի» վրայ ես մօտիկ եմ տալիս այսպէս: Տան հիմքը դրած է, պատերը վեր բաշած, կոուրը ծածկած—իսկապէս շինութիւնը պատրաստ է. մնում է պատերի ներքին մասերը ծեփել, սրբել, կահ-կարասիքը տեղաւորել և ներս մանելով սկսել ջահիլների հարսանիքը կատարել: Իսկ նրանց, որոնք այդ բաղդին չեն արժանանալ, նրանց էլ թողել, թէկուզ—ինչպէս Արսէն Թովսմասեանը գրում էր— «Սշակ» արքայիսկոպոսի ծխախաւարութեամբ:

*) Մեղու 1881 № 92.

332-2004
332-2004
332-2004



«Այսօրի վրայ նայել ինչպէս մի գեղարուեստական (բանաստեղծական) գրուածքի վրայ—դա նշանակում է ոչ մի գաղափար և ճաշակ չունենալ Պառնասի մուսաների ստեղծագործութիւնների մասին:

— Ինչի՞:

— Որովհետեւ «Այսօրի» հեղինակը «Խէնթի» հաւատարիմ հեղինակն է, իսկ պ. Բաֆֆիի այդ աշխատութիւնը ես մի օր անուանեցի «մի փառաւոր հեքեաթ» *): Արդարութիւնից չը շեղուած լինելու համար պ. Բաֆֆիի այս վերջին աշխատութեան վրայ ես աւելացնում եմ, ընթերցող, դոյն բաղդատական մասնիկը և ասում «Այսօրը» «մի փառաւորագոյն հեքեաթ» է:

— Ինչի՞:

— Որովհետեւ նրանում չը կայ կեանք, ոչ անցեալի, և ոչ էլ ներկայի: «Այսօրը» ոչ պատմական վէպ է, ոչ էլ ժամանակակից: Այլ նա մի վէպ, մի գրուածք է հայ-ապագայ կեանքից: «Այսօրը» — եթէ կարելի է այսպէս ասել — իբր մի ծրագիր է Տաճկահայերի ապագայ կեանքին, գործունէութեանը: Եւ որովհետեւ նա մի ծրագիր է, ուրեմն վէպ, գեղարուեստական գրուածք կոչուելու իրաւունք չունի, որովհետեւ գեղարուեստը գտնուում է ոչ թէ երեւակայական, ուսմանախիական, այլ իրական կեանքում ու աշխարհում:

Իայց, ընթերցող, այստեղ մի հարց է ծագում: արդե՞օք առանց անցեալի և ներկայի կարող է ապագայ լինել:

— Ի հարկէ ոչ. այդ իսկ պատճառով «Այսօրի» հեղինակը իրան աշխատութիւնում, ինչպէս մի վիպական գրու-

*) «Մեղու» 1881 № 183.

ածքում, երեւակայութեամբ դուրս է բերել թէ երկրորդական անձինք, գործողներ, որոնք թէև ուտում են, խմում են և ննջում հասարակ հայ մահականացուներիս նման, բայց իրանց գործերովն են գերազանցական, ապագայական:

Իմ ընդարձակ բաղդածքից ընթերցողս արդէն ծանօթ է «Այսօրում» գործող այդ անձնաւորութիւնների հետ: Հիմայ իմ կողմից փնտում է ընթերցողիս մի թեթեւ գաղափար տալ այդ անձնաւորութիւնների — եթէ կարելի է այսպէս ասել — ներքին մարդուն վերաբերութեամբ: Յօդուածս շատ չ'երկարացնելու համար, ես այդ բանը, ընթերցող, համեմատական կանոնով եմ անում:

Այսպէս, ընթերցող, «Այսօրի» ամենագլխաւոր գործողը — ասենք տիպը — որսորդ Ավօն, ոչ այլ ոք է, եթէ ոչ ա) պ. Աբովեանի Աղասին, բ) պ. Աղայեանցի Յարութիւնը, գ) պ. Պառլեանի Վարդը, զ) պ. Ներսէսի Թէոդորոս Ուշտունին, է) նոյն հեղինակի Լեւոնը «Թորոս Լեւոնի» մէջ), և զ) պ. Բաֆֆի իրան Մելիք-Մանսուրը, («Խէնթի» մէջ):

— «Պրօսէստ, պրօսէստ» — ամեն կողմից ձայներ եմ լսում. . . որսորդ Ավօն և ընկերութիւն . . .

— Սպասեցէք, սպասեցէք, պարոններ, ես զիտեմ, որ որսորդ Ավօն և ընկ. բացի Աղասի, Յարութիւն, Վարդ, Թէոդորոս Ուշտունի, Լեւոն, Մելիք-Մանսուր լինելուց, ուղում են լինել, և կարծես թէ են նաև մի . . . մի Միլօրդ, մի Ժ . . . օֆ . . . մի Վ . . . իչ մի Գ . . . ի et tutti quanti բայց «Այսօրի» վրայ ես առայժմ նայում եմ իբրեւ մի գեղարուեստական գրուածքի վրայ և ուրեմն չեմ կարող հայ մարդուն օտար մարդու հետ, հայ կեանքը օտար կեանքի հետ համեմատել . . .

— Պրօտէստ, պրօտէստ, ախր . . . մարդկութիւն . . .
համազգայնութիւն . . .

Այո՛, այո՛, այդ բաներից մի փոքրը ես ինքս էլ եմ հասկանում, բայց ես, ախր այն ժամանակ միմիայն կարող եմ օտարին, անծանօթին նմանել, երբ արդէն նման եմ իմ ծնողքին և իմ ազգականներին: Մարդկութիւնը, համազգայնութիւնը ախր մինակ մի մարդով, մի ազգով չի լինիլ, այլ շատ մարդիկներով ու շատ ազգերով, և եթէ չեն լինիլ ազգութիւններ, չի էլ լինի և համազգայնութիւն: Զը դիտեմ կարողացայ՝ արդեօք միտքս պարզել թէ ոչ, բայց ես շարունակում եմ:

Եթէ ուզումես, ընթերցող, պ. Բաֆֆի Մըհէին ճանաչել մաաբերիբ պ. Ներենցի Ատովմին (Թէոդորոս Ուշտունու մէջ): Եթէ ուզում ես Արօյի, Ասլանի և Սադոյի ովքեր լինելը իմանալ, երեակայիբ քեզ, բայց վերոյիշեալներից, նաև պ. Աղայեանի «վանքի ուսումնարանի» և «չօլի» հերոսներին (Յարութիւն և Մանուէլի մէջ): պ. Ներենցի Յովնան ու Գուրգինին (Նրկունքի մէջ) և նոյն ինքն պ. Բաֆֆի Վարդան ու Սալմանին (Խէնթի մէջ): Սարօ, Սօնա, Գիւլի—սոքա ոչ այլ ոք են, եթէ ոչ զանազան Ստեփան—Լալաներ, Մարջաններ ու Ջուլօններ (Խէնթի մէջ):

Պ. Բաֆֆի Տէր-Թօղիկը—դա Աղայեանցի Տէր-Մարկոսն է, այն զանազանութեամբ, որ Տէր-Մարկոսի համար, ես մի օր աւագ քահանայութիւն և ծաղկէ փիլոն կը ցանկայի *): Իսկ Տէր-Թօղիկի համար իմ կարծիքով, իրան հասարակ սև փիլոնն էլ հերիք է: Ավօի որդեգիր Հասօն—սա

*) Մեղու 1881 № 92.

պ. Ներենցի Յուսիկն է և այլն և այլն *):

Բայց «Այծերի» և մեր միւս վիպասանների այդ գործողների մէջ զանազանութիւն չը կայ միթէ:

— Լալան զանազանութիւնը անունների մէջն է, իսկ նպատակների և ձգտումների (ոչ գործունէութեան եղանակների) մէջ «Այծերում» գործողները է՛, որ աւելի սեթեթութուել ու պաճոճազարդուել են, է՛ որ շատ տրդեղացել և է՛ որ բոլորովին տկլոր մընացել: Եւ այդ շատ բնական է, որովհետև «Այծերի» գործողները իրական մարդիկ չեն, այլ վերացական, երեակայական: Նկարչի վըձինը դրանց աուել է ինչ գոյն որ ինքն է կամեցել, ոչ թէ ինչ գոյն որ պէտք էր տալ. նրա դէմ ո՞վ կարող է վիճել: Մի նկարիչ մի օր մի աքաղաղի պատկեր շինեց և շատ հաւանեց: Եւ որպէս զի մարդիկ այդ պատկերը տեսնելիս նրան ուրիշ թռչունի հետ չը շփոթեն, նկարիչը բարւոք համարեց իրան ձեռակերտի տակ խոշոր տառերով գրել «սա աքաղաղ է»: Այսպէս թէ այնպէս, ընթերցող, «Այծերի» ընթերցումից յետոյ իմ հանդէպ դուրս չեկաւ ոչ մի նոր տիպ, անձնաւորութիւն, այլ միևնոյն թռչուններ, միայն ոչ Հայաստանի, այլ օտար երկիրների թռչունների փետուրներով ծածկուած, միևնոյն երգեր, բայց հայկական խօսնէ-բառնէից արաբական և պարսկական նօթաների վերածած:

Ցաւում եմ, որ ձեռքիս տակ չունիմ պպ. Աբովեանի, Աղայեանի, Պաշեանի, Ներենցի և Բաֆֆի աշխատու-

*) Ամաչում եմ, բայց պէտք է խոստովանիմ պ. Բաֆֆի «Դաւիթ բէկին» ու «Խամսայի մեղքութիւնները» ես զեռ կարդացած չեմ: Զեմ պնդում, բայց հաւանական է, որ դրանց մէջ էլ համանման անձնաւորութիւններ լինեն:

Թիւնները, որոնցից դուրս հանած մըտքերով, պատկերներով ինձ աւելի շուտ կը յաջողէր առաջ տանել իմ համեմատութիւնը: Բայց յենով յիշողութեանս վրայ ես էլի մի քանի օրինակներ առաջ կը բերեմ:

Պառ հօ զիտես, ընթերցող, օրինակի համար, որ պպ. Ծերենցի Յովնանը և Բաֆֆիի Վարդանը որքան ճարպիկ որքան վեհանձն էին նոյն իսկ այն ժամանակ, երբ այդ բոլորովին աւելորդ էր: Այդպիսի վեհանձնողութիւններ մենք շատ անգամ տեսնում ենք և «Այծերի» գործողների մէջ:

Շատերից մի օրինակ: Մենք զիտենք, ընթերցող, որ Ալօն, Վարօն, Ասլանը և Սազօն Հաբստանու սարերի վրայ քրդերից յետ առան հայ զիւղացիների հօտը: Տեսնենք այդ բանը ինչպէս եղաւ: Պ. Բաֆֆին ասում է, որ հայ կտրիճների բռնած կիրճը շատ յարմար էր «աւելի քան յիսուն հոգի» աւազակներին ընդդիմադրելու համար: (Նիշտ մի այդպիսի կիրճ էլ նկարագրած ունի և պ. Ծերենց, ուր մի բոլոր հայ կտրիճներ հազարաւոր արաբացիներին ջախջախեցին:) Հաւատանք, ընթերցող, որ այդ այդպէս է: Պատահելով քրդերին հայ կտրիճները նախ սկըսում են բանակցել, բայց ստանում են մերժումն:

Այդ բանից նեղացած Վարօն «իրան հրացանի գնդակով նախ խփում է աւազակապետի գդակին, յետոյ ձիու աջ ա կ ա ն ջ ի ն: Ասլանը իրան հրացանի նպատակ ընտրում է (աւազակներից) մէկի մտրակը, որ վայր է ձգում (որ որին յարաբերականն է) առանց տիրոջ ձեռքը փասելու: Սազօն խփում և ձիու թամբի խաշին: Ալօն խիստ ճարպիկ կ'ըլլով թռցնում է մէկի նիզակի ծայրը»: Այնուհետև, դու, ես իմ պարօն, տեսնելով որ աւազակները չեն խոնարհում,

մեր կտրիճները սկսում են իրանց գնդակները «զիպցնել մէկի ձեռքին, միւսի ոտին, երրորդի ականջին, մի խօսքով մարմնի այն մասերին, որոնց վէրքը մահացուցիչ էր կարող լինել» (եր. 252): Տեսնում էք ընթերցող, ինչ աստիճան վեհանձնութիւն. բայց ես պարծենում եմ մեր կտրիճների ոչ այնքան վեհանձնութիւնով, որքան նրանով, որ եթէ Շիւլըրը լաւ նշան առնող մի Վիլհելմ—Տէլլ միմիայն ունէր, մեր պ. Բաֆֆին այդպիսներ թուով հինգ հոգի ունի: Ո՞նց է լօղի: Հապա այն որ մեր կտրիճները աւազակներից 4 ձի փոխ են առնում և խօսք տալով որ վերադարձեն և վերադարձնում էլ են—սա միթէ պակաս վեհանձնութիւն է:

«Խէնթի» մասին խօսելիս ես ասել էի որ զէպքերն ու արկածները այնտեղ հանդիպում են ոչ բնականաբար, այլ արուեստականաբար, թէ պ. Բաֆֆին զէպքեր և արկածներ է ստեղծում, կարծես զրպանիցն է հանում, այնժամանակ երբ իրան հարկաւոր են գալիս: Ասածներին ես այն ժամանակ փաստեր էլ առաջ բերած էի: «Այծերում» էլ պ. Բաֆֆին միւլենոյն պակասութիւնը ունի և, Աստուած իմ, որքան շատ և քանի՜, քանի՜:

Եհա մի երկու օրինակ:

Ֆահրաթը և Մարօն մէկմէկու հետ խօսում են և սկսում բացուել: Հեղինակի համար դեռ այդ բանը վաղ է, ուստի մէկ էլ տեսնում ես, զրոսում Մըհմէն սպանում է շանը, որպէսզի կենդանու կրնձկրնձոցի վրայ օրիորդը սենեակից դուրս թռչի (եր. 330): Ֆահրաթը զիշեր ժամանակ պտորաստում է զեան ընկնել, խեղդուել, մէկ էլ յանկարծ նրա կողքին կանգնած է լինում 12 տարիներից ի վեր անյայտացած դասաւանդներ Վարօն (եր. 85): Զը թողնելով որ Ֆահրաթը

ինքնիրան խեղդէ, Աարօն նրան վեր է առնում և տանում մինարէթը: Ղփշերը մոլթն է: Սեր գիշերաշրջիկներին ճանապարհ ցոյց տալու համար յանկարծ «հորիզոնի ծայրից երևում է լուսնի եղջերը» (եր. 86) և այլն:

Խէնթի մասին խօսելիս ասել էի, որ նրա հեղինակը իրան հերոսների ֆիզիքական ոյժերը հաւասարեցնում է Հերքիւէսների և Տորքերի ոյժերին: Պ. Բաֆֆին այդպէս է վարում և «Այծերի» միջին: Պահրատ մանուկը «գեի նման բռնած վայրենի մատակի բաշից մը րկի պէս պրտացնում էր մերկ և առանց սանձի ձիուն» (եր. 152:) Այս նախադասութիւնից ես պարզ չը հասկացայ թէ Պահրատը մըրկի պէս պտտացնում էր վայրենի մատակին թէ սանձարձակ ձիուն: Ինչ էլ որ լինի, աղբէր, էլի երևելի ոյժ ու քաջութիւն է): Սըհէի համար մի ահագին քարը, մի տաշեղ է: Սըհէն լախտի մի հարուածով ո՛չ միայն շան գլուխը ջախջախում է, այլ և կենդանու ուղեղը դուրս թափում (եր. 331): Տան և հինգ տարեկան Աարօն Թադոս-խալֆի, որը հեղինակի ասութեամբ մի երեսնամեայ Վողիաթ է, գլորում վայր է ձգում և վզին չոքած սկսում է խեղդել: Ուսումնարանի 40 հոգի աշակերտները վրայ են թափում և չեն կարողանում Վողիաթին թզուկի ձեռքից ազատել (եր. 113 — 114): Ղփշէի որ մի մանուկ մի գողիաթի յաղթել է, բայց ս. գրքի մանուկը յաղթութիւնը արաւ նախ պարսաքարով և ապա սուրով, իսկ «Այծերի» մանուկը իրան բնական ոյժով:

Սըհէն մանուկ է Ավոյի որսորդական վիրապը (թակարդը) և մէն մինակ սանձահարում ու դուրս քաշում այն տեղը կած կատաղի գաղաններին, լինին դրանք «գայլ, արջ, վագր, ինձ» այդ միւլենոյն է: Սըհէի միակ զէնքը իրան ոյժն ու ձեռ-

քի բալափշայ (գայլ) կոչուած գործիքն է: Այդ գործիքը ինձ ծանօթ է և, որքան ես զիտեմ, նրանով կարելի չէ սանձահարել կատաղած գաղանին, առանց կեանքը վտանգի մէջ դնելու: Իսկ Սըհէն վերապից միշտ անվնաս դուրս էր գալիս (եր. 50):

Յայտնի է, որ շատ եւրօպացիներ կատաղի գաղանների հետ խաղ են անում, բայց մինչև կենդանուն այդ աստիճան ընտելացնելը, նրանց քայլ առ քայլ վարժեցնում են, և առաւելապէս կենդանու մանուկ հասակիցը սկսած: Արդեօք պ. Բաֆֆին Պարսկաստանի աղուէս ու նապաստակներին վագրի և ինձի հետ չէ շփոթած:

Սի տեղ կարդացած էի, որ մի մարդ Անգլիայում կատաղի գաղաններին աչքերով մագնիսացնում է: Սի ուրիշ տեղում էլ կարդացած էի, որ Ս. Ղփշգոր Լուսաւորիչը և Վանիէլ մարդարէն իբր իրանց աչքերով մագնիսացնում էին վիրապի օձերին և գրի առիւծներին: Արդեօք պ. Բաֆֆիի Սըհէի աչքերը աւելի քան քալափշան չէին օգնում նրան: Այդ Սըհէի աչքերում էլ մագնիսական զօրութիւն չը կարարդեօք:

Ղալով Սըհէի «անասունների բնաւորութիւնը և նրանց սովորութիւնները այն աստիճան ուսումնասիրելուն, որ բաւական էր տեսնել նրանց թաթերի ձիւնի վրայ տպաւորված հետքերը, այնուհետեւ նա զիտէր, թէ ինչ անասուն է անցել, ո՞րտեղ կարելի էր գտնել նրան» (եր. 51), կ'ասեմ, որ դրա համար մի առանձին կարիք չը կայ անասունների բնաւորութիւնը և սովորութիւնները ուսումնասիրելու և Ղփշգորի վիճակները հացն էլ ձեռքերիցը խլելու, այլ հարկաւոր է այդ

կենդանիների ոտքերի ձեւը լաւ ճանաչել և ձիւնի վրայ թողած հետքերով նրան հետեւել: Այդ գիտէ ամենահասարակ որսորդն անգամ, այդ գիտէ գիւղացի մանուկն անգամ:

Ասել էի որ, պ. Բաֆֆին շատ աւելորդական և կրկնաբան է «Խէնթի» մէջ: «Վայճերի» մէջ համեմատաբար նա զերծ է այդ թերութիւնից: Վճեցէք 350 և 164 երեսները, որոնք զրիթէ բառացի կրկնութիւն են 334 և 41—43 երեսներին, և մի քանի թեթեւ «անկապ» կրկնութիւններ, և դուք միւսնոյն բանին, մտքին տասն անգամ չէք հանդիպել, ինչպէս «Խէնթում»:

Ասել էի, որ «Խէնթի» մէջ անբնականութիւններ, վերած մտքեր շատ կան: Այդ մասին «Վայճերիցն» էլ ահա մի քանի օրինակներ տամ:

Տէր-Թօղիկի 10—11 տարեկան աշակերտներ, Պահրատըն ու Ալօն, մէկգլխու հետ վիճում են: Ալօյի հայրը քաղաքի մէջ առաջին մարդն է համարվում: Արեւայի հայրը նրան մի նոր, մեծ գիւք է տուել, որ ուսումնարանում կարգայ և առաջին աշակերտը լինի:

— «Որպէս ինքը (Ալօյի հայրը) քաղաքի մէջ առաջին մարդն է» հեղնում է Պահրատը:

Աստուած ողորմի պ. Պաօշեանի 10—11 տարեկան Թորոս մանկան (Արուստածաղկի մէջ) հոգուն, նա էլ Պահրատի նման շատ անգամ այդպէս զօռ էր տալիս գլխուն:

Գիշերը վրայ է հասել: Պահրատը մէն մինակ մոլորուած է իրան անծանօթ և դազաններով լի ձորումը: Բնականապէս նա սկսում է յուսահատվել, բայց գիտէք ինչից:

— «Աս երկիւղ չունէի, ասում է Տէր-Թօղիկի աշակերտը,

որ գիշերը բացօթեայ կը մնամ լեռների մէջ, ես երկիւղ չունէի ոչ ցրտից և ոչ դազաններից: Աս ամօթ էի կրում: Իմ հպարտութիւնը տանջում էր ինձ: Աս (գարձեալ) ամօթ էի կրում Սարօից, որ այնպէս յիմարաբար վարվեցայ նրա ուղեցուցութեան (?) հետ» այսինքն նրա ցոյց տուած ճանապարհից շեղուեցայ: Աս (գարձեալ) ամօթ էի կրում ընկերներիցս, որոնք առաջին քայլից կը նկատէին իմ թուլութիւնը և իմ անընդունակութիւնը» (եր. 185): Այդ այդպէս լինելուց յետոյ և դուք, պ. Պահրատ, ապերախտութիւն և յանդգնութիւն ունիք ձեր ամեն մի քայլափոխում ծաղրել ձեզ կրթող Տէր-Թօղիկին, ծաղրել ձեր ընտանեկան կրթութիւնը: Արիւստից մէկը պ. Բաֆֆի. կամ ձեր Պահրատը սուտ է խօսում, կեղծում է, կամ նրան դաստիարակող ու կրթող տունն ու դպրոցը այնպէս չեն, ինչպէս դուք եք նկարագրում:

«Վայճերի» հեղինակը միշտ պնդում է որ հայի սիրտը «հաւի սիրտ է» իսկ քրդինը առիւծի: Շատ սիրուն: Բայց ահա մի հայ աքաղաղ (Պարօն) մէմֆիսակ 50 հոգի քուրդ աւազակներին հրամայում է տեղերիցը չը ժած գալ և այդ առիւծները «ընդունում են և» (Պարօյի) վերջին պայմանը» (եր. 253): Աթէ այդ ճշմարիտ է, այնժամանակ ո՞վ է հաւը, պ. Բաֆֆի, յիսուն քուրդը, թէ մի հայը: Վալաճօշ, պ. Բաֆֆի, դուստ քալաճօշ:

Ընթերցող, դու հօ մտաբերում ես «էշի փալան» Հասոյին:— «Պարօյը տանի նրան, հիմայ տուն ու տեղի տէր է դարձել, ցանք է անում, կնիկ ունի և ամէն տարի (ամէն տարի) երկու հատ ծնվում են» (եր. 156): Պարզ երևում է, ընթերցող, որ «էշի փալանի» կնիկն էլ խոզի ցե-

ղեց է եղել: Ինչ էլ որ լինի, Հասօն իրան երկրագործութեամբ, նրա կնիկն էլ իրան բաղմածնութեամբ, իմ կարծիքով, իրանց ազգին աւելի օգտակար ծառայութիւններ են անում քան նրանցից աւելի մեծ և ազգասէր մարդիկ, Աարօն և ընկ:

Օխստութի մասին ի՞նչ կարծիք ունիս, ընթերցող:— Բժիշկները ասում են որ նրանում նիկօսին կոչուած թոյնը կայ, որը շատ վատ, անասնորժ ազդեցութիւն է անում առաջին անգամ ծխողի վրայ: Պ. Բաֆֆին այդ կարծիքը չէ ընդունում: «Նա գտնում է, որ ծխատուր առաջին անգամին ծխելիս, ծխողին ակտորժելի, շատ դուր է գալիս (եր. 157):

Ահա թէ ինչի համար բոլոր Աւրօպայում ծխատուրի վրայ նոր-նոր տուրքեր են գալիս:

Օմրուդ տատը Աարօյին յայտնում է սրա հօր կտակը, ուխտը: Բաւական երկար և ոգևորուած կերպով խօսելից յետոյ՝ հիւանդ պառաւը վերջապէս «հոգին աւանդում է» որ սովորաբար նշանակում է մեռնել, բայց պ. Բաֆֆին այդ բառերը այլ կերպ է հասկացել: «Հոգին աւանդելից» յետոյ Օմրուդ տատը նորից շարունակում է գրեթէ մի ամբողջ երես խօսել և յետոյ վերջապէս «մեռնում է» (եր. 127—128): Այդպիսի յիմար բան չարաւ պ. Պռօշեանի «պառաւ տատը» երբ մի այդպիսի կտակ աւանդում էր «Առուածաղկի» մի գործող երիտասարդին, որին նոյնպէս դահեկութիւն արած էր պառաւը:

Սարքիզ Պօզան և Վօն Աարլոսը մեկգմէկու հետ տեսնուելիս իրանց մանկական ուխտերը յիշեցրին միմեանց: Այդպէս վարուեցան, ընթերցող, և Տէր-Թօղիկի աշակերտները:

— «Յիշում ես, Պահրատ, երբ մենք դեռ վարժատան մէջն էինք. շատ անգամ ասում էինք միմեանց, «մենք եղբայրներ ենք, մենք պէտք է միասին աշխատենք և միասին վայելենք մեր վաստակը» ասում էր Աարօն:

— «Յիշում եմ բոլորը, պատասխանում էր Պահրատը, ինչ որ ուխտեցինք դեռ դպրոցում եղած ժամանակ: Բայց դու, երեւի, մոռացել ես մի բան. մենք երգուեցինք և օգնել միմեանց ամեն փորձանքների մէջ մեր կեանքում» (եր. 147):

Եւ դուք, պ. Բաֆֆի, դարձեալ դատապարտում էք Տէր-Թօղիկի դպրոցին:

Մենք զիտենք, ընթերցող, որ Պահրատի հայրը Արզուրումնում սպանուեցաւ: Այ տեսէք այդ ցաւալի բանը ո՞նց տեղի ունեցաւ: Սահակը երբ անց էր կենում փողոցների մէկում «յանկարծ (յանկարծ միշտ յանկարծ) մի թիւրք յարձակվում է նրա վերայ և դաշոյնի մի հարուածով կրտորում նրա պարանոցը» — Վիտէք ինչի: «Նրա համար, որ այդ թիւրքը մի ուրիշ թիւրքի հետ զրազ է եկել թէ «իրան դաշոյնը աւելի սուր է քան ընկերինը»: Առաջին թիւրքը փորձել է և զրազը տարել, որ էր «մի ֆինջան դահուայ նարգիլայով»:

Հաւաքվում է ամբոխը և գովում առաջին թիւրքի դաշոյնի սրութիւնը, իսկ «գեւավուրի պարանոցի թուլութիւնը»: «Մի ամբողջ օր զիտկը մնում է հրապարակի վերայ»: Հայերը զիշերը գալիս են և ծածուկ տանում թաղում: (եր. 33—34): Եւ այդպիսի բաները, ընթերցող, ասում է պ. Բաֆֆին, թէ սովորական դէպքեր էին Արզուրումնում (Արդեօք ո՞ր դարում ու թուականում): Վերջին մտքի հետ,

նա մանաւանդ բոլորովին անկարելի է համաձայնել, բայց պ. Բաֆֆին այդպէս ասում է, որպէս զի իրան վէպը սուտ չը դուրս գայ, և էլ աւելի էֆէքտով դուրս գայ: Ախր պ. Բաֆֆին կեանքը, իրականութիւնը իրան վէպերին է յարմարցնում և ոչ թէ իրան վէպերը իրականութեանը: Այդպէս էլ հարկաւոր է: Ճիշտ այդպէս էլ ախր վարուում է, ընթերցող, և պ. Բաֆֆին Պրոմէթէոսի աստուածային հուրը ներշնչող պ. Ղարիբը Երծրունին, երբ գրոտում ու մրոտում է իրան «Մշակում»: Բայց մենք շարունակենք, ընթերցող:

Լրդուրումի այդ և այդպիսի գրադները տեսնելով էր, ահա, որ Սարոն խօսեցաւ իրան ոգևորուած ճառը, մի ճառ, որը յիսուն տարուց յետոյ էլ Ֆահրատը յիշում էր, դեռ ևս չէր մոռացել:

Եթէ, ընթերցող, ուզումես իմանալ թէ ո՞նց է պատահել, որ «Վայճերի» հեղինակին ևս չէ մոռացել այդ ճառը, պիտի գիտենաս, որ այդպիսի հարիւրաւոր և հազարաւոր ճառեր զեղում ու վիտում են, մինչև անգամ մեր լրագրութիւնում: Աս մինչև անգամ յիշում եմ մի այդպիսի ճառ, որը իբրև թղթակցութիւն Թիֆլիսից տպուած էր (կարծեմ 1881 թուականում) Վիեննայի «Jurnal d' Orient»-ում: Յիշում եմ նմանապէս մի կոմունարի այդպիսի և կարծես թէ բառացի ճառը, որը սուրած են Միտիթարեան վարդապետները իրանց մի թարգմանութեան մէջ: (Ղարբի անունը չեմ յիշում):

Բայց ի՞նչ հարկաւոր է մեզ այնքան հեռունները գնալ: Մեր միւս գրողներն էլ այդ իմաստով ճառեր շատ ունին խօսած և նրանք խօսած են յարմար տեղում և առիթում: Այ տեսէք: Պ. Աբովեանցի Աղասին—այդ հրաբխային լե-

ռը—իրան այդ իմաստով ճառը խօսեցաւ Անիի աւերակների մէջ: Պ. Աղայեանցի Յարութիւնը մի այդպիսի ճառ գրեց ուրիշներին, օտարներին ոգևորեցնելու համար: Վրանցից ամենիցն էլ աւելի գործնական կերպով վարուեցաւ պ. Օւրենցի դարձեալ այդ իմաստով ճառ խօսող քահանան, որը և Սասունի լեռնականներին, կարելի է ասել, մագնիսացրեց («Լրկունքի» մէջ):

Սարծես այդ ճառերից ոչինչ տեղեկութիւն չ'ունեցող պ. Բաֆֆիի Սարոն իրան ճառը խօսում է որևէ Հասոյի ազարակում և էլ իրան գաղափարակից և սրտակից երեք ընկերներուն:

Լուսաւորեալ, լեզուադէտ ու բժշկապետ պ. Սարոն այդ զէպքում ճիշտ այնպէս վարուեցաւ, ինչպէս վարուում են մեր լուսաւորեալները, երբ զինիով տաքացրած են լինում իրանց կատարները, Բայց մի բան էլ կայ: Սարելի է այդ ճառով «Վայճերի» հեղինակը ուզեց մի առօրեայ, սովորական երևոյթ նկարագրել: Այդ նրա արդար իրաւունքն է:

Պ. Բաֆֆիի արդար իրաւունքն է նմանապէս նկարագրել և ուրիշ որ և է ազգային, հասարակական երևոյթ, ժողովրդական սովորութիւն, վարք ու բարք, թէկուզ այդ ամենը իրանից առաջ ուրիշներն էլ արած լինին: Միևնոյն բանի, և միևնոյն ձևով կրկնելը ընթերցող հասարակութեան վերայ կարող է լաւ տպաւորութիւն և օգուտ գործել: Արդ՝ պ. Բաֆֆին էլ, օգուտ քաղելով իրան այդ արդար իրաւունքից և աչքի առաջ ունենալով նաև իրան Մենտօրին «Անընդհատ վարժութիւն» յօդուածը («Մշակի» չեմ յիշում որ №-ի առաջնորդողը) երկայն բարակ նկարագրում է «Ս. Աստուածամօր վանքի ուխտաւորներին» (եր. 362—380), թէ-

պէտե միեւնոյն նկարագրութիւնը ունի պ. Աղայեանցը (Համ-
շուլդայի ս. Աստուածածնի և Բոլնիսի ս. Վեորգիին: Միև
նոյն նկարագրութիւնը արած ունի և պ. Սարգսեանը (Հա-
հէնն ի Սիբիր) ս. Արապետի ուխտաւորներին:

Պարձեալ՝ ընթերցողներիս համար ի՞նչ փնտ, եթէ պ.
Բաֆֆին կրկնում է հայկական տների պատերի ծակի նրկա-
րագրութիւնը (եր. 20), թէպէտե միևնոյն նկարագրել է և
Պառչեանցը (կարծեմ «Հացի խնդրում»):

Պարձեալ՝ ի՞նչ փնտ է եթէ, որսորդ Ալօն և ընկ. այդ-
բան երկար խօսում ու խորհրդածում են Տէր-Թօղիկի Այս-
մաւուրքների մասին, թէպէտե միևնոյն խօսակցութիւնն ու
խորհրդածութիւնը, Տէր-Սարկոսի Այսմաւուրքների մասին,
անում էր մի ժամանակ և Աղայեանցի որսորդ Պօղոսն և
ընկ. ի հարկէ այն զանազանութեամբ, որ Տէր-Սարկոսի հա-
կառակորդները խօսում էին ձեր աչքի առաջ կանգնած, մինչ-
դեռ Տէր-Թօղիկի հակառակորդները վարագոյրների տակ պահ
են մտած:

Որպէս զի, ընթերցող, պ. Բաֆֆին այդ կրկնութիւն-
ները ես ինքս էլ անդադար կրկնելով ձեզ ձանձրութիւն չը
պատճառեմ արիք մի փոքր էլ ձեզ «Այծերի» հեղինակի
մոսանների հետ ծանօթացնեմ:

Երկրագործ Հասոն երգում է:

«Ահա ծագեց կարմիր արև,

Տաք ու պայծառ է օրը,

Ղէ քաշեցէք, սիրուն եղներ,

Յառաջ տարէք արօրը»: (եր. 212):

Ի՞նչպէս էք գտնում, ընթերցող, դուք այս բանաստեղ-

ծութիւնը: Ես նրան շատ հաւանեցի: Մինչև անգամ փոր-
ձեցի, որ պ. Բաֆֆին այդ երգը, կարելի է երգել Պամառ-
Վաթիկայի, մի այդպիսի երգի եղանակով: Այլ լսեցէք Պա-
մառ-Վաթիկայի երկրագործի երգն էլ:

«Աղօթարանը բացուեցաւ,

Ժամանակ է զարթելու,

Երթամ ակոռ գոմշուկներս,

Ի ծեմ գութան վարելու:

Ղէ, գոմշուկներ, ելէք, ելէք,

Արա երթանք աշխատենք և այլն»:

Պարձեալ՝ պ. Բաֆֆին եղեգուհին երգում է:

«Այն քաջ մարդու շապիկն է դա,

Որ իմ ձեռքով կարեցի,

Արիւնոտ է, կարմիր ներկած,

Արաստութով լուացի» (եր. 308):

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի». «Նալ-
բանդեանի խալուհին էլ ձիշտ այդ եղանակով երգում էր:

«Ահա, եղբայր, քեզ մի զրօշ,

Որ իմ ձեռքով գործեցի,

Ղիշերները ես քուն չեղայ,

Արաստութով լուացի»:

Եթէ ուզում էք մի, շատերիցը միմիայն մի, օրինակ ևս
պ. Բաֆֆին պրողական բանաստեղծութիւնից առաջ բերեմ:
Ահա. «Գեղեցիկ էր լեռնային առաւօր. ճնճղուկները տա-
կաւին չըկշրկում էին (ծլվւլում) վարսազեղ ուռենիների
վրայ, որոցմով հովանաւորված էր որսորդի տնակը, և արևի
առաջին ճառագայթներով լուսաւորված բակում հաւերն ա-
խորժանօք քաղում էին գետնից հունդերի հատիկները, որ

ցրվում էր Մարօն» (եր. 171): Լեռնային գեղեցիկ առաւօտ
և հաւերի կուտ ուտելը—շատ գեղեցիկ է:

« Երանգ իւսթէ, պուզ իւսթէ,

« Քեաբաբ եանար քեօզ իւսթէ »:

Վուսատս դեռ 1881 թուականին բարեկամաբար խոր-
հուրդ տուի պ. Բաֆֆին Պառնասի մոնսաներին հանգիստ
թողնել, բայց պ. Բաֆֆին իմ խորհուրդին «ոչ մի նշանա-
կութիւն չը տուեց» (Մշակ 1883 № 25): Իրան կամքըն է,
բայց ես խոնարհաբար վստահանում եմ յայտնել, որ իմ խոր-
հուրդը վատ խորհուրդ չէ: Թող հիմի ուրիշներն էլ դատեն:
Խսկ ես կը շարունակեմ:

«Վայժերի» սիրուհիների և սիրեկանների մասին առ-
այժմ մի որոշ բան չեմ կարող ասել, որովհետեւ դոքա իս-
կապէս չը կան դեռ ևս: Սէրը դեռ նոր է սկսուել ու ար-
ծարծուել պատանիների և պատանուհիների սրտումը:
«Վայժերի» առաջին հատորից առայժմ այսքանըս միայն յայտ-
նի է, որ Ֆահրատը սիրում է և Սօնային և Մարօյին:
Վերջինիս սիրում են, նաև Սադօն ու Մըհէն: Ո՞գիտէ թէ
վերջերում ուրիշ ինչ նոր-նոր սիրողներ ու սիրուողներ էլ
չը պիտի դուրս գան—«ЧѢМЪ ЧЕРТѢ НО ШУТИТЬ?» : Եթէ
Մարօն մի փոքր ժամանակ Տէր-Թօղիկին աշակերտած լինէր,
եթէ նա նրա մօտ մի փոքր դրոց ու բրոց սովորէր, տեսնե-
լով իրան շուրջ այդքան սիրողներին, անշուշտ բացարձակա-
բար կասէր, (ախր նա դարդիմանդկա է) «Ժողովեցան զինև
շունք բազումք»: Չեմ յուսաւ թէ դրանով հայ ամազոնքան
վշտացներ իրան սիրողներին: Ախր դրանք ամենքը արեւելքի,
Պարսկաստանի զաւակներն են, և դրանց համար սէր, սիրա-
հարութիւն ախրը հոմանիշ են շուն և շնութիւն բառերին:

— Ո՞նց, ինչպէս:

— Եւ ասեմ ձեզ:

Արեւելքի, Պարսկաստանի զաւակը, ընթերցող, նոյնպէս
«պարզ, կոշտ և անտաշ» է, ինչպէս և իրան երկրի բնու-
թիւնը: Եւ զաւակը իրան ամեն մի գործառնութեան մէջ
օրինակ է վերցնում միշտ իրան երկրի բնութիւնը և բնու-
թեան արարածները:

Եւսպէս ընթերցող, օրինակի համար, արեւելքի զաւա-
կը տեսնում է, որ «շները իրանց բարեկամի վէրքը լեզում
են» (եր. 331), ուստի ինքն էլ, արեւելքի այդ զաւակն էլ,
միևնոյնն է անում իրան բարեկամի վերաբերութեամբ: Վար-
ձեալ՝ արեւելքի զաւակը տեսնում է որ «յանկարծ պատուհա-
նից մի զոյգ ախտաբորբոք ճնճուղուկ ներս մտան, նստեցին մի-
մեանց մօտ: Յետոյ եկաւ և մին ուրիշը, արու, և մօտեցաւ
նախկին հերոսի սիրուհուն. նրա կողմից մի այդպիսի լըբու-
թիւն շարժեց սիրահարի նախանձը» և այլն (եր. 239):

Եւ դ բաները տեսնելով, աւասիկ, արեւելքի զաւակի
սրտումը արծարծուում է սէրը և «սիրոյ պաշտպանութեան
գաղափարը»: Էնց այդ հիման վրայ էլ է, գուցէ, որ արե-
ւելքի զաւակը—«մանուկ մարդիկ անպատկառ հետաքրքրու-
թիւններ շատ ունին» որոց մի կենդանի օրինակը այնքան
պատկառելի կերպով իրան ընթերցողների առաջին զնում է
«Վայժերի» հեղինակը, երբ նկարագրում է Սօնայի «գեղե-
ցիկ մարմինը, արձակված գիսակները, նոր զարգացած կուրծ-
քը, կուսական դէմքը, անմեղ կուրծքը, լիքն և հրաշալի
թիկունքը» մի խօսքով աղբիւրում լողացող մի տկուր աղջը-
կայ «հրաշալի մարմինը» (եր. 408), բայց ես, ընթերցող,
ճաշակի հետ վիճելու իրաւունք չունիմ:

Պ. Ծերենցի Թէոդորոս Ուշտունին Ատովմ զօրավարից ստացած հարկաւոր նամակը Վարդանակերտի ամրոցումը մոռացաւ, որպէսզի Սուրէնը վեր առնի և կարդայ: Որսորդ Ալօն էլ Վարոյի, նոյնպէս հարկաւոր, նամակը իրան տան մէջ թողեց մոռացմամբ, (զիտմամբ չ'ասելու համար), որպէսզի Ֆահրատը կարդայ և յետոյ նրա բովանդակութիւնը քաղուածաբար պատմէ «Վայծերի» ընթերցողներին: Մոռածկոտութիւնը ինքնըստինքեան թէև մի դատապարտելի բան չէ, բայց Ալօյի այս անգամուայ մոռացկոտութիւնը ես, ընթերցող, միանգամայն դատապարտում եմ: Անր մի նամակ, որից կախուած է ամբողջ Տաճկահայաստանի և սրա ապագայ փրկիչների կեանքն ու մահը, միթէ կարելի է մոռացմամբ կամ անզգուշութեամբ թողնել որ և Ֆահրատի և Մարոյի ձեռքին: Եւ յետոյ այդ պարոնները նեղանում են, երբ իրանց գաղանիքը բացուում է: Յիմարներ, բաս չի՞ բացուիլ երբ ձեզանից մէկը այդպիսի բաց նամակ է գրում, միւսը մոռանում է հետը վերցնել, կամ որ իմ կարծիքով, աւելի լաւն էր, իսկոյն ձղել, այրել:

Ընթերցողներս, ասենք հասկանում ենք այդ անզգուշութեան և մոռացութեան նպատակը, բայց ինչի՞ այդքան շտապել: Երբ էլ, որ լինէր այդ նամակի բովանդակութեան հետ մենք, ընթերցողներս, կը ծանօթացնինք:

Բայց դուք, սիրելիներ, մեղաւոր չէք, մեղաւորը, երեւի ձեր մոլի եռանդը, ձեր մոլեռանդութիւնն է: Եթէ ուղիղը ուզումէք իմանալ «Վայծերի» ընթերցողներից, զոնեա ինձ համար, այնքան հետաքրքրական չէ Վարոյի նամակի այդ տեսական բովանդակութիւնը: Եւ ուրախութեամբ կ'սպասէի տեսնելու, կամ թէկուզ լսելու, այդ նամակի գործնական բովանդակու-

թիւնը, նրա իրագործումը: Եւ ճշմարիտ շատ հետաքրքրական և ցանկալի էր տեսնել թէ պ. Բաֆֆիի հերոսները որ խոհանոցում, ինչ տեսակ ամանում և ինչ տեսակ կրակի զօրութեամբ հայերին համար մի այդպիսի պատուական բլիւտ, մի—ինչպէս մի չքեղ քարտօչի վրայ գրած էր— «*à la nature*» պատրաստեցին Փոքր—Ասիոյ այդ զանազան սոցուններից ու զեռուններից:

Շարունակե՛նք, ընթերցող, բայց . . . լաւ է մի փոքր կրճատենք:

Ասել էի, որ «Խէնթը» ոչմի նոր միտք մեզ չէ յայտնում, թէ նրա բոլոր մտքերը մի հաւաքածոյ է, «Մշակի» քանի տարիներից ի վեր քարոզածներին:

Հիմայ էլ միւսնոյն բանը կրկնումեմ: Պ. Բաֆֆիի այդ տեսակ վարմունքը այն ժամանակ ինձ հասկանալի չէր, այդ էր, ահա, միակ պատճառը որ պարոնի վարմունքը ես այն ժամանակ անուանեցի «գրականական սիւսլուած եմ եղել: Պարոն Ռաֆֆին վերջին օրերումս յայտնեց, որ ինքը այդ գողութիւնը անում է ո՛չթէ միամտաբար, այլ գիտակցաբար, որ նա «Մշակի» գաղափարների ամենամոլեռանդ (?) քարոզողներից մէկն է» (Մշակ № 17): Պատիւ պ. Բաֆֆին այդպիսի անկեղծ խոստովանութեան համար, բայց եթէ նա ինձանից չէր ցաւել, ես նախ քան նրա գաղափարները քրքրելս, մի բարեկամական խորհուրդ կ'ուտայի նրան: «Նախ՝ աշխարհումս ամեն մի բանի մէջ, բարեկամ, եռանդը գովելի է, բայց մոլեռանդութիւնը պախարակելի: Մոլեռանդութիւնը կիրք է, զգացմունք է, իսկ որտեղ կիրքն ու զգացմունքը մինչև մոլութեան է հասնում, այնտեղ, բարեկամ, խելքը, բանականութիւնը

սկսում է կազալ, լռել: Արկորդ՝ ուրիշների գաղափարներին մոլեռանդաբար ծառայողը—շատ անգամ, կներէք ինձ, զուրկ է լինում սեպհական, ինքնուրոյն գաղափարից: Արկորդ՝ երբ ամեն ոք էլ մոլեռանդաբար ուրիշների գաղափարները միմիայն ընդունի, այն ժամանակ լուսնի տակ էլ յառաջագիմում թիւն ո՞րանցից կը լինի... բայց ես էլի շեղվում եմ, ընթերցող, իմ նպատակից:

Պ. Բաֆֆի «Այծերը» որպէս մի փառաւորագոյն հէքիաթ, թէև գլխաւորապէս գործ ունի ընթերցողի երեւակայութեան հետ, բայց և այնպէս երեւակայութեան էլ մի կատարեալ և ամփոփ պաշար չէ տալիս: Գոնեա առաջին, 538 երեսներից բաղկացած, հատորում ընթերցողի երեւակայութեան համար չը կայ մի յենման կէտ, մի տարածութիւն, ուր ընթերցողի երեւակայութիւնը մի փոքր կանգ առնէր, սաւառնէր: Ղշմարիտ է «Այծերի» մէջ զեղում, վրէտում են խորհրդաւոր մարդիկ, գործքեր, մտադրութիւններ, վհուկներ, անցքեր ու դէպքեր, յանկարծական փոփոխութիւններ և այլն, բայց այդ ամենը կատարվում է լոկ Ֆահրատի միանգամայն ջրալի պատմութիւնով: «Այծերը» միմիայն լարում է ընթերցողի ուշադրութիւնը: Բնաիր հեքեթներում անգամ այդ այդպէս չէ: Այնտեղ խորհրդաւոր ու անխորհուրդ մարդկանց, վհուկներին ու մհուկներին, դիւթիչ, կախարդիչ այլանդակ հրէշային, ուրուական ու սասանայական (այսպիսի բառերով լիքն է «Այծերի» բառարանը) տեսարաններին ու պատկերին, գոնեա դուր կը տեսնէք իրանց իսկական գոյն ու ռանգով, բոյ ու բուսածով: Սիթէ Շէքսպիրը, Գէթէն և ուրիշները չունին այդ տեսակ գերբնական արարածներ ու տեսարաններ, բայց դրանց մէջ

համեմատութիւն անելու միտքն անգամ աններելի յանցանք է: «Այծերի» ընթերցումից յետոյ, ընթերցող, ես այն տըխուր եզրակացութեան եկայ որ մեր յարգելի հեղինակի բաւականին բեղմնաւոր ֆանթազիան միանգամայն զուրկ է ստեղծողական ոյժից (творчество): Իսկ առանց այդ ոյժին բոլորովին կարելի չէ որ և է, ուրեմն և «հայ գրականական ասպարիզում հսկայ լինել» (Սշակ 1883 № 42): Եւ հաւատացած եմ որ երբ պ. Բաֆֆին «Սշակի» այդ տողերը աչքից անցկացրեց—իսկոյն կարմրեց:

Եթէ այդ տողերը խորին տգիտութեան հետեանք չեն, անպատճառ հետեանք են զազրալի շողքորթութեան: Այդ տեսակ տգիտութիւնը կամ շողքորթութիւնը, իմ կարծիքով, փաստակար է աղգային լրագրութեանը, գրականութեանը: Ախր մտածեցէք պարոններ, որ մեր մէջ կարող են գտնուիլ հրապարակասոսներ, վիպասաններ, որոնք թոյլ մարդուն յատուկ բնաւորութեամբ ձեր այդ հիւսած յարդէ պսակները անթառամ ծաղկի դափնիների տեղ կ'ընդունեն և, խեղճեր, մտքերումը կը դնեն, որ իրանք աշխարհիս եօթն հրաշալիքներից մինն են, որ իրանք «արտակարգ ոյժեր են» (Սշակ № 17), որ իրանց «հին ու մաշուած հողաթափը աւելի արժէք ունի բան ուրիշների և հարիւրաւորների գդակներն» (Սշակ № 26): Այդ ամենը, ասենք, թող ասեն, ասեն և իրանք իրանց միմիայն միթարեն, բայց ակն միւսնոյն ժամանակ դրանք կը հպարտանան, և փոխանակ հետզհետէ առաջ զնալու, կատարելագործուելու, ծուլութեամբ միւսնոյն տեղում կը փնտնեն և... և ի հարկէ որ յետոյեւ կը գնան:

Աւելի լաւ չէ, պարոններ, հետեւել մի օտարազգի առածին որ ասում է A chaque seigneur, Son honneur.

Այս իմ կողմից, ընթերցող, դարձեալ այն կարծիքից եմ, որ «մեր վիպասանների գրուածքների մէջ, չը նայելով դոցա այս և այն, մեծ և փոքր արժանաւորութիւններին, չը կայ մինը, գոնեա մինը, որի վրայ կարելի լինէր մասնացոյց լինել, իբրեւ հայկական գիտութեան և գեղարուեստի մի անմահ արձանի վրայ» («Մեղու» 1881 № 92): Պ. Բաժժիի նոր աշխատութիւնը— «Վայճերը» ոչ միայն իրաւունք չունի, թէ կուզ հասարակ, արձան լինելու, այլ, դժբաղդաբար, գեղարուեստական տաճարի շէմքի վրայ ոտք անգամ կոխելու:

Այդ աշխատութիւնը միմիայն ռամկի, ամբոխի մէջ ընթերցասիրութիւն զարթեցնելու համար հարկաւոր է, ուրեմն և օգտակար:

Հէնց այդ տեսակէտից նայելով «Վայճերի» վրայ, չէ կարելի չը խոստովանել, որ պ. Բաժժին պակաս ծառայութիւն չէ անում մեր ազգին—հայ ամբոխին: Ամեն ազգի գրականութեան երախայրիքը միշտ «Վայճերի» կամ նրա նման գրուածքներն եղել են և զրանց անունը երբեմն չէ մոռացուել:

Այսքանս «Վայճերի» գրականական—գեղարուեստական արժանաւորութիւնների մասին: Այժմ ես դառնում եմ դէպի այդ գրքի գաղափարները, նրան տէնտէնցիան, որը մեր մէջ թէև նոր չէ և նրա առաջին հեղինակներն են իսկապէս, ինչպէս վերեւում յիշեցի, պպ. Աբովեանց, Աղայեանց և Ծերենց, բայց և այնպէս կազմում են «Վայճերի» այսպէս ասած, ուղ և ծուծը, կամ ինչպէս ժողովուրդն է ասում՝

Աղն ու համեմը,
Սարազն ու սերը,
Սիրտն ու բիւնը,

Սինամոնը

Սոխն ու սխտորը,

Սանաչն ու գխտորը:

Հէքիւթ, հէքիւթ, պապըս,

Հրեղէն ձին տակըս,

Թռչիմ հասնիմ Հնդստան,

Բերեմ ձեզի մասնեստան:

Ժողովր. հէք. նախերգանք:

— Որո՞նք են «Վայճերի» գաղափարները. նրա տէնտէնցիան ինչո՞ւմն է:

— Որովհետեւ պ. Բաժժին հրապարակապէս խոստովանեցաւ, որ ինքը «Մշակի» գաղափարների ամենամոլեռանդ բարոյիչն է, ուստի թող ներուի ինձ նախապէս յայտնել իմ ընդհանուր կարծիքը «Մշակի» գաղափարների մասին: Ահա իմ կարծիքը:

Մեր ամենօրեայ թերթը, ընթերցող, ունի մի ներքին, ուժեղ մղում, մի սրբոտանց ցանկութիւն դէպի առաջ, դէպի նորութիւն: Մթնոլորտը, որի մէջ ապրում է պ. Արծրունու օրդանը, նրան խեղդում է: «Մշակը» կաշուց դուրս է դալիս այդ իրան համար հեղձուցիչ մթնոլորտից որեւէ կերպով դուրս դալ և, ի հարկէ, իրան հետ դուրս տանել նաև իրան ընթերցողներին, իրան ազգին: Այդ մասին փառք ու պատիւ «Մշակին» և ի հարկէ ամեն նոցա, որոնք անշուշտ միևնոյն մղումն ու ցանկութիւնն ունին, երբ ձեռնամուխ են լինում հայ—խմբագրական ապերախտ գործին: Այս գիտեմ, որ «Մշակի» յիշածս ուժեղ մղման և սրտանց, ջերմազին ցանկութեան բաղադրութեան մէջ կան, երբեմն գրուանքա-

ներով, երբեմն էլ փթերով և՛ եսականութիւն և՛ նախանձ և ցուցամոլութիւն, բայց ինչ էլ որ լինի պ. Արծրունին հիւանդութեան տաղնապետի մէջ գտնուող Պետօթէի նման անդադար բացազանչում է լոյս, լոյս, ուրիշ ոչինչ, եթէ ոչ լոյս : Այդ մշտական, անդադար բացազանչութիւնը—ահա գլխաւոր զանազանութիւնը «Մշակի» և մեր միւս թերթերի ներքին մղման և սրտանց ցանկութեան մէջ : Բայց ախր գլխաւոր բանը նրանումն է, ընթերցող, որ լոկ բացազանչելով մենք չենք կարող մէկ մթնոլորտից դէպի միւսը անցնել : Պէտք է գտնել, ցոյց տալ, հարթել և այն ճանապարհը, որը պէտք է մեզ նեցուկ ու պատուանդան լինի. պէտք է գտնել և բաց անել այն դռներն ու պատուհանները, որտեղից կենսատու լոյսը կարող է ներս թափանցել : Աւասիկ հէնց այդ ճանապարհը, այդ դռներն ու պատուհաններն են, որոնք պակասում են մեր եռանդաղին թերթին և նա, ինչպէս ռուսներն են ասում, Бакъ рыба бьется объ ледъ : Իմ կարծիքով «Մշակի» խմբադիրը մի աշխոյժ և վառվռուն բանաստեղծ է—միշտ, միշտ բարձր մեր Բաֆֆիններից—բայց ոչ հրապարակաօս, որովհետեւ նա իրան ունկնդիրներին չէ ղեկավարում, առաջնորդում, այլ ոգևորեցնում, և խելքից հանում է : Պ. Արծրունին—թող ներուկ ինձ այս համեմատութիւնը—մի լաւ մուզկանդ է, որ կարող է պատերազմի դաշտում թուլացած ջղերը ցնցել, զօրքին ոգևորեցնել, բայց բանակի գլուխ անցնել—այդ ոչ երբէք նրա խելքի բանն է : Նրա հրամանատարութեանը ես ոչ մի ղեկավար չեմ հաւատում, թէ և համազուտ ևս լինիմ, որ նա կարող է երբեմն և յաղթութիւնը տանել :

Սոքերը, որոնք այսքան տարիներից ի վեր քարոզում է

«Մշակը», ոչ մի փոքր ի շատեղարգացած հային չեն կարող զարմացնել, որովհետեւ ոչ նոր են, ոչ էլ անծանօթ, բայց այդ մտքերը իրանց արտայայտութեան ձևով ու եղանակով, կարգ ու ժամանակով, որպէս ջղերի արտադրութիւն գլխաւորապէս, պ. Արծրունու խոհանոցից միշտ դուրս են գալիս, ընթերցող, հումեփ և հապճեպ, խուժ և բուժ, աներևոյթ և անպատրաստ : Սա իմ համոզմունքն է, որը հիմնուած է «Մշակի» մշտական և սառնասրտութեամբ ընթերցումից : Փաստեր առաջ բերելու ժամանակը չէ, բայց եթէ դա անհրաժեշտ է, դժար էլ չէ, միայն սիրտ ու հավէս պէտք է :

Արդ՝ «Այծերի» գաղափարները, նրա տէնտենցիան, որպէս յար և նման «Մշակի» գաղափարներին, միևնոյն առանձնայատկութիւններն ունին ըստ մեծի մասին :

Այլ ջղին բառերը ես դժեցի, որովհետեւ «Այծերի» մէջ կան նաև մի քանի մտքեր, որոնք բոլորովին հակառակ են «Մշակի» բարոյազանցներին : Այդպէսով պ. Բաֆֆի աշխատութեան մէջ երբեմն էլ նոր-նոր տեսակ խթութիւն ու բրթութիւններ կ'երևին :

Դեռ մի քանի փաստեր «Այծերի» այդ առանձին առանձնայատկութիւններից ես առաջ բերեմ, ընթերցող :

Ասացի որ Մշակը անդադար բացազանչում է. լոյս, լոյս :

«Այծերի» հեղինակը բղաւում է. «խաւար, խաւար» :

Պ. Արծրունին պնդում է. «դէպի առաջ, նորութիւն» :

Պ. Բաֆֆին քարոզում է «դէպի յեւ, հնութիւն, վայրենութիւն» :

Օրինակի համար:

«Վայճերի» յարգոյ հեղինակը ընդունում է (զոնեա ինչ-պէս սեպհական խօսքերիցն է երևում) որ հայ ազգի նիւթական և բարոյական անկման պատճառը նրա ընդանեկան, զպրոցական և ընկերական կեանքի տղիտուլթիւնիցն է առաջ գալիս:—Առաւ աչքիս: Բայց այդ ընկած վեճակը վերականգնեցնելու համար պարոնը առաջարկում է դարձեալ ազիտուլթիւն մինչև անգամ վայրենութիւն, Մի կողմ թողնենք պ. Բաֆֆիի բազմութիւն և բազմատեսակ կիսատ-պռատ ակնարկութիւնները այդ մասին, միառմի առաջ չը բերենք, ընթերցող, այն սեսարաններն ու պատկերները, որոց մէջ իրան երկրորդական հերոսների վայրենիութիւնն ու վայրագութիւնը այնքան հոգեզմայլութեամբ ներբողում է Ժ. Ժ. Ռուսսօյի կապիկը, վեր առնենք միմիայն նրա ռամկավարներն—ДѢМІТІЙ—նրա Վարօներին ու Ասլաններին. Տէր-Թօղիկի այդ աշակերտները, ընթերցող, այժմ մի մի երևելի մարդիկ են դարձել, թէև սարիքով դեռ ևս պատանիներ են: «Նոքա «յաճեւ են ընդ ծով և ընդ ցամաք» և Նւրօպան ու Ամերիկան առեւ են իրանց ոտքին տակ: Հաւատանք, որ այդ այդպէս է:

Բայց այդ մարդիկը, ընթերցող, իրանք զարգացած ու լուսաւորուած լինելով, զարմանալի անբարեխղճութեամբ ոչ միայն չեն աշխատում, որ ժողովրդին էլ լուսաւորեն, զոնեա իրանց կէսին, իրանց քառորդին չափ, այլ ընդհակառակը ուզում են ժողովրդին միշտ ազէտ, միշտ վայրենի պահել:

— Ինչի՞:

— Որպէսզի մէջտեղում միմիայն իրանք փայլեն, իրանք երևան և ժողովրդի կռնակին հեծնելով, իրանց դաւուրը նրա

վզից կախ տալով, ժողովրդին ասեն «չէ, չէ»: Այդ պարոնները, ընթերցող, ոչ միայն անխիղճ լուսաւորեալներ են, այլ և յիմարներ են, Բայց ես ոչ դրանց անխղճութեանը, ոչ էլ յիմարութեանը վրայ այնքան զարմանում եմ, որքան պ. Բաֆֆիի հակասութիւնը ըմբռնել կարող չեմ: Աստուծո՛ւմ եմ. ինչիցն էր որ Վարօն և ընկերութիւնը այդքան ժողովրդասէր, այդքան ազգասէր չէին, երբ տակաւին Տէր-Թօղիկի դժոխքումն էին: Արովհետև նրանք դեռ ևս իրանց ձեռին չունէին արքայութեան բանալին: Իսկ հիմա . . . հիմայ պարոններ, ախր «բացէք և մեզ զգուռն արքայութեան»:

— Վա՛ ձեզ համար աւելորդ է, ասում է պ. Բաֆֆին: Ղուբ շատուրէք և էլ շատ ազէտ էք. ձեզ սպասելու ժամանակ և համբերութիւն չը կայ: Մենք կուտենք, իսկ դուք կշտացէք, մենք կածենք իսկ դուք պար եկէք: Ահա եկած է «մի ձեռք որ կը խլէ և դուրս կը բերէ (ձեզ) «ժողովրդին փետտեցնող մթնոլորտից» (եր. 201): Համառօտ և պարզ, ընթերցող: Ուրեմն «Վայճերի» հեղինակի փիլիսոփայութիւնով ժողովրդի բարօրութիւնը, նրա ազատութիւնը պիտի առաջանայ ոչ թէ ներքուստ, այլ արտաքուստ, ոչ թէ ժողովրդի իրան սեպհական, այլ ուրիշների, «մէկի» կամ թէկուզ, մի բանիսի, ձեռքերով:

Պ. Բաֆֆիի հերոսները թէև ոչ մեծն Պետրոսներ, ոչ էլ մեծն Նապօլէոններ են, բայց այդ օգերեւոյթների նման էլ մեծն բռնութեամբ ժողովրդին երկայն մօրութենից զրանք էլ բռնութեամբ ժողովրդին երկայն մօրութենից բռնած փետեւ են ուզում, դրանք էլ են կանչում «զինուորներ», այս բուրդերը ձեզ են սպասում: Ներողութիւն պ. Բաֆֆի: Մարդիկ հիմայ Մեծն Պետրոսին ու Մեծն Նապօլէոնին ևս խստութեամբ դատաւետում են և ապացու-

ցանում են, որ այդ մարդիկը, իրանց ահագին մեծութիւնով հանդերձ, շատ էլ փոքրամիտ էին:

Սի այլ օրինակ: Պ. Բաֆֆին իրան գրքի առաջին երեսումը գտնում է, որ մեկենասութիւնը զրականութեան մէջ օգտակար է, այսինքն «մի ձեռքը» կարող է յառաջացնել և ծաղկեցնել և զրականութիւն: Այդ կարծիքը անպայման կերպով ոչ մի հասկացող մարդ, ես կարծում եմ, չէ ընդունում: Եւ ի՞նչպէս ընդունել, ի՞նչպէս Պոլլի նման չ'ասել, որ մեկենասութիւնը փչացնող, շողոքօրթող, անբարոյականացնող երևոյթ է, երբ տեսնում ես, որ այդ մեկենասը, օրինակի համար, Ֆրանսիացիների մէջ մի Լուդովիկոս է, իսկ հայ զրականութեան մէջ մի «Սշակ» է: Ի՞նչպէս կը կամենայիք, որ ես իմ մեկենասից իւրաքանչիւր տողի համար մի որոշեալ գումար ստանայի, նրա բերանից իմ մասին ամեն օր մի-մի գրուագ ու ներբող լսէի, և միւսնոյն ժամանակ նրա գաղափարները ամենամոլեռանդաբար չը քարոզէի: Շատ հասկանալի է, որ իմ խօսքերը ու զղուած են ընդհանուր երևոյթի, ընդհանուր մտքի վրայ, եթէ ոչ, ես չեմ նախանձում ոչ պ. Բաֆֆիի բաղդին, ոչ էլ դատապարտում նրա մեկենասին: Բայց մաճնին ասել թան, իսկ թանին չորթան—կարելի չէ:

Ղառնանք մեր նիւթին:

Այն, Արօն և ընկերութիւն մի կողմից, ընթերցող, ծաղրում են Տէր-Թօղիկի դպրոցը, միւս կողմից և մոլեռանդաբար այդ դպրոցի կործանումը պահանջում, իսկ երրորդ կողմից նոր դպրոց բացանել էլ չեն ուզում:

— Ինչի:

— Ուրովհետեւ դպրոցը, կրթութիւնը, աշակերտին ձեռք զէնք չէ տալիս:

— Եւ չը պէտք է էլ տայ, պնդում ես:

Դուք, պ. Բաֆֆի, ի զուր տեղը կարծում եք թէ «յիմարութիւն» է (եր. 255) ասելը «որ սուր առնէ, սրով անկցի»: Յիմարը, և ամենամեծ յիմարը պ. Բաֆֆի նրանք են, որոնք չեն կարող ըմբռնել այդ և այդպիսի վարդապետութիւնների այնքան վեհութիւնն ու վսեմութիւն: Ի բէ՛ն և անդր է փրկին:

Աւետարանը, նրա ամեն մի տողը բերրողներից, ո՞չ միայն միակողմանի զարգացած աստուածաբաններ, այլ նաև Շթրաուսի և Ունանի նման լուրջ գիւններ—որոց սովորաբար անաստուած անուններ տալիս—երբեք մի այդպիսի անմիտ, հումեփ և հապճեպ դատաւիճիւններ չեն տուել: Արդացէք, բարեկամ, ձեռք բերէք և անշուշտ կարդացէք այդ անաստուած կարծուածներին, որպէսզի նրանցմով սովորիք այդ պատկաճների իսկապէս աստուածային լինելը:

Այն, Արօն և ընկերութիւն մի կողմից, ընթերցող, ծաղրում են Տէր-Թօղիկի խորին տգիտութիւնը, միւս կողմից զարմանալի տգիտութեամբ հալաց իւղի տեղ են ընդունում այդ բահանայի տուած աւետարանի ամեն մի մեկնութիւնը: Ասացէք ինձ, պ. Բաֆֆի, սա մի հրէշային, այլանշակ հակասութիւն չէ: Ձեր Տէր-Թօղիկները ինչո՞վ աւելի են, քան իրանց Տէր-Թօղիկը:

«Սշակն» ասում է (համոզմունքով թէ ինչով—եւ այդ չը գիտեմ, միայն ձեռքս խղճիս վրայ դրած վկայում եմ որ «Սշակը» կեղծել չը գիտէ) աշխարհաբառի վերածեցէք ս. գիրքը, տուէք ժողովրդի ձեռքը, թող կարդայ և հոգւով ու սրտով բարձրանայ, վսեմանայ—«լոյս, լոյս»

Պ. Բաֆֆին պնդում է, ձգեցէք շուտ մի կողմ ձգեցէք այդ միտք ճշող և սիրտ թուլացնող զբերը (եր. 257) — խաւար, խաւար:

«Սշակը» ասում է. թուրք ազգը, նրա զրականութիւնը, նրա զուգանը ոչ երբէք կարող են վերականգնել մարդու կենսական, հոկեզան ոյժերը — նորութիւն, լուսաւորութիւն:

Պ. Բաֆֆին զօռում է: Տուէք մեզ զուգանը, վերցրէք մեզանից այդ սիրոյ և խաղաղութեան խաչը և նրա փոխարէն կարկառեցէք դէպի մեզ արիւնշախաղ սուրը (եր. 256 — 257) հնութիւն, վայրակութիւն:

«Սշակն» ասում է. զարգացած երիտասարդներ, ինչի՞նչ Պ. Պօլսում վէր էք ընկած. ժողովեցէք շուտ ձեր փաստիութեան և շտապեցէք գնալ հայ ժողովրդի մէջ, ապրել և մեռնել ժողովրդի մէջ և նրա հետ:

Պ. Բաֆֆին փչում է. զարգացած երիտասարդներ, հեռացէք, ժողովրդի կշից, փախէք մտէք Վեօհնայ — Շահարի մինարէթը, Պօլսմանայ լեռները, հաբսթանու սարերը, Խանա Սօրի ձորը և պարապեցէք յերկրակութեամբ, մարդասպանութեամբ:

«Սշակն» ասում է. հայ նախկին հոգեւորականութիւնը ապրում և գործում էր ժողովրդի համար:

Պ. Բաֆֆին խեղդին զօռ է տալիս. «հայ հոգեւորականութիւնը մշտական (?) կռիւ է ունեցել մարմնաւոր իշխանութեան դէմ» (եր. 424): Եթէ պ. Բաֆֆին այդ բանը ասելիս լինէր առաջ, դարձեալ ներելի էր, բայց նա այդ ճշմարտութիւնը «հասկացել է շատ ուշ, երբոր կարգացել է մեր ազգի պատմութիւնը և ծանօթացել նրա թշուառ

անցեալի հետ» (եր. 424): Շնորհ արեք, պ. Բաֆֆի, մեր ազգի պատմութիւնը «շատ ուշ» կարգաւ և էլ այդպէս կարգաւ: Եթէ դուք ձեր կարգացած ամեն մի պատմութիւնն էլ այդ ձևով ու խելքով կը կարգաք այնժամանակ ես էլ չեմ հասկանում թէ դուք ի՞նչպէս կարող կը լինիք «Վաւիթ — բէկեր» զրել և «հայոց պատմութեան համար նիւթեր» — Խամսայի մեղիքութիւններ — հաւաքել: Արդեօք այդ նիւթերի մէջն էլ դուք խառնել էք ձեր Ֆահրասների ու Պարօների մատը, թէ լոկ ինչ նիւթ որ գտել, բարեխղճութեամբ ժողովել և ամփոփել էք:

Բայց չէ, չէ, ընթերցող, պ. Բաֆֆին թէլ այդպէս ասում է, բայց նա կատակ է անում: Այ տեսէք: Վերոյիշեալ տողերը զրելուց և մի կլօնական զլիւկար salta-mortale անելուց յետոյ, մեր հեղինակը շարունակում է. «եկեղեցականութիւնն (հայ) հայրենիքի և պետութեան (հայ) հզօր պաշտպանն էր»: Թագաւորների և նախարարների մէջ «հաշտեցնող տարր էր»: Պատերազմի ժամանակ «ժողովրդին ոգևորեցնողն էր»: Յաղթող թշնամւոյն մօտ «միջնորդ և դեսպան էր»: — Մի խօսքով, շարունակում է «Վայժերի» հեղինակը, «բարձր հոգեւոր կառավարութիւնը խիստ սերտ կապերով կապուած էր թագաւորի իշխանութեան հետ և երկու ներդաշնակ ուժեր, միացած մի ամբողջութեան մէջ լծորդաբար առաջ էին տանում պետութեան կառավարութիւնը» (եր. 462—463):

— Ի՞նչ է այս, անշուշտ ընթերցողս հարցնում է: Այո՛ւ ես պ. Բաֆֆիի մտքերը յեղաշրջում եմ և կամ Բաֆֆին ինքնիրան հակասում է:

— Ոչ այս և ոչ այն, ընթերցող, պ. Բաֆֆիի այդ և

այդպիսի մաքերի, մէջ հայ եկեղեցականութեան վերաբերութեամբ, կայ մի մշտապառօյտ մաքոր, որով «Այծերի» հեղինակը աշխատել է իրան գործուածքի երկու հակառակ ծայրերը միացնել, կարկատել, բայց, ինչպէս իրան տեղումը կը տեսնենք, չէ յաջողել:

Այսքանս պ. Բաֆֆին առանձին առանձնայատկութիւնների մասին: Խորհուրդ եմ տալիս պարոնին, գէթ «Մշակին» լաւ ուսումնասիրել, ապա թէ ոչ ուղիղ Առիւծի ասածն է դուրս գալիս

«Ա՛յ բու, ձայնդ, ձայն է, կիւռ,

Ու բուկինդ կուկուլլիկու»:

Աւստի, ընթերցող, և «Այծերի» «Մշակից» արտագրած այն մաքերը, որոնք պ. Բաֆֆին քարոզում է «ամենամոլեռանդաբար»: Այստեղ, ճշմարիտ որ, մեր վիպասանը իրան մենտորին հետ ձեռք-ձեռքի տուած առաջ է գնում եղբայրաբար: Այստեղ պ. Բաֆֆին իրան խօսքին տէրն է, իրան գերին մէջն է:

Պ. Արծրունի-Բաֆֆին ասում է:

«Ամեն ժամանակ, երբ հայի համար որեւէ դաւաճանութիւն է պատրաստվում, նրա մէջ խառն է լինում դարձեալ նոյն իսկ հայի մատնիչ ձեռքը: Ղաա (լսեցէք, լսեցէք) մի պատմական եղեռնադործութիւն է, որ սկսեալ ամենահին (փահ, փահ) դարերից խիստ յաճախ կրկնուել է մեր ազգի կեանքում: Ղաա հայի վատ յատկութիւններից մէկն է» (եր. 441.) այս այսպէս լինելուց յետոյ ես հիմի միանգամայն հաւատում եմ, ընթերցող, մեր հին և նոր գիւղացիների ասածին, թէ հայոց ազգը ի բնէ անմիաբան է:

Եթէ պ. Բաֆֆին իրան խօսքը մասնաւորէր, ես նրան հետ չէի վիճիլ — որովհետեւ ո՞վ չը գիտէ, որ «СЕМЬЯ НЕ БЕЗЪ УРОДА», թէպէտեւ ես — այս էլ պէտք է ասեմ — առանց դաւաճանին դաւաճանութեան բուն շարժառիթը բնական և ստուգելու, աւելի կը կարեկցէի այդպիսի դաւաճանին, քան նրան կը դատափետէի, բայց պ. Բաֆֆին այդպէս չէ ասում, նա առանց այլ և այլութեան յանձնարարում է իրան Սըհէին, որ զնայ և վանահօր (հոգևոց վանքի) գլուխը կարի: «Այծերի» հեղինակին աւելի քան ուրիշներին պէտք է որ յայտնի լինի, թէ մարդու մէջ կան այնպիսի «մային, ֆիզիոլոգական յատկութիւններ ¹⁾ որոց մէնք չենք կարող դիմադրել: Եւրեւ հայի դաւաճանութիւնն էլ մի այդպիսի յատկութիւն է, ուրեմն էլ ինչի՞ դուք մեղադրում էք նրանց: Ես, ասենք, պ. Արծրունու այդ վարդապետութիւնը չեմ ընդունում, բայց մի՞թէ պ. Բաֆֆին էլ չէ ընդունում, ախր... ախր «Մշակի» դաղափարների ամենամոլեռանդ քարոզութիւն... այր եղիք, բարեկամ, այր НЕ ДАВШИЙ СЛОВО, ДЕРЖИТЬ, а ДАВШИЙ КРЕПИСЬ.

Պ. Բաֆֆին պէտք է գիտնայ, որ բնութեան ազդեցութիւնը որքան որ զօրեղ է մարդու վերայ, այնքան էլ այդ ազդեցութիւնը բազմատեսակ է: Այսպէս «Այծերի» հեղինակի ասութեամբ «ամեն երախայի բնութեան մէջ կայ այդ սէրը (զէնքեր գործածել). երեխան նախքան մարդ լինելը ձգտում է զինուոր լինել» (եր. 119): (Վէս դառնայ հոգիդ Ղարվին գիտնական, ասում էր, ընթերցող, ֆէլիէտօնիստ Փարնակէսը): Արող է պատահել, և արդէն պատահել է,

¹⁾ Պ. Արծրունու ճառը ամայրենի լեզուի նշանակութեան մասին, չեմ յիշում «Մշակի» որ համարում:

որ ամէն հայի բնութեան մէջ կայ այդ սէրը—նախքան մարդ լինելը, դաւաճան լինելը: Այս էլ չը մոռանաք, որ հայը իբրեւ արեւելքի զաւակ՝ բնութեան դիմադրելու դեռ ևս անընդունակ է, նա դեռ բնութեան հըլու զաւակն է:

Պ. Բաֆֆին շարունակում է, Նկեղեցականը, որ ազգի մէջ և լինէր նա, միշտ ընդդէմ է անհատական ազատութեան: Նկեղեցականը միշտ ընդդէմ է ազգայնութեան գաղափարին. նա ճանաչում է ազգը միայն կրօնքի անունով նրա «հօտի» մէջ «խուժ, դուժ սկիւլակի և յոյն—բոլորը մէկ են» (եր. 459): Ուսները ասում են «լսել է ձայն, բայց չը գիտէ ռոտեղից է այն»:

Մի քանի լուրջ մտածող ու դատող գլուխներ, և մասնաւորապէս Բոքը, որը մի կէտ չէր դնում, մի բառ չէր ասում, առանց նախապէս հազար և մի տեսակ մանրակրկիտ քննութիւններ անելու, եկեղեցականութեան մասին հասել է այն եզրակացութեանը, որի մի մասը պ. Բաֆֆին արտատրուել է իրան վէպի մէջ: Բայց պ. Բաֆֆին պիտի զիտնայ նախ՝ որ Բոքը ամեն մի եզրակացութիւնն էլ զուտ ճշմարտութիւններ չեն, որ մարդիկ Բոքին էլ բաւականին քրքրել են. երկրորդ՝ թող պ. Բաֆֆին հաւատացած կենայ, որ եթէ Բոքը, իրան յատուկ տոկոսնութեամբ և բարեխղճութեամբ ուսումնասիրած լինէր և հայ-եկեղեցականութեան պատմութիւնը, նա իսկոյն կ'ասեր, որ «առանց բացառութեան կանոն չը կայ» և՛ նա մատնանիշ կը լինէր այդ հայ եկեղեցական բացառիկ երեւոյթի վրայ: Բոքը խօսում է արեւմտեան ազգերի, առաւելապէս կաթոլիկ դաւանութեան, և արեւելեան մի քանի յայտնի ազգերի, ինչպէս հնդկացիների և եգիպտացիների, եկեղեցականութեան վրայ:

Բայց ես կարծեմ ընթերցող, մեր կողմից մի աններելի յանցանք է գաճաճների և թղուկների հետ խօսելիս՝ հսկաների անունը առաջ բերելը: Մեզ համար բաւական է և այն փաստը, որ նոյն ինքն պ. Բաֆֆին, որը ասում էր թէ ամեն ազգի մէջ անխտիր եկեղեցականութիւնը ընդդէմ է անհատական և ազգային ազատութեան, ոչ ապաքէն մի քիչ յետոյ հաստատում էր, որ հայ եկեղեցականութիւնը իրան ազգին անձնազուհ և մշտապատրաստ բարեկամն էր: Միևնոյն պ. Բաֆֆին մի քիչ վերջը ասում է դարձեալ, որ «մեր եկեղեցականութիւնը այն ժամանակ մի նշանաւոր բացառութիւն էր կազմում ամբողջ քրիստոնէական աշխարհում» (եր. 463): Աս այստեղ պէտք է յիշեցնեմ մեր հեղինակին իրան մոռացած վկայաբանութիւններն և այն բացառութիւնների մասին, որ կազմում էին նաև թուրքի մոլլան, բրդի և եզիդի շէյխն՝ և վերջապէս մի երես կաթոլիկոս մարդ—Ստրուոյ Սար-Շիմանը: Ճշմարիտ է մոլլան ու շէյխը քրիստոնէայ չեն, բայց դարձեալ եկեղեցական (կրօնական) մարմիններ են: Ուրեմն «Վայժերի» հեղինակի կողմից ներել չէր մի այնպիսի դատավճիռ կարդալ ամեն մի ազգի եկեղեցականութեան մասին: Բայց այս և այսպիսի հակասութիւնների միակ պատճառը, ընթերցող, այն մշտապտոյտ մաքորն է, որի մասին ես վերելում ականարկեցի: Այդ մաքորը այն ժամանակ և այժմեան կեցի: Այդ մաքորը այն ժամանակ բառերն են: Պ. Բաֆֆին ասում է, որ այն ժամանակվայ (նախնի) հայ հոգեւորականները ամեն բանով լաւ էին, որովհետեւ նրանք «գերդաստանի հայրեր էին և ընտանիքների մէջ բնակվում» (եր. 461), իսկ «այժմ եկեղեցականը մեզ համար մի մեռած և անպիտանացած տարր է» (եր. 463) որովհետեւ կնիկ չունի—*ларчикъ открылся*:

Նախ և առաջ ես խնդրում էի մեր պատմական վէպեր գրող հեղինակից ցոյց տալ թէ երբ, ո՞ր դարում հոգեւորականները իրանց կաթողիկոսական և եպիսկոպոսական աթոռների և բարձերի վրայ բազմած ժամանակ իրանց հետ աթոռակից և բարձակից ունէին իրանց սիրասուն կէսերին — կնիկներին: Աթէ այդ մասին «Վայծերի» հեղինակը ինձ մատնացոյց կը լինի «Մշակի», չեմ յիշում ո՞ր տարուայ մի պատկերի վրայ, ուր նկարիչ Ամիրխանեանցի ձեռքը գրաւիչ կերպով գծագրել էր իբր հայ կաթողիկոսուհւոյ դէմքն ու խօսակցութիւնը մի կանանց հրաւերքի ժամանակ, ես, ինչ ասել կուզի, պ. Ամիրխանեանցի վկայութիւնը չեմ ընդունում: Արդորդ՝ եթէ պ. Բաֆֆին համոզուած է, որ կնիկ ուղեւորով ամեն բան կը վերջանայ և այնուհետեւ «գայլն ու գառը կ'սկսին ի միասին ճարակել» այն ժամանակ թող բարեհաճի պարոնը համոզել Բոքլին (ափսոս մեռած է), որ սա իրան վարդապետութիւնը յետո Կոչէ: Որովհետեւ, յայտնի է, որ այդ մարդը ստուարագոյն և շօշափելի փաստերով ապացուցանում է, որ անհատական և ազգային ազատութեան ընդդէմ են ոչ թէ միմիայն կաթողիկ, այլ և բողոքական, կնիկ ունեցող, հեգեւորականը: Մի բան կայ. շատ կարելի է թէ, ընթերցող, պ. Բաֆֆին իրան միտորի հետ հայ հոգեւորականի մային, արիւննային, ֆիզիօլոգական յատկանիշները լուծած ու բլբլած լինելով՝ գտել են, որ երբ այժմեան հայ հոգեւորականը կնիկ ուղէ, կը դառնայ այն, «ինչ մարդին պիտի»:

Արջապէս երրորդ՝ պէտք է միանգամայն կոյր լինել չը տեսնելու համար, որ եթէ մեր մէջ՝ երէկ և այսօր կային և կան ուրեւէ ազգային հիմնարկութիւն, այդ ամենով մենք պարտական ենք մեր հոգեւորականութեանը և ոչ թէ մեր

«Վայծերի» հեղինակի նման բոբլիկ ազգասէրներին: Բայց դուք, գիտեմ, հետեւելով մօդային, ամեն բանի լաւն ու կատարեալն էք ուղում (և ո՞վ չէ ուղում), բայց «զայս պարտէ առնել և զայն չը թողուլ»: Պարոն, մտաբերեցէք զոնեա Աղովբոսի շան առակը: Պուր ինքներդ դեռ մի ցախածուկ խրճիթ չը շինած, ուրիշների կառուցած ընդարձակ և հաստահիմն շինութեան հիմքն էք փորում, ի՞նչ իրաւունքով և ի՞նչ խղճով: Պ. Բաֆֆիները և նրա նմանները թող գիտնան, որ եթէ հայ-հոգեւորականութիւնը այսօր այնպէս չէ, ինչ որ ցանկալի է, դրանում մեղաւորը դարձեալ մենք, ժողովրդականքս ենք, հայ ազգի ամբողջ անցեալն ու ներկան իրան դրչի մի շարժողով վայր ի վերոյ անելու նկրտող «Վայծերի» հեղինակը՝ միթէ չը գիտէ, որ հոգեւորականները, սկսած կաթողիկոսիցը մինչև յետին տիրացուն, երկնքից չեն իջնում և իրանց պաշտօնը իրանց-իրանց չեն ստանձնում, այլ դրանք մեր միջիցն են, մենք ենք նրանց ընտրում և մեզ համար հովիւ վերակոչում: Պ. Բաֆֆին չը կարդաց զոնեա այս տարուայ «արձագանքի» մի համարում թէ մի հոգեւորականի քարոզը ի՞նչ ահազին ազդեցութիւն գործեց Աօնարայի համալսարանի ամենամոլեռանդ անաստուած ուսանողների վերայ:

— Տուէք, ահա, մեզ այդպիսի հոգեւորականներ տուէք, գիտեմ հիմա բղաւում են մեր Խիկար իմաստուն Բաֆֆիններն:

— Տուողը դուք էք, պարոն, ժողովուրդը, «տուր և տաց՝ ձեզ»: Սակայն դուք ոչ տալու շնորհք ունէք, ոչ էլ տոկուն ցանկութիւն, ձեր միակ շնորհքը շուտ բանդելումն է, ձեր ազգասիրութիւնը ձեր դրչի անմիտ և աղայական շարժ-

տողում: Բայց այս մասին, ընթերցող, չարժէ երկար խօսել, նախ՝ որովհետեւ շատ խօսուած ու գրուած է. երկրորդ՝ որովհետեւ ես չեմ կարող անպատրուակ կերպով պարզաբանել իմ միտքը, ապացուցանելու համար, որ մեր տաճկահայ եկեղեցականները ոչ միայն մեղաւոր չեն այն ժամանակ, երբ տգէտ են (բայց ոչ երբէք պ. Բաֆֆիի չափ), այլ նրանք մեղաւոր չեն (ես խօսում եմ ընդհանրապէս) նաեւ այն ժամանակ, երբ երբեմն շեղուում են իրանց նպատակից, երբ, բանաստեղծի ասածով՝ «զիս թողեալ պաշտեն օտարին» ակն... ակն «Պողէ, խիստ է բեզընդդէմ խթանի աքացել»: Իսկ մեր «ժողովրդական մարդիկը, մեր բոլորիկ ազգասէր Բաֆֆիները՝ «ընեն բռնիքս ծանուես և դժուարակիրս և ինքեանք ոչ կամին մատամբ մերձենալ»:

Դեռ այդ բաւական չէ, նրանք ժողովրդին էլ քարոզում են նոյնպէս չը մօտ գնալ և չ'օգնել իրանց հոգեւոր հայրերին: Եւ երրորդ՝ այս մասին չարժէ երկար խօսել, որովհետեւ (պ. Բաֆֆիի համար ամենից զլխաւորը սա է) այդ խօսուածների և գրուածների ճշմարտութիւնը վերջին ժամանակներումն ընդունեց և՛ «Մշակը»: Եւ տարակոյս չ'ունիմ, ընթերցող, որ եղիայի (պ. Արծրունիի) հոգին՝ շուտով կը հանգչի և՛ Նդիսէի (պ. Բաֆֆիի) վերայ:

Ահնուներով մեր («Մշակի» բառերովը խօսելով) ամբոխի մարդուն, վիպասանին, այդ մօտակայ դարձին, ես դառնում եմ, ընթերցող, «Այծերի» միւս կէտերին:

Ընդունելով և վճռելով, որ մեր բարձր հոգեւորականութիւնը, որովհետեւ կնիկ չ'ունի, թող ուրեմն կորչի—թող խորտակի Արթուրէն, պ. Արծրունի—Բաֆֆին և (Նիկողոսեան—Թովմասեան). շարունակում է. «մեր դրամատերերը

սկսած առաջին ամիրայից աւագակներ են (!!) ապրում են ժողովրդի արիւնով և քրտինքով» (եր. 464): Արիւ ուրեմն—բղաւում է, ընթերցող, մեր հայ Ատոնը—այդ դրամատիկերին էլ խորտակեք: «Մեր եկեղեցականները սկսած Պատրիարքից մինչև վերջին հայր-սուրբը (բացի այն, որ կրնի չ'ունին), նոյնպէս աւագակներ են» (եր. 465). Թող ուրեմն դրանք էլ կորչեն: «Մեզ պակաս է և հասարական զլխաւոր զօրութիւնը, այն է թարմ և նորահաս երիտասարդութիւնը (մօզնի և սերտած բառեր), բայց դժբաղդաբար, մենք երիտասարդութիւն չ'ունինք (հօ «Այծեր» ունինք). մենք ունինք Ա. Պօլսում (և այս ամենը կոչւում է վէպ, վիպասանութիւն) մի բանի տգէտ և ամեն կրթութիւնից զուրկ զէ վզ է կնէր միայն, որոնք ուրիշ ոչինչ չեն, եթէ ոչ շաղակրատ (յար և նման «Այծերի» հեղինակին, աւելացնում եմ ես) տիրացուներ» (եր. 465. Թքած ուրեմն և դրանց էլ երեսն ի վեր): «Այլ ով է մնում: (Չեմ գիտում): Մնում են (փառք Աստուծոյ, որ էլի մնում են) մի բանի Արօններ (ևս և «Մշակի» գաղափարների ամենամոլեռանդ քարոզիչներ), արդարեւ (աղուէսը միշտ իրան պոչը վկայ է բերում) ազնիւ և գործող և եթէ գիտենաք, ի՞նչէս գործող) անձինք, բայց մի ձեռքը ծափ կը զարկէ... (ի՞նչպէս չէ. ոչ ապաքէն վէպի սկզբում ակն մի ձեռքի—որսորդ Ավօյի—վերայ էր, պարոններ, ձեր բոլորի յոյսը): Այսու ամենայնիւ մենք այսինքն «Այծերի» հեղինակը բոլորովին յուսահատ չենք. (ո՞նց) մենք ունինք մի, (լսեցէք, լսեցէք) թէ և անմշակ (փառք Աստուծոյ հօ կայ «Մշակ»), բայց մեծ զօրութիւն—ամբոխը—(ՊԵՐՈՒՆ) դա բաւական է» (եր. 465. բաւական էլ որ չը լինի ի՞նչ պէտք է արած, երբ ուրիշ ոչ մի տարր չը կայ. ասած է

«անճարը կերել է բանճարը»:

Արտատպած նախադասութիւններից առաջինների վերայ չարժէ խօսել: Պարանց իմ յօդուածումը դուրս բերելով ես միմիայն կամեցայ ընթերցողիս մի ճաշակ տալ մեր վիպասանի ոչ միայն փողոցային լեզուի, այլ և լրբենի տգիտութեան հետ մի ազդի ամբողջ դասակարգերը ուսումնասիրելու սրբազան գործումը: Իսկ վերջին նախադասութեան մեր ազդի մեծ զօրութեան մասին՝ ես, ընթերցող, չեմ կամենում խօսել, թէպէտեւ, եթէ ոչ «Վայճերի» հեղինակի չափ, գոնեա իմ զգացածի և հասկացածի չափ, եւ եմ սիրում իմ ազգը, ուրեմն և այդ մասին գրելու իրաւունքը ես էլ ունեի:

Բայց ես չեմ կարող, ընթերցող, գէթ մի փոքր կանգ չառնել մեր պատմական վիպասանի հետեւալ, աւելի աչքի ընկնող, մտքերի ու միտումների վերայ:

Ս. Աստուածամօր վանքի տօնախմբութեան նկարագրութեան մէջ՝ պ. Բաթիկին, այսպէս ասած, «ընկաւորներին» է նկարագրում: «Նա ընթերցողների առաջ դնում է մի ուշաթափած կին, «որ մոլեգնաբար թաւալվում է գետնի վերայ: Նրա բերանը փրփրում էր, աչքերը վառվում էին վայրենի կրակով (ընտանի կրակը ո՞րն է). մարմնի անդամները դողդոջում էին, և կատաղի կերպարանքը ցոյց էր տալիս, որպէս թէ նա տանջվում է մի աներևոյթ զօրութիւնից: Նա երբեմն իւր դողդոջուն շրթունքի միջից (?) արձակում էր խուլ, մթին և անկապ խօսքեր» (եր. 373):

Ընկաւորի կողքին և խաչը ձեռին կանգնած է, ընթերցող, հայ վարդապետը և աղօթում է: «Ընկաւորը կրկին ուշաթափ եղաւ, մտաւորապէս յափշտակվելով մի վերին ազ-

դեցութիւնից: Քանի ըստէ նա մնաց անշարժ: Աւ ապա սկսեց արձակել խորին հառաչանքներ, արտասանել կցկտուր բառեր, և կոչել հրեշտակների, դեւերի, սատանաների, սուրբերի անուաններ» (եր. 374): Վարդապետը խաչը կոխում է ընկաւորի բերանը, որը և «կլանում է»: Յետոյ վարդապետը խաչի շղթան ձգում է ուշաթափի բերանը և «դուրս քաշում խաչը: Ընկաւորը սթափուում է, բայց էլի ճնրա երեսը դարհուրելի է և աչքերն արտայայտում են սարսափելի վրդովմունք»: Վարդապետը կրկին խաչը կոխում է հիւանդի բերանը: Այս գործողութիւնը կրկնուում է երեք անգամ:

Այնուհետեւ ընկաւորը «բաւականին զգաստացած» սկսում է ուխտաւորներից հարուստներին, խաթուններին և աղաներին, ձայն տալ և իրան պատգամները դուրս տալ (եր. 374—376): Վարդապետը խաչը ձեռին բացատրում է «պատգամախօսի գուշակութիւններն» և այդպիսով թէ՛ իրան և թէ՛ վանքի համար փող զջլում: «Յետոյ ընկաւորը ընկնում է բոլորովին ուշադնացութեան մէջ: Վարդապետները տանում են նրան, հաւատացնելով ժողովրդին, թէ նոյն դրութեան մէջ նա կը մնայ մի քարայրի մէջ մինչև վանքի դալոց տօնախմբութեան օրը» (եր. 376):

Թէ մեր ազգի կրօնական և առօրեայ կենցաղավարութեան արարողութիւնների մէջ հին, հեթանոսական արարողութիւնների հետքեր կան, թէ հայ ժողովրդի մտքում մի տեղ աւելի, մի տեղ պակաս, մինչև հիմա կենդանի մնացած են կռապաշտական յիշողութիւններ—դրանց դէմ ոչ ոք չէ վիճում: Բայց թէ ս. Աստուածամօր վանքում մինչ օրս Պիւթիաս քրմուհին իրան եռոտանիով ժողովրդին ներկայացնում է—սա դեռ հարց է, գոնեա ինձ համար:

Առապաշտութեան և կուռքերի կենդրոնը հին ժամանակում, քրիստոնէութեան և սրբերի կենդրոնը մինչև մեր օրերը—ինչպէս յայտնի է—Տարօնի ս. Արապէտն է։ Այդ վանքը տեսնելու բաղդը ես չեմ ունեցել, բայց բաւական ճանապարհորդների գրուածքներ՝ այդ վանքի, նրա ուխտագնացների և հանդէսների մասին, կարդացած եմ։ Բայցի դրանից շատ ուխտագնացների հետ մանրամասն խօսակցութիւն ունեցել եմ։

Բայց ոչ մէկ ճանապարհորդութիւնից, ոչ էլ մէկ ուխտագնացից ես լսած չեմ «ընկաւոր», «ընկաւորի» այդ տեսակ պատմութիւն, այդ քան կախարդական գործողութիւնում հայ կրօնաւորի այդքան ջերմ և խորամանկ մասնակցութիւն—այդքան և լոկ շահասիրական դիւմամբ եղած աչքակապութիւն։

Եթէ պ. Բաֆֆին այդպէս նկարագրում է, ես հակամիտ եմ կարծելու, որ Պարսկաստանի հայերի մէջ գուցէ այդ այդպէս է։ Բայց որովհետեւ սա մի շատ հետաքրքիր խնդիր է, որովհետեւ «Այծերի» «ընկաւորի» պատգամներից ես չեմ կարող այդ հետեւացնել, որովհետեւ պ. Բաֆֆին այդ և այդպիսի պատմական պարագաների վերայ շատ թեթեւ աչքով նայելու սովորութիւն ունի, որովհետեւ—ինչպէս ես եմ կարծում— արաբական և պարսկական դերվիշների, վհուկ ու կախարդների գործողութիւնների ազդեցութիւնը պարոնի վերայ բաւականին զօրեղ է, ուստի ես խոնարհաբար խնդրում եմ նրանից ցոյց տալ թէ՛ իրան նկարագրութիւնը ի՞նչ բանի վերայ է հիմնած։ Արդեօք նա ունի՞ իրան ձեռին որեւէ գրաւոր կամ բանաւոր յիշատակարան, աւանդութիւն։ Արդեօք իրանից զատ, ուրիշներն էլ տեսած են մեր օրերում ս. Աստուածամօր վանքի այդ կուսպաշտ վեղարաւորներին։ Մի մո-

ռանաք պ. Բաֆֆի, որ այդ ձեր պատկերով, դուք վեր էք առնում մի ցեխի ու շաղախի ահագին կտոր և ծեփում քրիստոնական եկեղեցւոյ պատն ի վեր և Վրիստոսի պաշտօնէի երեսն ի վեր։ Հայ ուխտագնացը սովոր է իրան յետին լուման իրան վանքին ու վանահօրը տալ, որպէս զի Աւետարանի «փարատեա»-ն լսէ, Մաշտոցի «բժշկեա»-ն լսէ, նրա սաղմոսերգութիւնն ու ալելուքը մրմնջէ—և այս ուղիղ 1,500 տարիներից հետէ։ Մեկնեցէք մեզ պ. Բաֆֆի, թէ ձեր այդ ս. Աստուածամօր վանքը իրան միաբանութիւնով ի՞նչեց արդեօք այդպիսի խոշոր բացառութիւն է կազմում ամբողջ հայ-քրիստոնեայ աշխարհում։

Долой двойку, тузъ идетъ! պ. Բաֆֆիի Պահարտը ասում է. «ես երեսայութիւնից ունէի փոքրիկ խորամանկութիւն սատանայի պէս մանել մարդու դամարում (երակում), և որպէս ասում են, նրա ուղեղը թափ տալ» (եր. 385)։ Արդ՝ օգուտ քաղելով այդ իրան սատանայական խորամանկութիւնից՝ մեր հեղինակը իրան ընթերցողներին նկարագրում է, այսպէս ասած, «վանքի խեղճերին»։

Ս. Աստուածամօր վանքի Արապետ հայր-սուրբը մի հայ ընտանիքից վարպետութեամբ մի մանկահասակ հարսին տանում է վանք, որպէս սպասաւորուհի։ Արօնաւորը բռնաբարում է հարսին և յետոյ, երբ մանկահասակ կինը ծննդականութիւնից ազատուում է, նրան գտնում են «ծովի ափին, ուր հարսի մարմինը ծովի դալդաները (ալիքները) գցել էին դուրս, նա խեղդուած էր... Սօսէն ոչ այնքան հեռու ընկած էր մի նորածին երեխայ, որին դաշտի գազանները պատռեր (ուզում է ասել պատառոտել) էին... (եր. 385—388)։

Այս կամ այն վանահօր կամ աբեղայի կողմից այսպիսի

եղեռնագործութիւն ամեն տեղ և ամեն ազգի մէջ եղած է և միշտ կարող է լինել: Բայց թէ այդ բանից խրախուսուած մի ամբողջ ազգի դարաւոր սրբութիւնները խեղկատակութեան և եղեռնագործութեան որջեր շինել—դա, պէտք է խոստովանիմ, միմիայն «Այծերի» հեռատես հեղինակը կարող է անել: Այժմ «Այծերը» մի տեսակ փիլիսոփայական, ուսումնական գրութեան լինելը, ինչ ասել կ'ուզի, որ նրա հեղինակը միանգամայն իրաւունք ունէր վանական ամեն տեսակ երեւոյթն էլ մանրաբնին հետազօտութեան և խիստ քննադատութեան առնելով վերջ ի վերջոյ այս կամ այն եզրակացութեան հասնել, բայց որովհետեւ պ. Բաֆֆիի գիրքը որոշ ուղղութեամբ և որոշ տէնտէնցիայի համար գրուած է, ուստի ես չեմ հասկանում, ընթերցող, թէ հայ «բաղաբական» թերթի «Մշակի» գաղափարների ամենամոլեռանդ քարոզիչը, հայ ազգի համար ի՞նչ շահ և օգուտ է տեսնում, երբ այդ աստիճան գայթակղեցնում, և մոլորեցնում է հայամբոխին դէպի սրա դարաւոր սրբութիւններն ու սրբափայլերն—այն ամբոխին, որը, Վրիստոսի ասածով, «ոչ գիտէ զօրէնս», իսկ «Այծերի» հեղինակի իրան ասածով՝ «մի մեծ և անմշակ զօրութիւն է»: Այն այն ազգին, որի առաջնորդները մեր «Մշակները» պիտի լինին, և հազար վայ այն հայամբոխին, որի ազատութեան գաղափարներ ներշնչողը Բաֆֆիի նման վիպասանները պիտի լինին: Թշուառ, ի՞նչ էք ուզում դուք այդ թշուառագոյն ազգից, այդ ամեն կողմից բաղդազուրկ հայամբոխից: Բարեկամս, ճանաչում էք դուք այդ ամբոխը, երբ և իցէ դուք նրան տեսել էք: Վուր գոնեա չէք տեսել, որ երբ ես ու դուք, և մեզ նման հայերը, տաք պալատն մեր հագին, պօրթմանէն մեր ջիւրին, սիգարը ձեռին

Վօլովինսկի պրօսպեկտի վերայ թրև ու բօլթայ ենք տալիս, և միմիայն այն բանի վերայ մտածում ու հոգում թէ՛ մեզնից զինի, թէ՛կուզ ջրհեղեղ լինի, այդտեղ, պ. Բաֆֆի, այդ Վօլովինսկի պրօսպեկտի վերայ, այդ մէյդանի վերայ, ցախաւելը ձեռքն առած, զձուձ ցնցոտիների մէջ իրան մերկ մարմինը պատսպարած, կէս-կուշտ, կէս-սոված, անհոգ, բարեկամ,

«Շլինքը արևառ, քրտինք երեսին, բեռը շալակած,
Ղարիբ Մշեցին, մէյդանի միջին, կանգ առաւ յոգնած,
Աշտաղած ձեռքը երեսին տարաւ քրտինքը սրբեց,
Բայց երբ որ աչքը չորս կուման դարձուց, ծանր անքաշեց»:

և ոչ թէ մեզ նման իրան բերանից, այլ սրտի խորը, խորը լարերից այդ մշեցին միւսնոյն ժամանակ երգեց և երգում է.

«Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից,
Սերտ բարեկամք անջատած են ինձանից,
Թառամում եմ ես այս օտար երկրումը,
Մենակ բսած ծաղկի նման դաշտումը»:

«Ամանց-կամանց տարիները անցնում են,
Մեզ նորոգած գարուն, ամառ դարձնում են,
Միայն իմ խեղճ կեանքը չ'ունի ոչինչ նոր,
Ինձ երէկը կրկնվում է միշտ այսօր»:

«Ասպարիզիս նեղ է ձամբան ու փշոտ,
Խեղճութիւնս համարում են ինձ ամօթ»:

Աիրելի Ֆահրատ, վերջ տուէք դուք ձեր դոժինքոտ ու լիռոտ շրթունքների այդ անգաղղրում, պառաւական բոբոռոց-

ներին, մի րուպէ ձեռք վեր առէք դուք ձեր այդ «Հին քահանայ»
և «նոր սատանայ» (Հին և նոր սիրականներ) միմեանցից որոշել
չ'իմացող շնանման ու ճնձղկանման զանազան Մարօներից
ու Սօնաներից, և իբրև մի մարդ, որը կարծես նկրտում է
ըմբռնել «սէրը և սիրոյ պաշտպանութեան գաղափարը» —
այդ վսեմ, այդ եթերային ու աստուածային գաղափարը — և
մի րուպէ մտածեցէք, որ սիրոյ Աստուածը մեր այդ գաղափարները
մենակ այդ մահկանացու աղջիկների համար չէ զրել
մեր կուրծքի մէջ, այլ նաև այն անմահ յաւերժահարսերի
համար, որոց մենակ տեսութիւնը պէտք է մեզ պատկառանք
ու երկիւղածութիւն ազդէ... Թշուառ, ի՞նչ էք ուզում այդ
ազգից, այդ հայ-ամբոխից, որ ոչինչ չ'ունի, եթէ ոչ միակ
սիրոյ, սրտանց միակ գաղափար. մի վանք և մի վանահայր —
իսկ ի՞նքը... խղճովը, ինքը...

Պերեգմանն կորած, հողումը թաղուած,

Աչքից հեռացած, մաքից մոռացած,

Խրանք անլեզու, աշխարհս անիրաւ,

Որ հայոց ազգիցն անթիւ և անբաւ:

— Долой двойку, тузъ идетъ! բղաւում է, ընթերցող,
հայ-Պուշկին — Բաֆֆին:

— Казырная двойка туза бьетъ — հայ-Միգրեվիչ —
Բաֆֆին պատասխանում է «Այծերի» հեղինակին:

«Վանքի զրան երկու կողմերից սկսած, մինը միւսի մօտ
զուգահեռաբար նստած են «խեղճերը» «խեղճերի» այլանդակված
կերպարանքները բերում են անցորդի վերայ զարհուրանքի
հուրանք»: Եւրբ մենք անցնում էինք «խեղճերի» միջով մի
պատանի, մաշուած և գունաթափ երեսով, գեղեցիկ (,) երկ-

նագոյն աչքերով, և շէկ-մէտաքսանման մաղերով, վեր թռաւ
տեղից և զրկեց ինձ ասելով. — «Պահրատ, ես վախում եմ
դրանցից (վանքի «խեղճերից» . եր. 400—401»):

Այդ նոր «խեղճը», Պահրատին այդ զրկողը, ընթերցող,
Ստեփանն էր, տէր-Թօղիկի հարազատ զաւակը, որը
այժմ (Պահրատի ասութեամբ) խելացնորուէ է: Պիտէք ինչից:
Նրանից, որ նրա դաժան հայրը, բացի այն, որ միշտ
ծեծում էր խեղճին, երեսայութեան ժամանակ, այլ նաև վերջերում
«կախ էր տուէլ խեղճ տղային ջրի հորի մէջ, (.) նա
մնացել էր այնտեղ կէս ժամ, և այնուհետև Ստեփանի խել-
քը տեղը չ'եկաւ. նա միշտ ցնորվում էր» (եր. 396):

Թողնենք, ընթերցող, և՛ ազգութիւն և՛ կրօն և՛ դաս-
տիարակութիւն ու կոչում, վեր առնենք տէր-Թօղիկին իբրև
մի մարդ, մի հայր, որ ունի կուրծք, սիրտ և թէկուզ ձըն-
ճղի ուղեղն չափ էլ ուղեղ, Արդ՝ տէր-Թօղիկի այդ ծնողա-
կան սիրտը, նրա մարդկային խելքը, երբէք չէր կարող իրան
Ստեփանի հետ այդպէս վարուել չարամտութեամբ: Տէր-
Թօղիկը կարող էր համոզուած լինել, որ իրան զաւակի հետ
այդպէս վարուելով՝ իրան տղային կը կրթէ, «Աստուծոյն պաշ-
տօն կը մատուցանէ», ինչպէս այն կինը, որը Օհան Հուսին
կաթսայի խարոյկը բորբոքեցնող նորանոր նիւթեր էր մատա-
կարարում: Եթէ այդ այդպէս է, այն ժամանակ, ես կար-
ծում եմ, «Այծերի» հեղինակին ուրիշ ոչինչ խօսք չէր մնում
դէպի տէր-Թօղիկը ուղղել, եթէ ոչ Հուսի նման «ո՞վ սուրբ
անմեղութիւն» միմիայն բացազանչել: Բայց պ. Բաֆֆին ա-
սում է, որ տէր-Թօղիկի ծեծը մի ժամանակ «տէր-տէրակը-
նոջն էլ մահուան պատճառ է եղել» (եր. 395), որ նա իրան
զաւակին բերել վանքի «խեղճերի» մէջ ձգել (եր. 413), մի

կողմից ս. Աստուածածնից երեսայի բուժմանը յուսալով, իսկ միւս կողմից իրան «նիւթական օգուտը» աչքի առաջ ունենալով:

— Ո՛հ, ի՛նչպէս, շուտ բացատրեցէք, պ. Այկունի, ապա թէ ոչ, ասում է ընթերցողս, ես ձեզ հաւատում չեմ:

— Սպասիր, ընթերցող, ես, ինչպէս ասում էր պ. Սունդուկեանցի Պիքոն, «կարգով գալիս եմ»:

«Տիրամօր խեղճերը» (եր. 368), ընթերցող, որոնց մենք վանքի գաւթումը տեսանք, ոչ այլ ոք են, եթէ ոչ բորոտներ, քոսոտներ, տարափոխիկ ախտաժէտներ, տէր-ծօղիկի, իրանց հօր, ձեռքով խեղացնողերած Ստեփաններ: Անահայօր և վանքի միաբանութեան կարգադրութեամբ վանքի ժամկոչները, «մղձորները» այդ «խեղճերին» վեր են առնուած իրանց հետ և «մանածում երկրից երկիր» (եր. 368) շրջակայ գիւղացիներին ֆիզիքապէս վարակեցնում, մարմնով և դէմքով նրանց այլանդակեցնում: Մի քանի տեսակ հիւանդութիւններ յառաջացնում, որոնք և նրանց մէջ դառնում են ժառանգական, անցնում են սերունդից սերունդ» (եր. 367): Այդպիսով—շարունակում է «Այծերի» հեղինակը — այդ «խեղճերի» առաջնորդները «շարժում են մարդկանց մէջ երկիւղ և ջերմեռանդութիւն» (եր. 368):

Եւ այդ բոլորի նպատակը գիտէք ինչ է, ընթերցող:

— Անահայօր և վանքի համար միմիայն «փող հաւաքել» (եր. 368, էջ 8):

— Պարզելի վարդապետներ: Ահա երևի, ինչի համար «Պաղը» և նրա գաղափարների ամենամոլեռանդ բարոյիչ Բաֆֆիները այդքան ջերմ եռանդով ու ցանկութեամբ հայ

եկեղեցու համար ընթերցում, վերանորոգութիւն են պահանջում:

Պատմութիւնը, ևս առաւել նրա ժամանակագրական ասեր զրելը, պ. Բաֆֆի, «խենթեր» ու «Այծեր» զրելու նման հեշտ բան չէ, ինչպէս դուք կարծել էք: Պատմական վիպասանը, իրան համար մի բարոյական, սեպուհ պարտաւորութիւն պիտի համարէ, թող չը տալ իրան թեթեւ զրչին մի կէտ, մի «նշանախեց» անգամ թղթի վերայ չը դնել, առանց մի քանի տեսակ անհրաժեշտ և իրական փաստերի, առանց ո՛չ թէ մոլեռանդ, այլ ամենաբարեխիղճ և բազմակողմանի հետազոտութիւնների և ամենամանրամասն խուզարկութիւնների: Պարա համար անհրաժեշտ և անպայման հարկաւոր է, բարեկամս, որ պատմական վիպասանը, կամ պատմութեան այս և այն մասը շօշափողը, լինի նախ՝ զերծ և ազատ որեւէ տեսակ մոլեռանդութիւնից և երկրորդ՝ ունենայ զիտութիւն (մանաւանդ մի քանի զիտութիւնների) եթէ ոչ մասնագիտական, զէթ հաւատարիմ և առատ պաշար: Խոստովանեցէք, պ. Բաֆֆի, որ ձեզ պակասում են թէ առաջինը և թէ երկրորդը, զուցէ և երրորդ ու չորրորդ պայմաններ, ուստի խորհուրդ եմ տալիս ձեզ չը մօտենալ այն տաճարին, պատմական վիպասանութեանը, որի սուրբ և մաքուր աստիճանները կարող էք մի օր ձեր ցեխոտ և «հնացած ու մաշուած հողաթափով» յանդգնաբար կեղտոտել ու նսեմացնել: Պարեցէք դուք ձեր «Փնջի» երկրորդ հատորի սիրուն, գրաւիչ և խելացի պատկերների նման նոր նոր պատկերներ: Իսկ պատմութիւնը, նրա մասերը դեռ երկար, երկար ժամանակ ուսումնասիրեցէք, որ յետոյ... գուցէ... կարող լինէք... այո՛, ինչի՞ չէ, մի հեղինակ ասել է «հանճարը—դա աշխատութիւնն է», գուցէ կարող լինէք ժամանակին և պատ-

մական վէպեր ևս գրել: Тиме ѿдешъ, дальше будешъ, բարեկամ:

Պիտեմ իրաւունք ունիք ասելու, որ ես ձեր վերջին գաղափարը— «խեղճերին» իբրև վանքի և վանականի նիւթական աղբիւր լինելը— չը հերքեցի: Այդ միտքը ցրելու համար մի բառ անգամ չասացի:

— Չ'ասացի, որովհետեւ ձեր ասածներին հաւատ չ'ընծայեցի: Պօւք, պ. Բաֆֆի, այս դէպքում, մի գանգատատու էք, իսկ ես պատասխանատու: Թէ՛ք բաղաբական և թէ՛ բարոյական օրէնքների զօրութեամբ, պ. Բաֆֆի, գանգատատուն նախ ինքը պարտական է իրան գանգատը փաստելով ապացուցանել, որ յետոյ պատասխանատուն էլ աշխատի իրան հերթում իրան փաստերը առաջ բերել: Այս պարզ հիման վերայ, եթէ դուք ձեր գրածները չը հաստատէք, իմացէք, որ դատը կորցրած էք: Թէ՛ք ես իմ ձեռին ունեմ թէ ոչ փաստեր—դա ձեզ չէ վերաբերում, և ձեր դատին չէ օգնում:

Այնպիսեալ հիման վերայ ես չեմ ուզում խօսել, ընթերցող, «Այծերի» և այն կէտերի վերայ, ուր առաջին՝ Ա. Պօլսոյ ամիրանների ազգափնաս գործ ու գործունէութիւն է քննուում (եր. 447—457), երկրորդ՝ ուր պ. Բաֆֆին իրան վիպասանութեան մէջ դուրս բերած վեճակազրական թուերի կասկածաւոր լինելը, կարծես, հաստատելու համար, զարմանալի միամտութեամբ վանի՞ և նրա շրջակայ վանքերի և եկեղեցիների այնքան դպրոցների մէջ «ոչ մի ժողովրդական դպրոց» չէ գտնում, և պնդում է, որ այդ բոլոր դպրոցները «պատրաստում են միմիայն տիրացուներ և կրօնաւոր» (եր. 460)։ երրորդ՝ ուր պ. Բաֆֆին զարմացած է իրան ստեղ-

ծած մի ինչոր դիժ բահանայի վերայ (եր. 522—536), որի գժութիւնները ծածկելու համար պ. Բաֆֆին, մի վիպասանին անվայել բառերով, ինքնիրան արդարացնել է ուզում ասելով թէ «Տէր-Մեսրոպը հայ բահանայի տիպ չէ» (եր. 533): Իսկ Մատուծոյ ասացէք ինձ, եթէ Տէր-Մեսրոպը հայ բահանայ է, և միւսնոյն ժամանակ հայ բահանայի տիպ չէ, ուրեմն նա ի՞նչ է շինում, կամ թէկուզ այսուհետեւ շինելու է, մի հայ վիպասանութեան մէջ: Վիպասանութիւնը միթէ գժանոց է, ուր յանկարծ ձեր առաջին կը կանգնի մի հայ բահանայ և ձեզ ասելով թէ ինքը երկրորդ անգամ պըսակուել է (երեւել՝ յառաջադիմութիւն) սկսում է առատուցատուուց դուրս տալ: Չորրորդ, հինգերորդ, տասներորդ, և այլն և այլն:

Յանկարծ միտս եկաւ, ընթերցող, Սալբիի խօսքերը— «խօրանձ, էշպէշ ցեն աշե» (եր. 355): Աթէ գիտենայիր ընթերցող, թէ այդ աղջկը որքան սրամիտ և արդարադատ է:

Ես չիմացայ թէ պ. Բաֆֆին ինչ նպատակաւ այդ թլուատ փոքրիկին դուրս է բերել իրան «Այծերի» մէջ: Այլևի նրա համար, որ իրան վէպի դատակնիքը այդ արդար մանկան բերանիցը լսէ:

Իմ կողմից ամենամանկեղծ խորհուրդ, ընթերցող, «Սըշակի» գաղափարների ամենամոլեռանդ բարոյ չին: Առաջին՝ իրան վէպերը գրելիս՝ առաջին և զլիսաւոր ուշադրութիւն դարձնել գործող անձինքների հոգեկան կողմերի վերայ: Սի մոռանաք, որ «հոգի առաւել է քան զմարմին», թէ՛ «հոգին է, որ կեցուցանէ զմարդ»: Ես իմ յօդուածումը մի խօսքով անգամ չը շօշափեցի «Այծերի» հերոսների հոգեբանական կողմերը, որովհետեւ այդ կողմերը թոյլ, շատ թոյլ էին, և

կարծես թէ չը կային: Արկրորդ՝ միանգամայն գրիչ չը շար-
ժեւ այնպիսի գաղափարներ, երեւոյթներ մասին, որոց պ.
Բաֆֆին ոչ միայն չէ ծամել ու մարտել, այլ դրանց հոտն
անդամ չէ առել: Արեւսայական զիւրազրգիւ ոգևորու-
թեամբ ինքնակոչ բժիշկ չը ձևանալ բուժելու համար բարոյա-
կան այնպիսի վէրքեր, որոց արտաքին խոցերը նա միմիայն
տեսնում է, այն էլ այնքան թոյլ, ակնոցաւոր աչքերով: Պ.
Բաֆֆին միակ դեղը հայհոյութիւնն է— դա դեղ չէ, այլ դա
այն atrophiea nervorum-ն է միմիայն, որով Չեռնիշեվսկու
երեւելի բժիշկները— Պետերբուրգի բժշկականութեան տու-
ղերը— կամենում էին բժշկել Աատերինա Աստիլեֆային:

Պ. Բաֆֆին անշուշտ գիտէ, որ օրիորդը այդ atrophiea
nervorum-ով չը բժշկուեցաւ: Արրորդ, որեւէ ծանօթ, իրան
ըմբռնելի երեւոյթին մօտենալիս՝ թօթափել իրանից որեւէ
կանխակալ կարծիք, մոլեռանդութիւն: Հակառակ դէպքում
նա կը շփոթէ հեռեանքը պատճառի հետ և ընդհակառակն,
մասնաւորը ընդհանուրի հետ և ընդհակառակն, կը դովէ այն,
ինչ որ ինքը կարծում է թէ լաւ է, և կը պարտաւէ այն, ինչ
որ ինքը կարծում է թէ վատ է: Ա իպասանի համար եթէ
կեանքի այս և այն երեւոյթը լաւ է կամ վատ է— դա պէտք
է ինքը երեւոյթը ցոյց տայ, այլ ոչ թէ վիպասանի անձնա-
կան կարծիքը, նրա հայեացքը: Չորրորդ՝ գէթ հասարակ պար-
տիզպաններից օրինակ առնել, որ ամեն բոյս միւս տեղ կա-
րելի չէ տեղափոխել յանկարծ, մինչև որ այդ բոյսի համար
նախապատրաստուած չէ հող, օդ և ջուր. ապա թէ ոչ այդ
բոյսը, որքան էլ որ լաւ լինի, շուտով կը փտտի, կը լուծուի
և իրան օտարօտի արտաշնչութիւնով, կթռնաւորէ և իրան
շուրջ գտնուած բոյսերին և ծաղիկներին: Ամեն մի գիտաւորի

պոչով, ամեն մի փայլուն օդերեւոյթով չը յափշտակուել և
միամիտներին էլ չը յափշտակեցներ: Արովհետեւ այդ խափու-
սիկ երեւոյթները երբէք չեն կարող խանգարել այն հրաշալի
և անխախտ օրէնքները, որոնք մի անգամ ընդ միշտ, և յաւի-
տեանս ժամանակաց, սահմանել է օրէնսդիրների մէջ առա-
ջին և ամենամեծ Օրէնսդիրը — երկնի և երկրի ստեղծող
Աստուածը: Հինգերորդ՝ «Վայծերի» կամ նրա նման տեն-
տենցիա ունեցող գրուածքներում աշխատել չը խղել, չը ջը-
լատել այն բարոյական օղակները, որով մի ազգի դասակար-
գերը մէկվմէկու հետ միացած են ամբողջ դարերի ընթաց-
քում: Այս հասկանում եմ, երբ այդ օղակները կանոնաւորե-
լու, մաքրելու համար գործում է մի հրապարակախօս, և կամ
եթէ վիպասան, զոնեա այն ընդունուած ձևերով, որով այդ
դասակարգերը, ամբողջ ժողովուրդը, սկսի հետզհետէ ըմբռնել
իրան սխալմունքը, յիմարութիւնը, իսկ այդպէս... այդպէս
գործելում ես ոչ մի միտք չեմ տեսնում, թող որ դուք այդ
դէպքում ևս հակասում էք ձեզ: Օրինակի համար, ընթեր-
ցող, պ. Բաֆֆին յափշտակուած է ամբոխով, նա նրանում
գտնում է մեծ զօրութիւն և բաւականանում: Հատ սիրուն:
Բայց ահա միւսնայն պ. Բաֆֆին գտնում է նոյնպէս, որ «հայ
(ամբոխը) մի կոյր հաւի սիրա չ'ունի» (եր. 350), որ «հայը
աղբի ջրաղաց է, պէտք է գցել նրան տապրակի մէջ և խփել
պատին, որ երկու աչքերն էլ կուբանան» (եր. 105):

Աւա յիշում եմ, ընթերցող, որ մի «Խենթ» էլ մի օր
արամաբանում էր թէ՛ հայ ամբոխը «անկենդան դիակ է,
անզգայ քար է, հող է, մի անպէտք է որդ ու ճճի է» — մի
խօսքով մի բանի պէտք չէ դալիս, իսկ այսօր... այսօր, երեւի
բամին շուռ է եկել, այսօր հայ ամբոխը մեծ զօրութիւն է եղել:

Ասեցէք, պ. Բաֆֆի, ինչ է ասում «Մշակը» (կարծեմ ընթերցողիս շատ հասկանալի պէտք է լինի, թէ պ. Բաֆֆիի հետ խօսելիս ես ինչի՞ «Մշակի» վկայութիւններին եմ դիմում): «Ղշմարիտ է, որ կը գտնուին այնպիսի արհեստագէտներ, որոնք սովորութիւն ունին զեղեցիկ, կանոնաւոր, ճարտար, բարձր, վերացական ոճով ամբողջ հատորներ գրելու, իրանց արդիւնաւոր ստեղծութեանքի մէջ մի առողջ միտք անգամ չը յայտնելով... բայց միթէ անպատճառ պիտի կարծեմ թէ հոգաբարձութիւնը *) (այս դէպքում ժողովուրդը) կը խափուի արտաքին ձևերով, կը յափշտակուի այն գրութեանով, որտեղ միտքը զոհված է ձևին:»

Հարուսակներ: Հայ ամբողջը, ինչպէս ամեն մի ամբողջ, պ. Բաֆֆի, ձեր կարծածներէից ոչ մէկն էլ չէ: «Աս մի քնած առիւծ է, որ չի զարթի, ոտքի չի կանգնի, մինչև որ իրան քունը կատարելապէս չի առնի, Պարսկաստանի երկոտանի և չորքոտանի զազանների հետ ծանօթ եղող պ. Բաֆֆին պէտք է որ անսած լինի քնած առիւծին: Այ տեսէք: Առիւծը քնած, խորը քնած է, կարծես մեռած է: Անպատի սաստիկ տապից օդը նօսրացել է, այնպէս որ առիւծի շունչ քաշելն

*) Այս տողերը հանում եմ «Մշակի» այն առաջնորդողից (1882 № 7), ուր պ. Արծրունին Ներսիսեան ուսումնարանի հոգաբարձութեանը խորհուրդէ և խրատ էր տալիս թէ ո՞ր մարդը կարող է այդ ուսումնարանի համար տեսուչ լինել: Քիմիկոս պ. Անդրէաս Արծրունու խմբագիր եղալը պ. Գրիգոր Արծրունին, այն ժամանակի դատում էր, ընթերցողը որ Ներսիսեան ուսումնարանի տեսուչ ընտրելու համար, հարկաւոր է զետեմականներին կոնկրետ չը բաւելէր Նրանց թէ՛ ձեռագիր և թէ՛ ապագիւր ղեմական աշխատութիւնները հարկաւոր է նախապէս քննել և ապա, ի հարկէ, ամենեւի ղեմականին Ներսիսեան ուսումնարանի տեսուչ նշանակել: Իմ կարծիքով այդ միտքը, իբրև սկզբունք, վատ չէ, թէպէտև մեր մէջ կարող է աներազորել և թէ անտեղի լինել, բայց ահա անց է կենում մի քանի տարի և մեր հըրապարակախօսը դաւաճանում է այդ գեղեցիկ միտքը:

անգամ նշմարելի չէ: Գալիս են ճանճեր, սողուններ ու զեռուններ, թռչկոտում, թառում են առիւծի վերայ. կծոտում և խայտում են նրան — առիւծը չէ զգում, շատ-շատ պոչը կամացուկ ժպտ է տալիս միմիայն: Վաճիւն սկսում է շշնկալ, առիւծի քունը — խորկնալ: Մնչում է հողմը, օդում աւազից մրրիկ — թաթառ — է բարձրանում, բայց առիւծը դարձեալ չէ զարթնում: Անձրևի տարափները սկսում են ծեծել առիւծին, բայց նրա պէտքը չէ — առիւծը դեռ իրան քունը առած չէ: Մի գուցէ դուք յանդգնութեամբ կամ միամտութեամբ առիւծի մօտ գնաք և նրան կէս-քուն վերկացնէք, վիրաւորէք — զգուշացէք դուք այդ կատաղի զազանից: Վայ թէ նա քնաթաթախ՝ ձեզ պատառ-պատառ անելուց յետոյ, արիւնը աչքը կոխած իրան ձագերին էլ փողոտէ, իրան որջըն էլ քարուքանդ անէ: Թողէք, թող առիւծը իրան քունն առնէ . . .

Դուք ինքնին, պ. Բաֆֆի, վկայում էք որ թիւբքը, քիւրդը, եզիզին, ասորին իրանց քաջութիւնով (իմ կարծիքով կռուպպի մի թնդանօթը հերիք է դրանց քաջութիւնը օդումը ցրուելու համար) և, որ առաւել է, իրանց ազատամտութիւնով պարտական են ոչ այնքան իրանց խէնջարներին ու նիզակներին, որքան այն «բանաստեղծութիւններին, որոցմով որեւորվում են օրօրոցիցը սկսած» (եր. 556): Արդ՝ բարեկամ, դուք և «որոց տուեալ է» գնացէք միևնոյն ճանապարհով: Դուք ձեզ համար նպատակ ընտրեցէք տաճկահայերին ազատամիտ շինել նոյնպէս օրօրոցիցը սկսած:

Համբերատար երկայնամտութեամբ, ոչ այնքան զեղուն, ոչ էլ շուտ փխրուն, այլ անարուեստ և տոկուն սիրով տաճկահայ մանկան մէջ ներշնչեցէք դուք ձեր աստուածային

հուրը և թող այդ հուրը ինքնիրանից արձակե կայծեր, որոնք առանց մեզանից խորհուրդ հարցնելու, իրանք լաւ իմանալիս կը լինին, թէ ո՞ր կողմն և ի՞նչպէս պէտք է սլանալ և շանթել ու շանթահարել անօրինի անգութ սիրտն ու պիղծ հոգին:

Եւրբ որ երկրագործ Հասօն, պ. Բաֆֆի, իրան բերանովը վկայում է թէ նա քաղցած չէ, թէ նա իրան վիճակից դժգոհ չէ (եր. 212), դուք, բարեկամ, ոչ մի հիմք չ'ունիք ասելու, որ «Հասօն միշտ երգում է այն, ինչ որ իսկապէս չ'ունի, կամ բնաւ չէ ունեցել» (եր. 213): Ղուբ, պ. Բաֆֆի, իրաւունք չունիք ժողովրդի խղճին, նրա գիտակցութեանը վրայ բռնանալու. իզուր մի աշխատէք, բռնութեամբ ոչ ոքին դուք չէք կարող արքայութեան մէջ մտցնել: Եթէ մինչև անգամ դուք համոզուած էք որ Հասօն սուտ է խօսում, իրան ասածը նա ինքը չէ իմանում, այն ժամանակ ձեր առաջին երկու ճանապարհ կայ, բարեկամ: Ամ թոյլ տալ որ Հասօն այլ ևս այնքան տուժէ, մինչև որ խելքը գլխին հաւաքէ, և կամ, որ աւելի լաւն է, Հասօնի գիտակցութեան, ինքնաճանաչութեան բերել, հասցնել:

Ինձ այնպէս է թուում թէ դուք, պ. Բաֆֆի, ձեր կուրծքի վրայ զգում էք այն ծանրութիւնը, որի տակ այսքան դարեր անքննելու ու հեծեծում են տաճկահայերը, ձեր հայրը—Սահակը, ձեր մայրը—Նիգարը, քոյրերդ—Մարիամն ու Մաթթաղը...: Ինձ թուում է թէ դուք, բանաստեղծի նման ուզում էք երգել:

«Հերիք, որդեակք, այսքան տարուայ տառապանք,
Հերիք, որքան դաժան քրդի ոտքն ընկանք,
Քանի խոնարհ գլուխ առինք զայլերին,

Եյնչափ ծանր բեռը դրին մեր վզին»:

Բայց, բարեկամս, ախր մի մոռանաք որ տաճկահայերը «Չունին ոչ սուր, ոչ թուր, ոչ նիզակ, ան»:

Իսկ բահերով «չեն կարող անել նրանց շանսատակ»:

Ախր մի փոքր մտածեցէք, պ. Բաֆֆի, որ իզուր չէ, երբ այն խորիտ ու ցասկոտ երգի վերջում ժողովուրդը մի սրտանց «ան» կը քաշէ: Ախր ժողովուրդը զգում է, դիտէ, որ բահը լոկ երկրագործական գործիք է, որ նա կոթաւոր է, որ այդ կոթն էլ փայտից է, իսկ այդ փայտն էլ փուտ ու մուտ է...:

Եյնչափ:

Ընթերցող, վերջին և անաչառութեան խօսքը իմ կողմից դէպի պ. Բաֆֆի վերջին աշխատութիւնը: «Այծերի» մէջ գեղեցիկ կերպով նկարագրուած են քրդերը, թիւրքերը, պարսիկները (եր. 260—299): Եյդ երեսների այն էջերը, ուր պ. Բաֆֆին մի-մի փառաւոր ազատիկներ է տալիս «Մշակի» երկարամեայ, յամառ սովեստականութեանը, հետաքրքրութեամբ և օգտակարութեամբ կարգացուում են:

Պ. Բաֆֆիի զրիչը տեղ տեղ, առաւելապէս 37—39 երեսներումը, կայծրիտում է: Պարզ երևում է, որ «Այծերի» հեղինակը շատ է կարդացել Տուրքենեվ, նա մանաւանդ Չեռնիշևսկի ուսու վկասաններին: Իմ խօսքը, խնդրեմ, ծուռը չը մեկնել: Ամեն դարի և ամեն ազգի զրոյներ միշտ ենթարկուած են եղել իրանց նախորդ զրոյների ազդեցութեանը: Եւ պ. Բաֆֆիի համար հազար երանի չէր թէ կուզ Տուրքենեվների և Չեռնիշևսկիների ազդեցութեանը ենթարկուել, քան պարսկական դէրվիշների և աշգնների: Եւ հօ չեմ ասում թէ պ. Բաֆֆին «Այծերում» էլ այնպէս է

վարուել, ինչպէս մի ժամանակ «Խենթում», ուր Չեռնիշևի-
սկու Վէրա Պաւլովնայի երազը իրան Վարդանի բերանն էր
դնում: Հարուստ և ճշգրտօրէն նկարագրած է պ. Բաֆֆին
տէր-Թօդիկի «դժողբը»:

Պ. Բաֆֆիի լեզուն, ոճը շատ սիրուն, սահուն, կար-
ճուկ ու կարուկ է, որպէս մի լաւ հէքեաթի լեզու:
Վերջին բառերը ես գծում եմ, որովհետեւ, եթէ Բաֆֆիի
գրուածքը լինէր մի գեղարուեստական գրուածք, այն ժամա-
նակ նրա լեզուից ես ուրիշ պահանջներ կ'անէի—բանաստեղ-
ծութեան մէջ լեզուն, նրա ոյժը, ծանրութիւնը և այլն ակն-
մեծ խորհուրդ ունի: Չը գիտեմ ինչի՞ պ. Բաֆֆին իրան
այդ սիրուն ու սահուն լեզուն օտարազգի բաղմամբիւ դար-
ձուածքներով աղաւաղում է:

Չեմ իմանում նմանապէս թէ՛ ինչի՞ մեր արգոյ հեղի-
նակը իրան գրքի մէջ օտարազգի շատ բառեր կը գործածէ,
ինչպէս են, օրինակի համար, «բաղառ (շուկայ), խուրմայ
(արմաւ), համ (թէ), շառ (զըպարտանք, բարութանք), հասիր
(փսիւթ), մուշտի (կռուփ), խէնջար (դաշոյն), չադր (վրան,
տաղաւար), պատրօն (պատրոյգ, փամփուշտ) խօր (խումբ),
փոշմանեւ (ստրջանալ), թափանչայ (ատրճանակ), թուանք
(հրացան), մկրախ (նիզակ), թալանեւ (կողոպտել, աւարառ-
նել), չիբուխ (ծխաբարշ, ծխափայտ. հ. Սրուանձտեանցը
ասում է նոյնպէս ծխափամօրջ), փարչայ (կտոր, մաս), զառ
(գիպակ), փէշ (քղանցք), դամար (երակ), դալղա (ալիք, կո-
հակ), ասկեր (զօրք, զօրախումբ), քամար (գօտի), մեխեւ (գա-
մել, բեւեռել), խարջ (տուրք, հարկ), ջուխտ (զոյգ) և այլն:

Ինթերցանութեանս ժամանակ ես հանդիպում էի նմա-
նապէս և այնպիսի ածականների, որոնք կարծեմ իրանց գո-

յականին համապատասխան չէին: Օրինակ. պ. Բաֆֆին
ասում է, «անուշահոտ խօսքեր, վայրենի կրակ, հոսող ծուխ,
խուղած արտեր, հոյակապ ընդանիք» և այլ: Վարձեալ «յանձն
առեց, խօսքը յետ առեց, փորձ արեցի» և այլն. Վարձեալ
«Վայճերի» նման պարզ և անսեթեթ գրուածքում, իսկոյն
աչքի են ընկնում տեղ տեղ ճարտասանական դարձուածքներ,
ինչպէս օրինակի համար «երեսը մռայլվեցաւ սև թախիճնե-
րով, շունչը հազիւ ել և մուտ էր անում, արեւը թեքվել էր
դէպի գիշերային մուտքը» և այլն: Նմանապէս աւելորդ է
ասել, «խաղողի որթ» որովհետեւ որթ ասելով անպատճառ
խաղողի և ոչ ուրիշ պտղի պէտք է հասկանալ: Թիֆլիզցիք
սխալւում են, երբ ասում և գրում են «Ալէքսանդրեան այգի»:
Պ. Բաֆֆին բացառականը անում է երբեմն ի ց, երբեմն էլ
է ն վերջաւորութեամբ: Օրինակ նա ասում է, «մեռնելից և
մեռնելէն յետոյ, ուտելէն վերջը, տեսնելէն յետոյ» և այլն:

«Կ ա յ ծ ե ր ի»

Գինն է 2 ռուբլի:

P. S. Նորածին «Աղբիւրի» մատենախօս պ. Գաբօն,
առանց իմ յօդուածի վերջանալուն սպասելու, ինչպէս ե-
րևում է, գայթաղած իմ մի բանի բառերից, աճապարած էր,
կողմնակի կերպով ինձ «կօմիկ» անուանելու («աղբիւր» № 3):
Եթէ «Աղբիւրի» ջերմեռանդ մատենախօսը այդ տիտղոսը իմ
անձին է վերագրում, այն ժամանակ ես նրան յայտնում եմ,
որ ես, դժբաղդաբար, այո՛ դժբաղդաբար, կօմիկ լինելու
շնորհքից զուրկ եմ: Խսկ եթէ պ. Գաբօն իմ յօդուածը, իմ
մտքերը կօմիկական է գտնում, այն ժամանակ թող պարոնը

բարեհաճի այդ բանը ապացուցանել: Ասա դրանով ինձ մի առանձին շնորհ և հաճոյք արած կը լինի: Ասա ուրախութեամբ կը լսեմ պարոնին: Մինչև անգամ երեսու դէմ կը նեմ նրա ապականելին — «Սուրբ և պարանոց իմ» պ. Պաբօ: Ի դէպ պ. Պաբօյին, իբրև մի մատենախօսին, և յատկապէս պ. Աղայեանցի «Անահիտը» քննողին, ես կարծում եմ, մի փոքր անպատեհ էր ասել թէ յիշեալ զրոյցի մասին «մեր մամուլը չէ խօսացել», մինչդեռ պ. Պաբօն «Անահիտ» մասին ոչ մի նոր բան չէ ասել, ինչ որ անցեալ տարի «Արձագանքն» էր յայտնել: Հէնց «Արձագանքին» «Անահիտ» արտատպած էջերն ինքն էլ է արտագրել: Իսկ ինչ բան որ պ. Պաբօն իրանից է աւելացրել, դրանք ամէնը, իմ կարծիքով, ոչ այլ ինչ են, եթէ ոչ բառեր ու բառեր: Պարզ երևում է, ընթերցող, որ Պետիտի Մեթիստօֆէլի կողմից աշակերտին աւանդած դասը, բառերի նշանակութեան մասին, «Աղբիւրի» մատենախօսը լաւ է ըմբռնել և ձիշտ գործադրել:

ԻՄ ՊԵՏԵՍԻՆԵՆԸ.

«Արիտիկան մեր մամուլի մէջ» վերնագրով մի յօդուած դուրս եկաւ «Մշակի» 118 և 119 №№-ներում: Պ. յօդուածագիրը իրան նպատակ է ընտրել, ինչպէս ինքն է ասում, «քննել պ. Բաֆֆին և Հայկունուն» — ինձ և . . . քննել է:

Ասի բան այդ քննութեան պատասխան տալս, ես շտապում եմ մի հրապարակական սրտանց շնորհակալութիւն անել պ. Լէօին, որ ինձ մի մեծ հաճոյք պատճառեց պ. Բաֆֆիի «Վայճերի» և «Խաչ. յիշ.» մասին իմ տպագրական խօսքով զրած յօդուածներին, նոյնպէս տպագրական խօսքով պատասխանելու, — մի յատկութիւն, որ ընդունուած է ամեն մի փոքր ի շատէ կրթուած հասարակութեան և բարոյակիրթ մարդկանց մէջ: Այսպէս խօսելու համար՝ ես իմ շարժառիթը ունիմ: Պ. Լէօի և իմ ընթերցողների աչքում այդ շարժառիթը թէև ինքն ըստ ինքեան նշանակութիւն չունի, բայց նա սերտ կապ ունի մեզ, երկուքիս, հեռաբլբլող խնդրի հետ: Բաց յայդմանէ դա մի երեւոյթ է, որ գոյութիւն ունի մեր թէ կեանքի և թէ մասամբ լրագրութեան մէջ: Մենք զիտենք, որ այդ երեւոյթը կրկնուել է և կրկնուում է ուրիշ դէպքերում և ուրիշների հետ: Ուրեմն հարկաւոր է նրան հրապարակ հանել և հասարակաց դատաստանին յանձնել: Ահա այդ երեւոյթը, որ պատահել է ինձ հետ:

«Վայճերի» մասին զրած յօդուածիս հազիւ առաջին տասներորդ մասը դեռ չէր տպագրած, երբ «Աղբիւրի» մատենախօս պ. Պաբօն աճապարեց ինձ «կօմիկ» անուանել,

առանց որ և է հիմք բերելու իր ասածին: Յոգուածս վերջացնելուց յետոյ, պ. Վաթօին ես ասպարէզ հրաւիրեցի, բայց նա փախ տուեց: Փախ տուեց բայց չը լռեց...:

Ղարաձեպ՝ իմ յօգուածը տակաւին չէր վերջացել, երբ «Մշակում» մի լուր տպուեցաւ Ալէքսանդրօպօլեց: Պ. խրմբագրի ասութեամբ այդ լուրը հաղորդող 13 (հրէական թիւ) անձինքը համառօտ և շատ ազդեցիկ եր պոփ իրանց զգուշանքն էին յայտնում իմ քննութեան դէմ:

— Այդ բառերը, ի հարկէ, որ և է զրուածքի պատասխան չէին, կ'ասէ ամեն մի առողջամիտ ընթերցող:

— Ղշմարիտ է, պատասխանում եմ ես, բայց այդ բառերով Ալէքսանդրօպօլի Խիկար-իմաստունները, իրանց խելքով, իբր մի կեղտ ձգեցին իմ գրչի և անձնաւորութեանս վրայ: Ախր ո՞նց կարելի է պ. Բաֆֆիին — «հայ գրականութեան այդ հսկայի» զրուածքը քննել, ո՞նց կարելի է տրպուած գրքի մասին, տպուած բառերով պատասխանել, ո՞նց կարելի է մի կոյր մարդու՝ հարկւրաչեայ Արգոսի ձեռքի տակից իբր փախցրած զանձն ու տանձը հրապարակ հանել:

— Արժէ միթէ տարիքով կամ խելքով մանուկների խօսքերին նշանակութիւն տալ, ինքս ինձ ասացի և լռեցի, ի սրտէ ցաւելով, որ տղայամտութեան կողմից «Մշակի» խմբագրութիւնը կազմող անձինք՝ մի առանձին տարբերութիւն չունին իրանց Ալէքսանդրօպօլեցի իմաստուն-Խիկարներից: (Ալէքսանդրօպօլ լրի իմաստով մի նամակ էլ վերջին օրերումս տպուեցաւ «Մշակում»):

Անցաւ մի քանի շաբաթ: Իմ յօգուածս շարունակ էր:

Յանկարծ տեղի ունեցաւ յայտնի իրողութիւնը «Մշակի» խմբագրի հետ: Անցքի հետեւեալ առաւօտը մի հեղինակ քարոզում էր իբր թէ պ. Արծրունու հետ պատահած անցքի շարժառիթը եղած է իմ քննութիւնը, պ. Բաֆֆիի, «Այսօր» մասին, (Յայտնի է, որ «Այսօր» «Մշակում» չը տպուեցան, այլ առանձին գրքով, ուրեմն այդ գրքի և պ. Արծրունու մէջ ոչինչ համերաշխութիւն չէր կարող լինել):

Ինձ այդպէս ասում էին մարդիկ, բայց ես չէի հաւատում, այն պարզ հիման վրայ, որ թէ նոյն հեղինակը և թէ ես կարող ենք ունենալ մեր բարեկամները ու չարակամները:

Արհամարհեցի ականջիս հասած այդ լուրերն ևս:

Մի քանի օր վերջը պ. Բաֆֆիի հետ ևս այն պատահեցաւ, ինչ որ պատահել էր Արծրունու հետ:

Չար լեզուները այս անգամ աւելի վատ զուարտանքներ էին բերում նոյն հեղինակից ինձ վրայ բարդուած: Աս ծիծաղում էի, զարմանալով մի և նոյն ժամանակ, որ եթէ, յիշուի, իմ քամակիցս այդպէս խօսողներ կան, ի՞նչպէս դոքա մի րոպէ չեն մտածում, որ յայտնի անցքը պատահեցաւ և՛ ուրիշ տեղերում ու ուրիշների հետ. և թէ վերջապէս այժմ հօ յայտնի է պատահած անցքի շարժառիթը:

Այնուհետեւ Թիֆլիսում գտնուեցան, չը գիտեմ, մի թէ մի քանի մարդիկ, որոնք սկսեցին քաղաքային փոստայիւն անստորագիր նամակներ ուղղել ինձ վրայ: Այդպիսի նամակների բովանդակութիւնը, յայտնի է, թէ ի՞նչ կարող է լինել: Աս մազիւ չափ չը վրդովեցայ, որովհետեւ (առանց անձնագով լինելու եմ ասում) այն օրից, երբ ես ինքս ինձ ճանաչել եմ և իմովսանն գործել, հեղեղներ ու կարկուտներ եմ

տեսել ու անցկացրել, այժմ անձրևներից չէի կարող երկիւղ կրել:

Իմ արհամարհանքից լուրթիւնը իմ ոսոխին թէ ոսոխներին հարկադրեց մի այլ միջոցի դիմել: Սի օր փողոցից անցկենալիս, բարեկամներիցս հեռեւեալ խօսքերն եմ լսում:

— Ղշմարի՞տ է, որ քեզ ծեծել են:

— Ո՞վ:

— Յայտնի չէ:

— Ինչե՞ համար:

— Բաժիկի գրքերը քննելուդ համար:

— Փողոցից յանկարծ դուրս պրծած այդպիսի շան դեռ ևս պատահած չեմ, բայց եթէ պատահեմ, ատամները փըշրելու եղանակը լաւ եմ իմանում, — ասում եմ իմ բարեկամներին և հեռանում:

Լնցնում է էլի մի քանի ժամանակ: Մի օր հայրենիքիցս քրոջիցս, եղբորիցս, բարեկամներիցս նամակներ եմ ստանում: Բանից դուրս է գալիս, որ իմ քննութեան մասին Թիֆլիսի մոլթ անկիւններում խօսուած կասէ կօսէները մարդիկ իմ հեռաւոր ազգականներին ևս հաղորդել են երկու տեսակ ճանապարհներով, որոց մասին խօսելը թէ երկար է և թէ ձանձրալի ու զզուելի:

Պ. 1 էօն, որ իւր յօդուածը Շուշուց է գրում, ինչպէս երևում է, Թիֆլիսի մոլթ անկիւնների կասէ կօսէներից նոյնպէս տեղեակ է, որովհետեւ նա ասում է «չիմանալով որ այդ հարուածներից հասնում է և յօդուածագրի (իս) քթին ու աչքին»: Հարկաւ պարոնը կամ ճանապարհորդներից է լսած այդ երեւակայեալ հարուածների պատմութիւնը

և կամ, որ ինձ աւելի հաւանական է թուում, Թիֆլիսից նրա գրել են իւր բարեկամները:

Այս բոլոր աղայական բժանդրութեանց, այս սուտակասպաս զըպարտութեանց հեղինակը, կամ հեղինակները, բնականաբար, ինձ անյայտ է, բայց ստացածս անստորագիր նամակներիցը ես նկատում եմ, որ այդ պարոնը կամ պարոնները փոքր ինչ զարգացած են թուում և բաւական կանոնաւոր գրում, հեռաբար, եթէ դրանք որ և է ասելիք ունին քննութեանս դէմ թող ասեն ու գրեն — ինչպէս ահա այդ արեւ է պ. 1 էօ:

Իսկ եթէ նա կամ նոքա գործ ունին իմ անձի դէմ, այն ժամանակ թող իրանց որջերից դուրս գալով՝ ընտրեն մէկն ու մէկը այն միջոցներից, որոնք որ լաւ հասարակութեանց ու ազնիւ մարդկանց մէջ ընդունուած են առ հասարակ:

Եթէ իմ ոսոխը կամ ոսոխները այդ միջոցներից և ոչ մէկին չը դիմեցին մինչ օրս, կարող են դիմել այսուհետեւ: Իսկ եթէ նա կամ նոքա այդ բանը անելու չեն, այն ժամանակ շատ լաւ կանեն, որ իրանց նամակներին ևս վերջ տան, գէթ իրանց կօպէկները խնայեն, որոնք ձեռք բերելու համար, ո՞ր դիտէ, թէ ի՞նչ տեսակ շանտաժներ են սարքում միամիտների գլխին:

Այսչափ: Միւս անգամ ես կը պատասխանեմ պ. 1 էօին:

Տեսնենք պ. 1 էօն ի՞նչպէս է քննում պ. Բաժիկին և «այլիւնուն» — ինձ: «Նա ասում է.

1) «Արիտիկան գրականութեան մէջ հարկաւոր է, որովհետեւ օգտակար է:»

2) «Ուսու գրականութիւնը ուրիշ էր Բէլինսկուց առաջ

և ուրիշ նրանից յետոյ :

3) «Ամեն կրիտիկա, կրիտիկա չէ» :

4) «Մենք դեռ կրիտիկա չունենք: Մեր առաջնակարգ հեղինակ պ. Բաթիկի աշխատասիրութիւնները Հայկունին քննելէ «Մեղութի» մէջ» :

5) «Այդ Հայկունու զրաճը «կրիտիկա չէ, դա քննադատութիւն չէ, այլ կըբոս կուսակցական ոգու արտայայտութիւն է: Հայկունու յօդուածները, նրանց ամեն մի տառը հնչում է թշնամութիւն, կողմնապահութիւն, կիրք, կուսակցական մոլեռանդութեան հասնող ոխ: Այդ կրիտիկայի նման յօդուածները լիքն են թշնամական յարաբերութիւններով և ունին մի ակնյայտ ձգտում — ծառայել յայտնի կուսակցական նպատակին. որովհետեւ նրանց (յօդուածների) ամեն դարձուածքում նկատուում են խիստ աչքի ընկնող աչառութիւն, կողմնապահութիւն անարդարութիւն: Մեղք է նրանց ոչ միայն մատենախօսութիւն անուանել, այլ և հասարակ քննողական յօդուածներ: Այսպէս ասելու իրաւունք է տալիս և այն հանգամանքը, որ այդ յօդուածները տպւում են «Մեղութի» մէջ» :

6) «Արիտիկոսի պաշտօնը սուրբ է. նա ամեն կըբոս մարդու բանը չէ, ըուզական տպաւորութիւնը չէ կարող կրիտիկա անուանուիլ. վերջապէս կրիտիկան զանազան ստոր միջոցների և կուսակցութիւնների ծառայելու նպատակ չունի» :

7) «Պ. Հայկունի դուցէ լաւ կրիտիկոս լինէր, եթէ գործիք չը լինէր կուսակցութիւնների ձեռքին» :

8) «Ժողովրդական վէպը ստեղծւում է ժողովրդական կենքից» :

9) «Պ. Բաթիկի «Ոսկի աքաղաղը» թանգազին աշխա-

տասիրութիւն է» (փափագելի էր իմանալ թէ պ. Վ. Իրանից է հասել այդ եզրակացութեան, թէ «Ոսկի աքաղաղը» մասին պ. Պ. Խ. յօդուածը «Մշակում» կարգալից յետոյ) :

10 «Ուստ Մասիսեանի և հայ Մասիսեանի մէջ ահազին զանազանութիւն կայ» :

11 «Պ. Հայկունու յօդուածների հոգին տրամադրւած է համարել պ. Բաթիկի «Կայծերը» և «Խաչագողի յիշատակարանը» ինչպէս հէքիաթ, բայց դրանք հէքիաթներ չեն, որովհետեւ հայերի կեանքը կարող է բաւոր Պետրոսներ և Մուրադներ ունենալ» :

12 «Հէքիաթը կարող է աւելի շատ արժանաւորութիւններ ունենալ քան Լամիլ Օլայի բամանները: Մենք ճանաչում ենք լաւ կողմից» : «Հազար ու մի գիշերները» զուտ հէքիաթներ են, ամբողջ աշխարհին յայտնի են, քան զանազան «Վինգէլ» ներ և «Հայ բողոքականի ընտանիքներ» :

13) «Խէնթը» առաջին անգամ կարգալիս մենք չէինք հաւատում, որ այդպիսի (Թումաս Էֆէնդու) տիպ ծնվէր, բայց բազմաթիւ վկայութիւններ մեզ համոզեցին այս բանի մէջ» :

14) «Լեւոն Սիւի «Թափառական հրէայի» Ուղեւորի, Մոբոկի և այլոց տիպերը իրականապէս յայտնուեցան ճիշդ» :

15) «Հայերը երկար դարերի ընթացքում ենթարկուելով զանազան պատմական փոփոխութիւնների, հասել են մինչև մեր օրերը կեանքի առանձին-առանձին տեսակներով. հայը կարող է փոխել իր բնակութեան տեղը, բայց նրա բնութիւնը չէ կարող ենթարկվել կլիմայական հանգամանքների փոփոխութեան» :

16) «Պ. Բաֆֆիի արժանաւորութիւնները ամէնքին յայտնի են. նա ունի գեղեցիկ ոճ, ունի տաղանդ, ունի ընդունակութիւն ապաւորութիւն գործել ընթերցողի վրայ, ազդել նրա մտքի վրայ: Այլապէս անկարելի է բացատրել այն հանգամանքը, որ նրա բոլոր աշխատասիրութիւնները յայտնի են ամէնքին, վայելում են հասարակաց սէրը» :

17) «Պ. Բաֆֆիի գրուածքները մեր նոր գրականութեան մէջ մի երևոյթ է. նրա հեղինակութիւնները դարազուտ են կազմում մեզանում» :

18) «Բաֆֆիի աշխատասիրութիւնները մեր ժողովրդի մէջ փառաւոր ընդունելութիւն են գտնում: Ի՞նչ շարժառիթ կայ խեղդել, ոչնչացնել այդ տեսակ հեղինակութիւնները, ծաղրելով նրանց հասարակութեան առջև. խել է հեղինակի եռանդն ու ճիգը: Այդ հեղինակութիւնները չունին ոչ մի շօշափելի պակասութիւն. նրանց դէմ ծաղրական կրիտիկան ի զուր է, ունի միակ նպատակ—ծառայել կուսակցութեան: Բաֆֆին մեզ համար անգին է: Միթէ արժէ ծաղրել այդպիսի վարք ունեցող գրվածքների վրայ, — այդ մասին թող դատէ ինքը պ. Հայկունին, միայն առաջ դէն դնելով կիրքն ու կուսակցական ոգին: Արիտիկոս կարող է դառնալ միայն հաստատ համոզմունքի տէր մարդը, որ ճշմարտասէր, արդարասէր է, որ ազատ է կողմնապահութեան, կեղծաւորութեան, կրքի ազդեցութիւնից: Պ. Հայկունու կրիտիկայի ձևը, ոգին ակներև ցոյց են տալիս, որ նա ազատ չէ այդ վերջին ախտերից, հետեւաբար նրա կրիտիկան էլ կողմնասէր է, և ոչ մի ինչ է, եթէ ոչ զրպարտութիւն, կողմնապահութիւն և կեղծաւորութիւն» :

19) «Արկնում ենք պ. Հայկունին միտք չունի անաչառ

քննադատ լինել. կրկնում ենք որ նա կողմնասէր է» :

Վերջապէս՝

20) «Բեկտրիստ, օպտիմիստ, պերիօդներ (և) կեանքի մէջ կուտուրական աւանդութիւնները պայմանաւորում են նրա նոյնանման ընթացքը դէպի առաջ և առանձին դժուարութիւններ չեն ներկայացնում զննելու համար» և այլն և այլն:

«Պ. Բաֆֆին և Հայկունուն քննող պ. Վօի սոյն այս յօդուածի «ոգի»-էն ես, ընթերցող, միմիայն այսքանս հասկացայ, որ պարոնը մեծապէս գայթակղել ու զայրացել է իմ մատենախօսական դիտողութիւնների խիստ ոճից: Իմ այդ կարծեցեալ յանցանքը ես չեմ ծածկում և չեմ էլ կարող ծածկել: Իսկ այդ յանցանքը յոյս ունիմ քաւել և արդար դուրս գալ այն ժամանակ, երբ գործ կունենամ Վօներից մի փոքր աւելի հասկացող քննադատների հետ:

Մինչև այժմ հրապարակ եկող պ. Վօներն, ես կարծում եմ, պէտք է ինձանից շնորհակալ լինին, որ վերոյիշեալ կարծեցեալ յանցանքիս համար ես ինքս եմ դատապարտվում: Դրանով ես իմ գրածների յարգը (եթէ ունին) ինքս նուստացնում,—եւ այդ հասկանում էի և հիմայ էլ հասկանում եմ: Աւ ճշմարիտ, եթէ իմ գրածների ոճի խստութիւնը չը լինէր, պ. Վօն ի՞նչ բանի վրայ պիտի հիմնէր իւր «կրիտիկան մեր մամուլի մէջ» խորագիր կրող յօդուածը:

Այս քանս պ. Վօի առերևոյթս իրաւացի յարձակմունքների առթիւ, իսկ նրա յօդուածի մնացեալ բոլոր կէ-

տէրի վերաբերութեամբ իմ պատասխանը կը լինին Պետրի
հետեւեալ տողերը:

Աշակերտ.

Բայց բառերի հետ պէտք է միտք լինի.

Մէքնստօֆելէս.

Այո: Բայց պէտք չէ շատ մտատանջուիլ.

Պատճառ, ուր միտքը պակաս է լինում:

Այնտեղ լոկ բառը մեծ դեր է խաղում,

Բառերով շատ լաւ հնար է վիճել

Բառերով ամբողջ սեստեմայ կազմել.

Բառերին հեշտ է հաւատ ընծայել

Բառից չես կարող և մի տառ հանել:



ԵՐԿՐՈՐԴ ՊԵՏԵՍՈՒՆՆԱՍ:

Ութ ամիս առաջ պ. Բաֆֆիի «Պայծերը» կարդալով ես, ընթերցմանս ժամանակ, իմ նկատմունքներս նշանակեցի զըբի լուսանցքների վրայ: Յետոյ՝ դիտալով, որ պ. Բաֆֆին, իւր հին սովորութեան համեմատ, զըբի երկրորդ հատորի հրատարակութիւնը, թերեւս, յետաձգէ, կասկածելով՝ թէ նա, թերեւս, այդ հատորը զրած էլ չէ, — ես իմ նկատմունքներս հաւաքեցի, փոքր ինչ ընդարձակեցի և յանձնեցի մամուլին:

Յօդուածիս ճակատին զրած էր Մարեմաթաուիւն—բիբլիօդրաֆիա—բառը, իսկ նկատմունքներս ես անուանել էի Մարեմաթաուիան դիպլոմաթիկներ: Մի տեղում էլ ասած էի, թէ «երբ ասպիւնայ փնայասպը» և այլն: Ասած էի, որ «Պայծերի» վրայ նայում եմ, որպէս մի կիսապ շինութեան վրայ: Աւ որովհետեւ շինութեան մեծագոյն մասը արդէն պատրաստ էր, ուստի ես՝ հէնց այդ պատրաստի մասերը վերցնելով, մի առ մի զննեցի ու լուծեցի, ի հարկէ, ինչպէս ինքս էի հասկանում:

Յօդուածս շարուեւ սկսած օրից, նրա վերջանալից յետոյ, շարունակ ութ ամիս, փոքրոգի մարդիկ, արուեստական հեղինակներ, շատ դէս ու դէն ընկան, զլինները շատ անգամ քարոյր տուին, բայց իրանց մերկութիւնը չը կարողացան ծածկել: Այնուհետեւ, այդ մարդկանցից այս և այն դքր իջան լրագրական ասպարէզ, զրոտեցին, մրտեցին և լռեցին:

Ուրեմն՝ պատրոյզը էլի չ'ընեց — զարձեալ անյաջողու-

Թիւն: Մինչդեռ խնդիրը շատ կենսական էր: Հաշիւ- չէր հեշտութեամբ անձնատուր լինել, ձեռքից թողնելով անքան ու անքան ահաւոր ու փառաւոր տրօֆէաներ: Ի՞նչ պէտք էր արած: Նոյն մարդիկը այս անգամ ի մի խումբուեցան, հաւաքական ոյժերով ութ ամիս շարունակ չարչարուեցան և իրանց փետուրեայ հրացանը նորից լեցրին *) ու ահագին շփնդ ու բամբակնով դէպի Հայկունին ուղղեցին, բայց, երևակայեցէք ձեզ, գնդակը, դարձեալ նպատակին չը դիպաւ:

Այնպէս որ, գոնեա ես ինձ իրաւունք եմ համարում յիշել այստեղ բանաստեղծի խօսքերը թէ՛

«Յերկունս կայր լեռնն ահագին

Եւ նա ծնաւ մուկն չնչին»:

Պ. Փաւստոսի յօդուածը ամեն կողմից, ինչպէս ասում են, շատ մազալու է:

Ինչէր չ'ասես, որ այդ յօդուածի մէջ չը կան:

Նախ և առաջ այնտեղ կայ, դէսից դէնից ժողոված ու կարկատած՝ մի երկայն բարակ քարոզ, որով մի առ մի թւում է, թէ կրիտիկոսը ինչ ու ինչ յատկութիւններ պիտի ունենայ: Արդեօք ո՞ւմ և ինչի՞ համար է այդ քարոզը: Չարմանալի բան. մարդիկ, որոնք մարքնախոսութեան և մարքնախոսական դիպրոտիկաներ բառերը կրկնաբար չեն կարող որոշել, այժմ վեր են կացել և կրիտիկայի ինչ լինելն են բացատրում: Ո՞րքան խեղճութիւն:

Մազալու յօդուածումը կան, նմանապէս այսպիսի հարցեր, օրինակի համար թէ, աղբաց մէջ առաջ բանաստեղծներն

*) Խօսքս «Մշակի» 141, 142, 143, 144, 145, 146, 148, և 150 № № բանաստեղծական բաժնի յօդուածի մասին է:

են ծնուել, թէ կրիտիկոսները, թէ գրականական գողութիւն ասած բանը Սարգուն ի՞նչպէս է հասկանում: Թէ որովհետեւ տիկին Ստօու ամերիկացիների համար «Աղբար Թովմասը» գրեց, ուստի տաճկահայերի համար էլ պ. Բաֆֆին իւր «Այծերը» շարադրեց: Թէ որովհետեւ պ. Նըրիցեանցը հանգուցեալ «Նազարեանցին քննելիս» («Փորձին» մէջ) ժամանակակից հայ կեանքը նկարագրեց. ուստի Բաֆֆին ջատագով պ. Փաւստոսն էլ, յիշեալ նկարագրութիւնը իր յօդուածի մէջ փոխադրեց: Թէ՛ Բաֆֆին իրանից առաջ եղող հայ վիպասաններից երբէք գողութիւն չէ արել, այլ միմիայն հետեւել է դրանց. թէ՛ Հայկունին ի զուր այդ կետում մեղադրում է Բաֆֆին, երբ սա չէր կարող չը հետեւել իւր նախորդներին: Թէ՛ «Այծերի» այս ինչ խօսքերը ասողը ոչ թէ հեղինակն է, այլ նրա մօզօնած մարդիկը—Մկօն ու Վարօն, Հիւբբին ու Ջուլօն: Թէ՛ Բաֆֆին «նշանաւոր բանաստեղծ, տաղանդաւոր վիպասան» է. թէ՛ այդ տեսակ մարդիկ ոչ երբէք կը մեռնին, ուստի հարկաւոր է, որ Բաֆֆիի գրքերը, ինչ գնով էլ որ լինի, անպատճառ ծախուին, թէ... մի խօսքով այն թէ՛

Երեկվայ մեր չաչ ու բանջար

Այսօր դարձաւ մի մեծ հանձար:

Թող ներէ ինձ պ. Փաւստոսը, որ ես առ այժմ ազատ միջոց չ'ունիմ իւր այդ բոլոր «սօփիզմները», ինչպէս ասում են, բառ առ բառ և թառ առ տառ, հերքելու: Ես ժամանակ և ցանկութիւն չ'ունիմ նմանապէս մի առ մի ապացուցանելու, որ պ. յօդուածագրի իմ յօդուածումն գտած «հակասութիւններն» իր գրչի տակ միմիայն հակասութիւններ են դուրս եկել:

Երբեք ապացոյց ասածներին՝ ես իմ «հակասութիւններն»

րիցը» և պ. յօդուածագրի «սօֆիզմներից» կը վեր առնեմ մի քանի օրինակ և նրանց «կը լուսարանեմ և կը բացատրեմ» ընթերցողի առաջ:

Պ. Փաւստոս «սօֆիզմ» է համարում և իւր ողևորութեան մէջ ինձ «լիբը» անուանում հետեւեալ նախատառութեանս համար. «ինձ թուում է թէ դուք, պ. Բաֆֆի, ձեր կուրծքի վրայ զգում էք այն ծանրութիւնը, որի տակ այդպիսի Գաբրիէլ անքանքում ու հեծեծում են Գաբրիէլները — ձեր հայրը, Սահակը, ձեր մայրը, Նիգարը, քոյրերդ՝ Սարիամն ու մարթաղը»: Պ. Փաւստոս ինձ նախատում է «տիրացու» անուանելով: Ես այդ բառի մէջ ոչինչ նախատական բան չեմ տեսնում: Ես մինչև անգամ կարծում եմ, որ աւելի լաւ է լաւ տիրացու լինել, քան վատ վիպասան, որ մի տիրացուի չափ էլ չէ հասկանում:

Ամեն մի հայ «տիրացու» օրինակ, վերևի տողերը կարդալիս՝ անշուշտ կը հասկանայ, որ դրանք Բաֆֆիի ծնողացին ու ազգականացը չեն վերաբերում, այլ նրա, իմ և ամեն մի հայի հայրենակիցներին — տաճկահայերին: Եւ տաճկահայի է, որ Գաբրիէլ անքանքող ու հեծեծողը մասնաւոր անձինք չեն կարող լինել, այլ մի ամբողջ ժողովուրդ, յորդուց յորդու: Բայց եթէ պ. Փաւստոսը բանաստեղծութեան գէթ այդ ու բնը զիտեմար, ինձ վրայ չէր զայրանալ և այն ժաւանակ, եթէ յիշեալ տողերով ես ուղղակի Բաֆֆիի ծնողացին ու սիրելիներին ակնարկէի:

— «Բէադրիչէիս ոչ մի տեղ չէի կարող գտնել, եթէ ոչ բանաստեղծութեան մէջ միմիայն» — այսպէս ասում էր «Աստուածային կատակերգութեան» հեղինակը և իրաւունք ունէր: Յայտնի է, որ օրիորդ Բէադրիչէ Տանդէի սիրելեանն

էր, որին յետոյ այլաբանօրէն նա դուրս բերեց իւր անմահ զրուածքում: Ես կարող էի և ուրիշ այսպիսի օրինակներ էլ բերել և աւելի ընդարձակ կերպով, բայց յօդուածս երկարացնելուց վախենում եմ:

Պ. Փաւստոս իր մասին փաթաթան է արել իմ «ծրագիր» բառը և դէս ու դէն ձգձգում: Ի վերջոյ ես նրա «Այս-ծերին» ծրագիր չեմ անուանել, այլ «Եթէ — (quaisi) — Զրաֆի» եմ ասել: Ես նմանապէս նրա հերոսներին չեմ համեմատել այն անձանց հետ, որոնք մի «ամբողջ աշխարհ սզոյ մէջ թողին» Ես ասել եմ, որ «որսորդ Ալօն և բնի. ուղղւած է ինչեւ կարծէ» (Եւ էն *): Պ. Փաւստոս «սօֆիզմ» է համարում, «հակասութիւն» է գտնում իւր «Այս-ծերին» հեղինակ անուանելու, մինչդեռ հերիաթն էլ բանաստեղծութիւն է, — «հերիաթը մի անհատի ստեղծագործութիւն չէ, հերիաթը մի ժողովրդի երեւակայութեան ծնունդն է. նրա հեղինակը ինքը ժողովուրդն է: Բանաստեղծը (բանաստեղծը հա՛, չը մոռանա՛ք) կարող է և իրաւունք ունի վեր առնել ժողովրդի բերնից մի հերիաթ և նրան իր անանջն յե ու գոյնը տալով, վերապրել (վերաստեղծել հա՛, դարձեալ չը մոռանա՛ք) նրանից մի ամբողջ դրամա կամ մի ամբողջ վէպ»:

— Եւ տաճիչ է, միայն կը ներէք ինձ ձեր ասած «անանջն ձե ու գոյն» բառերը ինձ համար պարզ չեն: Եթէ ես նրանց բառացի վերցնեմ, դուրս կուգայ մի կատարեալ տգիտութիւն:

Իմ հասկացածով հերիաթից մի դրամա կամ վէպ վերա-

* Վերջերում ես այդ բառերի և այդ մտքի վրայ ընդարձակօրէն կը խօսեմ:

ստեղծելու առաջին և անհրաժեշտ պայմանը՝ սպեղծողական զորութիւնն է, «Առանձին ձև ու գոյնը» արտաքին և չնչին յատկութիւններ են:

Յունաց մէջ քիչ չեն այն հէքիաթ ու առասպելներն, որոնք յետոյ այդ մեծ ազգի հանձարների գրչի տակից մի-մի կատարեալ զեղարուեստական փառաւոր արձաններ դուրս եկան:

Միևնոյն օրինակը մենք տեսնում ենք և Հռովմէացւոց զրականութեան մէջ:

Նոր դարերու բանաստեղծների հօր անմահ զրամայի նիւթը՝ նոյնպէս մի հէքիաթ, մի զրոյց էր, բայց այդ հէքիաթից «()տէլը» ստեղծելու համար հարկաւոր էր Շէքսպիրի հանձարը, նրա ստեղծողական մեծ ոյժը ունենալ:

Պատկերի միւս կողմը շուռ տանք:

Յայտնի է, որ բանաստեղծը կ'ստեղծէ այն ժամանակ, երբ նիւթաբերացի ոգևորուած, ամփոփուած ու սաւառնած է իր մօքերի և իր երեւակայութեան մէջ:

Բայց բանաստեղծը երբեմն ստեղծում է և այն ժամանակ, երբ թելադրում են, երբ ասում են թէ զրի՛ր, օրինակի համար, մի «Վալէնշտէյն», մի «Капитанская дочка»: Շիլլերին և Պուշկինին ասում են, զրի՛ր, բայց նոքա չեն զրում, որովհետեւ իրանք շարադրող չեն, այլ ստեղծող:

Պաշտով մեր Բաշֆիին, ես ասել եմ և դարձեալ ասում եմ, այդ մարդու մէջ ստեղծողական զօրութիւն չը կայ, որ նա վերաստեղծող չէ, այլ գրող, շարադրող, շարահիւսող: Նա վեր է առնում, օրինակի համար—այն էլ միշտ «Մշակի» թելադրութեամբ, նրա ցուցմամբ—մի հէքիաթ և երկար չար-

չարուելուց յետոյ՝ շինում է դարձեալ մի հէքիաթ, առ առաւելն «իր առանձին ձև ու գոյնը» տալով: Հէքիաթների դարերից մի քայլ անգամ այս կողմը չէ անցել «մեր տաղանդաւոր վիպասանը»: Բաշֆին լսել է, օրինակի համար, որ Տէր Աստուածը երկրից վեր առաւ կաւը և նրանից շինեց մի Ադամ, բայց նա չէ լսել, որ Տէր Աստուածը միմիայն դրանով չը բաւականացաւ, այլ նա Ադամին մէջ «իչեաց նա և շունչ կենդանի»:

Պ. Փաւստոսը պնդում է, որ «Վայժերը» կարգաւ յաճախակից վէպ է:

Պատասխանում եմ. այդ վէպի մէջ, նրա գլխաւոր գործողների մէջ, ցոյց տուէք ինձ մի անձնաւորութիւն, որ իւր ամբողջ հասակով, իր բոյ ու բուսատով, իր բնաւորութեամբ կազմակերպուած լինէր հայ ժողովրդի ժամանակակից (կամ պատմական) պայմանների ազդեցութեան տակ, որ հայ կեանքի ճշգրիտ արտայայտիչն ու ներկայացուցիչը լինէր:

Բաշֆին լսեց, լրագիրներում կարդաց, որ Նւրսուպոյում այսպիսի և այնպիսի գործողներ են դուրս եկել, արի՛ այդպիսի գործողներ մեզ համար ևս չինեմ, ասաց նա, և շինեց: Բաշֆին ինքն էլ անշուշտ հասկանում է, որ իւր Ավօներն հայ ժամանակակից կեանքի ներկայացուցիչներ չեն, և չեն կարող լինել, այլ դրանք այդ կեանքի համար ի՞նչ մի երեւոյթ են:

Խեղճ վիպասան, չը գիտէ, որ ժամանակակից վիպասանութիւնից մենք կեանքի իդէալներ չենք պահանջում, այլ նոյն ինքն կեանքը:

Բաշֆին կամ Փաւստոսը չը գիտեն նմանապէս, որ Ժ. Ռուսօներն ու Հիւգօներն—այդ փոքր ու մեծ ուսման-

տիկներն—չեն կարող ում և իցէ դէմ բողոքել, որովհետեւ նրանք մեռած են: Նրանց, մանաւանդ վերջինի, բանաստեղծական հանձարը այսուհետեւ մեզ հարկաւոր չէ գալի, այլ միմիայն պատմութեանը, ուր նոցա տեղը, ի հարկէ, շատ փառաւոր է:

Պ. Փաւստոս յաւակնութիւն է ցոյց տալիս Բաֆֆին Տուրգենեւի հետ համեմատել *): Պա կատարեալ սրբապղծութիւն է: Նախ՝ նրա համար, որ Տուրգենեւը ծաղրում էր այն, ինչ որ Բաֆֆին գրուագում է, և երկրորդ՝ պիտի գիտենայ պ. Փաւստոս—որ Բաղարով, Լուչբով, Մարքելով, Սալոմին, Նեժտանով, Մարիաննա, Մաշուրինա և այլն, Տուրգենեւի մոգօնած մարդիկը չեն, այլ ռուսական կեանքի, սրա մի որոշ շրջանի ու ժամանակի հարազատ ծնունդըն են: Տուրգենեւը, որպէս ճշմարիտ բանաստեղծ, այդ կեանքը վերաստեղծեց, ցոլացրեց, մակերևոյթի վրայ բարձրացրեց:

Բաֆֆի Ավօներն ու Վարօներն ովքեր և ինչ բաներ են:

— Վետնից յանկարծ բուսած մի-մի սունկեր, մի-մի անգոյն ու անհամ տանձի պոչեր:

Բայց ես էլի երկարաբանում եմ: Հա մի բան, որ յանկարծ միտս եկաւ:

Պ. Փաւստոսը զարմանում է, որ եթէ ես «Վաւիթբէզն» ու Խամայի մեղքութիւնները (մինչ օրս էլ) կարդացած չեմ, ինչպէս կարող եմ դրանց մասին կարծիք յայտնել: (Ոչ մի կարծիք յայտնած չեմ):

*) «Մշակի» Ալալաբալաքի Թղթակեցը վերջին օրերում անգամ դրականապէս վճռեց, որ Բաֆֆին հայ Տուրգենեւ է:

— Պատասխանում եմ: շատ պարզ կերպով, որովհետեւ այդ վէպերի հեղինակին, նրա գլուխ գործոց-ին (chefd'oeuvre) ես արդէն ճանաչել պրծել եմ: Նա մինչև անգամ կարող եմ ասել թէ պ. Բաֆֆի այսուհետեւ գրելիքներն ևս որպիսիք են լինելու: Ասեմ ձեզ: «Մեր տաղանդաւոր վիպասանի» ապագայ վէպերում, համեմատաբար, սակաւ են լինելու չափազանցութիւնը, առասպելաբանութիւնը, աւելորդաբանութիւնը, կրկնութիւնը, հայհոյութիւն, վաւաշտութիւն, խելքի շատ զոռ տալ և այլն: Շատ հաւանական է, որ նրանցում մենք վերջի վերջոյ մի լաւ հայ հոգեւորականի երես ևս տեսնենք, բայց վստահ եմ, որ այդ վէպերի մէջ մենք չենք հանդիպել մի նոր անձնաւորութեան, ասենք տիպի, որին տեսնելիս կամայ աւամայ իսկոյն չը բացագանչէինք «զէլի էն կիկօն»:

Սաններ բուն խնդրոյն մէջ և աշխատենք մեր մեղքերը բաւել և մեր մեռեալները թաղել:

Պ. Փաւստոսի մազալու յօդուածումը երեք գլխաւոր մեղադրական կէտեր կան, որոնք առ երեսնա իրաւացի են: Աւասիկ հենց այդ կէտերի առթիւ է, որ ես գրում եմ իմ պատասխանը: Ահտերը սորա են:

1. Որ իմ յօդուածի լեզուն խիստ, անպառշաճ և անարգական է եղել և թէ նրանում «Մշակի» անունը ի զուր տեղն եմ մէջ բերել:

2. Որ յօդուածումս «մի աններելի համեմատութիւն եմ արել, որ եթէ հասնուէն չ'անուանենք, կատարեալ զըրպարութիւն, չարամիտ բամբասանք է: Արդեօք այդ համեմատութեամբ (այստեղ պ. յօդուածագիրը ոգեւորվում և ոգեւորել է ուզում) պ. Հայկունին Յուդայի համբոյրով չէ

մերձենում դէպի մեր յարգելի վիպասանները ընդհանրապէս և դէպի Բաֆֆին մասնաւորապէս...» (Մշակ № 142):

— «Մասնութիւն չէ, երբ Հայկունին ասում է. «ըստ ստեղծեց, սպասեցեք, պարոններ, ես գիտեմ, որ որսորդ Ա՝վօն և ընկ. ուղտ էն լինել և կայքէն ըն էն նաև մի... Մի-լորդ, մի Ժ...օֆ, մի Ա...իչ, մի Գ...ի et tutti quanniti» (Մշակ № 150):

— «Մասնութիւն չէ, երբ պ. Հայկունին ոչ միայն մի մեծ զրպարտութիւն է անում «Այծերի» ու նրա հեղինակի վրայ, (КРОЛИКЪ РОБКІЙ, КРОЛИКЪ НѢЖЫЙ, КРОЛИКЪ ТРУСЬ-միտս եկաւ տղայութեանս դասերը), այլ և անխիղճ կերպով կասկած է յայտնում (այլ առակ լուարուք) և՛ ցենզորայի վերաբերութեամբ, որ թոյլ է տուել յիշեալ վէպի տպագրութիւնը: Ա՛յլ երոյշեալ զրպարտութիւններով չը բաւականանալով, պ. Հայկունին, «Այծերի» հեղինակին փասելու համար, մի այլ մասնութիւն էլ է արել: «Ես ասում է, որ «Այծերի» հեղինակը շատ է կարգացել (եւ, Հայկունիս էլ եմ կարգացել) Չեռնիշեվսկու բռնանք և իր վէպերը գրում է նրա ազգեցութեան ներքոյ: «Ինչպէս, աւելացնում է նա, մի ժամանակ «Խէնթում» ուր Չեռնիշեվսկու Ա՛յլա Պաւլովայի երազը իրա Ա՛յրգանի բերանն էր դնում *): Հայկունուն պէտք է լաւ յայտնի լինի (շատ լաւ յայտնի է), որ Չեռնիշեվսկու յիշեալ գիրքը Ռուսաստանում արգելուած է և հեղինակը անյայտութեան մէջ է պարում: Պ. Հայկունին այն ևս գիտէ

*) Համեմատութեան համար հարկաւոր եմ համարում ամբողջապէս մէջ բերել իմ տողերը: «Պարզ երևում է, որ «Այծերի» հեղինակը շատ է կարգացել Տուրգենևի, նա մասնաւորապէս Չեռնիշեվսկի ուսումնականներին: Իմ խօսքը, խնդրեմ, ծուռը չը մեկնել: Ամեն դարի և ամեն ազգի գրողները միշտ ենթարկուած են եղել իրանց նախորդ գրողներին ազգեցու-

(գիտեմ, շատ լաւ գիտեմ), որ Բաֆֆիի վէպերը տպուել են Թիֆլիսում, ցենզուրայի թոյլտուութեամբ: Ուրեմն ցենզուրան ի՛նչպէս թոյլ կը տար նրանց հրատարակութիւնը, եթէ նրկատելու լինէր նրանց մէջ (այսինքն Բաֆֆիի բոլոր վէպերի մէջ, մինչդեռ ցարդ խօսքը լով «Այծերի» մասին էր) փաստակար զաղափարներ, և մասնաւորապէս Չեռնիշեվսկու գրքին հեռակողութիւն: Ի՛նչ նպատակ ունի պարոնը, որ մեր (ճշ, ճշ, մէր, այսինքն ոչ միայն Բաֆֆիի վէպերին իբր, այլ մեր ամբողջ) անմեղ զրականութեան վրայ տարածում է այս տեսակ կասկածներ: Այլում է, պ. Հայկունին այս տեսակ կասկածներ տարածում է այն նպատակով միայն, որ Բաֆֆիի վէպերի վաճառումը արգելվի. (իսկ դուք այդ բաները կրկնում և երկրկնում էք, կարծեմ այն նպատակով, որ Բաֆֆիի վէպերի վաճառումը ընդարձակուի): «Նրա նենգութիւնը պարզ երևում է և հետեւեալ դէպքում: Ամենքին յայտնի է, որ «Այծերի» երկրորդ հատորը դեռ լոյս տեսած չէ (բացատրեցեք, թէ ինչի՞), նրա բովանդակութիւնը դեռ ոչ ոքին յայտնի չէ: (Յառաջ ինձ, մօտաւորապէս, յայտնի էր նոյն իսկ առաջին հատորից, իսկ եթէ հիմայ փոխած էք—չը գիտեմ): Պ. Հայկունին երկրորդ հատորի մասին ևս իր վճիռը տալիս է (ճիշդ է), ասելով, թէ երկրորդ հատորը կը վերջանայ նրանով, որ առաջին հատորի հերոսները կը յարձակվին Ա՛նայ բերդի վրայ և այդ քաղաքը կը գրաւեն... Պարոնը սրտեղեց գիտէ, («Մշակից» և վէպի առաջին հատորից) որ երկրորդ

թեանը: Եւ պ. Բաֆֆիի համար հազար երանի չէ՛ր Թիֆլիսի Տուրգենևներին և Չեռնիշեվսկիներին ազգեցութեանը ենթարկուել, քան պարսկական դէմքեր ներքին և արքայներին: Ես հօ չեմ ասում թէ պ. Բաֆֆին Վայծերումն էլ այնպէս վարուել, ինչպէս մի ժամանակ Վիլնիումի, ուր Չեռնիշեվսկու Վերա Պաւլովայի երազը իրան Ա՛յրգանի բերանն էր դնում («Մեղու» 1883 № 139): Ման, Հեղ.

հատորը այսպէս է վերջանալով: Միթէ այդ զըպարտութիւններով (БРОЛНИКЪ РОБКІЙ...) չէ՞ մտածում «Այսօր» մուտքը արգելել Թուրքիայի սահմաններէն: (Գուրբ էլ միթէ այդ ձայնը հիմի տարածելով չէ՞ք մտածում, որ «Այսօր» վաճառումը շատ ընդարձակուի): Չեմ կարող առանց ուշադրութեան թողնել պարոնի փոքրագութիւնը: Եթէ նա իր կրիտիկան գրել է լոկ թշնամական և վրէժխնդրական զգացմունքից զրդված, պէտք է գոնէ այնքան մեծահոգի լինէր, որ սպասէր մի յարմար ժամանակի (այսինքն գրքերը ծախել վերջացնելուն): Երբ հարեանի տունը կրակ է ընկնում (փիսօ, փիսօ), շտապում են հանգցնելու, և ոչ թէ կրակի վրայ իւղ են լեցնում (փիսօ, փիսօ): Պարոնի կրիտիկան տպւում էր հէնց մի և նոյն օրերում, երբ «Այսօր» հեղինակի (փիսօ, փիսօ) գրութիւնը շատ նախանձելի չէր (փրճճճճ) («Մըշակ» № 156):

Մի չար կասկած ականջս ի վեր փսփսում է, որ պ. Փաւստոսը իր այս պերճ պարբերութիւնը գրել է, ոչ թէ իր դատը պաշտպանելու, այլ ինչ էլ որ լինի «Խաչագողի յիշատակարանի» հեղինակին միամիտների աչքումը մի կեղծ նահատակ հրատարակելու և նրա Բողոք վէպերը ձեռաց ցրուելու համար: Բայց կարելի է իմ կասկածը անտեղի է, ուստի յիշեալ պարբերութիւնը ես ընդունում եմ այնպէս, ինչպէս որ գրուած է—բառացի: Պ. Փաւստոսի այդ պերճ պարբերութիւնից, նրա ամեն մի բառից ես պէնդ կերպով եմ բռնեմ, որպէս զի իւր տեղում կարողանամ ապացուցանել նախ թէ, ի շնորհս մեր Բաժնի-Փաւստոսների, գրականական շանդաժը ինչ ճանապարհներով, ինչ կռիւներով և ո՞ր աստիճան սկսում է մուտ գործել և զարգանալ մեր մէջ: Երկրորդ թէ

մինչ օրս ինչ բանումը կայացած է եղել մեր ազատամիտ «Մշակի» գաղափարների ամենամոլեռանդ բարոյչի՝ բարոյական բոլոր ոյժն ու զօրութիւնն:

3. Որ ես «հին Հայաստանի աշխարհագրութիւնը և պատմութիւնը չը գիտեմ» — որին ապացոյց այնքան սխալներս են, որոնք բռնել և մի առ մի հերքել է պ. Փաւստոս:

Սկսենք առաջին մեղադրական կէտը քննել նախ:

Եւ արդ եկեացուք յերանց իսկ ի քննին, զի յորժամ մրցութիւնը ճշդել լինեցին, գիւրաւ գայտնութիւն ճառեցն յանդիման կացուցանեցին:
Եղնիկ Կողբացի.

Մեր պարբերական մամլոյն լեզուին ընդհանրապէս և «Մշակի» լեզուին մասնաւորապէս՝ հետևողը, անշուշտ նրկատած կը լինի, որ վերջինս իւր համար մի յատուկ սովորութիւն ունի, որ և է յօդուած գրելիս՝ աղել ու համեմել նրան, ոչ եթէ սրախօսութեամբ, հեզնութեամբ, երգիծաբանութեամբ (որ երբեմն շատ օգտակար են), այլ ուղղակի և ամենակոշտ հայհոյաբանութեամբ և յիշոցաբանութեամբ: Աս «Մշակի» ընդհանուր յատկութիւնն է, որ անշուշտ հետևանք է կամ անկրթութեան, և կամ բուռն, անզուսպ կրքից ու զգացման:

«Մշակի» յիշեալ յատկութիւնը ամեն մի վայելչակաշուութիւնից բացարձակաբար դուրս է պրծնում, երբ խնդրը մասնաւորվում է, այսինքն երբ պ. Արծրունին իր յօդուածը ուղղում է կամ դէպի իր ուղղութեան և կամ դէպի իւր անձի հակառակորդները: Ա երջինքս «Մշակի» աչքում երևում են մի մի կատարեալ զէ, սատանայ, մինչդեռ իր ուղղութեան

և անձի համակրողները—մի մի հրեշտակ, գերակայ *):

Առաջինների հետ «Մշակը» կռվում է ամենայն մոլեգնութեամբ, վերջիններին շոյշոյում ամենայն հանդարտութեամբ և փառաբանութեամբ:

Իր ուղղութեան հակառակորդներին խապռն զորեղութեամբ պ Արծրունին ոչ մի միջոց չէ խնայում. — ստեր, բարութանքներ, մասխարութիւններ, անուանարկութիւններ, — սորա «Մշակի» ամենօրեայ, սիրելի զէնքերն են, որոց հետ նա, մեծ հրճուանքով ու զմայլմունքով, անդադար խաղ է անում: Իսկ «Մշակի» ուղղութեան հակառակորդները, գիւտէք, ովքեր Խն.— հայ ժողովուրդը, գրեթէ ամբողջապէս:

Մեր եռանդագին թերթը ուղղում է, որ երկրագնդիս բոլոր հայերը, արք և կանայք, մեծ և փոքր, հոգեւորական և աշխարհական, անպատճառ իր ուղածովը շարժին, իր հրամանովը նստեն ու վեր կենան, իր բաղխումովը անպատճառ երգեն և պարեն:

Եւ որովհետեւ դա մի անկարելի, անբնական պահանջէ, որ մի ամբողջ ժողովուրդ, նրա բնահաճութիւններին ծառայէ, այդ պատճառով, տասը տարի, ճակատն ի քիրտ, աշաշխատող հայ «Մշակը»՝ այսօր մնացել է մէն մենակ: Յաւալի, ողբալի՜ վիճակ, այն էլ 19-րդ դարում, ուր հրաշքներ ու հրեշքեր, իրանց ներկայացուցիչներով, երբեք կարող չեն տեղի ունենալ, ծնիլ:

Միայնութիւնը, որ սովորաբար, սթափեցնում, խելքի է բերում մարդկանց, «Մշակի» վրայ բոլորովին հակառակ

*) Պօլսեցի մի նոր գրող եւրոպական իդէալ բառը այդպէս է թարգմանում:

ներգործութիւն ունեցաւ, իւր միայնութեան մէջ՝ «Մշակը» աւելի բորբոքեցաւ, և դարձաւ մի անընթեքի, արօրինակ էակ, որոյ առաջ պէտք է որ փշուրի ու ջախջախուի ամեն տեսակ խութ ու բութ: Եւ «Մշակը» սկսեց ջախջախել ու խորտակել, ինչ բան որ տեսաւ, ինչ բանի որ հասաւ, ձեռնհաս եղաւ... Եւ որովհետեւ «Մշակը» չէր ճանաչում այն հողը, որոյ վրայ գործում էր, կամ եթէ ճանաչում էր, այն էլ շատ միակողմանի կերպով, այդ պատճառով նա երբ իւր բուռն, սրտանց գործնէութիւնը արհամարհուած կամ աննարգուած տեսաւ, — հոգեկան մի նոր տեսակ մոլեգնութեան ենթարկուեցաւ: Պ. Արծրունին բարոյապէս հիւանդացաւ կատարելապէս: Եւ որպէս կատարեալ հիւանդ, «Մշակը» սկսեց իր լրագրական կեանքի մեծագոյն մասը զառանցանայ մէջ անցկացնել:

— Ասացէք ինձ հայ ժողովրդի համար ի՞նչ խորհուրդ և ի՞նչ բարի հետեանք ունեցան, կամ կարող էին ունենալ «Մշակի» տասը տարուայ յախուռն յարձակմունքները հայ երիտասարդութեան — ինդէլիգէնցիայի — վրայ, որին մենք շատ բան պարտական ենք: «Մշակը» դրանց որի՞ն փոխեց, վերաստեղծեց, իր ուղածին պէս: — Ոչ որին:

Նա միմիայն դրանց արդիւնաւոր (իմ խօսքերս միշտ համեմատական կէտից պէտք է վերցնել) ծառայութիւնը, նրանց ներկայ և ապագայ նշանակութիւնը հայ ժողովրդի առաջ կոտրեց, վայր ձգեց միայն: Ահա մեր շահը, «Մշակի» զառանցանքից:

— Ասացէք ինձ, «Մշակը» հայ ժողովրդին ի՞նչ օգուտ տուեց համազգայնութեան դաշտփարը նրա մէջ զարթեցնելով և արծարծելով: Ոչինչ: Այդ դէպքում նա եթէ միայն չը

Ֆեասեց, գէթ ինքնիրան մի լաւ զառանցեց, որովհետեւ այդ զաղափարը հէնց ինքը մի կատարեալ զառանցանք է:

— Հայ ժողովրդի համար ի՞նչ միտք և ի՞նչ խորհուրդ ունէր «Մշակի» այն աստիճան ջատագովութիւնը բաղաբաժան ամուսնութեան մասին: Արդեօք եթէ Մկօն ու Մարօն, Վարօն ու Զուլօն ամուսնանալիս՝ փոխանակ «Աստուծոյ տունը» գնալու, նոտարի կանտօրան գնային, իրանց և իրանց զաւակաց կեանքը կը բարելաւէր, կը կանոնաւորուէր:

— Տասը տարի շարունակ հայ հոգեւորականներին, է որ իրաւացի և է որ անիրաւացի, մտրակելով ու անուանարկելով «Մշակը» մազիւ չափ ուղղեց զրանց: Այդ բոլոր անուարկութիւնից «Մշակը» կամ նրա ընթերցողները, ամբողջ հայ ժողովուրդը գոնէ, ի՞նչ օգուտ տուն տարան: — Ոչինչ, կատարեալ ոչինչ: Հապա ֆեաս, գիտէ՞ք թէ որքան շատ և որքան բաղմնակողմանի:

«Դու միայն ինձնից առար երկինքս, որ Փիլիպպոսի ծոցում փչացնես» *):

— Իր թերթը անկողմնակի կերպով Ամիրխանեանցին օրգան շինելով, Բազելի հանրաժանօթ ձեմարանի այդ որդեգրի շրջաբերականները նրանում տպագրելով «Մշակը» հայ բողոքականներին գիտակցութեան բերեց արդեօք թէ նրանք հայեր են: «Մշակը» ի՞նչ հաստատուն բարոյական հիմունքներ, ի՞նչ իրաւաբանական փաստեր ունէր իւր ձեռին, երբ մի ամբողջ ժողովուրդ հալածող էր հրատարակում:

— Մեռելների պրման հարցին այն աստիճան ջերմ

*] Գօն-Ապրիլի ասած խօսքերը Եղիսաբէթին:

պաշտպան հանդիսանալով՝ ի՞նչ էր ուղղում ասել «Մշակը»: Այն, որ ինքը եւրօպական բաղաբաժնութեան հետամո՞ւտ է: Չնչէ՛ն, արդայական հետամոտութիւն: Եթէ յիշեալ զաղափարը, որ եւրօպացիներից առաջ ասիացիներից շատերը ունէին և այժմ էլ գործում են, հայ ժողովուրդը զրկաբաց ընդունէր և՛ իրագործէր, ինչպէս որ «Մշակն» էր ցանկանում, արդեօք հետեանքը մեզ համար, մեր բարոյական կեանքի համար, օգտաբեր կը լինէր, թէ ֆեասաբեր:

— Արօնական անխտրութեան հարցը մեր մէջ զարթեցնելը՝ արդեօք ժամանակակից, անհրաժեշտ հարց էր մի՞թէ:

Արդեօք «գերեզման կորած, հողումը թաղուած» հայերս աւելի ազատամիտ պէտք է լինէինք քան նոյն իսկ լուսաւորեալ ամբողջ Եւրօպան, ուր ամեն տէրութիւն իւր պետական կրօնն ունի և մահու չափ պաշտպանում է:

— Եթէ «Մշակը» իրան համար ներելի համարեց պարտուպատշաճ յարգանքով չը վերաբերուել դէպի ամենայն Հայոց Աթուղեկոսի յիշատակը, ի՞նչպէս նա մի և նոյն ժամանակ, ներելի համարեց ոսնակոխ առնել նաև գիտութիւնը, ասելով՝ թէ իւր թերթը կրօն չունի: Եւրօպական գիտութեան դօքտօրի տիտղոսով պսակուած Արծրունին, չը կարմեց չ'ամաչեց մի՞թէ ժխտելով թէ, ուրեմն, ազգայնութեան ֆակտօրների շարքումը կրօնը ոչ մի տեղ չ'ունի:

— Հայ հոգեւորականութիւնը, իւր մտաւոր և նիւթական աղքատութեամբ, կարող էր մի՞թէ, ըստ օրինակի կաթօլիկներին և բողոքականներին, բարոյական յատուկ ընկերութիւններ կազմակերպել: Եթէ կարող չէր, ուրեմն ինչե՞ք համար էին խեղճի զլխին տեղացած այնքան կարկուտ ու հեղեղներն:

— Արդեօք յանցաւոր էր տաճկահայ ժողովուրդը, որ

վերջին արևելեան պատերազմի ժամանակ իր տէրութեան դէմ չ'ապստամբեցաւ, իր հազար անգամ ծեծուած ու ջախջախուած զլուխը, ըստ առածին, չը տարաւ և ծանօթ ու անզօր աւետարանի տակ նորից չը դրաւ: Ախր չէ՞ որ «հարքն կերան զազոխ և որդւոց ատամունք հարան»: Այժմ տաճկահայը — ասում եմ ես — յանցաւոր չէ՞ր, ուրեմն էլ ինչի՞ համար էին խեղճի զլխին դիզուած անցքան ու անցքան աղբերն ու ցեխերն:

— Այն ժամանակ, երբ ահեղ պատերազմը երկու հաւանակորդ տէրութեանց մէջ շարունակվում էր, և երբ տաճկահայը, ինչպէս ասում են, երկու կրակի մէջ տապում ու տանջվում, արդեօք հարկաւոր էր, որ «Մշակը» ետեւէ ետեւ տպագրեր ու ներբողէր որ և է թնդանօթաձիգ Գ. . . . Ն. . . . ի Արնոյ նամակներն: Արդեօք հարկաւոր էր, որ «Մշակը» վերկենար և մի առաւօտ զիշերուայ իւր տեսած երազը իր ընթերցողներին պատմէր թէ Տաճկահայաստանի բոլոր քաղաքներումը հայ ապստամբական ծածուկ խմբեր են կազմակերպուել: Այդ լըոյ առթիւ, երբ պօլսից մի քանի վաշտ զօրք մեծ հապճեպով դէպի Տաճկահայաստան արշաւեց, դրանով արդեօք սուլթանի զինուորական ոյժը ջլատուեց, սպառուեց, թէ խեղճ Տաճկահայերի մուխը, օջախը մարուեց միանգամայն:

— Արդեօք Գ. . . . Ն. . . . ի վառ երեակայութեան մէջն էր թէ Ա. Պօլսում, որ իբր թէ Սայիդ-Փաշան Ներսէս պատրիարքին թունաւորելու փորձ փորձեց, որ Պօլսոյ հայ երիգասարդութիւնը Տատեանի պալատի հանդէպ իբր թէ ցոյցեր արեց: Բայց այժմ աչքերդ և աես, որ Ներսէսին այլ ևս չէն թունաւորում, այլ նրա բիթն ի վեր խունկ ու մոմ են ծխում, որ Տատեանի դէմ հակակրական երգեր երգողները,

այժմ իրանց նախկին անմեղ երգերն անգամ այլ ևս չեն երգում, իրանց դաս ու համարներն այլ ևս չեն դասախօսում, չեն սերտում:

— Արդեօք . . . «զո՞րն ասեմ կամ զո՞րն խոստովանիմ»:

Աւելի մասնաւոր ու աննշան երևոյթներ վերցնենք:

— «Մշակի» կողմից միթէ պատշաճաւոր էր Թիֆլիսի հայ ժողովուրդը իւր «հոգեւոր Տիրոջը» դէմ զրգուել, ինչ է թէ մի քահանայ քահանայադործութիւնից ժամանակաւորապէս դադարեցրած է, այն էլ եկեղեցական կանոնի դէմ մեղանչելու համար, — պէտք է աւելացրած:

Հասարակական օրդանի խմբագիրը, որպէս յիշեալ քահանայի ծուխը (թէ և ոչ նրա պսակածը) պէտք էր, որ մի գեղեցիկ առաւօտ իւր թերթի միջոցաւ նոյն քահանայի ծխերին հրապարակաւ հրաւեր կարդալ չ'ընդունել, վնասել իրանց տանից պատժուած քահանայի տեղ նշանակուած նոր քահանային:

— Արդեօք հարկաւոր էր, որ «Մշակը» Ս. Լշմիաճնի վշտալից, խարխափ ու թարթափ օրերում ետեւէ ետեւ տպագրէր և զրուագէր և այն հեռագիրներն *), որոնք իրան ուղղվում էին յայտնի մարդու կողմից և յայտնի նպատակաւ: Արդեօք «Մշակը», այդ դէպքում, աւելի իրաւախոհ և հեռատես էր, քան «Մեղուն» ու «Արձագանքը» որոնք նոյնպէս ստանում էին անդադար մի և նոյն հեռագիրներն և չէին տպում, այլ միմիայն դէն շպառում:

— Թիֆլիսի ամբողջ պարբերական մամուլը **) արդեօք կաշառուած էր:

*) Սրբ. Մանկունու շէր փախցրած երեւակայական դանձերի մասին:

**) Աւաւկադ, «Юрид. Обозр.», «Голосъ» «Մեղուն» և «Արձագանք»:

— Արդեօք... էհ, յոգնեցայ, մի խօսքով, և զլեզուս իւրեանց ածէին զերկրաւ — իրանց լեզուն երկրի համար աւել (метла) էին շինած:

Աւելի զարմանալին այն է, ընթերցող, որ այդ ամենը տասը տարուց ի վեր արել է և անում է «Մշակը» գիտէք, ինչի անունով:

— Գիտութեան, լուսաւորութեան, ազատամտութեան և յառաջադիմութեան:

— Թող կորչի այդ տեսակ լուսաւորութիւնն էլ յառաջադիմութիւնն էլ:

Պուշկինը շատ լաւ է ասել.

«Въ развратѣ каменѣйте смѣло;
Не оживитъ васъ лиры гласъ!
Душѣ противны вы, какъ гробы.
Для вашей глупости и злобы
Имѣли вы до сей поры —
Бичи, темницы, топоры,
Довольно съ васъ рабовъ безумныхъ*»).

Հայ ժողովրդի թերուս և իսպառ ագէտ մասը, ամբողջը, տասը տարի շարունակ, այնքան շփուեցաւ «Մշակի» վերոյիշեալ հիւանդութեան հետ. նա նրա զանցաւանքները

*) Տողերես գրողը «Մշակի» ուղղութեանը (մանաւանդ հայ ժողովրդի վերաբերեալ հարցերում) հակառակորդներէն է, բայց նա չէ ժխտում այդ թերթի և մէքանի արժանաւոր կողմերը: Բայց թէ ինչէ՞ դրանց մասին յեշտատեղութիւն անդամ ես չեմ անում, կարծեմ, պէտք է որ ամենքէն էլ հասկանալի լինի: Նախ՝ որովհետեւ կշռելով «Մշակի» լաւ և վատ կողմերը, վերջին կողմերն ենթադրեալ ամեն անհատի ծանր է թուում իմ աչքում: Երկրորդ, և գլխաւորապէս, որ իմ յղումածի նպատակը այստեղ «Մշակին» քննելը չէ, այլ իմ անձը արդարացի է պ. Փաւստոսի այն մեղադրանքից թէ ինչէ՞ «կայծերի» վրայ խօսելու եւ «Մշակի» վրայ էլ էլ յարձակուել իմ նախորդ յղումով:

այնքան յաճախ լսեց, որ ինքն ևս սկսեց հիւանդանալ և զառանցել նոյնպէս:

Աւելի նայեցէք ձեր շուրջը, ուշադրութեամբ կարդացէք մեր լրագրութեան գաւառական թղթակցութիւնները, լուրերը: Ամեն մարդ էլ դատաւոր, խրատատու և քննիչ է դարձել: Ամենքն էլ Ուիմփոսի մի-մի սաստաւածներ են եղել: Հարունակ շանթեր է, որ տեղիւմ է և՛ կաթուղիկոսի վրայ և՛ սինօղի և՛ առաջնորդի, ամեն մի բարեգործ անձի ու հիմնարկութեան վրայ: Աստուծոյն և վարչութիւն, եկեղեցի և երեցփոխանութիւն, շարունակ դատուում և դատափեւովում է: Բնական է ընկերական յարաբերութիւնը, գիտութիւնը և սրբութիւնը, հնութիւնը և նորութիւնը — և ամեն բան, ոտքից ցզուլս, քննվում, խորտակվում և ջախջախվում է: Եւ այդ ամենը, գիտէք թէ ո՞ւմ ձեռքով և ո՞ւմ գրչով:

Ըստ մեծի մասին նրանց, որոնք այդ բաներից ոչինչ չեն հասկանում, որոնց համար, ըստ առածին, դեռ իննը տարի էլ պէտք է, որ տասը տարեկան դառնան, որոց հարկաւոր է դեռ տասնեակ տարիներ զրասեղանի վրայ նստել, բաց անել իրանց զրբերը և կարդալ, շատ կարդալ. յետոյ հարցաքննութիւն տալ, եթէ ոչ լաւ, գէթ միջակ, թուանշաններ ստանալ և ապա թէ հասարակութեան մէջ մանեւ և սրան դաս տալու ու քննելու սիրտ ու փորձ անել:

Աշխարհիս ամենախմայտուն փիլիսոփաներից մէկը միշտ բացականչում էր. «զայս գիտեմ, զի ոչինչ գիտեմ»: Մեր ժողովրդի ամեն մի թերուս ու գոնհիկը, ընդհակառակը, բացականչում է «ես ամեն բան գիտեմ»:

Արդ՝ հայ ժողովրդի այս ահագին յառաջադիմութեան, այս վիթխարի լուսաւորութեան պատիւը «Մշակին» է վե-

րաբերում: «Աս է դրա շարժառիթը, սկզբնապատճառը:

Երբ պ. Արծրունին, իբրև մի քաջամարտիկ և առաջընթաց զինուոր, իւր այդ յաղթութեան հետեանքները տեսաւ, աւելի պինդ կերպով բռնեց իւր զինակիցների գօտկիցն ու քամակից և սկսեց իր յաղթանակի մասին հռչակ հարկանել, ծնծղաներ զարնել, — «փող հարաք ի զլուսա ամսոց՝ յաւուր նշանաւորի տարեկանաց մերոց»:

Արկնումեմ դարձեալ երբ հայ թերուսի ու ռամկի այդ ամբարտաւանիւն ու ամբարհաւաճիլը պ. Արծրունին տեսաւ, նոր գիւտ անողն նման բացագանչեց ինքնիրան «էվրիկա, էվրիկա» գոայ գոայ: Այնուհետեւ, իւր այդ հոգեզմայլ դրութեան մէջ, ինչ որ «Մշակը» զառանցեց, հայ թերուսն ու գռեհիկը վեր առաւ իսկոյն և իւր ճակատին դրեց, ինչ ձայն որ պ. Արծրունին հանեց, հայ թերուսն ու գռեհիկը իսկոյն արձագանք տուեց: Ահա, իմ կարծիքով, թէ ինչն էր և է, որ մեր մէջ ամէն թերթերից «Մշակը» շատ տարածվեց:

Ասած է ճիւղն զնմանն սիրէ: Թերուս, ռամկ մարդու համար ինչ խորհուրդ և ինչ նշանակութիւն ունի որ և է լուրջ թերթ, լուրջ գրուածք: «Արան հարկաւոր են հայհոյութիւններ ամեն կողմ և ամենքի վրայ, և որքան շատ և ծանր, այնքան աւելի լաւ, վասն զի այդ բանը յաղթութեան նշան է համարվում: Թերուս և գռեհիկ մարդուն հարկաւոր են նմանապէս սահմանափակ, միակողմանի, մանր, մունր անձնական հաշիւներ, հարկաւոր են սկանդալներ, անհեթեթութիւններ, կոշտ զգացմանց և կրքի շոյշոյոցներ ու փայփայոց, անմշակ բնազդման արծարծումն ու գուրգուրոց, խելքից վեր բաների վրայ իմաստախօսէն ճամարտակումն:

Ղլղանելների գօտեմարտներ և դափնի ու յաղթութիւն, — մի խօսքով, այն ամենը, որոնք կազմում են ամեն մի թերուսի ու ռամկի մտաւոր և հոգեկան կեանքի հիւթալից, սննդատու պաշարը:

«Մշակի» զինակիցների միջից — այդ թերթի խմբագրի բաղդից — ամենից լաւ, ամենից յաջողակ ու հաստատուն մի մարդ միմիայն դուրս եկաւ: Պա Բաֆֆին էր: Արծրունու նման իւր սկզբմանց մէջ (յամառ չ'ասելու համար) հաստատամիտ մի հրապարակախօսի համար, պ. Բաֆֆին մի անգին գիւտ էր: «Մշակին» հարկաւոր էր մի մարդ, որ այդ թերթի գաղափարները, նրա սկզբմունքները հայ ժողովրդի մէջ տարածէր ամենայն կուրութեամբ և «ամենայն մոլեռանդութեամբ»:

Աս դժուարանումեմ ճշդութեամբ լուծել հետեւեալ հարցը թէ՛ արդեօք պ. Բաֆֆին, նախ քան «Մշակին» յարիլը, նրա հետ գաղափարակից էր, թէ յետոյ դարձաւ և այդ յետոն էլ համոզմունքով էր, թէ գուցէ, մի այլ նպատակով, — միայն ես շատ լաւ գիտեմ, որ եթէ «Փնջերի» հեղինակը այսօր մեր մէջ «դաղանդաւոր վեպասանի» տիտղոս է կրում, այդ տիտղոսը պարոնը պարտական է, ոչ եթէ իւր սեպհական արժանաւորութեանց, իւր ինքնուրոյն յատկութեանց, այլ միմիայն, և միմիայն «Մշակին»: Պ. Բաֆֆին մարդ շինողը, ինչպէս ասում են, բացառապէս «Մշակն» էր, եթէ միայն զօռով մարդ դառնալը աշխարհիս մէջ հնարաւոր է:

Իւր ամենօրեայ, երկդիմի, բայց ազդու բեկլաճներով, իւր, ոչ միշտ անկեղծ, զանգակահարութիւններով, իւրեան միայն յատուկ, շատ անգամ անմեղ, ճարպիկութիւններով «Մշակը» Բաֆֆին գրուածքները այնքան գովեց, այն-

բան ներբողեց ու զրուագեց, որ մենք, ընթերցողներս, Հարուն էլ—Ուաշիտի հէքիաթաբանին մի օր յանկարծ տեսանք՝ եօթներորդ երկրնքում առօր փառօր բաղմած:

Այդ բարձրութեան վրայ բաղմած միջոցին՝ պ. Բաֆֆին կամ զիտէր, զգում էր, որ ինքը այդ փառքին արժանի չէ, միայն ամեն մի տկար մահկանացուի թուլութեամբ, լռում էր, գուցէ իւր մտքում, միմիայն «Մշակի» բարեսրտութիւնը ծաղրելով, և կամ, որ ինձ աւելի հաւանական է թւում, Բաֆֆին, իրան յատուկ անձնավստահութեամբ, «Մշակի» բոլոր գովեստները հալած իւրի տեղ ընդունելով, հաստատ մտքումը զրեց, որ ինքը, յիշաւի մի անգուղական հանձար է, մի լուսատու ճրագ է, որին կոյր բաղդը տարել և մինչ օրս զրուանի տակ էր թաղցրել:

Եթէ, յիշաւի, Բաֆֆին բանաստեղծական ձիրք ունենար, իւր գրուածքներին նիւթ չը պէտք է վերցնէր մեր եռանդազին թերթի միմիայն արտաքին մասը, կաշին, այլ նա պէտք է ըմբռներ նրա ներքինը, ոգին: Բայց նա այդ չարաւ: Նա վերցրեց միմիայն «Մշակի» կաշին, և «իր առանձին գոյնովն ու ձևովն» ներկեց ու ձևեց միմիայն:

Եւ շատ անգամ ինքս ինձ հարցրել եմ, որ եթէ Բաֆֆին ուզում է, յիշաւի, մեր ժամանակակից կեանքը դուրս բերել, նրանում մի իրական, ճշմարիտ տիպ գտնել, էլ ինչի՞ համար սար ու ձոր է ընկել, մինչդեռ այդ տիպը ամենայն օր իւր աչքի առաջն է, և այդ շարունակ տասը տարի: Այդ տիպը, ընթերցող, ինքը «Մշակի» պ. խմբագիրն է:

Մենք ամենքս զիտէնք, որ այդ մարդը իւր բաղդից չէ կարող գանգատուել: Նիւթական և հասարակական դիրքի կողմից երկինք հաշտ աչքով է նայել դէպի այդ երիտասար-

դը: Մեզանից ով կարող էր Արծրունու ձեռքիցը բռնել, եթէ նա աղաւարի իր տան ու կալուածքի մէջ բաղմէր և ասէր, «անձն իմ, կեր, արբ և ուրախ լեր»: Այդ տեսակ երիտասարդների թիւը միթէ քիչ է, մեզանում: Բայց Արծրունին—պատիւ նրան—այդ բանը չ'արեց և չէ անում: Հայ կեանքով նա հեռաբերվում էր այն ժամանակ, երբ դեռ ուսանող էր: Հէնց որ հայ կեանքի մէջ մուտ գործեց, — Արծրունին գործել սկսեց մի այնպիսի եռանդով, որ մեր մէջ տեսնուած չէր: Եւ գործեց Արծրունին թէ վատ, — այդ բոլորովին այլ հարց է, բայց նա գործեց և գործում է: Եւ ինքն նա թէ բանդեց, — դարձեալ այլ հարց է: Եթէ դուք ինձ կ'ասէք, որ նա բանդեց — և ես միանգամայն համաձայն եմ ձեզ հետ —, ես կ'ասեմ, այո՛, նա քանդեց, բայց նա շինել էր ուզում:

Առաջին յօդուածումս ես, կարծեմ, ասել էի, որ պ. Արծրունուն իւր շրջապատող մթնոլորդը խեղտում է: Այդ մթնոլորդում այդ մարդը չէ կարող շունչ քաշել: Բայց նա չէ ուզում և՛ մեռնել, մէկ գլուխ հեղձամղձուկ լինել: Նրան հարկաւոր է ուրիշ նոր օդ: Եւ որպէս զի այդ օդը պ. Արծրունին կարողանայ ձեռք ձգել, նա մոլեգնաբար կոտրատում է իր տան փակ դռներն, լուսամուտներն, ձեղունը, յատակը, ամեն բան, միայն թէ նոր օդ տուէր նրան:

Եհա ձեզ մի տիպ, մի ճշմարիտ կեանք, երևոյթ, որ տասը տարուց ի վեր մեր մէջ գոյութիւն ունի:

Ճշմարիտ վիպասանի համար — կրկնում եմ — մեր երիտասարդ հրապարակասօրը մի սքանչելի տիպ է, սքանչելի՝ իւր անհիթեթուլութիւններով, իւր հրէշային եսականութեամբ, իւր զօրեղ ձգտումով դէպի նորութիւն, դէպի առաջ:

Այսպէս թէ այնպէս, ինչ բան որ «Մշակը» իւր թեր-

Թում պակաս թողեց, Բաֆֆին իւր վէպերում լրացրեց և «իր առանձին ձև ու գոյնի» տակ «Մշակի» մտքերը ամբողջապէս իւր գրուածքներում արտատպելով՝ երկինք և երկիր, ինչպէս ասում են, իւրար խառնեց: Աւելորդ է կրկնել, որ մեր վիպասանը «Մշակի» մտքերը, երբեմն էլ աղաւաղեց, խծեց, ի հարկէ տգիտութեամբ, անմբռնողութեամբ:

Այդ պարոնը—այդ հայ գռեհիկը—յադգնութիւն ունեցաւ ոչ մի միայն «Ահեհրայի արձանի» և «Մարօննայի» (գեղարուեստ *) սրբութիւնն ու նրբութիւնն մրտալ, ցեխոտել, այլ նա իւր հէքիաթներում խեղկատակութեանց և սեպհական ցնդաբանութեանց նիւթ և իւր ձեռքի խաղաղունդ շինեց ամբողջ հայ ժողովրդի անցեալը և ներկան, ասելով թէ ես հասարակական ախտեր եմ մտրակում, ժողովրդի մոլութիւններ եմ հարուածում, նախապաշարմունքներ եմ հալածում: Խեղճ, մարդ, զսել է ձայն, բայց չը գիտէ թէ որտեղից է այն»: Նա չը գիտէ որ գրականական այդպիսի հարուածողներն ու մտրակողներն, ոչնչով չեն զանազանվում փողոցի այն սրիկաներից, չափգուններից, որոնք իրանց անուր հայհոյութիւններով, իրանց յիմար գոռիւն գոչումներով ամբոխի ուշադրութիւնը, երբեմն և ծափահարութիւնը, դէպի իրանց են հրաւիրում և փքվում ու գոռոզանում թէ ահա «ես ևս կամ»:

*) Անաչառ ընթերցողը պէտք է որ խոստովանի, թէ Վայծերի գեղարուեստական յատկութեանց մասին, ես ինչոր խօսեցայ, գրքի մէջից հանած տողերով և էջերով էլ ասածս ապացուցելու պարտաւոր եմ, որ ես, մասամբ, կամ բոլորովն սխալուած եմ: Եւ որովհետեւ, նոյն իսկ ըստ փառաստի, ինչ որ մէկի ճաշակով գեղեցիկ է, վայելուչ է, միւսի ճաշակով կարող է աղեղ և անվայել երեւար, ուստի այ. փառաստը պարտական էր ուղղակի վեր առնել իմ արտաբերած կտորներն, կամ թէկուզ ուրիշ կտորներ, և նորից դնել ու լուծել հաստատելով թէ՛ այ տեսէք, սա է՛նչ գեղեցիկ, վսեմ միտք է, սրանում որքան գեղարուեստ կայ, սա ո՛չ թէ աւաստելաբանութիւն կամ չափազանցութիւն է, այլ երականութիւն և պարզ

Արդացէք կրկին անգամ:

Մեզ պակաս է և հասարակական գլխաւոր զօրութիւնը, այն է թարմ և նորահաս երիտասարդութիւնը, բայց, դժբաղդաբար, մենք երիտասարդութիւն չունենք. մենք ունենք Ս. Պօլսում մի քանի Կոնստանտինոպոլի զուլէ վէլլէ-նէր միայն, որոնք ուրիշ ոչինչ են, եթէ ոչ շաղախապ Կոնստանտինոպոլի միջոցով: Մնում են մի քանի Կարօններ, արդարեւ աղնիւ և գործող անձինք, բայց մի ձեռքը ծափ կը զարկէ...: Այսու ամենայնիւ մենք բոլորովն յուսահատ չենք, մենք ունինք մի, թէ և անմշակ, բայց մեծ զօրութիւն—ամբոխը—դա բաւական է» («Վայծեր» եր. 454—465):

Խնդրեմ ասացէք սա մի վիպասանի՞ լեզու է, թէ մի փողոցի թափառաշրջիկի: Բայց այդ թողնենք:

Մի գրող, որ մի ամբողջ ժողովուրդ այս տեսակ և այս չափով է միմիայն ուսումնասիրել, մի գրող, որ փոքր ի շատէ տեղեակ է տաճկահայերի ներկայ վիճակի հետ, մի գրող, որ մի ժողովուրդի բոլոր ներկան և ապագան, միմիայն խաւար ամբոխի մէջ է տեսնում, — այդպիսի գրողը, ասում եմ

Ճշգրտութեամբ, թէ այս տողերը Բաֆֆին ոչ թէ ուրիշից է վերցրել, այլ իր տաղանդի, իր երեւակայութեան, ոգեւորութեան արդասիւնքն են և այլն և այլն: Պ. Փաւստոս այս բաներից ոչ մէկն էլ չէ անում ասելով թէ՛ Բաֆֆին և նրա աշխատութիւնները քննելը իմ յօդուածի նպատակից դուրս է: Ո՛վ դու լոյս աչաց մեքոց, այ. Փաւստոս, եթէ որ այդպէս է, եթէ որ ձեռք մեծապատուութիւնը ոչ իմ գրածներն էք հրաբուծ, ոչ էլ Բաֆֆին քննում, ջրի յատակից խեղճին մակերևոյթի վրայ հանում, հապա ի՞նչ բանի համար էր արդեօք ձեր այդ զուռնա-նաղարա յօդուածը, — հաւաքածոյ մտքերի և Վայծերից, ու Սրբանձտեաններից արտատպած կտորները: Միամիտները առաջ Բաֆֆին լոկ գովելու համար, հա՛: Դիցուք թէ ձեր, Բեյլիսիւնց քաղած մտքերումն ճշմարտութիւններ չատ կան, գեղուք թէ Ալէքսանդր Մակեդոնացին մի մեծ մարդ է, բայց եւ չեմ հասկանում թէ այդ ամենը ի՞նչ և ո՞րքան կապ ունին «չէի փախն» Հաստի, Սատանի եղունգը Կարօյի, Սաւրգեղցի խաչակող Պետրոսի, Մարօի, Զուլի, Հիւբերի, և այլոց բազմաց հեղինակի հետ:

ես, կարող է միթէ վեպասան լինել և մի ժողովրդի կեանք նկարագրել, նրա ախտերը մարտկել, նրա բարոյական կեանքի կայծերը ցոլացնել: Այդպէս կարող է խօսել ոչ թէ իսկ բանաստեղծն, որ ճշմարտութեան և ազնուութեան զինուորն է, այլ այնպիսի անձն, որ շահախնդրութեամբ տգէտ ամբօխը շոյշոյելով նրան գործիք է ուղղում անել չար դիտաւորութեան:

Պէտք է գիտնալ, որ արտագրած տողերովս չէ մինակ, որով Բաֆֆին չարաչար մեղանչում է պատմութեան, բնութեան դէմ: Այդպիսի և աւելի վատթար, աւելի սխալ տողեր «կայծերում» շատ կան, որոց ես չեմ ուղղում արտագրել: Եւ երբ այդ ամենը դուք հեղինակի երեսոյն էք տալիս, նա սովորականութեան է դիմում, ասելով թէ «բանաստեղծը պարտական չէ պատմութեան ստրուկը դառնալ:

— Այդպիսի անմիտ բան ո՞վ պահանջեց ձեզանից: Բայց դուք ասացէք ինձ, միթէ բանաստեղծը իրաւունք ունի՞ պատմութիւնը թիւրել, ապականել իր ուղածին նման: Միթէ նա կարող է ասել և կրկնել թէ հայ կաթողիկոսն ու եպիսկոպոսներն կնիկ ունէին, բայց այդ կէտը առ ժամն թող մնայ: Հերթը դրան էլ կուգայ:

Աւասիկ դուք ինքներդ, Բելինսկուց առնելով *) ասում

*) Պ. Փաւստոս ասում է, որ ես իմ յօդուածը մաս առ մաս եմ գրել (կարծես թէ այդ բանը նոյնքան դատապարտելի է, որքան մաս առ մաս վէպեր գրելը) և յետոյ փորձում ինձ եղած նկատողութիւններէից չնեղ տեղն ընկնելով յօդուածս կարկատել եմ: Վերջինս նոյնքան անձիշդ է, որքան ձիշդ է այն, որ երբ մի օր Փաւստոսի բարեկամներին ես ասացի թէ, արդեօք ինչ բանի համար են պարոնի թարգմանութիւնք Բելինսկուց կը ընտելայի մասին, պ. Փաւստոսի յօդուածի վերջում մի այսպիսի ծանօթութիւն երեւացաւ թէ վերջացնելով յօդուածս, (չըմ) հարկաւոր եմ համարում յայտնել, որ ընդհանուր դատողութիւնները (?) մէջ մի քանի տեղերում, հետեւել եմ Բելինսկու հայեացքներին: Եթէ ժամանակս ներքեց ես մի առ մի ցոյց կուտամ Բելինսկու այն կտորներն, որոնք պ. Փաւստոս ոչ թէ հետեւողութեամբ, այլ բաւարար թարգմանութեամբ, առանց գէթ չափերաների, գրել է իր յօդուածի մէջ:

էք, որ բանաստեղծի գրչի տակից մենք պէտք է տեսնենք «պատմութիւնը յարութիւն առած, կենդանացած և իր ամբողջական (!) կերպարանքով մեր առաջ կանգնած»:

Պիտէք թէ վերոյիշեալ բոլոր անհեթեթութիւններն *)

«մեր տաղանդաւոր վեպասանի» մէջ ինչից են առաջ գալիս:

— «Պատմութեան բացակայութիւնից» ինչպէս ձիշդ կերպով ինքն իր վրայ փորձած լինելով՝ ասում է յօդուածագիրը — վեպասանը: — Նրանից որ «անուաները համարձակ են լինում, մինչև անգամ յանդուգն են լինում: Վրանք ամեն բանի վրայ դատողութիւն են անում, առանց նախապէս սովորած լինելու: Վիտնականը երկջոտ է լինում, որովհետեւ գիտէ, որ ամենափոքր սխալ կարող է կոտրել նրա հեղինակութիւնը (որպիսի՞ ցինիքական միտք, որով զրոպարտվում են գիտնականները), իսկ անուսը յանդուգն է լինում, որովհետեւ կորցնելու ոչինչ չունի: Ինչ բան կը կորցնեն (Բաֆֆի—Փաւստոսներն), երբ նրանց ցոյց ես տալիս, որ նրանք կեղծ փաստեր են հնարում և նրանից իրանց ցանկացած եղբակացութիւններն են դուրս բերում—որ նրանք իրանց քննելի (կամ ուսումնասիրելի առարկայի հետ այնպէս են վարվում, որպէս «մի կաշառված և խարդախ քննիչ մի անմեղ մեղադրվածի հետ»: Ինչ պիտի կորցնեն նրանք:—Ոչինչ, ով որ ոչինչ

*) Զարմանալի ժողովուրդ էնք մենք: Երբ որ մի օտար մարդ, օրենա՛լ, մի Սուվօրին, վեր է կենում և մեզ մի վերաւոր խօսք ուղղում, ամենքս էլ վրդովում ենք: Սուվօրիններն ամբողջ առաջնորդները, գրքոյիներ ենք նուիրում, բայց երբ մեր մէջից վեր է կենում մի օր և է Բաֆֆի և մեր փողերն մեք ձեռքից զջրելով մեր, ինչպէս ասում են, «օխորդ պօրդը տակն ու վրայ է անում, մենք լուծւում ենք, մենք նրա առաջ ծուռն ենք խոնարհում, նրա քիթն է վեր խուռնի ու մոմ ծխում: Զարմանալի, այդ կողմից մանաւանդ շատ զարմանալի ժողովուրդք ենք մենք:

չունի, կորցնելու վտանգից ազատ է մնում» (բաւական է որ զրբերը վաճառուին):

— Մեր զրականական սողունները, այդ ստորաբարչ զեռունները ինչ հեղինակութիւն (հըմմ) ունին, կամ ինչ բարձրութիւնից (հասկանալի, ինչ շատ հասկանալի է այդ դառն խոստովանութիւնը) պէտք է ցածր ընկնեն, երբ ցոյց է արվում նրանց մտաւոր և հոգեկան բոլոր դատարկութիւնը:

Պ. Փաւստոսի սոյն այս արդարացի տողերուն վրայ ես իմ կողմից այս ևս աւելացնում եմ, որ անուսները մի այլ խոշոր և շատ անհամեստ սովորութիւն էլ ունին: Գլխաւոր, որպէս զի իրանց «բարձրութիւնից ցածր չընկնին» բոլորովին մոռանալով այն գեղեցիկ վարդապետութիւնը թէ՛ «գովեստէ զբեզ օտարն, այլ ոչ քո բերան», սկսում են իրանց բերնով ու գրչով գովել ու դրուագել իրանք իրանց, ասելով թէ՛ իրանք «նշանաւոր բանաստեղծ» «տաղանդաւոր վիպասան» են: Թէ՛ իրանց այս ինչ վէպը «որպէս մի կախարդական հայելի, ամփոփում է իր մէջ» (շատ և շատ յիմարութիւններ): Թէ՛ այդ վէպը «ամենաձիշդ ֆոթօգրաֆիայի նման պատկերացնում է» (հեղինակի «մտաւոր և հեգեկան բոլոր դատարկութիւնը»): Թէ՛ նրանք «կրթում են (այսինքն փչացնում) մի ամբողջ հասարակութիւն, պատրաստում ամբողջ սերունդ, (սրիկաների), որոնց զրական վաստակը կը մնայ ազգի համար իբրեւ յաւիտենական ժառանգութիւն» (շուտ, բերանդ մաքուր ջուր ան, ողորդէ, պ. Փաւստոս): Թէ՛ նրանումն է նրանց «բարձր նշանակութիւնը, որ մեր զրականութեան ասպարիզում չեն հանդիսանում, որպէս լոկ վիպասան միայն (այլ) այլ և որպէս ժամանակի գործիչ (էվրիքա, յունաց բանաստեղծներն մեր մէջ ևս սկսում են երեւան գալ), որպէս

առաջնորդող ժամանակի ձգտումների և զաղափարների և այլն և այլն *):

Մինչև հիմայ ասածներիցս, յուսամ, բաւական «բացատրուեցաւ և լուսաբանուեցաւ» թէ ես «Այծերի» վրայ խօսելիս՝ ինչի՞ «Մշակի» խմբագրի անունն ևս մէջ էի բերել նախկին յօդուածումս:

Այժմ ես ձեզ «բացատրեմ» թէ ինչի՞ նոյն յօդուածիս լեզուն էր խիստ, կծու, անպատշաճ, և կամ ինչպէս ուղղում էր անուանեցէք:

Արդալով «Այծերը» ես նկատեցի, որ դա ոչ միայն, իբրեւ մի գեղարուեստական զրուածք, շատ և շատ ստոր է, այլ նաեւ իւր մէջ բովանդակում է շատ վայրենի ու վայրագ մտքեր, որոց գործադրմամբ հայ ժողովուրդը կարող էր առաւել ևս փչանալ, մինչդեռ, ըստ վկայութեան նոյն իսկ յօդուածագրին, այդ տեսակ զրուածքը «պէտք է որ կրթական նշանակութիւն ունենայ»: Այնքանով թեամբ Այծերի՝ ձգտման (тенденция), ես նկատեցի որ այդ տեսակ և այդ

*) Հիմնուելով Բիւֆֆօնի ասածի վրայ թէ՛ «ոճը—սա նոյն ինքն մարդն է», ես կարծում եմ, որ յօդուածագիրը—Փաւստոսը՝ նոյն ինքն էր «онъ по коттамъ узналъ меня съ минутой, я по ушамъ узналъ его какъ разъ» (Պուշկինի խօսքերը):

Արտագրած անձնագրով բառերս մանաւանդ՝ աւելի հաստատում են իմ ասածը, որովհետեւ այս առաջին անգամ չէ, որ մեր տաղանդաւոր վիպասանը իւր ձեռքով ծածուկ դափներեւել է հիւսում և իւր գլխին դնելով հրապարակ իջնում: Ահա պ. Բաֆֆին մի այլ նմանօրինակ տողերն, այ. Յակոբ Մելիք-Յակոբեանը («Փունջերի» ճակատից ինչ յայտնի է, որ այդ պարոնը Բաֆֆին է) գրած է մի պատուական վիպասանութիւն, որոյ մէջ խիստ կենդանի (և խիստ սոսկալի) պատկերացրած են (հեղինակի առասպելները—նրա խրելիները): Մենք (այսինքն Բաֆֆի-Մելիք-Յակոբեանցը) խնդրում ենք Մելիք-Յակոբեանցից, որ առանց ուշացնելու տպել տայ իւր աշխատութիւնը և այլն: Բաֆֆին Տուրքիներէլի հետ համատեղները պիտի գիտնան, որ ուս հանգուցեալ բանաստեղծի մտքով անգամ չէր անցնում այդ աստիճան փոշի ցանել ժողովրդի աչքում: Այլ լսեցէք ինչ է ասում Տուրքիներէլը, այդ

ձևի ձգտումը տաճկահայերի համար, մանաւանդ ներկայ քաղաքական հանգամանքներում, վտանգաւոր, անհաշիւ ճիգտում է:

Այդ ամենը տեսնելուց յետոյ, ես, մի և նոյն ժամանակ, զիտէի, որ մեր զրականութեան ամենամեծ բամբալդութիւնից, «մեր տաղանդաւոր վիպասանի» վէպերը դեռ ևս ոչ մի կրիտիկայի ենթարկուած չեն, մինչդեռ յիշեալ վէպերի իբր ահագին արժանաւորութեանց մասին, մեր մէջ անդադար մեծ և փոքր թմբկահարութիւններ են լինում, ըստ մեծի մասին «Մշակի», փոքր մասամբ էլ «Մեղուի» (սրա զաւառացի թղթակիցների կողմից) մէջ: Էնց այդ թմբկահարութիւններիցն էլ «մեր տաղանդաւոր վիպասանը» ոգևորուած ու տոգորուած, օրէնը նոր հեծնում է իւր փետուրեայ Ոսոսիւնանդը և փրփրերախ բշուր է հա բշուր:

Ես զիտէի և զիտեմ նոյնպէս, որ կրիտիկոս — բառիս բուն նշանակութեամբ — մենք ցարդ չենք ունեցել, այժմն էլ չունենք և գուցէ դեռ երկար ժամանակ չունենանք:

Եւ որովհետեւ պ. Բաֆֆիի «Այծերը» ամեն կողմից իմ աչքումն շատ և շատ թոյլ թուեցան, որ ես նրանում, հակառակ յօդուածագրի պնդածին, ոչ մի «լուրջ» բան չը տեսայ, ուստի և կարծեցի, և հիմայ էլ կարծում եմ, և միշտ պիտի կարծեմ, որ այդ տեսակ զրուածքները քննելու

հեղ և խոնարհ, ինքնիրան ճանաչող մարդը. չը զիտեմ, ուսական կեանքի առանձնայատկութիւնիցն է արդեօք թէ իմ սեպհական բնաւորութիւնից, որ ամեն մի արտաքին ցոյցերը, գովեստները, ինձ համար մի մի կատարեալ պատիժներ են: Եթէ ինձ հարցնէին թէ ո՞րն ես ընտրում, 20 վարդ, թէ նոյնքան յոբելեան, ես իսկոյն և եթ առաջինը կընտրէի: Մեր հայ Տուրքիները ալիպէս չէ ասում: Խեղճ, նա չը զիտէ, որ ինձ ուր մեծացուցանեն զանձինս՝ և զոչինչն ունին, և ես՝ որք խոնարհեցուցանեն զանձինս՝ և լի են մեծութեամբ բաղմաւ: (Գրքը Առաւելաց):

Ման. յօդ.

համար, կարիք չը կայ անպատճառ կրիտիկոս լինել, որ այդ գրքի հեղինակի նման վիպասաններին, ինձ նման հասարակ մահկանացուներն էլ միշտ կարող են կարծիք յայտնել, վիճել, անգամ վճռել, որ վերջապէս, ըստ առաժին,

«Մինչև առուն ջուր դայ

Պորտի աչքը կը կուրանայ»:

— Ես վճռեցի իմ ձեռնոցը Բաֆֆիի վրայ նետել: Անշուշտ կուգայ ժամանակ, որ մեր զրականութիւնն էլ կրիտիկոսներ կ'ունենայ: Այդ երջանիկ, ցանկալի ժամանակի ներկայացուցիչը թող դայ և թէկուզ ամենից առաջ իմ յօդուածներս, զրաճներս և գուցէ զրեւիքներս, իր զօրեղ գրչի մի հարուածով իսկոյն և եթ փշուր-փշուր անէ: Ես ուրախ կը լինեմ: Ապագայ կրիտիկոսի ամեն մի հարուածը ես ինձ համար մեծ, շատ մեծ պատիւ կը համարեմ: Ես անչափ ուրախ կը լինեմ, եթէ ապագայ հայ կրիտիկոսը իմ յօդուածներս գէթ իւր աչքիցը անցկացնելու պատիւը ինձ անէ: Բայց արդեօք պ. Բաֆֆին էլ ինձ նման կը մտածէ, արդեօք նա այն ժամանակ ևս յաւակնութիւն կ'ունենայ ասելու և պնդելու որ ինքը (մեծ և փոքր ածականները մի կողմ թողած) վիպասան է եղել: «Մշակը» իւր գոյութեան առաջին տարին շատ լաւ էր ասում «Մենք զիտենք, ով ենք մենք, զիտէք արդեօք, ով էք դուք»:

Բայց ի՞նչ հարկաւոր են այս բաները: Ասած է «ամենայն ոք յիւր միտս հաճեցի»:

Իմ հասկացածիս չափ խօսելով պ. Բաֆֆիի վէպերից մի քանիսի վրայ՝ ես բոլորովին հեռու էի, և հեռու եմ, կրիտիկոս կոչուելու յանդուգն մտքից: Ես միմիայն երկու նպատակ ունեի, նախ՝ այդ վէպերի հեղինակին և նրա ըն-

Թերցողներին իմովսանն մի փոքրիկ ծառայութիւն անել: Եթէ պ. Բաֆֆին և նրա ընթերցողները այդ ծառայութիւնը, օգուտը չը տեսան ինձանից, թող լաւ իմանան, որ ֆւաս երբեք չտեսան և չեն տեսնել: Մասնաւորապէս ինքը «մեր տաղանդաւոր վիպասանը» մանաւանդ՝ թող իմացած լինի, որ ոչ մի կրիտիկոս (չայլունիներն ի՞նչ են) աշխարհումս չէ կարող խեղդել որ և է հանձար: Ասած է, «անկեան քարը գեանի վրայ չի մնալ»: Այլ կամ անագան հանձարը ինքնիրան ցոյց կուտայ, կը ծանաչեցնէ: Աւրեմն ձեր այժմեան աղմուկներն, այդքան լաց ու թացերն ինչի՞ և ո՞ւմ համար են: Այդ եղբ, ամօթ է, ինչի՞ էք լալիս, ինչի՞ ձեր Լէօների բերանով միջնորդում էք «հարկաւոր է Բաֆֆին խնայել» *): Եթէ համոզուած էք, որ դուք հանձար էք և չայլունիներն ձեր ձկոյթն անգամ չ'արժեն, արհամարհեցէք զրանց: Եւ ինչի՞ ուրեմն այդքան ստորանում էք և անհաւասար ոյժերի հետ ի պայքար մտնում: Բարեկամ, դա փոքրօրոգութիւն է:

Իսկ ես ինքս ձեզ կ'ասեմ, որ դուք ոչ հանձար էք, և ոչ էլ բանջար, այլ մի վարպետ մարդ, մի գրականական գործնական աշրդ, դէրվիշ, որ մի կողմից իւր հակառակորդին իբր թէ արհամարհում է, միւս կողմից, նրա թոյլ գրչից սաստիկ վախենում է:

— Ինչի՞:

— Ս'ի գուցէ՞ գրքերը, ա՛հ, միմիայն գրքերը այլ ևս չը վաճառուին, գէթ առաջուան նման:

Ա՛յ, այն էի ասում, Բաֆֆի վէպերի վրայ խօսելու երկրորդ նպատակն էլ այն էր և է, որ այդ վէպերի իբր

ահադին արժանաւորութեանց մասին մի տարակուսանք, մի կասկած զարթեցնեմ հայ ինդէլիգէնցիայի մէջ, որը, կարծեմ, մեծ մասամբ Բաֆֆին չէ կարդում: Ես ուզում եմ, որ այդ ինդէլիգէնցիան, որպէս աւելի հասկացող քան Բաֆֆին և ես, բացատրեն և լուսաբանեն» թէ այդ վէպերն ի՞նչ բաներ են, թէ մենք ո՞ր աստիճան պէտք է ընդունենք զրանց վարդապետութիւնները, յորդոր ու պահանջները: Այդ կարեւոր հարցի պարզութիւնը համար, ես մեր ինդէլիգէնցիայի նկատմամբ ևս վիրաւորիչ չէի համարել այն ամեն յիմար, տղայական ցոյցերն, ինչ որ եղան նուաստիս դէմ *) և գուցէ կարող են լինել և այդ ինդէլիգէնցիայի դէմ: Այդ ամենը ոչինչ բաներ են և շատ բնական, մանաւանդ երբ գիտես զիմացինդ ով է:

Արդիւշեալ երկու նպատակներիցս մանաւանդ առաջինին հասնելու համար՝ ինձ մնում էր մի հարց ևս վըճռել, այն է թէ Բաֆֆի ընթերցողների մեծամասնութեան, հայ թերուսի և ռամկի հետ, ես ի՞նչ լեզուով խօսեմ, ի՞նչ տեսակ ձայն հանեմ, որ նրանց ականջին հասնի, և մի փոքր էլ ներս մանի:

— Հատ պարզ. այն ձայնը, ինչ որ զրանք տասը տարուց ի վեր լսել և ընտելացել են և անշուշտ այն գործիքը,

*) Թիֆլիսում եմ իբր նախատուած լինելու մասին, երբ պ. Լէօն իւր յօդուածում յիշատակութիւն էր արել, ես մի խօսք անգամ չ'ասի, բայց ահա մի և նոյն բանը անում է և պ. Փաւստոս, ասելով թէ՛ «չաստարակութեան (?) անհամակրութիւնը կարծեմ իր անձի վրայ փորձեց պ. չայլունին, որպէս ինքն (եւ—ձեր խոնարհ ծառան) ևս խոստովանում է» (ե՛րբ, ո՛րտեղ): Պ. Փաւստոսի այս դողեղն ամենալաւ ապացոյց են իրան և իրան նման մարդկանց ո՛վ և ի՞նչ լինելուն: Պարզ երեւում է, որ այդ մեծ ու փոքր հանձարները, այդ «ժամանակակից գործիչները» ընդունակ են ո՞չ միայն ստելու և զրպարաւելու, այլ նաեւ հոգեզմայլութեամբ ներբողելու այն, ինչ որ խիստպէս պէտք էր դատապարտելի— «ի պաղոյ անտի ծառն ճանաչի»:

որով «Մշակը» ու նրա «գաղափարների ամենամոլեռանդ քա-
րողորդը» իրանց ձայնը հասցնում են այդ ականջին:

Խնդիրը, յուսամ, պարզուեց: Բայց ես դարձեալ դրադ
կուգամ, որ իմ լեզուն աւելի քաղաքավար էր, քան իմ հա-
կառակորդինը, քան, մինչև անգամ, պ. Փաւստոսի վերջին
յօգուածի լեզուն:

Այսպէս թէ այնպէս, այժմ ինձ շատ է զարմացնում
հետեւեալ հանգամանքը: Պ. Բաֆֆիի ջատագովները «արսա-
փելի և խիստ սոսկալի» կերպով նախատում և անարկում են
այն զէնքը, որ իրանց սեպհական, ժառանգական, անդին ապ-
րանքն էր, որը ես միմիայն նրանցից փոխ առայ, ասենք, դո-
ղացայ (մեղայ, Տէր, մեղայ): Եթէ այդ զէնքով ինձանից ըս-
տացած հարուածներն այդքան դառն և կսկծեցուցիչ է եղել,
միթէ ես մեղաւոր եմ: Ինչի՞ իրանց տան մէջ այդպիսի վը-
տանգաւոր ապրանք են պահում, որ դրացու աչքը շլանայ:

Պարոն Լէօ, պ. Փաւստոս, ձեզնից առածս զէնքը ձեզ
դէմ մի փոքր շաղտալով ես ոչ մի նոր բան չ'արի, եթէ ոչ
ճշդութեամբ և սրբութեամբ կատարեցի «մեր տաղանդաւոր
վիպասանի» սիրած ու պաշտած այն վարդապետութիւնը թէ
«ակն ընդ ական և ատամն ընդ ատաման» (տես «Վայժեր»
եր.):

Պարոններ, երբ այդ զէնքը ձեր ձեռին էր միշտ և դուք
անդադար չպրտում էիք նրան մի ամբողջ ժողովրդի երեսն ի
վեր, այն ժամանակ այդ զէնքը լաւ էր, օգտակար էր, իսկ
երբ հիմի, մի երկու օր ժամանակաւ, յիշեալ զէնքը մի ան-
հատի դէմ է ուղղած,—այժմ այդ զէնքը իւր նախկին յատ-
կութիւնը փոխեց միթէ:

— Իօգիկա, պարոններ, մի փոքր լօգիկա ունեցէք: Ինչ

էլ որ լինի, ես շտապում եմ հաւաստիացնել և միամտաց-
նել ձեզ, որ յիշեալ զէնքի գործածութիւնը իմ մէջ մի առ-
ժամանակեայ միջոց էր, այլ ոչ սկզբնական և վախճանական
նպատակ, ինչ դուք էք անում: Այժմ, որովհետեւ ինձ յաջո-
ղուեց ձեզ ձեր արամազդային բարձրութիւնից ներքեւ բերել
և մեզ նման հասարակ մահկանացուներին մէջ խառնել, ո-
րովհետեւ — ինչպէս ձեր աղմուկներիցն եմ գուշակում — ձեր
ընթերցողները այժմ մի փոքր էլ ինձ են լսում,—ուստի,
այժմ, ասում եմ ես, շնորհակալութեամբս հանդերձ, վերա-
դարձնում եմ ձեզ ձեր ապրանքը: Այսուհետեւ նա ինձ պէտք
չէ: Եթէ կամիք գործածեցէք նրան և այսուհետեւ, ինչպէս
գործածում էիք ցարդ: Վամիք աւելի սրեցէք, յեսանեցէք և
գործածեցէք ում դէմ, որքան և ինչ չափով էլ որ կուգէք,—
«սահմանք բաջայ՝ զէնք իւրեանց»: Իսկ ինքս կ'դառնամ ձեր
ինձ վրայ բարձած «արսափելի և խիստ սոսկալի» երկրորդ
մեղադրական կէտին:

«Духъ анализа и изслѣдованія — духъ
нашего времени. Теперь все подлежитъ
критикѣ даже самая критика».

Бѣлинскій.

Արեւում ես յիշեցի թէ ինչպէս ժամանակակից հայ
թերուսը, աշակերտը, անգամ ռամիկը հետամուտ են քննել
և դատել այն ամենը, ինչ որ իրանից բարձր է:

Այդ երեւոյթը, նայելով դրան ներկայացուցիչների վրայ
որքան որ ցաւալի է, այնու ամենայնիւ դա ժամանակի հո-
սանք է, որոյ հետ կամայ ակամայ պէտք է որ հաշտուենք և
սառնասրտութեամբ ուսումնասիրելով պիտի աշխատենք ա-
ռաջն առնել, կանոնաւորել:

Ինչ որ անում է թերուսը, աշակերտը, ռամիկը, նոյնը

անում է, թէ Լ բոլորովին տարբեր կերպով և նպատակով, և ժամանակակից գիտնականը, վարժապետը, զարգացեալ հայը — այսինքն լուծելու և հետազօտելու ոգին ամենքի մէջ ևս կայ, որովհետեւ դա ժամանակի անխուսափելի պահանջն է, նրա ոգին է:

Ով էր լսել, որ հայ կաթողիկոսի մտքիցն էր անցել, որ պիտի գայ ժամանակ, երբ հայ ժողովուրդը, կամ սրա հրապարակասօսները այդ կաթողիկոսներից ամենայն խստութեամբ հաշիւ ու համար են պահանջելու այն կաճառողներին և ազնաւորներին համար, որոնք ժողովուրդը տուել է կամ տալիս էր իւր «իջման տեղոյն» և իւր «վանքի հայր սուրբներին»:

Եթէ Ս. Նրուսադէմի հայ պատրիարքները նախքան իրանց վախճանիլը գիտենային, որ ժամանակով Ա. Պօլսոյ ազգային ժողովը նրանց հաշուոց վրայ վերադիտող յանձնաժողով կարգելու է, որ Ստեփան-փաշայ Ասլանեանի նախազահութեամբ հայ պատուիրակները մի օր, պիտի գնային և վանքի գլխին չոքէին, — այն ժամանակ յիշեալ պատրիարքները իրանց կենդանութեան ժամանակ բացէ ի բաց կը հրաժարուէին ոչ միայն ս. Նրուսադէմի պատրիարքական աթոռից, այլ նաեւ, ոգի ի բռին, խոյս կուտային, և այդ վանքի միաբանակցութիւնից անդամ:

Ա. Պօլսոյ ամիրաների երազովն անգամ կարող էր անցնել, որ ըստ առածին ժամանակով ճնոր հաւեր դուրս պէտք է դան և նոր տեսակ ձուաններ ածեն», որ ժողովուրդը կառավարելու և խնամելու ամիրայական ձեւին չը հաւանելով, ազգային սահմանադրութիւններ պիտի հնարեն այդ նոր հաւերը:

Հայ կաթողիկոսը մի ձեմարան է հիմնում, մենք նրանից հաշիւ, բացատրութիւն, ծրագիր ենք պահանջում: Թեմական վերատեսուչը իւր վարժապետին արձակում է, մենք ամենայն ուժով նրա վրայ ենք ընկնում, վերատեսչի, ինչպէս ասում են, թուքը բերանումը չորացնում, նրան անդանակ մորթում, և այլն և այլն:

Այսպէս պէտք է հասկանալ և ամեն երեւոյթ, թէ հասարակական, թէ ընկերական և թէ անգամ մասնական, որտեղի է ունենում ժողովրդի բարոյական կեանքումը և խրատօրէն, լաւ թէ վատ, յաջող թէ անյաջող, իրաւացի թէ անիրաւացի քննվում է ոչ թէ Թադէոսից ու Ռարդուղիմէոսից, այլ միմիայն ժամանակի ոգուց: Դամանակ — ահա ձեզ ամեն բան և ամեն ոք: Այս ճշմարտութիւնը ամենից լաւ ըմբռնել էր կարծես այն խելացի և գործօն եղուիտը *) երբ ասում էր «ժամանակը և ես»:

Աւելորդ է ասելը, որ ժամանակի պահանջից չէ կարող խոյս տալ և զրականութիւնը: Վրականութիւնը, որ ժամանակի ոգին ամենից առաջ ինքնէր ըմբռնել և նրան ժողովրդին մէջ ինքը արծարծել, ինքը նրան մագնիսացրել: Այս ամենից յետոյ, շատ հասկանալի է թէ որքան ծիծաղելի կը լինի մի հեղինակ, երբ կ'ասէ թէ ինձ ձեռը մի տաք, ես ձեր խաղածաղիկը չեմ: Եւ կամ եթէ հարկաւոր է ինձ ևս ձեռը տալ, պէտք է ուրեմն անպատճառ դովել, պէտք է մինչև «փառաց ի փառս» բարձրացնել: Հակառակ դէպքում իմ օրը օր չէ, իմ կեանքը կեանք չէ:

— Ղիցուք թէ ձեր վերջին ասածը ճիշդ է, բայց մի թէ ձեր պահանջն էլ իրաւացի է և մեզ համար պարտադիր: Ճշմարիտ, միթէ զօյլներին բարբաջմունքը պիտի ստիպեն

*) Կարծես Մանգաբէնի:

լռել» այդ դէպքում ամեն մի փոքր ի շատէ գլխում խելք ունեցող մարդուն ևս:

Արդեօք ամեն ժամանակ ևս պէտք է լռել, երբ տեսնում էք, օրինակի համար, որ մի որ և է Արմենակ Սիւնի վեր է կենում և իւր ամենազրպարտիչ զրբոյկով *) թէ ընդհանուր հայոց կաթողիկոսին և թէ Աջմիածնի սինօդին նախատում և անարգում է, թէ ինչի՞ դրանք գաղթականների օգտին ժողոված փողը հէնց գաղթականներին իրանց չը մասնատրեցին, այլ նրանց որդւոց լուսաւորութեանը յատկացրին, որպէս զի սրանք ևս իրանց հերթում իրանց հարց յիմարութիւնը չը գործեն:

Եւ կամ երբ մի քանի յիմար տղաներ վեր են կենում և իրանց վառ երեւակայութեան մէջ միմիայն տեղի ունեցած պատճառի համար, ընդհ. հայոց կաթողիկոսին անստորագիր նամակ են գրում և ամեն տեսակ լրբութիւններով հինաւուրց ծերունիի սիրտը վշտացնում **): Եւ կամ երբ մի որ և է քահանայ կամ աշխարհական վեր է կենում և իւր զրբոյկներում ***) մի ամբողջ քաղաքի բնակիչներին գրեթէ նախատելուց յետոյ, ինքն իրան մի Ղամբէտա կամ մի Բիւսմարի ու Բիկօնսֆիլդ է երեւակայում, և կամ երբ մի և նոյն անձն ինքնիրան թոյլ է տալիս վեր կենալ և լուսաւորչական եկեղեցւոյ բեմից բողոքական լուստէրի կենսագրու-

*) Էջմիածինը և Տաճկահայաստանի սովոր:

**) Այդ նամակի պատճենը մեզ մօտ է: Թիֆլիսի Հայ ազատամիտ երիտասարդութիւն, ստորագրութեամբ, յիշեալ նամակի հեղինակները լսած լինելով, իբր թէ տալիս հանդուցեալ Հայրապետը «Մշակը» դադարեցնել է ուղում, ուղեցել են Հայրապետի վրայ ճշում գործել: Աւելորդ է ասելը, որ Գեորգ Գրի մտքովն անգամ չէ անցկացել մի այդպիսի մեծ պատիւ անել մեր ամենօրեայ թերթին:

***) «Ախալքալիկցու վէրքերը» և Խոսիսոսոսոս քաջաբութիւնը: Ծան. յօդ.

թիւնը պատմել *): Կամ վերջապէս մի որ և է Բաֆֆի, վեր է կենում և գրում ու քարոզում թէ հայ հոգեւորականութիւնը սկսեալ Սուլէյմ Գլխիցից ուտում, քրքրում են հայ ազգի լերդը ու թորը...: Կամ երբ մի և նոյն Բաֆֆին առանց մի միջնակարգ դպրոցի աշակերտի չափ գոնեայ սովորած լինելու իւր ժողովրդի գրականութիւնը, սրա անցեալը և ներկան, վեր է կենում և մէկին «գէշ ու որդ» կոչում, միւսին, «աւաղակ ու խաբեբայ» անուանում, — երբ այս և այսպիսի բաներ մենք մեր կեանքի և գրականութեան մէջ ամենայն օր տեսնում ենք, ասում եմ ես, միթէ դարձեալ իրաւունք չ'ունենք մեր թոյլ ձայնը բարձրացնել, բողոքել, կամ ըստ առածին, «խփել հորթի դնչին, որ գնայ կանգնի իւր մսուրքի գլխին»:

— Այ, պարոն, ո՛չ, ժամանակը միայն ձեզ համար չէ, այլ նա և ուրիշների համար էլ:

Ուրիշներն էլ, լաւ թէ վատ, ժամանակի որդիքն են նոյնպէս: Եթէ ձեզ համար հաշիւ է վէպեր գրել, ուրիշների համար էլ պարտք է այդ վէպերը բննել, և նոքա կը բնենեն, թէ և կրիտիկոսներ չեն և չեն էլ ուզում լինել,

— «Духъ анализа и изслѣдованія — духъ нашего времени. Теперь все подлежит критикѣ даже самая критика.»

Ինչուն է «Այծերի» հիմնական գաղափարը, նրա ձգտումը:

*) Ի դէպ, յիշեալ անձն երկու տարուց ի վեր սկսել է չարաչար կերպով յարձակուել սրբ. Մանկունու վրայ «Մշակում» սև ատղեր կրող իւր յողուածներում, Ախալքալիկցի: Եթէ ընթերցողը ուզում է դրա պատճառը իմանալ ես կ'ասեմ: Այդ անձը 1600 ու Էջմիածնապատկան (Ճաշոցներ) փողը անուշ է արել: Մանկունին չարաչար պահանջում էր: Ուզում էր սորա կայից վրայ արգելք դնել տար: Միջնորդներ մէջ բնկան չը թողին: Նա իրան հերթում «Մշակին» միջոցաւ աշխատում էր Մանկունու վրայ ճշում ներ գործել, երկու ազգել: Եթէ Վեհափառը չը վախճաներ, չեմ կարծում թէ այդ պարոնը յաղթանակէր:

— Տաճկահայաստանի բարօրութիւնը:

— Հիանալի և սրբազան միտք, որին չէ կարող չըհասկնալ ոչ մի մարդ, ինչ կարգի և կոչումի էլ որ լինի, որովհետեւ բարօրութեան ցանկութիւնը՝ ամեն մի անհատի մէջ, ինչ ազգից ուղղում է լինի, բնածին է, թէպէտ և այդ բնածին ձգտումը ամեն մարդու մէջ ունի տարբեր չափ ու աստիճան:

Ուրեմն պ. Բաֆֆիի վէպի այդ հիմնական գաղափարը նոյնքան նոր է, որքան և հին է: Նա տեղի է ունեցել այն օրից, երբ ծնել է ինքը մարդը:

Նախկին յօդուածումս ասելով թէ՝ «Այծերի» ձրգտումը նոյն իսկ Բաֆֆիից առաջ եղող այս ու այն հայ վիպասանի ձգտումն է, ես ո՛չ թէ յիշեալ անձանց վերաւորել կամ մանաւանդ վտանգի ենթարկել էի ուղղում—ինչպէս այսօր մեկնաբանում է պ. Փաւստոս—այլ այն թէ՝ յիշեալ անձինք Բաֆֆիից շատ ու շատ առաջ այդ միտքը մեզ քարոզել են, միայն թէ նրանք—որպէս Բաֆֆիից անհամեմատ լաւ հայ կեանքի արտայայտիչներ—այդ միտքը քարոզել են այն ձևով և այն չափով, ինչ որ ինքը կեանքը արտայայտել է:

Եւս ասել էի, որ Բաֆֆիից առաջ եղող հայ վիպասանները մեզ երգել են «իօ, նէ, բա, փօ, իսկ պ. Բաֆֆին ուղղում է երգել՝ դօ, ուէ, մի, ֆա, սօլ: Բայց որովհետեւ այդ մարդը ոչ մի կանոնաւոր երաժշտութեան մասին գաղափար և ճաշակ չունի, ուստի և նրա երգածը դուրս է գալիս մի անձոռնի բան, մի Բաբելոնեան խառնակութիւն, առ առաւելն մի արաբական և պարսկական շիբաստա ու բայաթի, որոնցից հայի ականջը ոչ երբէք կարող է ախորժել, սիրել:

Ուրեմն, կրկնում եմ, «Այծերի» նպատակն է Տաճկահայաստանին օգնել: Բայց ի՞նչ ձևով:

— Եւ ինչ ձևով: Պ. Բաֆֆին իւր վէպումը դուրս է բերել մի բանի հայ յեղափոխականներ: Յայտնի է որ յեղափոխականների տեսակը Նւրօպայում բաւական շատ է: Ղըւանց զրեթէ բոլորին էլ ցանկութիւնը ժողովրդին օգնելն է. միմիայն այդ գեղեցիկ ցանկութեան իրագործելու միջոցը եւրօպական յեղափոխականների մէջ զգալի կերպով միմեանցից տարբերվում է:

Նոցա մէջ կան այնպիսիներ. սրոնք ճակատն ի քիրտ, աշխատում են խաղաղ, կուտուրական միջոցներով ժողովրդին նիստ ու կացը վերականգնել, բարւոքել, միշտ և հանապաղ աչքի առաջ ունենալով ժամանակը, շրջապատող հանգամանքները, ժողովրդի վարք ու բարքը, սովորութիւնը, տիրող իշխանութեան յարաբերութիւնը, նշանակութիւնը և ազդեցութիւնը:

Եւդ տեսակ յեղափոխականներին չէ կարելի չը համագրել: Եւդ է պատճառը որ ոչ մի եւրօպական տէրութիւն դրանց գործին չէ խանգարում:

Յեղափոխականների մէջ կան և այնպիսիներ, որոնք կործում են, որ եթէ վեր կենան թագաւորների գլուխներ կտրատեն, ամբողջ «մի աշխարհ սգոյ մէջ թողնեն», դարերով սրբագործված ժողովրդի սովորութիւնները եղծեն, եղածը քանդեն, ամեն տեղ և ամենքի վրայ սարսափ ձգեն, երբեմն իրանց դժոխային գործիքներով և երբեմն խեղճ ու մոլոր ամբօխին առաջ քշելով, սրան զրգռելով, ապստամբեցնելով, ժողովրդի դրութիւնը մէկ գլուխ կը լաւանայ: «Այծերի» յեղափոխականները չէ՞ թէ վերջին տեսակիցն են:

Պ. Բաֆֆիի Նարօն և ընկ. բացի ամբօխից Տաճկահայաստանում ոչ մի օգտակար հայ դասակարգ չեն գտնում:

Տաճկահայ պատրիարքը, զրամատէրը, ուսում առած երիտասարդը և այլն—բոլորն էլ փաստակար, անպէտք բաներ են, որոնք ցեցերի նման կ'աւծ են ժողովրդի ջանին և ծրծում են նրա արիւնը:

Ի՞նչ պէտք է արած, որ ժողովուրդը իւր այդ ցեցերից ազատուի և ազատ շունչ բաշէ:

Այ ինչ, վեր առնել զրանց բոլորին և կոտորել «հանգստացներ» — սարսափ—տէրրօր: Յետոյ զրանց ճապաղ առ ճապաղ արիւնը կոխկռտելով տաճկահայ ամբոխը ոչխարի նման դարձեալ առաջ խառնել և գնալ:—Պրծա՛ւ, Տաճկահայաստանը բաղդաւորվեց: Ուրիշ էլ ի՞նչ էք ուզում: Բոլոր «Այծերը» այս է ահա: Այս է նրա առաջին հատորի բովանդակութիւնը, այս պիտի լինի և վերջինինը, եթէ Բաթֆիին—ինչպէս նշաններիցը երևւում է—իւր (այսինքն «Սշակի») նախկին և ուղիղ մօքին չը պիտի դաւաճանէ վէպի երկրորդ, ապագայ հատորումը: Թէ առաջ և թէ այժմ ես այն կարծիքի եմ, որ պ. Վարօի և ընկ. բռնած ճանապարհը, նրանց կարծիքը, թէ տեսականապէս և թէ գործնականապէս, անիրագործելի, անգամ փաստակար է, երբ աչքի առաջ առնենք տաճկահայերի ներկայ դրութիւնը:

— Ինչի՞:

— Ասեմ ձեզ:

Նախ և առաջ հիմնովին թիւր է այն կարծիքը թէ տաճկահայաստանում, բացի ամբոխից, մնացեալները փաստակար են: Ղա անկարելի է. բնականից դուրս է ամեն մի ժողովրդի ուրեմն և հայի նկատմամբ:

Իմ խօսքը, ի հարկէ, բացառութեանց մասին չէ, այլ ընդհանուրին, ամբողջութեանը, որոյ մէջ բացառութիւն-

ները, սովորաբար, անհետանում են:

Արտերի մէջ որոմի բսնիլը, վարդի շուրջ փշի փաթաթուիլը՝ սովորական երեւոյթներ են, բայց զրանով ոչ արտը իւր կենսատու նիւթից է զրկւում, և ոչ էլ վարդը իւր անոյշ հոտից:

Հինգ դար է, որ տաճկահայք իսլամի մեծ խալիֆային հլու հպատակներն են: Այդքան ժամանակում այդ ժողովրդի զլխից շատ չար ու բարի է անցել: Թողնենք անցեալը վեր առնենք մեզ մօտիկ ներկան: Աթէ այդ մօտիկ ներկայումը տաճկահայ ժողովուրդը որքան և իցէ առաջ է գնացել, սեպհական գործերը մասամբ յառաջ մղել, ժամանակի սպառնալից և կորստաբեր ազդեցութեանը, հոսանքին, լաւ վատ, մէջք դէմ տուել և իրան գոյութիւնը պահել, — դա նրանից է, որ այդ ժողովրդի մէջ եղել են և այժմ էլ կան մարդիկ, դասակարգեր, որոնք ըմբռնել են թէ՛ սեպհական գործ, յառաջադիմութիւն, ժամանակի օգտաբեր կամ կորստաբեր ազդեցութիւն ասած բաները, ի՞նչ բաներ են:

Մի կերակրի համը իմանալու համար պէտք է առաւել կամ նուազ ճաշակ ունենալ: Սեն ու սպիտակը միմեանցից որոշելու համար—աչք, տեսութիւն, հոտերի տեսակը որոշելու համար—հոտառութիւն,—մի խօսքով զգայարանք: Ամբոխ ասած դասակարգը, ամեն ազգաց մէջ էլ, զգայարանք նոյնպէս ունի, բայց ես ֆիզիքական զգայարանաց մասին չեմ խօսում, այլ—բարոյական: Աթէ ամբոխը նոյնքան հասկանում է, նոյնքան լուսաւորուած է, որքան զարգացած մարդը, ուրեմն նա այլ ևս ամբոխ չէ: Նա իւր դասատունը արդէն փոխած է: Նրան պէտք է տանել առաջին, երկրորդ, չորրորդ, եօթներորդ դասատուն: Մի դասարանից միւս դա-

սարան աշակերտները միշտ փոխում են, բայց պատրաստականները դարձեալ մնում են բազմամարդ, և քանի որ մի աշակերտ պատրաստականումն է, նա դեռ երեխայ է, կամ ոչինչ չը գիտէ, կամ շատ քիչ, այնպէս որ առանց վարժապետի խեղճը մի բայլ անգամ չէ կարող անել:

Տաճկահայ մանուկը—ամբոխը—ունեցել է արդեօք և այժմն էլ ունի՞ իւր վարժապետները:

— Անպատճառ: Ոչ որ, բացի Բաթիֆիից, գուցէ չի յանդգնիլ այդ բանը ժխտել:

Ոչ որ չի յանդգնել ասել թէ՛ Կ. Պօլսոյ ազգային սահմանադրութեան հեղինակները Պօլսքսքսքներն ու Չաքքրեաններն են, այլ ոչ թէ Օտեաններ, Պալեաններ (Նիկող.) և Ռուսենեաններ: Ոչ որ չէ կարող նմանապէս հաստատել թէ՛ սուլթանների կառավարութիւնից այս և այն արտօնութիւնը, հայ ժողովրդի համար ձեռք բերողը, այս ու այն բարեգործական հիմնարկութիւնը հաստատողը, նրան խնամող ու տածողը Սվաջեաններն ու Փանոսեաններն են, այլ ոչ թէ Պէզեաններ, Ճէզայիրեաններ ու Վաղեաններ: Ոչ մի խելքը զլխին մարդ չէ կարող ապացուցանել, որ եթէ տաճկահայաստանում մանկանց կրթութիւնը որքան և իցէ առաջ է գնացել, այդ բանը մենք պարտական ենք զանազան Մկոնքերին ու Թօրօններին, այլ ոչ թէ Խլթիւճեաններին *), Չերազներին, Պէրպէրեաններին, Իփէկճեաններին, և այլն, է որ իրանց անձնուիրութեամբ, և է որ Նուբարների և Շահ-

*) Բացի «Մասիսի խմբագիր պ. Կարապետ Խլթիւճեանից» Կ. Պօլսում կար նաև մի այլ Խլթիւճեան ևս (անունը մոռացած եմ), որ իւր կեանքի մեծագոյն մասը Զեյթունի հայ մանկանց կրթութեան գործին էր նուիրած: Այս տեղ էլ թուքախօսեց մեռաւ այդ պատուական երեխասագրը:

նաղարեանների աջակցութեամբ և ձեռնուութեամբ:

Պարձեալ՝ ոչ որ չէ կարող ժխտել, որ եթէ երէկ և այսօր տաճկահայ ամբոխը հայերէն երգեր է երգում, և մէկը մէկու ձեռք տալիս, ողջագուրում,—այդ բանը մենք պարտական ենք միմիայն Հէքիմեաններին, Թերզեաններին, Բէշիքթաշեաններին, Սվաջեաններին և Վաղեաններին:

Պարձեալ՝ ով որ, թէկուզ շատ հեռուից, շատ հարեանցի կերպով, տաճկահայերի քաղաքական վիճակը ճանաչում է, չէ կարող ուրանալ, որ վերոյիշեալ առաջադիմական քայլերը կատարուել, պատասպարուել և հովանաւորուել են, միշտ և հանապազ, Խորիմեանների և Նէրսիսների լայն ու արձակ քղանցքների տակ:

Եւ եթէ այսօր տաճկահայ ամբոխը փոքր ի շատէ ձայն է հանում, մեզ իրան պատգամաւորներն է ուղարկում, մեր պատրիարքների դռները կոխում, պատրիարքներ դահավիժում, ազգային ժողովը լուծելու միտումներ ցոյց տալիս,—այդ ամեն, ասենք, մի տեսակ սթափման, ինքնաձանաչութեան դասերը տաճկահայ ամբոխը ինքն իրանից, իւր փալանի տակ, չստեղծեց, այլ ուրիշներից, վերոյիշեալ դասակարգերից սովորեց ու սերտեց:

Ուրեմն, ամեն մի հասարակ մահկանացուի (ո՛ւր մնաց թէ մի «տաղանդաւոր վեպասանի») կողմից ամենամեծ անմոռութիւն է, ես կարծեմ, ասել և «ամենամոլեռանդաբար» քարոզել, թէ տաճկահայաստանում, բացի ամբոխից, ոչ մի այլ օգտակար դասակարգ չը կայ:

Եթէ, յիշաւի, տաճկահայաստանի մնացեալ դասակարգերը անպէտք են, աւազակ են, դա անշուշտ նրանից է, որ այդ երկրի ամբոխը ինքը նմանապէս անպէտք ու աւազակ է:

Ուրիշ կերպ ես չեմ կարող բացատրել, վասն զի վերոյիշեալ դասակարգերը, (ինչպէս նախկին յօդուածումս ել ակնարկել էի) իրանք իրանց չեն բուսել, այլ հէնց այդ ամբօխի արտադրութիւնն են: Ուրեմն վատ է պտուղը, նրա համար, որ ծառը վատ է, իսկ ծառը վատ է նրա համար, որ հողը վատ է: Ո՛վ կարող է երաշխաւորել, որ ձեր «մեծ զօրութիւն» կոչած ամբօխը, սրա այժմեան լաւ անդամները, երբ նոյնպէս փոխեն իրանց դերը, չը կորցնեն այդ զօրութիւնը, ըստ օրինակի իրանց նախորդներին: Այս հարցի մասին կարելի է շատ երկար խօսել, բայց սեղը չէ: Լաւ է մենք վէպից չը հեռանանք:

Խաթրիչուն ենթադրենք, որ պ. Բաֆֆիի ասածը ձիշդ է, որ տաճկահայաստանը բացի ամբօխից, ոչ ոք չ'ունի և ուրեմն, կամայ ակամայ, իր բոլոր յոյսը պէտք է որ այդ ամբօխի վրայ դնէ:

— Գիտէ՞ք արդեօք ամբօխ ասածը ինչ բան է, հարցնում եմ ես «մեր տաղանդաւոր վիպասանից»:

— Ի՛նչպէս չէ, պատասխանում է նա ինձ, «ամբօխը մի մեծ և անմշակ զօրութիւն է»:

— Ընմշակ, ուրեմն պէտք է նրան մշակել:

— Ժամանակ չկայ: Այդ բանը մինչև անգամ աւելորդ ու ֆեասակար է, նորից ասում է ինձ պ. Բաֆֆին, որին ես, կարծեմ, Ժան-Ժակ Ռուսսօի էի անուանել առաջին անգամ:

— Պ. Բաֆֆի, ախր... բայց ես ահա իմ գիրքը ծալում եմ, ասացէք ինձ, ամբօխի մեծ զօրութիւնը ինչո՞ւն է:

— Վարօների առաջնորդութեամբ յարձակուել, «հարկանել, սպանանել և ընդ գարշա ածել»:

— Ինչի՞:

— Որպէս զի Տաճկահայաստանը բարենորոգի:

— Այդ երգը մենք արդէն լսեցինք. շնորհակալ ենք: Բայց ես ձեզ մի բան ևս կ'ասեմ, որ տաճկահայ ամբօխը ձեր այդ Վարօներին ո՞չ երբէք կը հետևի: Ասեմ թէ ինչի:

«Ախ» նրա համար, որ ռամկին առաջ մղելու համար՝ հարկաւոր է լինել ռամկավար, հարկաւոր է նախ այդ պատուին արժանանալ: Վրա համար էլ շատ ու շատ պայմաններ, երկարատև, տոկուն անձնուիրութիւն, անկեղծութիւն է հարկաւոր: Հարկաւոր է, ինչպէս ասում են, ռամկի կաշոյն մէջ մանել միանգամայն: Խոստովանեցէք, որ ձեր Վարօներն դրանցից ոչ մէկին էլ չունին:

Անցեալ օր՝ դրանք Տէր-Թօդիկի «չար» աշակերտներն էին, երեկ՝ ամերիկական և եւրօպական դպրոցների նոյնպէս «չարերը», այսօր էլ մեզ մօտ վերադառնալով՝ իրանց չարութիւններով միմիայն ուղղում են մեզ բաղդաւորացնել: Բաղդաւորացնել չեն կարող, այլ միմիայն գուցէ չարացնեն, ուրիշ ոչինչ:

Աս դրանց խորհուրդ կուտայի մի՞ կողմ դնել իրանց թէ հին և թէ նոր «չարութիւնները», մօքերիցը առ այժմ հեռացնել մեզ բաղդաւորացնելու գուցէ բարի դիտաւորութիւնները և աշխատել միմիայն ուսումնասիրել մեզ, մեր կաշոյն մէջ մանել: Վրա համար էլ, ինչպէս ասացի, անհրաժեշտ է համբերութիւն:

Բայց որովհետև դուք շատ անհամբեր մարդ էք, դուք աւելի «խենթերին» էք համակրում բան խելօքներին, դուք լսել անգամ չէք ուղղում թէ՛

«Լաւ է զիտունին գերի

Վրան անգէտին սիրելի»:

Ուստի այդ դեպքում ևս, ես էլի զիջանում եմ ձեզ: Ա՛յ ամբոխին առաջ խառնենք: Մեր նպատակի վսեմութիւնը աչքի առաջ ունենալով, ամբոխին մեր ձեռքը «մի կոյր գործիք» շինենք: Աճապարենք:

Բայց «կոյր գործիք» ասելը միմիայն մի խօսք է: Խրականութեան մէջ դա չը կայ: Ամբոխին, կամ թէկուզ «Մըշակին», օրինակ, կոյր գործիք շինելու համար պէտք է դրանց մի օր և իցէ թոյլ երակիցը բռնենք, պինդ բռնենք: Պէտք է մեր դաւառական թղթակիցների շատերի չափ էլ է գոնեա խելք ունենանք: Յայտնի է, որ երբ այդ թղթակիցները իրանց յօդուածը տպագրուած տեսնել են ուզում, յօդուածի կամ յառաջաբանում և կամ վերջաբանում խմբագրի գլուխը մի լաւ եղում են:

Երբ՝ ես ասում եմ, որ ամբոխի, ամենաթոյլ երակը նրա կրօնական զգացմունքներն են:

Ուզում էք որ, յիրաւի, ամբոխը «մի մեծ և անմշակ զօրութիւն» դառնայ, նրա կրօնական զգացմունքները լարեցէք, զրգուեցէք: Այս միտքը պիղծ միտք է և ես դատապարտում եմ նրան, բայց ձեր նպատակին յաջող ելքը միմիայն դրանումն եմ գտնում: «Նպատակը արդարացնում է միջոցը» — սա մի զարշելի սկզբունք է, բայց եղել են և կան մարդիկ, որոնք ընդունում և գործադրում են այդ զարշելի սկզբունքը: Պօւր էլ դրանցից մէկը: Բայց որպէս զի այս խօսքերով դուք չը վիրաւորվիք, կ'ասեմ ձեզ, որ մի և նոյն այդ սկզբունքը եւրօպական այժմեան քաղաքականութեան ուղ և ծուծն է կազմում: Բիկօնաֆիլիներ, Բիսմարկներ և ուրիշներ շատ անգամ այդ սկզբունքին են հետևում: Այդ բանը իւր բերնով խոստովանեցաւ ինքը Բիսմարկը, երբ գերմանական պատ-

կամաւորաց ժողովում պատասխանում էր, մի օր, կարծեմ, Վաքէրի կրակոտ ճառին:

— « Պարոններ, ասաց երկաթեայ կանցլերը բոլորովին ճշմարիտ է, որ ես մի օր ազատամիտ եմ, միւս օր պահպանողական, երրորդ օր կղերական, չորրորդ օր . . . (ամեն ինչ): Որովհետեւ ես ուզում եմ իմ հայրենիքի միութիւնը: Աս ինչ որ եմ, այնպէս էլ կը մնամ: Պօւր ինձ չէք կարող փոխել: Աս իսկոյն և եթ կը թողնեմ այս աթոռը, երբ դուք վճռեցիք, որ իմ ծառայութիւնը հայրենեաց համար փաստակար է:

Յայտնի է, որ Բիսմարկը մինչ օրս էլ իւր աթոռի վրայ նստած է:

Ուրեմն, երրորդում եմ, պէտք է հայ ամբոխի թոյլ երակը բռնել, — նրա կրօնական զգացմունքները շոյշոյել, լարել: Ձեր գործը կիսով չափ առաջ է գնացել:

Ձեւ կարծում թէ դուք այս Ֆիլիօլոգիայի մէջ սխալ գտնէք: Բոլոր աշխարհիս պատմութիւններից ես ձեզ օրինակներ կը բերեմ, հաստատելու համար, որ այդ Ֆիլիօլոգիան ոչ նոր գիտութիւն է, ոչ էլ իմ գտածը: Պա արքսիոմա — անհերքելի մի ճշմարտութիւն է ամեն մի ամբոխի, ուրեմն և տաճկահայ ամբոխի համար:

Այ տեսէք, երբ օսմանեան կառավարութիւնը Տաճկահայերի սահմանադրութիւնը ամենայն օր իր ուզածին պէս շուռ ու մուռ է տալիս, երբ նա հայ դպրոցներում Հայոց պատմութիւնը աւանդելը արգելում է, հայերէն գիրք և օրագիր հրատարակելը դադարեցնում և այլն և այլն, — Տաճկահայ ամբոխը մի լոկ և անտարբեր հանդիսատես է լինում այդ ազգագործան քաղաքականութեանը, բայց մի և նոյն

ամբոխը մի կատաղի դազան, «մի մեծ զօրութիւն» է դառնում, երբ նրա գերեզմանոցի մի քարին ձեռն են տալիս, երբ նրա վանքի (Ներուսաղեմի) այս ինչ սեղանի վրայ, այս ինչ օրվայ պատարագ մատուցանելը յետաձգում են, ուրիշ պատարագողներն նախապատվութիւն տալիս:

Ինչպէս ամեն մի տէրութիւն, նոյպէս և Տաճկաստանը, պարտական են կռուողներին, հրապարակաւ մէկգմէկու քինթ ու պռունգ ջարդոտողներին մէկգմէկուց բաժանել, խաղաղութիւն և կարգ վերականգնել իսկոյն: Բայց ահա մի քանի հազար հայեր—ամբոխը—ս. Ներրորդութեան եկեղեցում, սրա դաւթումը բիչ է մնում թէ մէկգմէկ սպանեն:— «Յիշուի», «չը յիշուի» (պատրիարքի անունը),— և ահա Աստուծոյ տաճարը պատերազմի դաշտի փոխվեցաւ յանկարծ:

— Ոստիկանութիւն, զօրք, չը կայ միթէ, հարցնում էք անշուշտ:

— Ինչպէս չէ, այ տեսէք հազարաւոր սուրիներ, ողջ թաղը բռնել են, բայց նոքա իրաւունք չունին կռուողների դործոց մէջ միջամտել, վասն զի ինքեքը կրօնական է: Օհնուրները եկել և փողոցում կանգնել են միմիայն նրա համար, որ երբ ժամուրները փողոց դուրս գան, այնտեղ ևս, փողոցում, չը նորոգեն իրանց կրօնական խնդիրը: Իրանց կրօնական յուզմունքներով, ուրիշների բաղաբական խաղաղութիւնը ևս չը յուզեն:

Իմ կարծիքով, ահա թէ ե՞րբ «ամբոխը մի մեծ զօրութիւն է»: Պէտք է այս ևս գիտենալ, որ նա այսօր չստացաւ այդ զօրութիւնը, այլ նա ունէր շատ վաղուց, դարեր առաջ:

Այդ զօրութիւնը ծանաչում էին հայ վարդապետներն,

երբ պէտք էր Յազկերտների գլուխը ջախջախել: Այդ զօրութիւնը ծանաչում էին և Հռովմայ բահանայապետները, երբ հարկաւոր էր ողջ Նւրսպան իսլամի դէմ զինել, միջին դարերում: Վէրջապէս մի և նոյն զօրութիւնը, տեղ-տեղ, հաւատում են և այժմ և եւրօպացիք, երբ ամբոխի կարեւորութիւնն են զգում:

Նրանք բոլորն էլ չեն գոչում «դէպի Բերլին, դէպի Բերլին», այլ «հաւատ իմ» — վասն հաւատոյ և (ապա) վասն հայրենեաց:

Եւ աւելորդ եմ համարում «Այծերից» հատուածներ դուրս բերել, բայց ով որ այդ վէպը կարդացել է, անշուշտ ըմբռնած է նրա ոգին, այն է կրօնական զգացմունքները թուլացնել, անգամ անհետացնել ժողովրդի մէջից: Պ. Բաֆֆին, որ իբրեւ վիպասան, պարտական էր ժողովրդի հոգեւոյն և սրտին նկատմամբ մի ընտիր ֆիզիօլոգ լինել, անգիտաբար կորատում և դէս ու դէն է շարտում յիշեալ գործարանների այն փափուկ նեարդերն ու լարերն, որոցմով միմիայն այդ գործարաններն սննդուած ու պարարուած էին ցարդ: Պ. Բաֆֆին կրօնքի վերաբերութեամբ «Այծերումը» գործնականապէս այն է ուղում անել, ինչ որ Վաչ. յիշատակարանում տեսականապէս (Վարվինի նման լինել կամենալով) քարոզում է, այսինքն «մինչև որ մի ծառ արմատախիլ չ'անես, նրա տեղը մի ուրիշը տնկել չես կարող» (եր. 275):

Այս այսպէս լինելուց յետոյ ես երբէք չեմ հասկանում թէ ինչ է նշանակում ամբոխի մէջ մի մեծ և երեւակայական զօրութիւն որոնել, երբ նրա մէջ եղած իրական զօրութիւնը դուրս արհամարհում ու ջլատում էք:

Պ. Բաֆֆին պատասխանում է թէ ինքը կրօնին և կրօ-

նսկանին չէ դիպչում, այլ մնահաւատութիւնը, նախապաշարմունքները և կախարդներն է, որ մարակեղէն ուղղում:

— Հազար ներողութիւն: Նախ և առաջ, եթէ դուք ճշմարտութեան, անպայման ճշմարտութեանն էք հետամուտ, այդքանով չէք կարող բաւականանալ: Աւելի ներս պէտք է գնաք:

Իմ կարծիքով աւելի լաւ նպատակայարմար է տանել առժամանակ թէկուզ նախապաշարմունքներին, կախարդներին, երբ դիտենք, որ դրանց աջակցութեամբ մեր գործը աւելի կը թեթեանայ, մինչդեռ դրանց վերաւորելով, մեզնից հեռացնելով մեր գործը, ընդհակառակը, աւելի կը ծանրանայ ու կը դժուարանայ:

Աւասիկ դուք ձեր վէպումն էլ վհուկ ու կախարդներ շատ ունիք: Արեւի դրանք հարկաւոր են, անհրաժեշտ են: Աեանքը ևս վէպ է, ինչպէս որ վէպն էլ պէտք է անշուշտ կեանք լինի:

Պ. Փաւստոս չարաչար մեղանչում է ինձ դէմ, երբ ասում է, թէ ես Բաֆֆիին դէմ ժողովրդի կրօնական մոլեռանդութիւնը իբր գրգռել եմ ուղղում:

— Ոչ, պարոն, ոչ: Այդ բանը ձեր կողմից, եթէ մի հոտած ու ժանգոտ գէնք չէ, անշուշտ երկչոտ երեւակայութեան արգասիք է:

Ես պ. Բաֆֆիին ասել եմ և էլի ասում եմ, որ եթէ նա ժողովրդական բանաստեղծ է, իրաւունք չ'ունի ստիպել մեզ ատելու անշուշտ մեր կրօնը և մեր վանքերը, երբ մենք սիրում ենք դրանց: Իսկ եթէ նա ուղղում է իմանալ և ըստուգել թէ ինչի ենք սիրում, թող մեր սրտին մէջ մտնի: Այն պէս էլ կարող անել, այն ժամանակ գէթ թող գնայ

և մեր վանքերը մի առ մի մանգայ, որպէս զի գէթ մեր սրտի արտաքին պայմաններին հետ լաւ ծանօթանայ.—

«Առ հագնիմ մազեղէն, կռ հագնիմ շաշն

Առ գնամ ման կուգամ վանքերն մէկ մէկ»:

Ահա այս պիտի լինի հայ վիպասանի գլխաւոր ձգտումը, կոչումը: «Մեր տաղանդաւոր վիպասանից» աւելի ձիշդ էր ըմբռնել այդ կոչումը, Սայաթ—Նուփան, որ մի դար առաջ էր ապրում:

Եւ իսթրիչուն ենթադրենք, որ Բաֆֆիին Արօնները այսպէս կամ այնպէս կարողացան տաճկահայ ամբոխը զարգացնել, նրան առաջ բռնել:

Արեւակայութեամբ տեսնելով ամբոխի այդ զարգանալը՝ ես պ. Բաֆֆիին ասում եմ, բարեկամ, լաւ կընել և ստուգել էք արդեօք, որ երբ այդ ամբոխը շարժի, ճանապարհին, առաջից կամ ետքից նրան հանդէպ գրեթէ լինեն փորած ուրիշները, բազմաթիւ թշնամիները: Արող է պատահել, որ մենք Վանայ միջում անգամ մի նոր տեսակ ձի շինող Ողիսեսի էլ պատահենք, ախր հիմի գիտութիւնները առաջ են գնացել, իսկ մենք ոչինչ պատրաստութիւն չ'ունենալուց յետոյ, այժմ զգուշութիւններ էլ չենք ուղղումի գործ դնել:

— Դրանք բոլորը ծռտի, պռտի բաներ են, ասում է ինձ Բաֆֆիին: Տաճկահայ ամբոխի դրութիւնը այժմ այնպէս է, որ ուրիշ ոչինչ չէ մնում անել եթէ ոչ «եւ շաշն, եւ Վան» *)—или панъ или пропалъ.

— Բարեկամ, դա կը լինի մի յուսահատ դժուրութիւն և, ուրեմն, առանց մի բարի հետեւանքի:

— Դա դժուրութիւն չէ, դարձեալ պատասխանու է

*) Քրդական առած:

«Խէնթի» հեղինակը, այլ գիտութիւն, պատմութիւն: Ահա Փաւստոսի իրան խօսքերը. «դարեւոր հիւանդութիւնը մի ժողովրդի կեանքի մէջ երկարատեւ բժշկութեան պէտք ունի: Բայց դարմանները փորձուած են: Այդ հիւանդութիւնը ունեցող ժողովուրդները միշտ դիմել են նոյն դարմաններին: Ուրիշ հնար չը կայ, հրաշքներով մեր դարում մարդիկ չեն բժշկվում»:

Պ. Փաւստոս պնդում է, որ Բաֆֆիլի վէպի մէջ «Վանայ բերդի զբաւման» մասին խօսք եղած չէ: Ճշմարիտ է բայց անշուշտ պիտի լինի (եթէ այսուհետեւ Վայծերի դադարաւոր երկրորդ հատորում հիմնովին չը փոխվի): Ասեմ ձեզ թէ ինչեւ Որսորդ Ալօն և Ընկ. ժողովրդից խոյս են տալիս, վախենում են, որ իրանց դործը չը բացուի: Նրանք դէնքերի մեծ պատրաստութիւն ունեն: Հարեան աղբերի հետ նրանք դաշնակցել պըծել են: Ամբողջներ են կառուցել: Տաճկահայաստանի ռազմագիտական քարտեզը նկարել տուել: Որոշեալ օրում նրանք հաւաքվում են ժամադիր եղած տեղում և իրանց հետ վերցնելով բժշկական դեղորայք (ապագայ վերաւորեալներէ համար)—մի օր երեկոյեան պահում—ասում է Ֆահրատը—երբ մութը պատել էր աշխարհը, մենք մտանք Վան քաղաքը (եր. 538), և հարկէ ոչ թէ բանջար քաղելու, կամ քելմել ուտելու, այլ դործ կատարելու: Այս մտքերը ես ինձանից չեմ շարադրում, այլ Վայծերից քաղում, երեսները միայն չեմ յիշում, որ այն ևս մի առ մի ցոյց տայի: Բայց եթէ Վայծերում յիշեալ մտքերը չը լինէին, ես աւելի կը յանդիմանէի Մշակի դադարներէ ամենամոլորեալը քարոզչին, որ համարձակուել է յիշեալ թերթի մէջ լրում գծագրած նախագծից—կօնապէս—դուքս դար Ահա, մօտաւորապէս, այդ լուրը,—Վայծերի ամբողջ երկրորդ հատորը—մեզ հեռագրում են, որ հայերը և Ստրեք Մար-Շինինի առաջնորդութեամբ Վանայ բերդին վրայ յարձակուեցան (հրաշք չէ) բաս ի՞նչ դահլուզուխում է) և տերեցին: Հայերից 70 հոգի վերաւոր ընկան: Եւ մեր ազատամիտ թերթին ու ռազմանդաւոր վեպասանը այս բաները դրում էին պատերազմի արհաւիրելի օրերում, գիտնալով որ հայերը տաճիկ հպատակներն են, որ ապստամբութիւնը խեղդելու համար պատերազմական խիստ օրէնքներ կան և: Տաճկաստանում: Իմ այդ աղնիւ և հայասէր պարոններէ յիշեալ վարմանը ես ոչ մի անուն չը տուի և չեմ տալ, այլ միմիայն անուանում եմ պարզ մշակականութիւն, մեծ անմտութիւն: Այդ բառերիս համար պ. Փաւստոս այժմ բղաւում է իմ երեսն ի վեր ամառնութիւն, դաւաճանութիւն:—«Գեօքէն» դէսին Ալլազ իւշին» (տեսնողը Ստուծոյ անունով թող վկայէ) պատասխանում եմ ես «նարեյատին չօջայի իրան խօսքերով»:

— «Не смѣть свое сужденіе имѣть», ասում են ինձ, դարձեալ, մեր հայ Մալխանօֆները:

— Слушаюсь Васко—родіе», ասում եմ ես և լուրմ, որովհետեւ նրանց չափ երջանիկ չեմ... Ապա թէ ոչ ես այդ պարոններէն ցոյց կ'ուտայի թէ «адъ раби зимуютъ»:

Ծան: Յօդ:

Այս վարդապետութիւնը անպայման ճշմարիտ չէ: Հատ և շատ պատմական փաստերով կարելի է դրան, եթէ ոչ իսպառ, գէթ մեծ մասամբ, ջախջախել: Մենք այստեղ մի փաստ միմիայն առաջ բերենք և յետոյ, Փաւստոսի խօսքերով իրան բռնենք: Մեր դարում եւրօպական տէրութեանց մէջ ամենազարգացածը, ամենից ապահովը Անգլիան է, բայց ահա քանի դար է, որ այդ երկրում ոչ մի խիստ միջոց, մի յեղափոխութիւն պատահած չէ, Անգլեան բոլորովին կուլտուրական, խաղաղ ճանապարհով է կազդուրում ինքն իւր մէջ իւր ներքին ոյժերը: Գիտեմ, դուք ինձ կասէք, որ իւր ժամանակում Անգլիան ևս ձեր ասածովը վարուեց, թէ Գրանսիայումն էլ նախապէս Բարդուղիմեան գիշերներ տեղի ունեցան:

Ճշմարիտ է, բայց այդ բաները տեղի ունեցան ժողովրդի, այլ ոչ թէ Ռոբէսպիերներէ կողմից: Յիշեալ երկրի ժողովուրդը միանգամայն պատրաստ էր: Տաճկահայը ոչ մի պատրաստութիւն չունի տակաւին: Այս դրութեամբ տաճկահայ հիւանդը չէ կարող բժշկվել, վասն զի «հրաշքներով մեր դարում մարդիկ չեն բժշկվում»:

Պարոններ, տաղանդաւոր և անտաղանդ վիպասաններ, մի անգամ ընդ միշտ հասկացէք, որ գործի մարդ չէք, այլ միմիայն ձեր եսի ու ձեր անձի: Գուք, գիշեր ցերեկ, միմիայն այն բանի վրայ էք մտածում, որպէս զի մարդիկ ձեզ «աւրբի, ռաբբի» կոչեն և ձեր գրքերը, միմիայն ձեր գրքերը, առնեն: Եթէ դրանք ծախվելու բաներ են, իրանք իրանց կը ծախվեն և թող ծախուեն: Գուք էլ ինչի՞ կանոնաւոր և արդար վաճառականների օրինակը թողա՞ծ, Սոսկվայի «Կօժովայեա լինայի ստախօս և ստերդում, խարդախ բրիկաշիկ»:

ների օրինակին էք հետևում:

Ինչի՞ դուք ուրիշի դուքնից բերում էք նրա ապրանքը և իբրև ձեր սեպհականը ի վաճառ հանում, որովհետև տէրը դուքնումը չէր, որովհետև նրա դրացիքը չը նշմարեցին թէ դուք ինչպիսի՞ վարպետութեամբ ուրիշի դուքանը մտաք և նրա ապրանքը վեր առաք:

Ես, պ. Փաւստոս, շատ լաւ գիտէի և հիմայ էլ գիտեմ, որ Չեռնիշէվսկին անյայտութեան մէջ է: Եւս էլ գիտեմ, որ նրա գիրքը արգելւած է, բայց այդ ամենը ի՞նչ կապ ունի ձեր արած քաղվածքի հետ: Ոչ, պարոն, ոչ, այդ աստիճան օտանակոխ մի անէք դուք ձեր խիղճը: Ես կարծում էի, որ դուք փոքր ի շատէ պէտք է որ խիղճ ևս ունենայիք, թէ և շատ փողապաշտ մարդ էք, յար և նման այն խաչագողին, որ պ. Բաֆֆին այնքան զեղեցիկ կերպով նկարագրել է իւր «Յիշատակարանումը»:

Դուք, օրինակ, դանդաղում էք թէ ես ինչի՞ իմ յօդուածս շարունակում էի գրել այն ժամանակ ևս, երբ Բաֆֆիի դրութիւնը շատ նախանձելի չէր — փրճշտ: Պարոն, ես գործ ունէի Բաֆֆիի գրքի հետ, այլ ոչ թէ նրա անձնական դրութեան հետ: Եւ ասացէք ինձ, այդ դրութեան մէջ ի՞նչ նախանձելիութիւն կամ աննախանձելիութիւն կար և կայ: Անանքի սովորական երևոյթներ են դոքա, ամեն տեղ և ամեն ժամանակ: Որտեղից գիտէ պ. Փաւստոսը, որ մի և նոյն, և նրանից առաւել նախանձելի դրութեան մէջ չեն եղել և՛ ուրիշները թէկուզ այս օրերը գրողը, և այն մի քանի անգամ: Երբ՝ այժմ այդ սովորական, և ինքնըստ ինքեան մի անմեղ, չնչին, երևոյթի երևնալով՝ անպատճառ պէտք է մենք ամենքս մի-մի կատարեալ մարտիրոս հրատարակենք մեզ միամիտների

աչքումը, տգէտների շնքին նստենք արդեօք և պահանջենք, որ մեզ տանեն մանածեն ի ցոյցս մարդկան, մեզ ռոճիկ ու թռչակ սահմանեն, մեր գրքերը անպատճառ զենեն, անպատճառ մեզ մի-մի դրամատէրեր շինեն:

Եւսչափ: Ղառնանք էլի դէպի «Այծերի» հերոսները:

Ես ասել էի և այժմ կրկնում եմ, որ պ. Բաֆֆիի Արօններն ոչ կեանքի ներկայացուցիչ են, և ոչ էլ կարող են նրա իդէալները լինել, ինչպէս այդ մասին ակնարկում է պ. Փաւստոս: Պատճառը շատ հասկանալի է:

Իդէալ դառնալու համար, պէտք է իդէա ունենալ: Արօններն իդէա չ'ունին, նրանք իդէալն չեն ձգտում, որովհետև իդէան, առողջ, վսեմ միտքը առողջ վսեմ մարդու մէջ միմիայն կարող է լինել, իսկ Արօններն հիւանդ, ցնորուած և ցած մարդիկ են: Նրանց թէ՛ խօսքը և թէ՛ գործքը կատարեալ օձառի փամփուշտ է:

Եւ, լսեցէք, թէ ոչ թէ Բաֆֆիի Արօններին, այլ դրանց պապերին ու ծնողքին ինչպէս է նկարագրում պ. Բուրէշին իւր իմաստուն յօդուածումը:

— «Եւսն ժամանակ (1էրմօնտովի) Ռուսաստանում առաջ եկան մի տեսակ շատ, ցած և անմիտ ու դատարկ, ըստօրաբարչ ու անձնասէր իմաստականեր, — և կամ կատարեալ անպիտաններ, որոնք կարծեցին թէ իրանք մի-մի դժոխային հերոսներ են:

«Մի և նոյն բանը կատարուեցաւ և մեզ աւելի մօտիկ օրերում, վաթսնական թուականներում, երբ (Տուրգիենովի) «Հարը և որդիք» վէպից յետոյ՝ խիստ շատացան այն վայրենի, տգէտ, և յիմար իմաստակաների թիւը, որոնք իրանց մի-մի Բաղարօֆ երևակայեցին, որոնք իրանց ոչնչականեր

(НИГИЛИСТЪ) էին համարում, թէպէտ և իսկապէս դրանք ոչ այլ ոք էին, եթէ ոչ խրատուիլակաները, ուրուականները այն յիմարներուն, որոց մի և նոյն «Հարբ և Որդիք» վէպի մէջ, ի դէմն Ալեքսիովի, ծաղրում էր Տուրգենեւը:

«Տուրգենեւը շատ լաւ հասկացաւ, թէ ռուսական այդ բարեսիրտ մարդկանց մէջ, ի՞նչ հիմունքներից դրդած, ծընվում է այն հոգեկան աւաղակութիւնը, որը, փոքրիկ մարդկանց մէջ, յաճախակի փոխադրվում է հեգեկան ցածութեան և ստորութեան: Այդ հիմունքները սոքա են. նախնական կրթութիւնը կարօտութեան և տառապանաց մէջ. գաղտնի զիտակցութիւն իրանց ներքին ոչնչութեան և տգիտութեան. նախանձ՝ ուրիշի բազդի, յառաջադիմութեան և տաղանդի վրայ մէկ կողմից՝ իսկ միւս կողմից հասարակութեան ապականեալ վարք ու բարքի և թոյլ բնաւորութեան վրայ տիրապետելու տկարներին և անզօրներին իրանց ազդեցութեանը ենթարկելու մեծամեծ զիւրութիւնները, թէպէտ և այդ տիրապետութիւնն ու ազդեցութիւնը ձեռք բերուէր միմիայն բռնութեամբ և ցածութեամբ»:

«Առհասարակ *) զննելով և լուծելով Տուրգենեւը շատ ճիշդ կերպով որոշեց այդ տիպը առաջացնող պատճառները:

«Եւ (Առհասարակ) այն մարդկանց թուիցն է, որոնք կարծում են թէ իրանք իրաւունք ունին ուրիշների վրայ իշխելու, սակայն բնութիւնը նրանց տուած է այդ շնորհքը, որ իշխեցողութեան իրաւունքի անհրաժեշտ պայմանն է: Չիտութիւն և կրթութիւն չստանալով, վերջապէս խելք ևս չունենալով, նա (Առհասարակ) իսկապէս չը պիտի հանդէս գար, բայց նա եկաւ, թերեւ, այն պատճառով, որ զգաց իրան պա-

*) «Բրեւոյն» վէպի կերտը:

կասութիւնները, իրան անկրթութիւնը և կամեցաւ պարտկել, զիմակի տակ ծածկել դրանց: Աւտեյ Ավանովիչը սկզբում ինքնիրան ատել տուեց ժողովրդին, յետոյ տեսաւ, որ նրան վախացնելը դժուար է, ուստի և ինքը սկսեց ատել ժողովրդին: Առհասարակ շատ ուրախանում էր, երբ իրան երեւալով վերջ էր տրվում իսկոյն որ և է, ոչ այնքան պախարակելի, խօսակցութեան, — «Ես ոչինչ չը գիտեմ, ես ոչ մի բան ուսած չեմ, վերջապէս ես ընդունակութիւն եմ չունիմ» — միտածում էր ինքն իրան Առհասարակը — ուրեմն դուք ինքներդ էլ ոչինչ չը գիտէք, ուրեմն ձեր ընդունակութիւններն ևս երեւան մի հանէք» և այլն *):

«Մտնելին յօղուածումս ասելով թէ Բաքիին Տուրգենեւին և Չեռնիշեւսկուն է հետևում, յարակցել էի և այս թէ հազար երանի է, եթէ Բաքիին դրանց հետեւելու, նրանց ազդեցութեանը ենթարկուելու շնորհքը ունենար, այսինքն վեր առնէր հայկական կեանքը և յիշեալ վիպասանների նման զննէր, հետազօտէր «բացատրէր ու լուսաբանէր»:

Այդ առէր Տուրգենեւին այս և այն վէպը և համեմատեցէր «Այծերի» հետ, իսկոյն և եթ կը տեսնէր, որ վերջինը առաջինի կոյր, արտաքին և կարկատուն հետեւողութիւն կամ թարգմանութիւնն է միմիայն, ուրիշ ոչինչ:

Աւասիկ ինչ է նշանակում սեպհական շնորհք չունենալ և միշտ ուրիշներից մուրալ: Այդպիսով, սիրելի պարոն, դուք չառաքէր էք տեսնի:

«Մշակի» թելադրութեամբ հայ ամբոխը այսօր կարող է ձեզ ծափահարել: «Աղբիւրի» և «Խալքալաքցի» թղթակցի առաջարկութեամբ էլ, մարդիկ կարող են ձեր 25 ամեայ յո-

*) Տե՛ս «Նովոյե-Վրամիայի» №№-ները — «Критические очерки».

բելեանը տօնել, — չեմ ժխտում, չեմ նախանձում, ոչ էլ արգելք դառնում, որովհետեւ շատ լաւ գիտեմ, որ այդպիսի երեւոյթները երբեմն անխուսափելի են: Վիտեմ, որ եղել է ժամանակ, երբ մարդիկ սողուն ու թռչուններին (птица) էին երկրպագում, անշունչ, դարերքի առաջ ի ծունկ խոնարհում, գիտեմ, որ Սոֆոկլէսների, Լատիքէսների, Լարիբէդէսների դափնին Խէրոմոսների և Թէոթէսկների ծախտին էլ է զրուել երբեմն: Արդ՝ մենք, հայերս, ինչով աւելի կամ պակաս ենք: Ուրեմն տօնենք, պարոններ, անպաճառ տօնենք մեր «Խէնթի», «էշեփալան Հասոյի, սատանի եղունգ Սագօի, սաւրգեղցի խաչագող Պետրոսի, Մարօի, Ջուլօի, Հիւբբի et tutt quanti-ի մեծանուն և հանճարեղ հեղինակի 25 ամեայ յորելեանը:

« Հառ կարելի է (ասում է մի ռուս նոր գրող) որ դայ, վրայ հասնի շահախնդրութեան, անընդունակութեան — գեղարուեստի, իդէալի և մարդկութեան այդ թշնամիների յաղթանակը: Բայց այդ յաղթանակը միմիայն ժամանակաւոր կը լինի: Վեղարուեստը փչացնող մարդիկ չեն կարող երկար ժամանակ իրանց գործունէութեան արգասիքով զուարճանալ: Նրանք յանդգնաբար նախատում են այն, ինչ որ մարդը սովոր է մեծարել, պատուել, այն է լռելիան, խելքը, գեղեցկութիւնը, զգացմունքը, ազնւութիւնը և արդարութիւնը: Նրանք հրապարակաւ ժխտում են կրթութիւնը և բարեխղճութիւնը, և միմիայն իրանց անձնական ճաշակը և հաճոյքը ուղղում են վերին դատաւոր կարգել գեղարուեստի վրայ: Սովորելու անհրաժեշտութիւնը նրանք չեն ընդունում, որով միայն կարելի է մի բանի վրայ դատողութիւն անել, — այլ նրանք իրանք իրանց միշտ անսխալական են կարծում: Նրանք ժխտում և ատում են քննադատութիւնը, գեղարուեստի օրէնք-

ները, փիլիսոփայութիւնը և բոլոր գիտութիւնները: Նրանք ուղղում են, որ կամայականութիւնը և տգիտութիւնը միմիայն իշխէ ու թագաւորէ: Վեղարուեստի և քննադատութեան մէջ նրանք անպայման անձնահաճութիւն են պահանջում: Բայց ազան կամ անազան նրանց բոլոր մտադրութիւնները կը քայքայուին: Նրանք չեն կարող փչացնել գեղարուեստը, այլ իրանք կ'ընկնեն և կը փչանան այն կացնի հարուածով, որը գեղարուեստի գլխին վրայ բռնած ունէին: Վեղարուեստը չի ընկնի և չի անհետանայ: Նրանք իրանք, անշուշտ, կ'ընկնեն, և կուգայ ժամանակ, երբ կեանքը և հասարակութիւնը բնաջինջ կանեն նրանց աշխարհիս երեսից, չը թողնելով մի քար անգամ այն շինութիւնից, որ հիմի նրանք այնքան աշխատանքով կառուցանում են: Եւ որքան նրանք հաստատամտութեամբ, եռանդով և յաճախ-յաճախ արտայայտում են իրանց անազնիւ գործունէութիւնը, նոյնքան նրանց աւելի կը մօտենայ հասարակական վրէժխնդրութեան ժամը: Եւ սիրում եմ յուսալ, որ այդ ժամը այժմ ևս հեռու է . . . »

Յաւօք սրտի վերջացնում եմ խօսքս «Այցների» տէնգէնցիայի վերաբերութեամբ մի ընդհանուր նկատողութեամբ: Մենք զարմանալի ազգ ենք: Մեր մէջ ամեն բան թարս է, և ամեն բան զննվում է անձնական եսական տեսակէտից: Մեր մէջ անհատը ամեն իրաւունք վայելում է և անձեռնմխելի է, իսկ ազգն ու հասարակութիւնը կարծես նոցա խաղալիքն են: Մեր մէջ անհատն իրաւունք ունի ամբողջ ազգը, ամբողջ դասակարգեր և հասարակութիւնը հայհոյել, անարգել, առանց փաստի նրանց ոտից մինչև ցզլուկ գող, աւաղակ, անբարոյական, աղբ, անբան անուանել, ամեն փաստակարգ դադափար

Նրան քարոզել, ամեն տեսակ վարդապետութիւնով կերակրել, նորա ընկերական կապը խզող միջոցներ ցոյց տալ, նորա սրբութիւնը անարգել, նրան փաստակար ճանապարհով առաջ-նորդել, նրան իւր խնամադարի աչքում կասկածաւոր անել, որով նոցա թշուառութեան առիթ գառնալ—այս ամենն և սոցանից վատթարը գործել—դա ազդի, նորա սրբութեանց, նորա գոյութեան դէմ դաւաճանութիւն չէ. ոչ ոք այդպիսի անհատի փաստակար գաղափարները քննելու իրաւունք չունի, որովհետեւ հասարակութիւնը անձայն է: Մեր մէջ ամեն անհատ, տգէտ, միայն յանդուգն անձնապատան, դիտութեան այբուբէնը չուսած, մի միջնակարգ դպրոցի երրորդ կամ չորրորդ դասատւից արտաքսած, մի. իւր եկեղեցին անգամ չը ճանաչող գիւղացի տէրտէր կամ տիրացու վեր է կենում և այնպիսի հասարակական և ընկերական հարցեր քննում և վճռում է, որոնք դարերի ընթացքում կեանքի մէջ մշակվել ու սրբագործվել են, և որոնց Ռոկլի պէս մարդիկ երկիւղածութեամբ կը մերձենային քննելու, իսկ դոքա, այդ գիտութեան վիժածները, ամենայն համարձակութեամբ և տգէտին վայել անձնապատանութեամբ առանց քննութեան վճռում են ու դատաւետում, տգէտ և միամիտ ժողովրդին մոլորեցնում են, նրան կեանքի մէջ սրբագործված կանոնների դէմ մեղանչել սովորեցնում, առանց նորը, աւելի լաւը նրան տալու, որով թշուառացնում են նրան և անբարոյականացնում: Աւայդպիսի փաստակար անհատի յայանած գաղափարները, հասարակութեան շահերը պաշտպանելու համար, քննել ու նոցա փաստակարութիւնը ցոյց ապր մեր մէջ թէ մատնութիւն է, թէ չարամտութիւն և թէ իրաւունքից դուրս: Արծես Յուզային պատժելը, որովհետեւ սա անհատ է, դատապարտել է.

իսկ ամբողջ ազգեր, հասարակութիւնը թշուառացնելը, մատնելը ոչինչ է, ամեն անհատի իրաւունքն է: Ամեն անհատ իրաւունք ունի մեր մէջ ամեն յանցաւորի և հերիտիկոսի վարդապետութիւն տարածելու, խեղճ ժողովրդի մէջ—դա խղճի և համոզմունքի ազատութեան անուամբ ներելի է և հասարակաց շահերի դէմ դաւաճանութիւն և մատնութիւն չէ. իսկ այդպիսի անհատին դատել ու դատապարտելը մատնութիւն է: Ահա ներկայումս այն սխալ հայեցակէտն, որ տիրապետող է մեր մամուլի մէջ: Սա մի զարհուրելի հայեացք է, դէպի կորուստ տանող ճանապարհ է, որ հարթել է մեզ համար մեր մէջ տիրապետող անսահման եսասիրութիւնը, որից դուրս, կարծես, դժբաղդաբար մեզ համար կեանք չը կայ:

Ինչ է մի Բաֆֆի կամ մի Հայկունի մի ազգի կամ հասարակութեան առաջ—զրո: Բայց եկ տես, որ ամբողջ հասարակութիւնը ցեխի մէջ կոխել, անարգել, մոլորեցնել, փասել, նոցա իրաւունքն է, իսկ Բաֆֆի կամ Հայկունու ոչ թէ անձին, այլ նոցա յայանած սխալ և փաստակար գաղափարին ձեռք տալ մի համարձակիր—ապա թէ ոչ մատնիչ ես և դաւաճան: Ահա քեզ մեր եսականութեան իրաւաբանութիւնը:

Միւս անգամ մենք ցոյց կը տանք պ. Փաւստոսին նորա աշխարհագրութեան պատմութեան գիտութեան աստիճանը, որ այդ մասին շատ ընդարձակ տեղ է տուել իւր յօդուածում, թէ և դա երկրորդական և երրորդական բան էր, մինչդեռ «Այծերի» դէնտէնցիան, որ զլիաւորն է, առանց ուշադրութեան թողած է, երևի ձեռնտու չէ եղել այն անհեթեթ գաղափարները պաշտպանել, որ նա ներկայացնում է:

Պալիս եմ պ. Փաւստոսի 3-րդ մեղադրական կէտին:

«Այծերի» աշխարհագրական և պատմական սխալներից

մի Կանխոր միջոցն ցոյց տալով՝ ես ասել էի, որ պ. ԲաժՖին այդ տեղեկութիւնները քաղել է հ. Ալիշանից և Արուստան-տեանից: Առաջին հեղինակի «Տեղեկագրի» մասին ասել էի, որ թէ և հոյակապ աշխատութիւն է, բայց հին է, թէ Բաժ-Ֆին նրանով չը պէտք է բաւականանար, այլ նա պէտք է օգուտ քաղեր և ուրիշ նոր աշխարհագիրներէից և քարտէզներէից: Հ. Արուստանտեանից արած քաղուածքի մասին էլ ասել էի, որ պ. ԲաժՖին այդ քաղուածքը արել է վարպետ կերպով, ուղղում էի ասել, մաս է խառնել *): Նշանակում է, հ. Ալիշանին և Արուստանտեանին ես ճանաչում էի: Այժմ, երբ պ. ԲաժՖին իմ սխալները բռնում է իբր, դարձեալ նոյն հեղինակների վրայ է ինձ մատնացոյց լինում:

*) Թէ՛ նախկին յօդուածումս և թէ՛ այժմ վայճերի աշխարհագրա-կան սխալները մասին խօսելիս՝ ես ձեռքիս տակ ունէի ա) Հին-Հայաս-տանի քարտէզը (Վ. Գ. Գ. 1849). բ) Ուրբաթ ծովոյն վանայ, — հ) Սար-գսեանի «Տեղեկագրութեան» կէց առանձին քարտէզը, (Վ. Գ. Գ. 1864). գ) Հ. Ալիշանի «Տեղեկագիր Հայոց» (Վ. Գ. Գ. 1853). դ) Կիւրբեթի քարտէզը — «Սմանեան Կայսերութիւն» (Բէրլին. 1869). ե) Նոյն հեղինակինը — «Սմանե-ան Հայաստան» (Բէրլին. 1877). զ) Կովկասեան աշխարհի քարտէզը (Թիֆլիս. 1870). է) Ասիական Տաճկաստանի քարտէզը (Թիֆլիս. 1882). ը) Պետերբուրգի Կայսեր. ուսումնական ընկերութեան քարտէզը Կովկասեան աշխարհի (Պե-տերբուրգ. 1862). թ) Վերսալեան ասիական Տաճկաստանի աշխարհագրութեան վերաբերութեամբ — Կովկասեան աշխարհ. ընկերութեան ամսագիր յաւե-լուածքներ, առանձին զբոսայիտներով այլ, և այլ տարբերութիւններ:

Իսկ պատմութիւններէից ես ձեռքիս տակ ունէի բացի հ. հ. Ալիշանի, Սարգսեանի, Չամչեանի, Ինձիճեանի, Քաջբերունու, Սեթեանի, Չաքմեանի և պ. Փափաղեանի գրքերէից, այլ նաև Ռուսաստանում հրատարակուած բո-լոր Հայոց պատմութիւններէն: Զը նայելով այդ ամենին, ես պ. Մեք. Արուստանտեանի բանաւոր ցուցումներէից ևս օգուտ քաղեցի, ինչպէս նախա-տում է պ. Փափաղեան: Բայց վերջին հանգամանքը, չեմ կարծում թէ, ու-րեշներն էլ պ. Փափաղեան նման ինձ նախադրեալ համարեալ: Սովորելուց, կրկին և կրկին ստուգելուց ըստ, առանձին, տասն անգամ չափելուց, յետոյ ձեռնուց ես երբէք չեմ ամաչում: Մի և նոյն խորհուրդը տալիս եմ ես և ամեր տաղանդաւոր վերլուծողներ: Այդպիսով նա միմեայն կարող էր լինել եւ սովորական ամենափոքր սխալները մի մասը դէմ փոքրացնել:

Դարձեալ՝ պ. յօդուածագիրը Առաքել պատմագիրից էլ հատուածներ է առաջ բերում, ապացուցանելու համար այն, ինչ որ ես չեմ ժխտել: Չեմ հասկանում թէ սա լոկ միա-մտութիւն է արդեօք, թէ զրականական մի կատակերգութիւն: Պ. Փափաղեանը նմանապէս ինձ մատնացոյց է լինում և հ. Ինձիճեանի վրայ: Շնորհակալ եմ: Այդ հեղինակի իւր ժա-մանակվայ հմտութիւնը, նրա մեծ արժանիքը հայ զրակա-նական պատմութեան մէջ, ես հասկանում եմ, բայց կարծում եմ, որ նրանից շատ օգուտ չէ կարող տուն տանել «Ժամանակա-կից կատարեալ վէպ» գրող մի հեղինակ:

Ինչ և իցէ. մենք դառնանք հարցին, նախապէս չին-չայաստանի աշխարհագրութիւնիցը սկսելով, որոյ մէջ պ. ԲաժՖին հմտութիւնն ու անհմտութիւնը ամենից լաւ կ'երևին իրան և իմ գրած տողերից:

Ահա այդ տողերը:

«Բայց Աստղիկը Մշու Կապուտի ամբողջ երեսը և նրա լեռ-ները պատում էր թանձր մշուշով և անթափանցիկ վարա-գոյրները անտեսանելի էին կացուցանում նրա լողարանը ան-համեստ աչքերից: Վեռ Արշակայ ծովակի մէջ բնակվում էին հայոց ջրային յաւերժահարսուները» («Վայճեր» եր. 293):

Վերա դէմ ես ասել էի նախ՝ որ «Արշակայ ծովակը ոչ թէ Մշու դաշտումն է, այլ Վանայ և թէ դա Արշակայ ծո-վակ չէ, այլ Արշակայ»: Պ. Փափաղեան — ԲաժՖին այժմ պա-տասխանում է, «Արշակայ ծովակը ոչ Մշու Կապուտն է (սրան ասում են иргай назад), և ոչ Վանայ դաշտում: Ուղիղը Ար-շակայ ծովակ է, բայց ժողովրդի բերնով դարձել է Արշա-կայ ծովակ: Արբ պ. կրիտիկոսը կամենում է ուղղել մի տե-ղագրական սխալ, նախ և առաջ պէտք է գիտենայ նրա տե-ղը» (Մշակ № 146):

2^Է որ ասել էի թէ Վանայ դաշտումն է: Բայց երևի պարզ չէր: Ուստի աւելի պարզեմ:

Պ. Բաֆֆիի Արշակայ ծովակ կոչածին մեր պատմիչները անուանել են Աւլակ, Հաւլակ և Արշակ, այլ ոչ երբեք Արշակայ ծովակ: Սաղաքիա պատմիչը նրան անուանել է Ծովակ: Սէն—Մարգէրէ՝ Սպարապետ: Յունաց և հռովմէացեաց հին պատմիչները այդ լիճը երբեմն շփոթել են Վապուտան կամ Ուրմիոյ, երբեմն էլ Բաղնունեաց կամ Վանայ լճերի հետ: Արբեմն էլ տարբեր-տարբեր անուններ են տուել, որոց յիշելը աւելորդ եմ համարում:

Յիշեալ լիճը գտնուում է Վանայ արեւելա-հիւսիսային կողմում, համանուն գիւղի մօտ, Վարազայ լեռնից դէպի հիւսիս:

Վանայի գիւղական վարդապետներից ոչ մէկը, անգամ հ. Ալիշան, իւր ծովացեալ հմտութեամբ, Արշակ բառը Արջակ փոխուելու մասին ոչ մի տեղ նկատողութիւն չէ անում: Ալիշանը՝ որ այդ բաներին առ հասարակ մեծ նշանակութիւն է տալիս և հաղար ու մի մանրագնին պատմական փաստերով ու ենթադրութիւններով աշխատում է բացատրել այդ տեսակ փոփոխութիւնները: Պ. Բաֆֆի-Փաւստոսի ասածների վրայ ես առ հասարակ ոչ մի հաւատ չունիմ թէև, բայց կարող է պատահել, որ յիշեալ բառը ժողովրդի բերնում փոխուած լինի, բայց յօդուածագիրը դրա համար որ և է ապացոյց ունի, թէ լոկ ասում է: Վանայ կողմերում մենք նշանաւոր Արշակներ չենք ունեցել, որոց անունը լինի տալին: Այսպէս թէ այնպէս, ասածներիցս, կարծեմ, բաւական պարզուեցաւ, նաև՝ որ Արջակայ ծովակը գտնուում է ոչ թէ, ըստ «Այծերի» Մուշէ Դաւթի, այլ Վանայ և երկրորդ՝

որ այդ լճի տեղը ես գիտեմ:

«Վանքն Վոփայ Մուշէ Դաւթ, ունէր Վանիէլ երջանիկի, Լուսաւորիչի թողան շիրիմը» («Այծ» եր. 299):

Ես ասել էի, որ «Վոփայ վանքը Մուշէ մօտ չէ, այլ Պուլանքը»:

Այժմ պ. Բաֆֆին ասում է. «Վոփայ վանքը Մուշէ Դաւթ չէ և ոչ Պուլանքը: Վոփայ վանքը գտնվում է Վոփ գիւղի մօտ. Վոփ գիւղը գտնվում է Պուլանքի վիճակում, իսկ Պուլանքը վիճակը գտնվում է Մուշի գաւառում. տես հ. Ալիշանի «Տեղեկագիր հայոց մեծաց» եր. 45. սրահ 51. (Մշակ № 146):

Բայց եմ անում հ. Ալիշանի գիրքը և տեսնում եմ որ այնտեղ գրած է. «Յարեմոյից հիւսիսայ խաթայ կայ Պուլանքը վիճակ, բաժանեալ ի վերին և ի ստորին—սա կոչի Վոփ-որպէս և լճակն Խաչլու որ ի սահմանս նորա, յորմէ ելանէ և առու Վոփ-սու կոչեցեալ և առ նմին գիւղն Վոփ 150 տամբք և յերի լանդն Վոփայ յանուն ս. Վանիէլի ծերոյ»:

Խսկոյն երևում է, որ Այծերի» հեղինակը ոչ իւր առաջվայ ասածն էր իմանում, ոչ էլ այժմ հ. Ալիշանի գրածը և նրա գրքի բաժանման ձևը հասկանում: Այսպէս պարոնը «Տեղեկագրի» 74—83 երեսում «գաւառ Մուշ» վերնագիրը կարդալով, կարծել է թէ ուրեմն, յիշաւի, Պուլանքը Մուշի նահանգումը լինելով, իւր սխալը պարտկուեց:

Մուշը, սիրելի պարոն, պատմական Տարօնն է, որ գրանուում է պատմական Տուրուբերան նահանգում: Այժմ այդ երկիրը կոչվում է Չուխուր և ընկնում է Վանայ լճի արեւմտեան կողմը, մինչդեռ Պուլանքը լճի հիւսիս-արեւելեան կողմումն է: Խաթայի բարձր, դէպի հիւսիս:

Պուլանքը առանձին գաւառ է և բաժանուիմ է երկու մաս, որոնցից Վերինը կոչվում է նաև Սոփայ—Պուլանքը: Աւասիկ հէնց այդ Վերին մասում, Սոփ գիւղի արեւմտեան կողմում գտնվում է Սոփայ վանքը: Այդ վանքի մասին պ. Բաֆֆին շատ օգտակար և կենդանի տեղեկութիւններ կարող էր և կարող է քաղել Թիֆլիզում գտնվող Պուլանքցի հայ մշակներէ: Բայց պարոնը ոչ այս է անում, ոչ ճանապարհորդում է, ոչ գրութեան է կարգում, ոչ էլ կարգացածը կատարելապէս հասկանում, այնուամենայնիւ «պատմական վէպեր» է գրում: Իրան սխալները ցոյց տուողին էլ ծաղրելու մտքով «տիրացու» անուանում: Այսքան էլ պընդեղեղութիւն, մարդ վարմացած է մնում:

«Չմեզ անցուցանում էին նրանք (Տարօնի և Վասպուրականի հայերը) գեանափոր խրճիթներում, իսկ տարվայ մնացած ամիսները չարքնելով, լեռների քարայրաւանդաւանդների վրայ: Նրանց հովուական չարքները, կաղնի լեռների քարայրաւանդաւանդների վրայ» (Վայծեր, ե. 312—313):

Ես ասել էի, որ «այդ նահանգների հայերը քրդերի նման ոչ երբէք բնակվում էին չաղրներում և լեռների բարձրաւանդակների վրայ»:

Պ. Բաֆֆին այժմ ասում է. «սո՛ւտ» է, «Վայծերի» մէջ չէ ասված թէ այդ երկիրների հայերը բնակվում էին Դիֆայն (հիմի է աւելացնում միմիայն բառը, իւր կոպիտ սխալը կարկատելու համար, բայց այդ կարկատանը չի օգնում դարձեալ) չաղրներում և լեռների բարձրաւանդակների վրայ:

Թող ընթերցողը տեսնի Բաֆֆիի և իմ բառերը և ինքը վկայէ թէ «սուտը» ո՞վ է:

Հասկանալի է, որ Բարդուղիմէոս Առաքելոյ վանքի

մօտ մի դպրոց (Վայծ. եր. 319):

Ես ասել էի, որ «Բարդուղիմէոս առաքելոյ վանքի կշտի դաշար չէ, որ Հասկանալի է կոչվում, այլ համանուն գիւղը, որոյ անունով և դաշան էլ կոչվում է Հասկանալի դաշտ»:

Այժմ պ. Բաֆֆին ասում է. «Վայծերի» մէջ խօսքը դաշտի մասին է և ոչ թէ գիւղի մասին, իսկ թէ գիւղն էլ է կոչվում դաշտի անունով—այդ ո՞վ է հերքում» (Մշակ № 146):

— Դուք, որ այդ բանը հիմի էք խոստովանում:

«Ջուլամերիկը, զբոսնելա՞ծ Սոփայում լեռների մէջ մի փոքրիկ, փակեալ շինաստան էր» (Վայծ. եր. 322)

Ես ասել էի, որ «Ջուլամերիկը գտնվում է ոչ թէ Սոփայում լեռների մէջ, այլ Սոփայ և Սոփայի»:

Այժմ պ. Բաֆֆին ասում է. «Սոփայ և Սոփայի լեռները մի և նոյն Սոփայում լեռներն են» (Մշակ № 146):

Այդպէս չէ, սիրելի պարոն: Եթէ մի և նոյնը լինէր, էլ ուրեմն ի՞նչ բանի համար էին այդ տարբեր-տարբեր անունները: Բաֆֆի—Սոփայ—Յակոբեան—Փաւստոս, ասենք, կարող են մի և նոյն անձն լինել, բայց Սոփայի, Սոփայ և Սոփայի բոլորովին մի և նոյնը չեն:

Սոփայում լեռներ ասածը մի ահագին շղթայ է, որ գտնվում է չին—Հայաստանի բոլորովին հարաւային կողմում: Առաջ նա այդ երկիրը բաժանում էր Սոփայում լեռներից: Այդ շղթայից, որ այժմ կոչվում է Ջուլատի, Ջուլատի կամ Բուրճի, դէպի հիւսիս-արեւմուտք ձգվում է մի այլ շղթայ «աղիաղը և կոյսը հաքքետի և Թիարի (Սոփայ) լեռանց, յանուն գաւառին Ջուլամերիկոյ, յորս և քաղղէացիք բնաստանայր բնակեն»: Այդ շղթայիցն էլ դէպի հիւսիս ձգ-

վում է Աղբակայ շղթան, որոյ արևելեան կողմումն է «Այծերի» մէջ յիշուած ջրամերիկը, — քաղաքն ջրվարկի, որ է ջրվար բերդ կամ ջրվարմար առ Հաբեարի գետակաւ... (Ալիշան):

Ուրեմն պ. Բաֆֆին առաջ «սուտ» էր, երբ գրում էր, թէ «Ջրամերիկը զետեղուած Սորդուած լեռների մէջ»: Այս ժամնա «սուտ» է դարձեալ, երբ գրում է «Սիկաց և Սորձէից լեռները մի և նոյն Սորդուաց լեռներն են»:

Պալով պ. յօդուածագրի այն հարցմանը թէ «մի՞թէ պ. Հայկունին չը գիտէ, որ Սորդիք և Սորձէք մի և նոյն երկիրներն են», — պատասխանում եմ, ոչ, և չեմ էլ ուզուս գիտենալ, որովհետեւ այդ երկիրները մի և նոյնը չեն:

Սորձէքը կամ Սորձայքը Հին-Հայաստանի մի աշխարհը կամ նահանգն էր, որ ունէր 11 գաւառ, որոնցից էին Սորդիք վերին, Սորդիք միջին և Սորդիք ստորին: Այս երեք գաւառները, բոլորը միասին կոչվում էին մէկ անունով Տմբիք, իսկ այժմ Բոհրան:

Հասկանալի է, թէ էլի պարզեմ:

«Բրդերի մի նոր արշաւանք թալանեց Հայոց յորդ: Արտաշէս զիւղը իր ընդդիմադրութեան համար մոխիր դարձաւ» (Այծ. եր. 323):

Ես ասել էի, որ «Արտամէտը գտնվում է ոչ թէ Հայոց Չորում, այլ Վանայ դաշտում»:

Այժմ պ. Բաֆֆին ասում է. «սուտ է «Այծերի» մէջ չէ ասված, թէ Արտամէտը գտնվում է Հայոց ձորում: Ախալ է և այն, թէ Արտամէտը գտնվում է Վանայ դաշտում: Եթէ պ. Հայկունին կամենում է Արտամէտ գիւղի տեղն իմանալ, նա գտնվում է (լաւ լսեցէք) Հայոց Չորի մուտքի մօտ» (Մշակ № 146):

— «Հայոց Չորի մուտքի մօտ» բառերը ես հասկանում եմ ձորին կից, նրա մուտքի մօտ, կամ առ առաւելն մի փոքր այս և այն կողմը: Բայց տեսնենք ի՞նչ են ասում իմ և պ. Փաւստոսի վարժապետների վարժապետները: Հ. Ալիշան ասում է «իբր վեց մղոնաւ հեռի ի Վանայ է Արտամէտը կամ Արտամէտ աւան, գեղեցիկ դաստակերտ Արտաշեսի Բ-ի և զօսարան պարտեղաց նորա»: Հ. Ներսէս Սարգսեան Վանայ շրջակայքը նկարագրելիս Արտամէտը մի և նոյն տեղի վրայ է ցոյց տալիս, այն է Վանից դէպի հարաւ-արեւմուտք, ծովի կշտին *): Մի և նոյն տեղի վրայ ցոյց են տալիս և իմ, վերևում յիշած, թէ հայ և թէ օտարազգի բոլոր բարտեղաները:

Ուրեմն ասելով թէ «Արտամէտը գտնվում է Վանայ դաշտում» ես «սուտ» չեմ:

Հիմի Հայոց Չորի տեղը գտնենք: Այդ երկիրը, որ Արտամէտը կամ Արտամէտը էլ կոչուեցաւ, Վարազայ շղթայի արևելեան կողմումն է, իբրեւ ժամն հինգ: Այս ասում է հ. Սարգսեան, որ իւր ոտքերովը ման է եկել և իւր աչքերովը տեսել: Վանը Վարազայ լեռների արեւմտեան կողմն է, ուրեմն Հայոց Չորը ուր մնաց, Արտամէտը ուր: Միմիայն մի բան. Բաֆֆին այդ դէպքում սխալեցնողը անշուշտ Վանէտից 1849 թուականի բարտեղն է, որ Հայոց Չորի տեղը պ. Փաւստոսի ասած տեղումն է ցոյց տալիս, բայց Վանէտից յիշեալ բարտեղն սխալների մէջ այդ հօ

*) Թէեւ հ. Սարգսեանի գիրքը տպւած է 1864 թուին, հ. Ալիշանի գրքից 11 տարի յետոյ, բայց հ. Ալիշան նրա ձեռագրից օգուտ է քաղել: Հ. Սարգսեան Հին-Հայաստանում ճանապարհորդեց 1843 թուին:

առաջին սխալը չէ: Եթէ պ. Բաթթին այդ բանը ցարդ չը գիտէր, թող գոնէ այսուհետեւ իմանայ: Եւր ի զուր չէր որ ես նրան ասում էի, թէ մի զրքով կամ քարտէզով չը պէտք է բաւականանալ: Պա նման է այն բանին, երբ մի «տիրացու» ասելիս է եղել թէ՛ ինքը կարող է կարգաւ միմիայն իւր սովորած կտակարանի վրայ:

«Շատախում նոր վրդովմունք է ծագել ժողովրդի մէջ: Հոգւոյ վանքի վարդապետը չէ դադարում իր վաղեմի նենգութիւններից» *) (Վայծ. եր. 323):

Ես ասել էի, որ Հոգւոյ վանքը Շատախում չէ գտնվում, այլ Վասպուրականի Անձեւացեաց գաւառում:

Այժմ պ. Բաթթին ասում է. «սուտ է. «Վայծերի» մէջ չէ ասված թէ Հոգւոյ վանքը գտնվում է Շատախում» (Մշակ № 146):

— Պատասխանում եմ յօդուածագրի իրան խօսքերով, — «ստախօսները յիշողութիւն (նոյնպէս և աչք, տեսութիւն) չունեն»: :

«Սուրբ տիրամօր վանքը գտնվում է Վանայ ծովափի ափին Լիմ անապատի հանդէպ, Սորդուաց լեռների մէջ» (Վայծ. եր. 363)

Ես ասել էի, որ յիշեալ վանքը գրանվում է ոչ թէ Լիմ անապատի հանդէպ Սորդուաց լեռների մէջ, այլ Վասպուրականի Ղանուխը կոչված գաւառին մէջ:

Այժմ պ. Բաթթին, ինչպէս ասում են, պոչ է շարժ տալիս ասելով թէ՛ «Վասպուրականի Ղանուխը կոչված գա-

*) Զարմանալի վանք է այդ Հոգւոյ վանքը. նրա վարդապետները միշտ նենգաւոր ու դաւաճան են դուրս գալիս թէ պ. Ծերենցի Ծերլընքում և թէ նրանից մի քանի տարի յետոյ Հրատարակված Վայծերում: Ծան. յօդ.

ւառը միթէ Լիմ անապատի հանդէպ չէ (Մշակ № 146):

— Այո՛, բայց ակն իմ խօսքը անապատին հանդէպ լինելու կամ չը լինելու մասին չէր, այլ այդ վանքի և անապատի Սորդուաց լեռների մէջ չը լինելու մասին էր: Եւր Լիմ անապատ և Սորդուաց լեռներ: Ղանուխ Վանայի քարտէզի վրայ մէկ էլի նայեցէք, պարոն, այն քարտէզի, որը դարձեալ ինձ մատնացոյց էր անում ասելով թէ «Վայկունին պէտք է գիտենայ, որ յիշեալ գաւառը (Ղանուխը) ուրիշ անուններ ևս ունի—Քաջբերունիք, Աղիովիտ, Արձիշակահովիտ և այլն» (և այլն, ուրեմն էլի կան):

— Ո՛վ ասեց, այդ մեծ գիւտը դուք ո՞րտեղից գտաք: Արկնում եմ, դուք գէթ ձեր միակ կտակարանի (Վանայի քարտէզի) վրայ նայեցէք մի անգամ: Այնտեղից մինչև անգամ դուք կը տեսնէք, որ այդ գաւառները թէ իրանց անուններով և թէ՛ տեղերով բոլորովին տարբեր երկիրներ են:

Ասեմ ձեզ թէ դրանք ինչ բաներ են, Վասպուրականը հին ժամանակում 36 գաւառ ունէր, որոց թուումն էին ա. Անձեւացիք, Վանայ լճի արեւելեան կողմը. Բ. Քաջբերունիք — լճի հիւսիսային կողմը. Գ. Աղիովիտ — Քաջբերունիքի քարձր. դէպի հիւսիս. Դ. Արձիշակահովիտ — Քաջբերունիքից ներքեւ, դէպի հարաւ-արեւմուտք: Եւ ո՞նց թէ յիշեալ գաւառը ուրիշ շատ անուններ ևս ունի:

Այս երկիրը (Ջջլամբիկը), որ մեր հին Տմորիք կամ Սորդիք գաւառն է» (Վայծեր. եր. 469):

Ես ասել էի, որ «հին Տմորիքը չէ կարող այժմեա-Ջջլամբիկը լինել, որովհետեւ թէ Ջջլամբիկը (փոքր Աղն բակ) և թէ Տմորիքը տարբեր գաւառներ էին մի և նոյն Սորդայր նահանգում:

Պ. Բաֆֆին այժմ ասում է. «պատմական—աշխարհա-
գրական անունները դարերի ընթացքում զանազան փոփո-
խութիւններ են կրել» — ուզում է ասել, որ ինքը Ջօլամբերի-
կին Տմորիք անուններով սխալուել է, թէև այդ բանը չէ ու-
զում խոստովանել:

Գալով պարոնի այն հարցին թէ «ինչո՞վ հաստատում
է Հայկունին, որ այժմեան Ջօլամբերիք հին Տմորիքը կամ
Աորդիքը չէ», — պատասխանում եմ, շատ փաստերով, որոց մի
առ մի այստեղ առաջ բերելը աւելորդ է, որովհետև ես այս-
տեղ չեմ կարող «աշխարհագրութեան դասագիրք գրել»:

Բայց եթէ յիշեալ փաստերը յօդուածագիր—վիպասա-
նին հարկաւոր են, յայն դէպս թող բարեհաճի մի ստորա-
գիր նամակով դիմել ինձ և ես նրան ցոյց կուտամ:

«Մեր յիշատակարանի մէջ բազմիցս յիշուած Հալէա-
կը Վասպուրականի փոքր Հալէայի կոչւած գաւառը հասնալու է,
որն այժմեան Վանայ փաշալիքի գաւառներից մէկն է: (Սոյն
այս) փոքր աղբակը իր լեռնային դրութեամբ (?) կազմում է
մի բարձրաւանդակութիւն (?) և այլն» (Վայծ. եր. 426):

Ես ասել էի, որ «մի լեռնային բարձրաւանդակութիւն
կազմող փոքր Աղբակը ոչ երբէք կարող է Վասպուրականում
լինել, քանի որ նա Աորձայքումն է և թէ Վասպուրականում
եղածը փոքր Աղբակը չէ, այլ մեծ Աղբակը, որ այժմ կոչ-
ւում է Սէր—Ալպաղ կամ Գարադոյունլու»:

Այժմ պ. Բաֆֆին ասում է. Հայկունին ամեն ինչ
խառնում է միմեանց 'Նախ' Գարադոյունլու (հին Վրնջու-
նիք) կոչւած վիճակը գտնվում է Պարսկաստանում (տես հ.
Ալիշանի «Տեղ. հայոց մեծաց» եր. 57 պրակ 108): Իսկ թէ
մեծ Աղբակը և թէ փոքր Աղբակը գտնվում են Տաճկաստա-

նում: Ուրեմն Գարադոյունլուն և Մեծ Աղբակը տարբեր
երկիրներ են» (Մշակ № 156):

Պատասխանում եմ պ. Բաֆֆին իմ հարցին ուղղակի
չը պատասխանելով, հարցը ինքն է խառնում, 'Նա իւր վէպու-
մը ասում էր թէ՝ «մեր յիշատակարանի մեջ բազմիցս յիշու-
ած Հաղբակը Վասպուրականի փոքր Աղբակը հասկանալու
է»: Ես ասել էի, որ դա սխալ է: Ուրեմն պ. Բաֆֆին
մնում էր կամ իմ ասածը հերքել, այսինքն ապացուցանել, որ
Վասպուրականում եղածը անշուշտ փոքր Աղբակն է (ինչ-
պէս ինքը գրած էր իւր վէպում) և ոչ թէ Մեծ Աղբակը
(ինչպէս ես էի ասել) և կամ խոստովանել իւր սխալած լի-
նելը: Բայց պ. Բաֆֆին զրանցից ոչ մէկն էլ չէ անում:
'Նա կարծում է, որ սխալուելը ամօթ բան է, մինչդեռ դա
ամօթ չէ, այլ ամօթ է սխալը իմանալ և չը խոստովանել:

Արդ՝ մեր պատմական վէպեր գրող «նշանաւոր բանա-
ստեղծը» կամենալով իւր սխալուած լինելը ծածկել, պարտ-
կել, նորանոր սխալներ է գործում: Աւասիկ զրան են ասում
«փոխանակ յօնքը դրստելու, աչքն էլ հետը հանել»:

Պ. Բաֆֆին հ. Ալիշանից առնելով *) ասում է թէ՝
«Գարադոյունլուն գտնվում է Պարսկաստանում: Եւ որովհե-
տև Մեծ և Փոքր Հաղբակները Տաճկաստանումն են, ուրեմն
Գարադոյունլուն և Մեծ Աղբակը տարբեր երկիրներ են»
և, ուրեմն, Հայկունին սխալվում է Մեծ Աղբակին Գարա-
դոյունլու անուններով:

Ըստ երևոյթի այդպէս է: Այդ ասողը Ալիշանն է, որոյ

*) Ի հաջորդ Մակուայ և Պալքը գետոյ՝ կան Ապաճան և Չարան
վիճակը, և է հաջորդ նոցա յեղից Օվաճկայ և է մոտից Երասխայ Գարադոյ-
ունլու վիճակ, յերկրէն Վրնջունեաց (եր. 57 պրակ 103))

մեծ, հեղինակութեան առաջ իսպառ նշանակութիւն չը պիտի ունենան ի հարկէ, ոչ Հայկունին և ոչ էլ Բաֆֆին: Բայց հ. Ալիշանը ինչո՞վ մեղաւոր է, երբ պ. Բաֆֆին չէ հասկանում նրա խօսքերը, երբ նա նրա զրքի մի երեսն է կարգում միմիայն:

Եթէ պ. յօդուածագիրը հ. Ալիշանի զրքի 57 երեսը կարգաւորը առաջ կամ յետոյ, կարգար նաև նոյն զրքի 23 երեսը (Համեմատութիւն հին և նոր դաւառաց Հայոց մեծաց), այն ժամանակ կը տեսներ, որ Վարազդօյունլու անուանով երկու վիճակ կայ: Մինը, ինչպէս ասել էի, պատմական Մեծ Աղբալն է, միւսը պատմական Ղուաշուտ կամ Ղուաշ գաւառն է, (երկուքն էլ մի և նոյն Վասպուրական նահանգում): Այդ անունները և երկիրները միմեանց հետ չը շփոթելու համար, երկրորդի կշիռն հ. Ալիշան գնում է «Վարազդօյունլու առ Աք-չայի» *):

Որովհետև «Վայծերի» մեջ «բազմիցս յիշված Աղբալը Վասպուրականի փոքր (այսինքն Մեծ) Հաղբալ կոչված գաւառը հասկանալու է» որովհետև այդ գաւառին այժմեան անունն է, ինչպէս ասեանք, Վարազդօյունլու (ոչ այն որ Աք-չայի մօտ է), ուրեմն Վարազդօյունլուն և Մեծ Աղբալը ոչ թէ տարբեր երկիրներ են», այլ մի և նոյն երկիրները:

Պ. յօդուածագիրն սխալեցնողը եղել է Պարսկաստանի Վարազդօյունլուն, հին Վրնջունիքը: Վա բոլորովին տարբեր երկիր է և ոչինչ կապ չունէր, և չունի ոչ «Վայծերի» ոչ պ. Փաւստոսի, ոչ էլ իմ ասածների հետ: Վրնջունիք հ. Ալիշան կասկածանքով անուանում է Վասպուրականի Վա-

*) Աք-չայ գետն անուն է, որ ըստ ոմանց Տղմուտը լինելու է: Այդ տեղեւորում մի և նոյն (Աք-չայ) անունով մի լճակ էլ կայ:

լոմփունիք գաւառին, բայց վերջին անունով մենք գաւառներ ենք ունեցել նաև Այրարատեան և Տուրուբերան նահանգներում: Բայց այդ կէտերը ևս պ. յօդուածագրի համար պարզելը իմ նպատակից դուրս է, ախր ես հօ չեմ կարող նրա համար «աշխարհագրութեան դասագիրը գրել»:

Ահա, սրանք էին իմ աշխարհագրական սխալներն, որոնք պ. Փաւստոս բռնել և մի առ մի ցոյց էր տուել: Չը մոռանաք, որ դա այն Փաւստոս—Բաֆֆին է, որ գրում է, թէ ինքը տեսնելով մեր գրականութեան անձեռնհասութիւնը մի վիպասանին օգնելու, անձամբ անձին ճանապարհորդել է: Այդ ճանապարհորդութեան հետևանքն էլ այն է եղել, որ «Վայծերը» ներկայացնում է մեզ որպէս կատարեալ նկարագիր իր պատմական, էսոթերաֆիական և աշխարհագրական ճշգրտութեամբ, որովհետև հեղինակը անձամբ ուսումնասիրել է բոլորը (Սշակ № 145):

Պատասխանում եմ, կամ այս բառերը «տուտ» են, կամ Բաֆֆին եթէ ճանապարհորդել է, լոկ ճանապարհորդելու համար, այլ ոչ թէ ուսումնասիրելու: Եւ այդ նրա համար մի յանցանք չէ, որովհետև, ըստ առածին, ամեն Երուսաղեմ գնացող հօ մղղրսի-հաջի-չի՞ դառնալ:

Վառնում եմ «Վայծերի» այն պատմական կտորներին, որոց ճշմարտութիւնը ես ժխտում էի, իսկ պ. Փաւստոս այժմ աշխատում է ապացուցանել:

Այդ կտորներն են նախ՝ Տիրամօր վանքի *) արեղաների կախարդական գործողութիւնը, երկրորդ՝ մահմէդական

*) Նախկին յօդուածիս այս խօսքերն թէ՛ պ. Բաֆֆին էլ օգուտ բերելով իրան այդ արդար իրականքից երկայն բարակ նկարագրում է ս. Աստուածամօր վանքի ուխտաւորներին, թէպէտ և մի և նոյն նկարագրուածութիւնը արած ունին և պ. Սարգսեանը ս. Կարապետի ուխտաւորներին և թիւնը արած ունին և պ. Սարգսեանը ս. Կարապետի ուխտաւորներին և

նացած քրիստոնեաների ժառանգութիւնը իւր ազգականներին խլուելը և պարսից խաներին կերուխումի ժամանակ հայ եկեղեցւոյ սրբութեանց նախատուելը և երրորդ՝ նախկին հայ կաթողիկոսների կին ունենալը որպէս թէ:

Այսինքն առաջինից:

Ընթերցողը թերեւս յիշում է թէ Տիրամօր վանքի ուխտաւորները «Այծերուս» ինչ տեսակ ոճիրներ էին գործում, այսինքն՝ «վարդապետները վանքի սրբութիւնները տալիս են մղդիսիներին, ժողովրդի մէջ մանածելու, զանազան պայմաններով (զորօրինակ) — երբեմն վառելիք, երբեմն կապալով իսկ երբեմն այն դաշամբ, որ հաւաքած գումարի մի մասը տային վանքին, միւս մասը իրանք մղդիսիները վեր առնէին» (եր. 366):

— Հայի նման կրօնասէր մի ժողովրդի վրայ, շատ հասկանալի է, թէ ինչ վատ ազդեցութիւն կունենայ վերոյիշեալ սրբապիղծ առևտրականութիւնը, ուստի — ասում է Պահլաւ — «ես հիմայ եմ հասկանում քնասակար հետեանքը մի

պ. Աղայեանցը Շամշուղայի ս. Աստուածածնի և Բոլնիսի ս. Գէորգին», — հէնց այս բառերը պ. Փաւստոս «օտիկոմ» է համարում և «հակադրութիւն» գտնում, ասելով՝ եթէ մի և նոյն նկարագրութիւնը ուրիշներն էլ արած ունին, նշանակում է դա ճիշդ է:

— Այո, Բաֆֆին ճիշդ է ամեն տեղ և ամեն ժամանակ, երբ հետեւում է ուրիշներին, վեր է առնում ուրիշներին, բայց հէնց որ ինքն իրանից ուղղում է մի միտք արտայայտել, մի երևոյթ նկարագրել, — այդտեղ նա ընկնում է, մոլորվում է, առ առաւել իւր սեպհական մոլեռանդութեան, իւր կանխալ կարծիքներն արտադրութիւններովն է կերակրում իւր ընթերցողներին: Խօսքս Տիրամօր վանքի նկարագրութեանը մասնաւորելով ես կ'անեմ, որ այդ վանքի ուխտաւորներն նկարագրութիւնում պ. Բաֆֆին կարող էր Աղայեանցին և Սարգսեանցին հետեւել, բայց «վանքի խեղճեր» նրա կարագրութիւնը — թիւերը, խեղճատակը: Պատճառ: — Որովհետեւ այդպիսով աւելի ղեւերն էր հայ հոգեւորականների վրայ ցելքսը, նրան ոճրագործ, հասարակութեան վարուց ու բարուց արականիչ ճանաչեցներ, վանքերը եղբայրագործութեան օրձ քաղովել: — և այդ ամենը սատանան միայն ղեւէ թէ ինչ նպատակով:

Ման. յօդ.

այնպիսի սնահաւատութեան, որ հարկէլ էին ժողովրդի մէջ վանքի «բեղաները» (եր. 367):

— Տիրամօր վանքի խեղճերը հաշմանդամ, վիրաւոր, տարափոխիկ ակտերով վարակված անձինք են: Մի տեղից դէպի միւսը «դրանց մանածելը ժողովրդի մէջ՝ սարսափ էր տարածում և աւելի էր շարժում տեսողների հաւատքը դէպի վանք, և հետեւապէս Բաղնայեան էր ուխտաւորների թիւը: Այս պատճառով վարդապետները ամենևին չէին արգելում, որովհետեւ նրանց հետ կապակից էին վանքի շահերն» (եր. 368):

— «Մի վարդապետ փոքրիկ խաչը ձեռին կանգնած էր «ընկաւորի» մօտ: Նրա (վարդապետի) ձորուէի և շրթունքի ցնցողութենէն երևում էր, թէ աբեղան աղօթում է» (եր. 373):

Ընկաւորը ուշաթափվում է և սկսում է զառանցել, հառաչել: Վարդապետը նրան նպաստում է: Աւայդ ամենը նրանց կողմից կեղծ, շինովի է:

«Վարդապետը դրեց ընկաւորի բերնում փոքրիկ խաչը: Նա (ընկաւորը) ազահ ակտրժակով խաչը ներս է կրնում: Քանի ըրպէից յետոյ վարդապետը ձգում է շղթայից, որին կապուած է փոքրիկ խաչը, և դուրս է բաշում: Ընկաւորը փոքր ինչ սթափվում է: Բայց տակաւին նրա երեսը զարհուրելի է և աչքերն արտայայտում են սարսափելի վրդովմունք: Վարդապետը դարձեալ նրա բերանումն է դնում խաչը, և այս գործողութիւնը կրկնվում է երեք անգամ» (եր. 374):

— «Վարդապետը բացատրեց պատգամախօսի գուշակութիւններ: . . . Յետոյ գուշակողը (ընկաւորը) ընկնում է բոլորովին ուշագնացութեան մէջ: Վարդապետները տանում են նրան, հաւատացնելով (ժողովրդին) թէ նոյն դրութեան մէջ նա կը մնայ մի քարայրի մէջ, մինչև վանքի գալոյց տօնախմբութեան օրը» (եր. 376):

Իբրև ի լրումն այս ամենայն սրբապղծութեանց, «Այս-
ծերի» հեղինակը դուրս է բերում մի վարդապետ, որ երկու
եղբայր բաժանում է միմեանցից: Մինին ուղարկում է Պար-
սկաստան, իսկ նրա կնոջը տիրում է: Նրան բռնաբարում է:
Օւաւակ է ունենում և այդ զաւակն էլ ծովը նետում, խեղ-
դում (եր. 388):

Այս ամեն սրբապղծութիւնքն ու ոճիրներն, բացի վեր-
ջինից, անխուսափելի հետևանք են առաջին կէտին, այս-
ինքն վանքի սրբութիւնը վարդապետաց ձեռքով վարձով կամ
կապալով տալուն: Եթէ «Այսծերի» հեղինակը հէնց այդ
առաջին կէտը ապացուցեց, նրա միւս կէտերն ինքն ըստ ին-
քեան ընդունվում են, եթէ ոչ—փուլ են դալիս:

Արդ՝ յիշածս կէտը հաստատելու համար՝ պ. Փաւստոս
հ. Սրուանձտեանից բաղուածքներ է բերում, բաղուածքներ,
որոնք ինձ յայտնի էին և որոց մասին ես, նախընթաց յօ-
դուածումս, բացարձակաբար ակնարկած էի: Իբրև նախաբան
իւր փաստերին պ. Փաւստոս ճամարտակում է ասելով՝ «իմ
բերած ապացոյցները կը լինին ոչ թէ մի աշխարհականի գը-
րուածքներից, այլ մի յարգելի վարդապետի գրուածքներից:
Սարժեմ վարդապետի վկայութիւնը վանքի մասին մեծ կշիռ
պէտք է ունենայ»:

— Ոչ միշտ, պատասխանում եմ ես, նայելով թէ ո՞վ է
այդ վարդապետը: Բայց որովհետեւ հ. Սրուանձտեանի վը-
կայութիւնը իմ աչքում ևս կշիռ ունի, ուստի ես անպայման
ընդունում եմ նրա վկայութիւնը: Այժմ տեսներ թէ հ.
Սրուանձտեանց ինչ է ասում:

«Ուրուկներու ժողով մը կայ անպակաս այստեղ (խա-
թուն-Տիրամօր վանքում), որ զանազան աշխարհներէ կուգան, և

բանի մը տարի կը ծառայեն, կ'աղօթեն, ու Գիւղացիներէն կը
ղրկուին այս և այն գաւառները ժողովը ընելու բերելու ղե-
շէն՝ ղեկավարուն (այսինքն գիւղացիներին), վասն զի Գիւղացի
Բաժին ըրած էն իրանց վրայ, մէկը՝ Վան քաղաքը և անոր շը-
ջապատի գիւղօրայր, մէկը Բաշգալան, մէկը Պարսկաստան,
մէկը՝ Սուշ, մէկը՝ Տիգրանակերտ, մէկը՝ Պայազիտ միւսը՝ Ե-
րևան, մինչև Վարնոյ և Ախալցխայի կողմերը»:

Պ. Փաւստոսի իւր իսկ յօդուածիցը արտագրածս հ.
Սրուանձտեանի այս պարբերութեան մի քանի բառերն ես
ղիտմամբ գծեցի: Թող պ. Փաւստոսը լաւ բաց անէ իւր աչ-
քերն և տեսնի, որ յիշեալ պարբերութեան մէջ եկեղեցւոյ
սրբութիւններն իսկ կամ հապառվալ տալու մասին մի խօսք
անգամ չը կայ: Եւ թէ ընկաւորներին կամ խեղճերին իրանց
ձեռքին գործիք շինողները ո՞չ թէ վարդապետներն են, այլ
Գիւղացի իրանք:

Պ. Բաժին հ. Սրուանձտեանից վկայութիւն է ա-
ռաջ բերում, այդ մարդուն «յարգելի, լաւ, ընտիր եկեղե-
ցական» լինելը, իւր բերանով վկայում և յետոյ դարձեալ
ճամարտակում՝ «պատմողը վարդապետ է, զգուշանում է»:
Ուրեմն էլ ինչո՞ւն է նրա առաւելութիւնը: Բայց ենթա-
դրենք, որ հ. Սրուանձտեանց «զգուշանում է», այսինքն չէ
ուղում իւր պաշտօնակցաց վարկը ժողովրդի առաջ կոտրել:
Ի՞նչ կասէ պ. Փաւստոս, եթէ ես հայ եկեղեցւոյն թըշ-
նամքներից *) մինի վկայութիւնը առաջ բերեմ մի և նոյն

*) Մենք է բոլոր սրտէ յարգում և ճանաչում ենք Միթարեան ուխ-
տի հարց հայ գրականութեան մատուցած ահագին, անգնահատելի ծառայ-
ութիւնը: Մենք ակնածում և խոնարհում ենք զբանց տոկուն և ան-
ուրիշ աշխատասերութեան և մեծ հմտութեան առաջ, բայց կրօնական
հարցերումը այդ ուխտի հարց՝ մենք բացարձակ թշնամի և հակառակորդ
ենք ճանաչում հայ եկեղեցւոյն: Եւ այդ բանին ապացոյց մենք ունենք

հարցի առթիւ: Ահա կաթօլիկ հ. Սարգսեանի խօսքերն, որ Սրուանձտեանից մօտ 40 տարի առաջ է ասուած: Օձնձայս ուխտաւորաց անխիղճ վարեն ի պէտս իւրեանց *Բիւզակահայ*, այսպէս սահմանեալ ի միջի իւրեանց, օրինօք արդեօք թէ բռնութեամբ և յորոց ժամանակաց հետէ՝ չունիմ ասել: Ամենայն խեղանդամբ և կոյրք և որ անբժշկելի վիրօք են լըցեալ զան ի գիւղս այս գտանել բժշկութիւն, և կեան յողորմութենէ ուխտաւորաց: Օվիրալիցսն զայնպիսիս սովոր են կոչել Տիրամէր կամ Տիրամօր հարած կամ առած: *Նուիրակը* ուխտատեղեոյս համարին նոքին խեղանդամբն, որք ընկերակցութեամբ առն քաջառողջի, հրամանաւ *Բիւզակահայն* ելանեն յայլ և յայլ գաւառս ի հաւաքել զողորմութիւն յանուն ուխտին, և դարձեալ ի գիւղն յինքեանս բաժանեն զայն *Բիւզակահայն* :

ո՞չ թէ միմիայն մեր Այվազովսիկներէ, Չամուռճեաններէ, Թէոդօրեաններէ, Գալիայեաններէ, Նալբանդեանցներէ, Երեյեանցներէ և ուրիշներէ գրուածքներն, ո՞չ թէ, նմանապէս, Հինաւուրց հ. Չամչեանի թէ և Հոյա-կապ, բայց կրօնական հարցերումը աղճատեալ պատմութիւնը, այլ նաև գեռանցեալ օր, գեռ երէկ, գեռս եկած հ. Զարեանաբեանի գրուածքներն, որոց մէջ այդ երկու սուրբ հարց այնքան անվայել, այնքան միակողմանի լեզու են բանացնում զէպի Որոտնեցին և զէպի Տաթևացին, որոնք այնքան աղնիւ տոկոսութեամբ իրանց եկեղեցւոյն գրօշակը ցմա՜հ պաշտպանեցին ընդդէմ կաթօլիկ քարոզչաց—միաբանասերաց: Մի մոլեռանդ Միլեթեան (հ. Գաթըճեանը) աւելի Հեռուն է գնում, իւր Վրաւախնէ կեդծիք և իրանց ճշմարտութիւնք ի բանի վարդապետութեան և պատմութեան գրքոյիկ մէջ, ասելով՝ «սարսուռ կառնու զմեզ, երբ որ կը յիշենք մեր ախանձով իսկ լսածնիս, այսինքն Տեառն մերոյ անօրինութեանց և անոր անարատ մօր սրբազան տեղերը, պատարագի մէջ Առողծոյ սրբոց կարգը Տաթևացեաց և Որոտնեցւոյն անուններուն հանդիսական յիշատակութիւնները, ասանկ (?) անձանց, որոց կեանքը կերբ և զժեռայն ատերութիւն էր Քրիստոսի ճշմարիտ եկեղեցւոյն (այսինքն կաթօլիկութեան) և անոր անդամոց (այսինքն ունիթոններն) դէմ և գրուածքներն ուղիղ վարդապետութեան (գարձեալ կաթօլիկութեան այսինքն) դէմ ուղղակի պատերազմի և խօլական մղորդութեանց (այսինքն հայ եկեղեցւոյն վարդապետութեանց) առատ միջերը:

Մի և նոյն մոլեռանդ անտիարանութիւնը անում է և հ. Վարդան

Այս ամենից յետոյ, ես կարծեմ, ամենքի համար էլ հասկանալի է, որ Տիրամօր վանքում և նրա շրջակայքում կաաւորուած *Գաթակոյ* *) ոճիրների պատճառը, շառժառիթը հայ վարդապետը չէ, այլ ժողովրդի իրան դարաւոր սնահաւատութիւնը, մասամբ և շահախնդրութիւնը: Այս բանը հաստատվում է և նրանով, որ (ինչպէս նախկին յօդուածումս էլ էի ասած) Տիրամօր վանքը հոգեւորականներից բաղկացած միաբանութիւն, կամ վանահայր չունի, այլ դա լոկ գիւղական եկեղեցի է: Տօնի օրերում դալիս է մի վարդապետ, պատարագ է մատուցանում և գնում: Այլ թէ այդ վարդապետը ժամանակաւորապէս յիշեալ վանքում զտնուելիս էլ, ակամայ ենթարկվում է սնահաւատ, բռի ժողովրդի ազդեցութեանը, զրանով նա դարձեալ չը պէտք է դատաւիտուի, ուր մնաց թէ յիշեալ ոճրագործութեանց հեղինակ և զրդիչ համարուի:

Իսկ թէ ժողովուրդը, սնահաւատ ամբոխը, առանց իւր կրօնաւորների զիտութեանը և մասնակցութեանը, շատ անդամ հակառակ այդ կրօնաւորների յորդոր ու պահանջներին, անդամ անէ՞ք ու նզովքին, սնահաւատութեանց մէջ է թար-

խտակարեանց, երբ խօսում է Աւետիք պատրիարքի մասին, այն պատրիարքին, որին Կ. Պօլսոյ Փրանսիական դեսպանը, Ճիզուիթներէ թեւադրութեամբ, Տաճկաստանից բռնութեամբ և յափշտակութեամբ Ֆրանսիա քշեց, ամբողջ տարիներով Մաքսիկայի և Փարիզի բանդերում Հիւժեց ու մաշեց և վերջ ի վերջոյ բռնութեամբ էլ կաթօլիկացեաց, ինչպէս այդ ամենը այն ժամանակվայ դիւանական անժխտելի և գրաւոր փաստերով ապացուցեց Մաքսիս Թօիէն, Փրանսիացի զեմնականը (տես Վերկաթէ դիմակով, մարդը մի գրքոյի, որ չեմ յիշում երբ, տպւած է Կ. Պօլսում Իւթիւճեանի հրատարակութեամբ):

*) Ուրուկները կային Մեծին Ներսէսից շատ ու շատ առաջ, որոց մասին այդ Հայրապետը ապաստանարան շինեց, — . . . և զուրուկս փախստեայտ առնէին, զի մի է նոցանէ յայս փոխեցի Բաբան. . . շուրջ դարձը՝ անպատք և ամայիք, և ծածկոյթ. վէճք և մացառք, ոչ յումեքէ դատար միւթ թարուութիւն թշուառութեանցն: Խորենացի Թեմիզ 1881 զէ. Ի):

Ծան. յօդ.

Թափում, — այդ ամեն մարդ գիտէ, բացի գուցէ «մեր տա-
ղանդաւոր վիպասանից», որին ի գիտութիւն ես մի քանի օ-
րինակներ առաջ կը բերեմ այստեղ այդ առթիւ:

Ալեքսանդրօպօլի եկեղեցում դրուած «եօթն վիրաց»
պատկերի համար՝ հարիւրաւոր գիւղացիներ, ամբողջ գիւ-
ղական համայնքներ մէկգմէկու քինթ ու պռունգ են ջարդոտել:

Ջաւահիր Բուռնաշէթ գիւղի եկեղեցում դրուած
«Աարմիր աւետարանի» տիրապետութեան պատճառով, արիւ-
նայի կռիւներից յետոյ գիւղի կէսը գաղթել գնացել է:

Քրիստոսից շատ ու շատ առաջ Բաբելոնի հնոցում
այրուղ երկից մանկանց մասունքի առթիւ Նուխուայ վիճակի
Ժողովրդոց միջի սնահաւատութեանը վերջ դնել միանգամից
չկարողացան Մատթէոս և Պէտրոս կաթողիկոսներն: 1877-ին
մի վարդապետ (եթէ չեմ սխալվում Թիֆլիզի այժմեան սրբ-
առաջնորդը) հազիւ հազ կարողացաւ Ժողովրդի սնահաւա-
տութեանը եթէ ոչ իսպառ վերջ տալ, գէթ նրան մի փոքր
զսպել, թեթեւացնել:

Պօղոս կաթողի «Յովհաննէս աւետարանչի» պատ-
ճառով ահագին անկարգութիւններ են եղել և քանի-քանի
հոգեւորականներ հալածուել ու նախատուել են սնահաւատ
ամբօրից, Մատթէոս և Պէտրոս կաթողիկոսների նզովք ու
կոնդակներն մինչ օրս ապարդիւն թողին Շիրակայ և Ջաւա-
խէթի հայ գիւղացիք և տղայի ու աղջկայ գլխադինը գոմէշ-
ների փորի տակովն են մատակարարում միմեանց:

60 Թուականներում, Ջէյթունի անցքերի ժամանակ,
Ներսէս եպիսկոպոս վարժապետեանը, մի չնչին, դարդակ
պատճառի համար, քիչ էր մնում թէ ամբօրի կատաղու-
թեանը զոհ գնայ: Եթէ նորին սրբազնութիւնը իսկոյն և

եթ ս. Նորորդութեան եկեղեցին մտնելով չը վեր առնէր
սկիհը և նրա վրայ չ'երգնուր, որ Ժողովրդի ցանկութիւնը
կը կատարէ, հազիւ թէ այսօր մենք այդ արժանաւոր անձին
կենդանի տեսնելու բաղդն ունենայինք:

Այս ամենը ի՞նչ է նշանակում: Այն՝ որ Ժողովրդի մէջ
արմատացած դարաւոր, լաւ կամ վատ, սովորութիւնքն, ծէ-
սերն ջնջելը, նրանց փոխելը վարդապետների կամ կաթողի-
կոսների լոկ կամեցողութիւնից, կամ չը կամեցողութիւնից
չէ կախուած: Հետեւաբար այս կամ այն ոճիւրին, սնահաւա-
տութեանը գլխաւոր շարժառիթ վարդապետներին համարելը
կամ կարճատեսութիւն է, կամ անբարեմտութիւն. պ. Փա-
ւստոս իւր յօդուածումը պատմում է՝ «Արեւանեան նահանգի
վանքերից մէկում տարածուած ձայնը» ալիւրի ամբարներում
իբր կատարուած հրաշքի մասին:

Եթէ այդ վանքը Լճմիածինն է, որ Էքր Բէ Ղաթիւս
ամբարներից երեւանցիներին հաց վաճառել անցեալ սովի
ժամանակ, թող պ. Փաւստոս հրապարակաւ յայտնէ, որպէս զի
ես էլ այդ հարցի մասին իմ ունեցած տեղեկութիւնները
ընթերցողին հաղորդեմ: Իսկ եթէ ուրիշ վանք է, ինչով կա-
րող է պ. Փաւստոս ապացուցանել, որ այդ կեղծ հրաշքի
ձայնը հանողը անպատճառ վարդապետ է եղել, այլ ոչ թէ մի
կրօնամոլ պառաւ, մի մոլեռանդ աշխարհական:

Թող պ. Փաւստոսը մտաբերէ (ինչպէս լրագիրները հա-
ղորդեցին) մի քանի տարի առաջ մի ալեքսանդրօպօլի պա-
ռաւի տեսած երազը: Մարմաշէնի կտին իբր մի սրբի գե-
րեզման լինելուն: Թող նա մտաբերէ նոյնպէս մի քանի ա-
միս առաջ Ախալքալայում մի գուշակող կնկայ լոյս ընկնելուն,
որոյ գուշակութիւնը լսելու համար, (գրում էին) մինչև հե-

ռաւոր Ախալքալաքայ հեռաւոր գիւղերից ժողովուրդ էր գալիս: Ինչ քաջ յայտնի է, որ Ախալքալայի այն ժամանակվայ յաջորդը ամեն կերպ հոգացել է, այդ նանրահաւատութեան առաջն առնել, բայց չէ կարողացել:

Ժողովուրդ, մարդ ասած բաների սիրտը պէտք է որ մի հաւատ, մի վերացական զաղափար ունենայ միշտ: Գա նրա սրտի և հոգւոյն պարարիչ կերակուրն է: Այլք նա տգէտ է, սնահաւատ է, իսկ երբ լուսաւորուի, սնահաւատութիւնը համեմատաբար կը նուազի: Աթէ ուզում էք, որ ժողովուրդը սնահաւատ չը լինի, լուսաւորեցէք նրան, այսինքն նրա սրտին և հոգւոյն համար նոր, աւելի լաւ կերակուր մատակարարեցէք: Իսկ յիշեալ գործարաններ անսնունդ թողնելու ջանք մի անէք, որովհետեւ բնութեան նման մարդուս սիրտը, հոգին ևս դատարկութիւն չէ սիրում, գոյութիւն չ'ունի:

Գալով այն հարցին, որ «Այծերի» տէր-թօղիկը երկակայական անձնաւորութիւն չէ, — պատասխանում եմ, որ պ. Փաւստոս-Բաֆֆին այդ հարցը ի զուր տեղն է զարթեցնում, երբ ես ինքս նրա տէր-թօղիկին հաւանել և հրապարակաւ վկայել էի նախկին յօդուածումս: Բայց այն՝ որ իբր թէ տէր-թօղիկը իւր որդւոյն այնքան ու այնքան ծեծում է, ջրհօրից կան է տալիս, շահախնդրութեամբ խելացնորեցնում է, — այո՛, հէնց այդ մէկ բանի համար ես ասել էի և հիմայ ել ասում եմ. — թողնենք և ազգութիւն և կրօն և դատարարակութիւն ու կոչում. վեր առնենք տէր-թօղիկին իբրեւ մի մարդ, մի հայր, որ ունի կուրծք, սիրտ և թէկուզ ճնճղկի ուղեղի չափ էլ ուղեղ: — Այդ թէ թօղիկի այդ ծրնողական սիրտը, նրա մարդկային խելքը, երբէք չէր կարող իրան որդւոյն (Ստեփանի) հետ այդպէս վարուել չարամտու-

թեամբ: Տէր-թօղիկը կարող էր համոզուած լինել, որ իրան զաւակի հետ այդպէս վարուելով, իրան տղային կը կրթէ, Աստուծոյն պաշտօն կը մատուցանէ, ինչպէս այն կ'ինը, որ Յովհ. Հուսին խարոյկին բորբոքեցնող նորանոր նիւթեր էր մատակարարում: Աթէ այդպէս է, այն ժամանակ, ես կարծում եմ, որ «Այծերի» հեղինակին ուրիշ ոչինչ խօսք չէր մնում դէպի տէր-թօղիկը ուղղել, եթէ ոչ Հուսի նման «ով սուրբ անմեղութիւն» միմիայն բացականչել:

Աւասիկ թէ տէր-թօղիկի ո՞ր վարմունքին ես չէի հաւանել: Պ. Փաւստոս թող այդ վարմունքը մեկնաբանէ հոգեբանօրէն և արդարացնէ, եթէ միայն կարող է: Մարդկային ազգի, ամեն մի անհատ մարդու սրտին և հոգւոյն մէջ հազար և մի պայմաններ կան: Մարդկանց և ազգաց նախապաշարմանց, յիմարութեանց հազար և մի շարժառիթներ կան:

Տաղանդաւոր վիպասանի պարտքն է, աւասիկ, այդ պայմանները և այդ շարժառիթները հոգեբանօրէն բննել, զննել, լուծել, այլ ոչ թէ երկար պրպռոցնելից յետոյ, մէկին դող, միւսին աւազակ, երրորդին կախարդ անուանել ու պըրծնել: Աթէ վիպասանութիւնը միմիայն դրանումն է, այն ժամանակ ամեն մի հայ պառաւ ու աշըգ էլ վիպասան է, ի հարկէ այն զանազանութեամբ, որ վերջիններս չեն հայհոյում այլ զուարճացնում իրանց ունկնդիրներին: Վերջապէս՝ առ առաւելն, այդ տեսակ վիպասաններն կարող են մի ուրիւն էլ լինել: Ա ի լ ի աշակերտ և հետեւող լինել *):

*) Պպ. 150 և Փաւստոս իրանց յօդուածներում անդադար «Թափառական հրէայի» ու «Գաղտնիք Փաղեղի» հեղինակին եւն յիշում փառաբանութեամբ: Ես այդ պարտնեւերին պէտք է նկատեմ, որ Եւթէն Սիւն, թէ իւր ժամանակում, և թէ մանաւանդ այժմ, միանգամայն դատապարտուած է կրթիկոսներից: Պարոններ, այդ կրթիկոսներից, գէթ Բէլլիսկուն էլ է:

Բաժնիկն իրան աչքում հայ վարդապետները կանարդներ են, հայ դրամատիկները աւագակներ են, տաճկահայաստանի ուսում առած երիտասարդները զէվզէկ տիրացուններ են. և նա միշտ փաստեր է գտնում, ստեղծում, հնարում, որոցմով կարելի լինի իւր այդ կանխակալ կարծիքները հաստատել և նա գտնում է, իւր սրտի փափագը միշտ կատարվում է, որովհետեւ—ինչպէս ասում էր «Սաչ. յիշ.» արգոյ հեղինակը — «մարդս շատ անգամ ինչ բանի որ փափագում է խելքն էլ սատանի նման այնպիսի ապացոյցներ է առաջ բերում, որ անպատճառ կատարուի այդ փափագը»:

Գալիս եմ երկրորդ կէտին:

Մահճականութիւն ընդունող քրիստոնեան, բացի նրանից, որ բաւական օժանդակութիւն էր ստանում իր նոր հաւատակիցներից, բացի նրանից, որ նա զբաղվում էր նրանց յարգանքը, և վրէժխնդիր էր լինում իւր հին կրօնակիցներից, եթէ ունէր մէկի հետ ոխ կամ թշնամութիւն, այլ նաև, նա աէր էր լինում քողոք ընդդէմ շարժական և ընդդէմ անշարժ խառնուրդներ, որ պատկանում էր նրա ազգակիցներին: Այլ նստքերով, որ և իցէ գերդաստանի անդամներից մէկը մահճականութիւն ընդունելով, իրաւունք էր ստանում տիրել բոլոր կայքերին, ինչ որ պատկանում էր նոյն գերդաստանին... բացի յիշեալ աշխարհային արտօնութիւններից, որ ստանում էր նոր մահճականութիւն ընդունող քրիստոնեան, նա օրէնքով վայելում էր և այլն (Կարծեք եր. 280):

Աստեղ էի, որ «մահճականութիւն ընդունող քրիստոնեաները ոչ պարսկական, ոչ էլ տաճկական օրէնքով, երբէք

դուք հօ ճանաչում էք, նրա դատողութիւնները, ընդունում էք, ուրեմն բաց արէք այդ կրթական և կարգացէք, որպէս զի կարողանաք եւժէն Սիւսի ո՛վ լինելը իմանալ: Ռուս կրթական բոլոր հատորները ձեռքիս տակ ես չունիմ, ապա թէ ոչ գլուխները ձեզ ցոյց կու տայի: Ծան. յօդ.

իրաւունք չունին, (այժմ, այժմեան ժամանակում), տէր դառնալ ազգակիցների թէ՛ շարժական և թէ՛ անշարժ ժառանգութեանը»:

Իբ դրածը հաստատելու համար՝ «կապալեալ ժամանակակից վէպի» հեղինակը, այժմ վկայութիւններ է առաջ բերում Առաքել պատմագրից և Յարութիւն Տէր-Յովհաննիսեանցի պատմութիւններից, յարակցելով որ վերջինի պատմութիւնը Առաքել պատմագրի շարունակութիւնն է:

Պ. Փաւստոս պիտի գիտենայ, որ Առաքելը 17-րդ դարու պատմագիր է: «Նա պատմում է այն, ինչ որ» ինքն է տեսել կամ լսել, մեզանից մօտ 280 տարի առաջ, թողնելով որ ուրիշներն ուղղեն ու լրացնեն «թերին և թիւրն և այլ սոյնպիսիքն» — որք, ասում է ծերունի պատմագիրը — յիմն տգիտութենէ և ի տկարութենէ, զի դիպեցաւ ինձ այս գործ ոչ ի ժամանակա առոյգ երիտասարդութեան, այլ յողորմելի ծերութեան, վասն զի ծեր էի և յոյժ ցաւագար մարմնով, և ի լուսոյ աչքս պակասեալ, և ի պնդութենէ ձեռքս թուլացեալ դողալը, սոյնպէս և այլոց կարողութեանց տկարացեալ, և մահու հրաւերն հանդէպ աչաց եկեալ հասեալ»:

Իսկ ես ասում էի, որ մահճական աշխարհում այժմ այդպիսի օրէնք և իրաւունք չը կայ: Իսկ երբ չը կայ, այդ խոշոր բառերը ասելու և կրկնելու իրաւունք չունի նոյնպէս և է «ժամանակակից կատարեալ վէպ» գրող վիպասան:

Սիւսի Բաժնիկն կամ Փաւստոսը չէ՛ն հասկանում, որ բոլորովին այլ է օրէնք, իրաւունք և բոլորովին այլ քառուկան, կամայականութիւն, մօլլաների մոլեռանդութիւն և այլն: Աս վերոյիշեալ յատկութիւնները արդեօք մահճական աշխարհներում կան միմիայն, թէ այլ նաև շատ ու շատ քրիստո-

եայ ու լուսաւորեալ աշխարհներում:

Այս կէտը պարզելով՝ «Հայկունին մահմէդական մոլեռանդութեան պաշտպանող է» դառնում արդեօք. ո՞վ է Բաֆֆիի դէպի մահմէդականները ունեցած մոլեռանդութիւնը՝ պարսաւող:

Յուսամ, հարցը պարզուեց: Գալով «Այծերի» այն նախադասութեանը թէ՛ «էլ լէր պարսկաւոր», երբ (պարսից) խաները հարսանիք ունէին, կամ իրանց տօների ժամանակ, ուրիշ շատ կատակերգութեանց թուում, բերել էին տալիս և «հայոց քահանաներ իրանց եկեղեցական սպասով, ստիպում էին պատարագ մատուցանել, կամ այլ ծէսեր կատարել: Ես (Պահրատը) երբէք չեմ կարող մոռանալ, երբ այսպիսի հանդէսներից մէկի մէջ, խանը հրամայեց քահանային ~~սպասարարը~~ դնել շահ Գլխին, շահնաւը դրել նրա վրայ, և ստիպեց տէրտէրին իր քուրճաւոր խնայելուն» (եր. 281),—այս նախադասութեան, այս պոչաւոր և անխիղճ ստախոսութեան մասին ես արդէն իմ կարծիքը նախընթաց յօդուածումս ասել պրծել եմ: Պ. Փաւստոս իմ ասածը չէ հերքում, այլ, ի հաստատութիւն իր ասածին, ինձ մատնանիշ է լինում «մեր մամուլի վերջին փայլներում հաղորդած տեղեկութիւններին թիւրքաց Հայաստանից» և նաև «Ա. Պօլսի հայոց պատրիարքարանի Տեղեկագրի» վրայ:

Պատասխանում եմ, Եւրօպական լրագիրներն, որոնք իրանց յատուկ և զարգացած թղթակիցներն ունեն, շատ անգամ զերծ չէն լինում ստերից, ծայրահեղութիւններից, հակասութիւններից. ո՞ր մնաց թէ մեր լրագիրներն, որոց թղթակից կարող է լինել ամեն մի անցւոր, ամեն մի պատահող մարդ, ամեն մի թնդանօթածիգ սպայ, ամեն մի Շաւարշ

ու Մաւարշ, ամեն մի Բաֆֆի ու Սաֆֆի և այլն: Այդպիսի թղթակիցների զրածներն կարելի է միթէ մի վէպի նիւթ վերցնել, կարելի է նրանց զրածին հաւատ ընծայել: Օրինակ, մենք գիտենք պ. Շաւարշ, (արդեօք Փօրթուգալեանը) Վանից գրում էր հա գրում թէ Գարեգին վարդապետ Սրուանձտեանը մի անպիտան, մի կեղտոտ, մի դաւաճան մարդ է:

Այի և նոյն վարդապետի համար այժմ Փաւստոս գրում է թէ նա մի յարգելի պատուական անձն և ընտիր ու լաւ հոգեւորական է:

— Դարձեալ՝ Աբէլ եպիսկոպոսի (որ վախճանեալ է) մասին որքան ներբողներ չը գրեց, մի ժամանակ, «մեր մամուլը» որին գլխաւոր աշխատակից էր, և է, և՛ պ. Բաֆֆին:

Իայց ահա տեսէք թէ մի և նոյն Բաֆֆին, մի այլ տեղում, ինչեր է գրում մի և նոյն Աբէլ եպիսկոպոսի մասին: — «Աբէլ եպիսկոպոսը բաւական չը համարեց միմիայն եկեղեցական փիլոնի տակ խափել կրօնամոլ ժողովուրդը: Աբէլ եպիսկոպոսը այն խորհրդաւաճառ եկեղեցական է, որ սիմօնականութիւնը Ետրպատականի մէջ վերջին անկարգութեան հասցրուց: Աբէլ եպիսկոպոսը Թաւրիզ դալուց շատ փոքր ժամանակից յետոյ իւր բանի-բանի արտուղի ընթացքներով, բոլորովին դուրս երեցուց հոգւոյ ագահ, արծաթասէր երեսր, սրտի մոլեկան ախտերը, իւր պղտոր խղճմտանքը: Աբէլ եպիսկոպոսը գ(կ)ողոպտեց Թաւրիզս Առաքելոյ և ս. Ստեփաննոս Նախավկայի վանքերը: Եկեղեցական արծաթեայ առօթներից, սրբութիւններից և ս(ղ)գեսաններից սկսեալ մինչև վանքի տարեկան պաշարները բերաւ վաճառեց Խոյ բաղաբում: Խոյ քաղաքից անցաւ նա Սալմաստ նահանգը, ուր

բնակվում են Ատրպատականի հայերի մեծ մասն, Սալմաստայ Փայաջնի (պ. Բաֆֆիի հայրենիքն է) գիւղում յափըռտակեց նա Բարդուղիմէոս առաքելոյ վանքի գ. (կ)այքը, կարասիքը, և օ(ո)սկեայ ու արծաթեայ անօթները, սրբութիւնները, *): Մարդասպան կինն X... գիւղի մէջ ծնեց նրան (Աբէլ եպիսկոպոսին) մի որդի, բայց չը կարողանալով տանել իւր խայտառակութիւնը, երեխան մօր ձեռքով խեղդուեցաւ, (որով, այսինքն այդ մասնաւոր բացառութիւնով—եթէ միայն այն էլ ճշմարիտ է—պարոն Բաֆֆին իրաւունք ստացաւ իւր «Այծերումը» բարոզէլ թէ՛ չայ վարդապետը ապօրինի զաւակ է ունենում և յետոյ ծովը ձգում, խեղդում):

Ղառնանք հարցին:

«Մեր մամուլի տեղեկութիւնքը, ըստ մեծի մասին, անձիշդ և անհիմն են մանաւանդ հէնց նրա համար, որ «վերջին տարիներումս» են գրուել:

Պատերազմի ժամանակ, ինչպէս ասում են, շունը տէրը չէ ճանաչում: Պատերազմի ժամանակ, պ. Փաւստոս, թէ մահմէդականների և թէ ամեն մի ազգի մոլեռանդութիւնը, կիրքը բնական և արհեստական պատճառներով վերջին աստիճանի զրգուվում է և ամեն անօրէնութիւն ու զեղծմունք գործուում: Պատրիարքարանի «Տեղեկագիրն» էլ, աւասիկ, հէնց այդ անօրէնութեանց ու զեղծմանց նկարագիրն է:

Ղուբ, պ. Փաւստոս, վէպ էք գրում, այլ ոչ թէ լրագրի յօդուած, կամ տեղեկագիր: Լրագրի յօդուածները կամ պատրիարքարանների տեղեկագիրները ձեզ համար նիւթ

*) Ես չը գիտեմ թէ որքան ձիշդ են պ. Բաֆֆիի այս գրածներն, միայն հաստատ գիտեմ, որ վանքեր և ամբողջ համայնքներ կողոպտող այդ Աբէլ եպիսկոպոսը վախճանելիս մի սև կօպէկ փող չունէր իւր գրպանում, և գեղե փողը իբրև ողորմութիւն ստանում էր:

պէտք է դառնան միմիայն: Ղուբ մեծ զգուշութեամբ պիտի վերցնէք այդ հում նիւթերն և մշակէք, բնէք, զննէք, հետազօտէք, մի որոշ շրջանակի մէջ դնէք, այլ ոչ ամբողջապէս և կուրօրէն արտադրէք ձեր վէպերի մէջ և բը՛ռ, բը՛ռ բը՛ռ ձեր միանգամայն ջրալի պատմութիւններով ընթերցողէ զահլէն տանէք:

— «Սիրելի Պահրատ (ասել էի նախկին յօդուածումս) վերջ տուէք դուք ձեր դոժինքոտ ու լիւռոտ շրթունքերի այդ անդադրում, պառաւական բռնողներին *):

Սիճեկի կէտերից ամենից աւելի հետաքրքիրը՝ երրորդն է, այն է նախկին հայ կաթողիկոսների կին ունենալը որպէս թէ:

Որովհետև մեր «տաղանդաւոր վիպասանը» իւր վէպերում հայ կրօնին ու հայ կրօնաւորին վերաբերութեամբ անդադար հարցեր է զարթեցնում, ուստի, մեզանից իւրաքանչիւր ոք, ես կարծեմ, կամայ ակամայ մտածում է, որ նա հիմնաւոր կերպով այդ կրօնը և այդ կրօնաւորը ուսումնասիրած է, զէթ այն աղբիւրներից, ինչ-որ մատակարարել է հայ գրականութիւնն ու հայ եկեղեցւոյն պատմութիւնը: Բայց ասե՛ք թէ բանից ինչ է դուրս գալիս:

Պ. Բաֆֆին «Այծերումը» հայ հին կաթողիկոսներին գովում էր այն պատճառով, որ նրանք կին, ընտանիք ունէին, իսկ այժմեան կաթողիկոսներին պարոնը պարսավում էր այն պատճառով, որ դրանք կին ու ընդանիք չունին: Եւ,

*) Ես առ այժմ յետաձգում եմ իմ պատասխանը (մինչև հարկ եղած դեքերը ձեռք բերելու) պ. Բաֆֆիի քրդերի մասին խօսածները վրայ, միայն առ այժմ այսքանս կասեմ, որ կ տ ր ի ճ և աւաղակ բառերը երբէք համանել չեն քրդերի մէջ: Աւագակին քրդերը ասում են զղբ, զաչախ, իսկ կտրեճին բըրըլ, զօբբա:

ուրեմն, կաթուղիկոսների լաւանալը նրանց ընտանիքի մէջն էր գտնուում (եր. 461—465):

— Խոստովանում եմ, որ այս աստիճան խակ, տղայամիտ, վերջին աստիճանի միակողմանի դատողութիւն՝ վիպասան կոչւող ^ն և է մարդուց՝ կեանքիս մէջ՝ ես առաջին անգամն եմ լսում: Բայց ինչ և իցէ: Այդ տղայամիտ կարծիքի առթիւ, նախընթաց յօդուածումն ես հետեւեալ հարցն էի տվել Բաֆֆին:— «Ե՞րբ, ո՞ր դարում և ո՞ր հոգեւորականները իրանց կաթուղիկոսական և եպիսկոպոսական աթոռների բարձերի վրայ բազմած ժամանակ՝ իրանց հետ ախարհից և Երայկայից ունէին իրանց սիրասուն կողակիցներին»:

Այդ հարցման ձիշդ և անմէկին պատասխանը պ. Բաֆֆին այժմ ինչ չէ տալիս: «Նա ուշադրութիւն չէ դարձնում (որովհետեւ հաշիւ չէ) իմ «աթոռակից և բարձակից» բառերին, այլ նա ասում է այն, ինչ որ հայ յետին զիւղացին անգամ զիտէ, այսինքն՝ «սկսեալ սուրբ Գրիգոր Լուսաւորչից մինչև նրա տոհմի վերջին ժառանգը, Սահակ Պարթևը, հայոց կաթուղիկոսների մի ամբողջ շարք, ամուսնացած էին, ժամանակ էին հայրապետական աթոռը, որդին յաջորդում էր հօրը»:

— Ղիշդ է, բայց այդ չէ նշանակում թէ լուսաւորչիք կամ նրա յաջորդները կաթուղիկոսանալիս կին, ընտանիք ունէին, իրանց հետ աթոռակից և բարձակից: Նս կարծում էի, որ պ. Փաւստոս իմ հարցմանը աւելի ձիշդ պատասխան տալու համար, մատնացոյց կը լինէր ուղղակի Պօղոս առաքեալին այն պատուէրի վրայ թէ՛ «պարտ է եպիսկոպոսին միոյ կնոջ այր լինել», բայց պարոնը այդ չէ անում, թերեւ չը գիտէ, չէ ճանաչում այն զէնքը, որով միայն կարե-

լի է իր հակառակորդի հետ մենամարտիլ, այլ նա ուղղակի «սօփիզմներին» է դիմում ասելով՝ «Հայկունու պարտաւորութիւնն է երկուսից մէկը ապացուցանել, ցոյց տալ, որ վերև յիշված կաթուղիկոսական ամբողջ սերունդը ամենեւին ամուսնացած չէ եղել, (!?) և կամ, եթէ ամուսնացած էին, նրանք հայրապետական աթոռը նստելուց յետոյ օրինապէս բաժանվեցան իրանց ամուսիններից»:

Դրանով պ. Հայկունին մի ն ո Ր գ ի լ տ արած կը լինէր մեր եկեղեցական օրէնքն երի մէջ, որ ապաստանը (!?) գոյութիւն է ունեցել մեր եկեղեցու սկզբնական դարերում, որովհետեւ կաթուղիկոսները և՛ ամուսնանում էին, և՛ բաժանվում էին իրանց ամուսիններից»:

— Գլխիս վրայ. ապացուցանեմ ձեզ ես այդ բանը: Նախ՝ հայ կաթուղիկոսները, ով դու պատմական և ժամանակակից կատարեալ վէպէր զրոյ մեծդ Փաւստոս — Բաֆֆի, նախնի հայ կաթուղիկոսները, ասում եմ ես, սկսեալ Լուսաւորչից մինչև Սահակ Պարթևի մահը, սկզբում սոսկ աշխարհականներ էին և որպէս աշխարհականներ այլ և այլ պաշտօններ էին վարում, կին և որդիք ունէին: Իսկ յետոյ, երբ ժողովուրդը դրանց կաթուղիկոս էր ընտրում, նրանք բաժանվում էին իրանց կնոջից և ընտանիքից:

Բանը նրանումն է թէ ինչ և ո՞ր օրէնքի հիման վրայ էր լինում այդ բաժանումը:

— «Նախ և առաջ՝ սովորութեան, որ առաջին և զրլխաւոր հիմունքն է ամեն մի օրէնքի: Նւ աշխարհիս օրէնքներից ամենալաւը, ամենից նպատակայարմարն ու օգտակարը այն է, որ սովորութեան վրայ է հիմնած:

Ընդեօք այս չէ ուղում ասել Պօղոս առաքեալը իւր

հետեւեալ պարբերութիւնում: «նորա, որ զօրէնս ոչ ունին, անձանց իւրեանց իսկ են օրէնք»:

Արիւորդ՝ Վրիստոսի պատուէրներէից մէկում կայ մի այսպիսի պատուէր էլ: «Թէ որ գայ առիս և ոչ ատեայ զհայր իւր և զմայր, և զկին իւր և զորդիս և զեղբայրս և զքոյրս, ոչ կարէ իմ աշակերտ լինել»:

Արիւորդ՝ մեր եկեղեցին, իւր առանձնայատկութիւնները ունենալով հանդերձ՝ ընդօրինակութիւն էր յունական եկեղեցւոյն, որոյ մէջ կուսակրօնութիւնը կար շատ առաջ: Առաջադրուած ասորի եպիսկոպոսներ բերեց Հայաստան, որ իրան օգնեն, աջակցեն քրիստոնէացած ժողովրդին պահպանելու:

Զորբորդ՝ Ս. Սահակը իւր կանոններից մէկում ասում է. «Աւ որք ամուսնութեան են պարապեալք քահանայք՝ բազում անգամ պատաղին ի մշակութիւն, և կանանց իւրեանց հնարին լինել հաճոյ, իսկ ի վանքն Բնակեալն Կուսութեամբ են պարկեպոսեալք»:

Հինգերորդ՝ մեր եկեղեցւոյ կանոնների մէջ մի այսպիսի պարզ կանոն էլ սահմանուեցաւ, որ թէ և առաջնորդների համար է ասուած, բայց անշուշտ մի և նոյն կանոնը պարզադիր կը լինէր և՛ կաթողիկոսացուների համար: Ահա այդ կանոնը: «Առջեցի ընտրեալն յատեան եկեղեցւոյն և խոստացի զանձնանութիւն յմահ: Եթէ ի կանոնեանցն դատուէ իցէ, Բաժանեացի ի նոյն իւրմէ և ի Կանոն և յորդուոյ, ծառայել հոգւոց մարդկան եկեղեցւոյն աստուծոյ *):

Արջայէս՝ վեցերորդ և ամենից պարզ ու դրական

*) Այս (չորրորդ) պարբերութիւնը արտագրուած է մ. Ս. Էջմիածնի ճեմարանի ուսուցիչ գեր. Կիւրեղ վարդապետ Սրապեանի ձեռագիր աշխատութիւնից, որ մի հաւաքածոյ է նախնեաց գրուած քննելից և գեղեցիկ աշխատութիւն է:

օրէնք սահմանած է ինքը Ս. Առաքելը՝ ասելով՝ «որ նուիրէ զանձն իւր Աստուծոյ կոյս, նոյնպէս և մօնօգօն (յունական բառ, որ նշանակում է արեղայ, միայնակեաց) մի իշխեսցի ամուսնանալ» *):

Այս ամենը, ես կարծում եմ, բաւական են հիմն ի վեր կործանելու «մեր տաղանդաւոր վիպասանի» բոլոր, հին և նոր, «սօփիզմները այդ առթիւ, և իւրաքանչիւր մարդու համոզել թէ հայ նախնի կաթողիկոսունք, յիրաւի, իրանց հետ աթուակից և բարձակից չունենին իրանց սիրասուն կողակիցներին և թէ այդպիսի անմիտ վարդապետութիւնը միմիայն Ամիրխանեանցների նման մարդորսները կարող են հնարել, իսկ մեր միամիտ «Մշակ»-ները իրանց էջերում հրատարակել ի զայթագղութիւն հայ ժողովրդեան: Ես իմ խղճի դէմ մեղանշած կը լինէի, եթէ ասէի, որ «Մշակը» դիմաւորէր ի տու թեամբ հայ եկեղեցւոյ հիմունքը խախտել է ուղղում, բայց ես ասում եմ, որ «Մշակը» Բարեպաշտութեամբ, Կաթողիկոսութեամբ, Ամիրխանեանցների հացին կարագ—խղ է բսում և ի զուր տեղը մեզ զայթագղեցնում: Թող զիտենայ «Մշակը», որ չափազանց պարեսրտութիւնը ազիտութեան հետ, նոյնպէս յանցանք է, նա մանաւանդ կրօնական այսպիսի փափուկ հարցերումը: Թող զիտենայ, և որպէս լիակատար տէր իւր օրգանին, իւր Բաժնիների ու մարդորս Ամիրխանեանցների բերնին չափ ու սահման դնէ, ապա թէ ոչ կուգայ ժամանակ, երբ պատմութիւնը նրա ճակատին ևս կը դրօշմէ հետեւեալ սոսկալի դատակնիքը՝ «հարկ է գալ զայթագղութեան, բայց վայ մարդոյն այնորիկ, ոյր ձեռն գայցէ զայթագղութիւն»:

*) Կանոնք Բ. առաքելականք յօդ. 30-րդ:

Պ. Արծրունի, մի փոքր սթափեցէք և մտածեցէք, որ 19-րդ դարումն էր ապրում, որ դուք կարելի է ասել, մի սոսկ կրօնական ժողովրդի հրապարակախօս էք: Մի հաւատաք ձեր Բաֆֆինների և Ամիրխանեանցների ամեն մի ասածին ու գրածին:—

Արեւում ասածներիցս դուրս է գալիս, ուրեմն, որ նախնի հայ կաթողիկոսունք, կաթողիկոսանալիս իրանց կնոջից բաժանվում էին, այո, պ. Փաւստոս, օրինապէս և այդ օրէնքը Աստուածորդւոյն, Նրա առաքելոյն, Ս. Լուսաւորչին և հայ եկեղեցւոյն սահմանած ու մշակած օրէնքն էր և է և պիտի լինի: Պէտք է գիտենալ, որ այն ժամանակվայ մարդկանց, մանաւանդ հայրապետների, համար դրանցից մեծ և սրբազան օրէնք չը կար և չէր կարող լինել: Այնպէս որ յիշեալ հայրապետները և իրանց ընդանիքը,—երկու իսկ կողմն էլ—իրանց ազատ կամքով, աշխարհի համար մեռնում էին և նրանցից իւրաքանչիւրը գնում էր իւր ընտրած ասպարիզումը գործելու: Եւ այդ բանին աւաջին օրինակը տուեց ինքը Մարիամը, որ Ս. Լուսաւորչի կինն էր:

Վալով պ. Փաւստոսի ապահարզան բառին, ես կ'ասեմ, որ այս դէպքում այդ բառի գործածութիւնը աւելի քան ծիծաղելի է, որովհետեւ յայտնի է, որ ապահարզանը, իբրեւ օրէնք, սահմանուած է Մուհամմէդից, որոյ անունն անգամ չը կար քրիստոնէութեան առաջին դարերում: Եթէ պ. Փաւստոս—Բաֆֆին հայ եկեղեցւոյն վերոյիշեալ օրէնքը ուղղում է անպատճառ մի օտար ազգի օրէնքին յարմարցնել, ես նրան կը հաղորդեմ իմ գիտեցածս, որ, իմ կարծիքով, աւելի մօտ և յարմար է գալիս յիշեալ հարցին:

Պրանսիական օրէնսդրութեան մէջ երկու տեսակ օրէնք

կար մի ժամանակ: Մինը, որ կոչվում էր divorce (լուծումն ամուսնութեան), մէկըմէկուց անջատուող այր և կնոջ իրաւունք էր տալիս վերստին ամուսնանալ ուրիշների հետ: Վա է ահա, ապահարզանը: Եթէ ես չեմ սխալվում այդ օրէնքի զօրութեամբն էր, որ Մեծն Նապօլէոնը, հակառակ կաթօլիկ եկեղեցւոյ գլխոյն (Պապին), թողեց իւր կինը և պսակվեցաւ ուրիշի հետ: Նախնի հայ կաթողիկոսներին իրանց կողակիցներից բաժանուիլը, ապահարզանի կամ դիվօրսի հետ ոչինչ առնչականութիւն չունի, որովհետեւ հայ կաթողիկոսը ընտրվում էր, և այժմն էլ ընտրվում է, մինչև ցմահ, իսկ նրա կինը ոչ երբէք պսակուած է ուրիշի հետ:

Պրանսիական երկրորդ օրէնքը, որ կոչվում էր separation du corp (անջատումն մարմնոյ, լուծումն ամուսնութեան), միմեանցից աջատուող այր և կնոջ իրաւունք չէր տալիս ուրիշների հետ, և միւս անգամ ամուսնանալու *):

Աւասիկ, պ. Փաւստոս, հէնց այս վերջին օրէնքը շատ յարմար է գալիս հայ եկեղեցւոյ օրէնքին: Երազիրներից յիշում եմ, որ վերջին տարիներումն, երբ քաղաքական ամուսնութեան հարցը Պրանսիայում զարթեցաւ, divorce-ի և separation-ի մասին բաւական խօսակցութիւն և վիճապանութիւն եղաւ Փարիզի ազգային ժողովում, միայն այդ խօսակցութեանց հետեւանքը ինձ յայտնի չէ: Բայց խօսողներից մեծագոյն մասի տրամադրութիւնը divorce օրէնքը վերականգնելու կողմն էր հակված:

Այսպէս թէ այնպէս—կրկնում եմ զարձեալ—որ ոչ մի

*) Ս. յն այս օրէնքների մասին համառօտ տեղեկութիւնք տես Նոբարի փրանսերէն—հայերէն բառարանում:

հայ կաթողիկոս նոյն իսկ Ղուսաւորչիցը սկսեալ, կին չուներ, երբ կաթողիկոս էր:

Ղրանց որդիքը պարբերաբար թէ և յաջորդում էին հայրերուն, բայց այդ յաջորդութիւնը լինում էր դարձեալ ժողովրդի ընտրութեամբ, երբեմն առանց աւագութեան կամ անդրանկութեան կարգը պահելու: Իսկ թէ ինչի՞ ժողովուրդը անպատճառ կաթողիկոսի որդւոյն էր ընտրում, այլ ոչ թէ ուրիշներին, — ես կարծում եմ նրա համար, որ Ս. Պարիզոր Ղուսաւորչի իւր բոլոր սերնդով հանդերձ՝ հայ ժողովրդի աչքում մի սրբազնացած սերունդ, ցեղ էր, և այն մեծ իրաւամբ: Պատմութիւնից մենք աշկարայ տեսնում ենք, որ, յիրաւի, Ղուսաւորչի բոլոր ցեղակիցները, միանգամայն արժանի էին ժողովրդի այդ աստիճանին յարգանքին և երախտագիտութեանը: Տեսէք թէ բոլոր այդ մարդիկը ի՞նչ աշխարհաշէն, ի՞նչ անձնուէր, հայրենասէր անձինք և ի՞նչ իմաստուն ու պերճ գլուխներ են, որոց հետ հազիւ թէ այն ժամանակ կարող լինէին մրցել ուրիշ ու է ցեղի ներկայացուցիչները:

Եւ այդպիսի հոյակապ անձանց վրայ ոչ ոք, բացի որ և է բաղդատնդիր Բաֆֆիից, չի յանդգնի գրել թէ «հայ հոգեւորականութիւնը, սկսեալ Ս. Պարիզորից, ուսումը, քրքրում են հայ ազգի լերդը և թորը...»:

Ինձ կարող են նկատել, բայց չէ՞ որ մի և նոյն Բաֆֆին իւր «Վայճերումը», աւասիկ, մեծ գովեստով է խօսում մի և նոյն կաթողիկոսների մասին:

Իհնչ, սիրելի ընթերցող, քանի՞ գրօշի կառնեմ ես որ և է Բաֆֆիների գովեստը կամ նախատինքը ում և իցէ դէմ, երբ այդ գովեստն ու նախատինքը հիմնուած է ոչ թէ պատմութեան բարեխիղճ ուսումնասիրութեան վրայ, ոչ թէ խղճի,

համոզմունքի և գիտակցութեան վրայ, այլ շահախնդրութեան, զանազան պրոմէթէոսների թելադրութեան և կամ առ առաւելն, ընդհանրական սպաւորութեան, այս կամ այն կողմից յանկարծ փչուած հողմերի ազդեցութեանը վրայ, հողմերի՝ որոնք մեր Բաֆֆիներն գուցէ իրանք էլ չը գիտեն թէ «ուստի» գան և յո՞ երթան:

— Եւ, աւասիկ, այդ տեսակ մարդկանց, այդ երկարամեայ, ազեղ երեւոյթը, այդ բութ ագիտութիւնը տօնելու համար՝ մեր, թէ և բարեսիրտ, բայց իրանց ժողովրդի և եկեղեցւոյն պատմութիւնը չուսած մարդիկ՝ փողեր են ժողովում, որպէս զի մեր զրականական ա՛ն կ'է՛մ, յե՛ղ ա՛ղ ե՛մ վիճակը տօնեն, մեր բարոյական մերկութիւնը և մեր անձնասիրական ու պատուասիրական զգացմունքներից միանգամայն զուրկ լինելը, աշխարհի հանդէպ հրապարակ հանեն: Ո՞նց չը կրկնես այսանդ մեծ բանաստեղծի գողտրիմաստ տողերը թէ՛

«Ես տեսայ փառքի սուրբ պսակները

Ենարժան ճակտի վրայ սրբապղծած» *):

Ինչպէս էլ որ լինի ամուսնաւոր մարդկանց, կամ նրանց որդւոց յաջորդաբար կաթողիկոսական գահի վրայ բարձրանալը մեր մէջ տեւց մինչև հինգերորդ դարը: Այնուհետև հայ ժողովուրդը, որ Ս. Սահակայ տեսլեանը տեղեակ էր **) ձեռնարկեց իրան կաթողիկոսը ընտրել ուղղակի կուսակրօն անձինքներից, առանց որ և է խտիր դնելու նրանց ծագման մէջ: Եւ ահա, այդ օրէնքն է, որ մինչ օրս

*) Շիլլէրի խօսքերը Վոլէալներն բանաստեղծութեան մէջ:

**) «Թառաջ քան զբազում ժամանակս — ասում է Խորենացին, — երևութապա՛հ նմա (Ս. Սահակայ) է քուն՝ ապագայիցն յայտնութիւնք: Զոր լուեալ նախաբարացն, և գիտացեալ՝ թէ յաստուածային Հրաման է դադարեաց յազգէ՛ն նորա քահանայապետութիւն, յարտասուս հարեալ, աղաւելով՝ զինքն Եանս: Եւ յօդ»:

էլ շարունակվում է մեր մէջ:

Այս ուրեմն «Մշակը կամ նրա գաղափարների ամենամոլեռանդ քարոզիչը» երբ այսօր կանամբի կաթուղիկոս են պահանջում, բացարձակաբար ոտնակոխ են անում հայ ժողովրդի և նրա եկեղեցւոյ դարաւոր օրէնքը և ուրանալով ու ժխտելով այդ ժողովրդի 1500 տարվայ պատմութիւնը, յետոյ են գնում: Յետոյ են գնում և մի և նոյն ժամանակ միամիտներին հաւատացնում թէ նորութիւն և յառաջադիմութիւն են քարոզում:

— Աեցցէ տգիտութիւն և աչքակապութիւն, կամ առ առաւելն յօգուտ մարդորսների կոյր ու ջերմեռանդ ծառայութիւն, այն էլ 19-րդ դարում:

Բայց ենթադրենք, որ մեր Բաֆֆիները, Ճշմարիտ, մեր լաւն են կամենում, որ նրանք մեր Մայր-Աթոռը, մեր եկեղեցականութիւնը բարեկարգել են ուղղում: Այնթադրենք, որ հայ ապագայ կաթուղիկոսը, թէկուզ առաջիկայ տարումը ընտրելին, կանամբի լինի:

— Հարցնում եմ ձեզ, ի՞նչ կը լինի արդեօք Մայր-Աթոռի հալն ու ավալը:

«Մշակն» ու Բաֆֆին հաւատացնում են, որ դա մի գերազոյն դրութիւն կը լինի:

— Տեսնենք: Պատմութեան և մարդկային բնաւորութեանը դիմենք:

Ասորի Բրբելոյի անունը ամեն հայ մարդ գիտէ, այն Բրբելոյի, որ ի շնորհս պարսկական բաղաբականութեան, մեր կաթուղիկոսական գահի վրայ բարձրացաւ մի ժամանակ:

— «Աս (ասում է Խորենացին) ածեալ ընդ ինքեան հանայս անկալուլս անթուժաբար և աւելորդօք և յափշտակութեամբ»

վախճանելոցն վիճակաց վարեալ ամն երիս, որում ասել ոչ հարաջեալ նախարարացն դարձեալ աղաչեն զՎռամ փոխել զնա, և տալ զայլ ոք ըստ իրենց նոցա», այսինքն (գոնեա ես այսպէս եմ հասկանում) նախարարները Վռամից խնդրեցին, որ իրանց մի այնպիսի կաթուղիկոս տայ, որ հայ եկեղեցւոյ օրինաց համեմատ, իւր մօտ տանտիկիներ պահելով վանքը չը կողոպտէ, անժուժ կեանք չը վարէ:

Այս նշանակում է, որ երբ մի կաթուղիկոս, (լինի նա մի Ասորի Բրբելոյ կամ մի հայ ազգի Մարտիրոս, բաւական է, որ նա մարդ է և ունի մարդկային կիրք ու հակում) իրան հետ կին ունենայ կամայ ակամայ պէտք է որ վանքը, եթէ չը կողոպտէ, գէթ աւելորդօք և յափշտակութեամբ վարի:

— «Ամամ գձեղ անհոգս լինել—գրում է Պօղոս առաքեալը առ Աորնթացիս—զի որ անկեն է հոգայ զաւանս, թէ որպէս հաճոյ լիցի տեսան: Եւ որ կանամբն է, հոգայ զայլ խարհիս, ինչ որպէս հաճոյ լիցի հնաճ իւրում:

Առաքելոյ այս խօսքերը ինքն ըստ ինքեան այնքան պերճախօս են, որ, ես կարծեմ, ոչ մի բացաարութեան կարօտ չեն: Այդ բանը գիտնալով և ըմբռնելովն էր, աւասիկ, որ Սահակից յետոյ հայ ժողովուրդը միանգամայն վերջ տուեց կանամբի անձինքներից իրան կաթուղիկոս ընտրելը: Այդ հիման վրայ է, որ մինչ օրս էլ, երբ մի կուսակրօն անձն ամուսնանում է, իսկոյն և եթ եկեղեցական աստիճաններիցը զրկվում է:

Եւ այս բաները միակ մեր մէջ չէր և չէ, այլ նաեւ ուրիշ քրիստոնեայ ազգաց մէջ ևս: Եւ դա ունի իւր թէ՛ տրնտեսական և թէ՛ մանաւանդ բարոյական հիմունքները, որոց հետ ի մօտոյ պէտք է որ ծանօթ լինի մի վիպասան, որ

յաւակնութիւն ունի իւր իսկ գրչով իր գլխին ներքողներ կարգալու:

Այն առիթ մեր լրագրութեան թէկուզ վերջին ամիսներին համարներն և տեսէք թէ ինչ ու ինչ պահանջներ ենք անում մենք մեր ապագայ կաթողիկոսից: Այս երևակայում եմ թէ ի՞նչպէս այդ կաթողիկոսը կարող կը լինի այդ պահանջները սրբութեամբ կատարել, երբ զբաղուած կը լինի իւր կնկնով, և ծանրաբեռնված իւր զաւակների ներկայ և ապագայ հոգսերով:

Բացի վերոյիշեալ հիմունքներից, որով կանամբի կաթողիկոսը հայ եկեղեցւոյ համար, իմ կարծիքով, վտանգաւոր է, կայ և՛ մի այլ աւելի խոշոր վտանգ: Վա ժողովրդի ընտրողական իրաւունքն է, որ կամայ տկամայ պիտի բռնաբարուի, պիտի վտանգուի:

Հայ ժողովրդի մեծ բաղդիցն էր, որ Ս. Պօլիգոր Առասաւորչի սերունդը, բոլորն էլ լաւ և ազնիւ մարդիկ էին, ապրում էին հայրենի, սեպհական երկրի վրայ, բայց եթէ ներանց մէջ լինէր մի Բրքիշոյ, որ Շմուկի կամ Սուրմակի նման մի ժառանգ—յաջորդ ունենար, հարցնում եմ ձեզ, հայ կաթողիկոսութեան վիճակն արդեօք ի՞նչ կը լինէր: Այդ վիճակը ի՞նչ կը լինի մանաւանդ այժմ, այս ժամանակում և այս դարում: Արդեօք կը մնայ մի փոքրիկ բար անգամ այն փառաւոր շինութիւնից (ընտրողական սկզբմունք), որով հայ եկեղեցին պարծեցել է և դեռ պարծենում է յաջա լուսաւորեալ Նւրոպայի, որ այդ սկզբմունքը իւր մէջ ներմուծելու համար, բաց աչքով տեսնում ենք, թէ որպիսի ձիգեր է թափում և դարձեալ չէ յաջողում կատարելապէս:

Այս բաներից կարծես ոչինչ տեղեկութիւն չունին «մեր

տաղանդաւոր վիպասաններն», մեր ազատամիտ «Աշակ» ներսն և մեր «Արշալոյս Արարատեան» ների իմաստուն թղթակից դոկտոր Բ. Խթիւճեաններն *), որոնք, ըստ առաքելոյն, «ողջմտութեան վարդապետութեան ոչ անսայցեն, այլ ըստ իւրաքանչիւր ցանկութեանց կուտեսցեն իւրեանց վարդապետ» ըստ մարմնացելոյ լսելեաց իւրեանց»: Արոնք «և զղինւորսն և զտղէտսն հաւատարիմ համարին ի գործ սպասաւորութեան եկեղեցւոյ, և ջուիր ևս յաճախեալ տողին զինի իւրեանց զմերձաւորացն անուանելոց»: Արոնք «ըմբոստացեալ ճոռումբանեն, մանաւանդ ազգասէր ծնկոտքն, զմարգարէին ի կիր առնուլ զբանն՝ թէ «յընտանեաց զաւակի բո զալն մի արկանեցես» և զայն ոչ իմացան թէ ընդանիս զխաբանութեան հաւաստոյն իտէ»: Արոնք «ի բարձրանալ հրամանացն ի վայր կործանեալ ընդ երկիր բարշեղով փարին պահմային զապականեմ պէս-պէս հնարելով հնարս, զի զիրգ և փափուկը առնիցեն, և առաւել ստացութեամբն զեղուցուն զտունն» (կանոնք Արքայի Սահակայ յաղագս եպիսկոպոսաց):

Այս վերջացրի: «Այծերի» մասին, ինչ էլ որ ասացի, յուսամ, բաւական պարզ էր և շատերին հասկանալի:

Այժմ ինչ մնում է վերջին խօսքս ուղղել դէպի «մեր տաղանդաւոր վիպասանը» կամ դէպի նրա ջատագոյնները:

Այդ պարոնները—ինչպէս իրանց գրուածք ու խօսու-

*) Այդ պարոնը, վերջին օրերումս, կաթողիկոսական ընտրելիներէ մէկ ցանկ էր տպել, որոյ մէջ, ի միջի այլոց, մենք կարեացին նաեւ Բ. Գուան պաշտօնեայ Սերֆիլէն Էֆէնդու, Օտեանի և Մոսկովայի արժ. Յակոբ. քահանայ Սուրբնեանցի անունները:

Արշ. Արարատ. խմբագրութիւնը այդ ցանկը տպելիս, շատ իրաւացի կերպով սրախօսել էր, որ եթէ թղթակիցները չը պատկառէին իրանց սեպհական անունները ևս իրանց ցանկին մէջ դնել, պ. Խթիւճեանը անպատճառ իւր անունը ևս իւր շինած ցանկին մէջ կը մտցնէր:

ածքներինց երևում է — այն կարծիքի են, որ ես իբր թէ Բաթիկի անձին կամ նրա զբաղման վաստակներին թշնամի եմ։ ուղղում եմ, որ նրա վարկը ժողովրդի առաջ կոտորուի, իսկ նրա վէպերը չը ծախուի *):

Պա մի շատ սխալ և կատարեալ պառաւել կարծիք է, որ ոչ մի կրիտիկա չէ վերցնում: ԲաՖֆին և ԲաՖֆիականները թող ուրախ լինեն, որ կայ մի մարդ, որը լաւ թէ վատ, իր հասկացածին չափ, գրում է «մեր տաղանդաւոր վիպասանի» գրուածքների առթիւ և ուրեմն այդ գրուածքների առթիւ ժողովրդի մէջ դէթ հետաքրքրութիւն շարժում և ուրեմն նոցա վաճառմանը ուղղակի կերպով նպաստում: Բայց թէ ինչի՞ իմ գրուածքները, ըստ մեծի մասին, պարսաւանք են դէպի յիշեալ գրուածքները,—պատճառը արդէն ես բացատրեւ եմ: Աս նկատեւ եմ և նկատում եմ, որ պ. ԲաՖֆին

*) Սյդ ստում էր պ. Լէօ: Սյդ ստում է և՛ պ. Փաւստոս, յարակցելով մին և նոյն ժամանակ, որ ես պ. Բաֆֆին Դաւեթ-բէկին՝ զեւզերում աշխատել եմ վտաճաւել մին նոր տեսա՛լ ձեւով, այն է գրքերը զեւզական բերքերն Հնոս փոխարինելով: Սյդ արդարացի տողերն լըսյ ես աւելացնում եմ և այս, որ ես Վալթերին՝ Համար էլ բաժանորդներ եմ գտել և մօտ երկու տարեկ սպասելից յետոյ, Հաղւե Հաղ կարողացել եմ գրքն առաջին Հատորը միմիայն յանձնել բաժանորդներին, իսկ երկրորդ Հատորն մասին, երեւում է, պէտք է դեռ էլն սպասել: Սա մի մեծ անճշտութիւն է ո՛ր և է գրողն կողմից: Եթէ պ. Բաֆ. այս կամ այն պատճառով չէ ուզում իւր վէպն երկրորդ Հատորը հրատարակել, շատ լաւ կանէր, որ կամ իւր բաժանորդներն մնացեալ փոքր վերագարձնէր և կամ իւր տպուած միւս աշխատութիւններէցը ստացած փողն արժէքը փոխադարձէր: Ի դէպ. Վալթերին՝ մասին մեծ քանակութեամբ բաժանորդագրութիւն էր ցրուել պ. Բաֆին ամէն տեղ: Դա վատ չէ, և ուրեմն ոչ այնքան պարտաւելի վարմունք, բայց պարտաւելի է պարոնն այն վարմունքը, երբ Տաճկահայաստան ուղարկած բաժանորդագրութեան նամակներումը դրում էր, որ Հնչեց որ իւր վէպը գուրու եկաւ, Հայերը բաղբաւոր կը լինեն: Բաց յայդմանէ յիշեալ նամակներումը պ. Բաֆ. դործածում էր շատ Ֆրանսերէն բառեր, — ի լրկու, որ պ. Բաֆ. չը գիտէ: Պ. Բաֆ. լաւ չէ արել նմանապէս, երբ Մերկշիօյն՝ Թէ Դուբրովնէն «race maudite» բառերը արտադրել է Վոաչ. Յիշատակաւանի՝ 12-րդ երեսումը, առանց գէթ Թարգմանելու կամ բացատրելու: Թոյլ եմ տալիս նկատելու, որ պ. Բաֆ. ոչ միջին գարեբու պատմութիւնը զեւթ, ոչ էլ

մի ահեսակ բարոյական արբեցութեան է ենթարկված և այդ արբեցութիւնը քանի զնում շատանում և հրէշանում է: Պ. Բաֆֆին օգուտ քաղելով իւր ընթերցողների մեծագոյն մասի հայ ժողովրդեան և եկեղեցւոյն անցեալ և ժամանակակից պատմութեանը անտեղեակ լինելուն, անբարեխղճաբար նըրանց մոլորեցնում և զայթազդեցնում է: Պատմութիւնը, որ զիտութիւններէ մէջ մի մեծ զիտութիւն է, պ. Բաֆֆին իւր ձեռքի խաղադունդն է շինել և անդադար վայր ու վեր ձըգում և հեռը խաղ ու կատակ անում: Վա մահացու մեղք է:

Պ. Բաֆֆին, նայելով իր զարգացմանը, իր զսրովելի ծուլութեանը, իրան շրջապատող հայ կեանքին, երբեք չէ կարող «գրականական հսկայ», «արտակարգ ոյժ», «հայ Տուր-գինեվ» (Շէլլերներն մի կողմ թողնենք) լինել: Աս բնական ան ան ան ան չէ կարող այնպիսի զրուածք տալ, (գէթ ցարդ չէ տուել—հայ ժողովրդին), որ սորա «յաւիտենական ժառանգութիւնը» համարուէր *): Վաս անձնախաբութիւն և յանդուգն անձնավստահութիւն է, որ հեղինակի համար լաւ ապագայ չէ խոստանում: Աւասիկ, հէնց այդ ազեղ անձնախաբութեան արգասիք ես ընդունում եմ այն, որ մեր խղճուկ

«race maudite» ներքի ու ինչ լինելը իմանում է:

«Race maudite» կոչվել է իրենց հանցանքների համար՝
 Ուրբին այդ կողմից ես և նա քվեթե ենք, երկուսս էլ մեղանշել
 ենք: Խօսք տանք, որ մեկս անդամ չը մեղանշենք:

*) Մենք արդէն մասամբ տեսանք թէ ո՛վքեր են, վայոյճերի հե-
րուները։—Հապա որ՜ է իօհնթիւ Հերոս վարդանը։ Դա էլ, սիրելի ընծիբը-
ցող, մի բռն կղակ է Սելջորով ազգանունով, որոյ խերտութիւնը Պայա-
շէտի պահածման ժամանակ, այ՝ Բախչին վեր առաւ եւ մի երեւայական
վարդանի վերագրեց, այն լինելով վարդանին, որոյ թիկղիզում երեւալը,
պատմումս են, թէ մի ժամանակ նաև մեծ ֆուբոր հանց եւ ապա, ի հարկէ,
որպէս մի շինովի տնայ, մեծ Ֆիտաքո առաջացրեց։ Սելջորովի մասին տե՛ս
Մորովցովի «На Апараты» վերնադրով գիրքը, (С. Петербургъ 1883) որ իւր
գրաւէչ, դիւրեմայ եւ օգտակար բովանդակութեան համար, արժէր, որ
մերոնք թարգմանէին եւ յողովդէի ձեռքը տային։

Ծան. յօդ.

Ἦν. 107.

վիպասանը համոզուած է, իբր թէ ինքը, իւր տուտուց վէպերով, կարող կը լինի «մի ամբողջ սերունդ կրթել», առանց ամենահասարակ բաներն անգամ ուսած լինելու *) կարող կը լինի ուրիշին ուսուցանել: Աւասիկ, հէնց այդ յանդուգն անձնավստահութեան արգասիք է և այն, որ մեր ողորմելի վիպասանը ամեն մի քայլափոխում գրեթէ խեղած թիւրում է պատմութիւնը, գիտութիւնը: Ասացէք ինձ (օրինակի համար) պ. Բաֆֆին միթէ չէ՞ր կարող հ. Արուանձտեանի բաւերն (Տիրամօր վանքի ուրուկների մասին) հասկանալ այնպէս, ինչպէս որ նորա գրուած են: Միթէ պարոնը չէ՞ հասկանում գիշացի և վարդապետ բառերի նշանակութիւնը:

Արդօք պ. Բաֆֆին չէ՞ ընդունում, որ գիտութիւնը լոյս է, բարոյականութիւն է, որ գիտնական և լուսաւորված մարդը ընդհանրապէս բարի, առաքինի և պարտաճանաչ է լինում: Եւ ուրեմն այն հայ երիտասարդները, որոնք գիտութիւն և ուսում ունին, չէն կարող հայ ընտանեկան կեանքը պղծել ապականել, որ այդ երեւակայական, անպիտանների չափ ու սահմանի մէջ պահելու համար մեզ հարկաւոր են «ընտանեկան կերպերոսներ **» — հայ պառաւներ:

Արդօք պ. Բաֆֆին ոչ մի պատմութիւն, ոչ մի գիրք չէ՞ր

*) Օրինակի համար, ամենայնայնայն հայ աղբացուն անգամ գիտէ, որ հրէից պատեքի տօնը միշտ լուսնի 14-ին է դալիս, իսկ հայոց Զատիկը հրէից պատեքից երեք, չորս, առ առաւելին եօթն օր յետոյ, ուրեմն ոչ ուշ քան լուսնի 21-ը: Այդ օրերին լուսնը երբէք չէր կարող եղջերաւոր լինել, որպէս զի Զատիկ ճրագալոյցի երեկոյին Տէր-Թօղեկի գալոցից թէ բանդարդած տեղից փախչող Ֆահրատը իրան համար ճանապարհ գտնէր, ինչպէս նկարագրում է «կայծերի», յետին աղբացուից, էլ տգէտ, հեղինակը:

**) Ձեռք յիշում «Մշակի» ո՞ր տարւոյ համարումն էր տպուած պ. Բաֆֆին յիշեալ զբաղարիս յօդուածը:

կարգացել Եւրոսաղեմի Ս. Յակոբայ վանքի հայ միաբանութեան մասին, որ մի օր վերկացաւ (ձիշդ այն օրը, երբ յոյները կամենում էին յիշեալ վանքը հայերի ձեռքից եթէ ոչ խլել, գէթ փողով գնել) և «Մշակի» մէջ ամենասե գոյներով ներկեց յիշեալ վանքն ու միաբանութիւնը:

Արդօք պ. Բաֆֆին իւր իսկ հայրենակիցների (պարսկաստանցի հայերի) կեանքը, նրանց վատ կողմերը աւելի թերի և աւելի միակողմանի, սահմանափակ կերպով պէտք է ուսումնասիրէր, քան մի պատահական, օտարազգի ճանապարհորդ, մի Մէլէշկօ, Վուբրովին, Մասլովսկի և Ռեյնսկի:

Օ՛ սիրելի պարոն, «եթէ ընդ փայտ դալար զայդ առնէր, ընդ չորն զինչ լինիցի»: Վարձեալ վերոյիշեալ յանդուգն անձնավստահութեան շնորհիւն է, որ մեր վիպասանը անդադար, առանց աջ և ահեակ նայելու, նախատում և ծաղրում է, ի միջի այլոց, ամեն մի ազգի, ուրեմն և հայի, ինչդէպէնցիան, նրա «դիպումը», որ ոչ այլ ինչ է նշանակում, եթէ ոչ գիտութեան մի յայտնի պաշար:

Արդօք ո՞վ է «Մշակը», ո՞վ է «Արձագանքը», «Մեղուն», ապագայ «Երբ—Վարը», «Վարժարանը», «Աղբիւրը» (իւր մասնագիտութեանը հոգով սրբով նուիրուած իւր համեստ, գլխաւոր աշխատակցով), — ովքեր են, ասում եմ ես հայ լրագրութեան հին և նոր խմբագիրները:

— «Վիպլոմաւոր» անձինք: Վուբրս է գալիս, ուրեմն, որ զուր ծաղրում էր նրանց, որոնք մեր մտաւոր և բարոյական կեանքի ներկայացուցիչներ և ղեկավարներն են: Ովքեր են մեր դպրոցների տեսուչների և ուսուցիչների նշանաւոր մասը, որոց շնորհիւ մենք ազատուեցանք և հետզհետէ ազատուելու ենք մեր «Տէր-Թօղեկիների» և Վիւղական խալիֆաների ձեռքից:

— «Պիպլումաւոր» անձինք դարձեալ: Ուրեմն դուրս է գալիս, որ դուք ի զուր տեղը յարձակվում էիք մեր Տէր-Թօղիկներ զրայ: «Զօգիկա» մի փոքր լօգիկա ունեցէք, իմ պարոններ:

Այդ թողնենք:

Պ. Բաժիժին իւր ապերասանութեան և արբշտութեան մէջ այնքան առաջ զնաց, որ վերկացաւ և իբրեւ հայ ինդէլէգենցիային ներկայացուցիչ, մեր առաջին հանեց իւր ցընորամիտ, բռնաւոր, փոքրոգի և ստոր յեղափոխական Վարօներն ու Սադօներն, որոնք իբր թէ Նւրօպայի և Ամերիկայի համալսարաններից դուրս եկած «գիպլօմաւոր» անձինք լինէին: Ուրեմն այդ նպատակի համար է, որ բազմաթիւ հայ երիտասարդներ Ռուսաստանի և Նւրօպայի մայրաքաղաքներում, սրանց գէճ ու խոնաւ նկուղներում, կէս կուշտ կէս սոված, տարիներով իրանց կեանքերն են մաշում, թոքերը փրտտեցնում և որպէս չը բացուած ծաղիկ, երբեմն, անհոգի գերեզման գնում...:

Պ. Փաւստոս-Բաֆֆին իսպառ մոռանալով նոյնպէս այն առածը թէ՛ «ձիւնի և սառուցի տակից երբեմն տաք աղբիւրներ են բղխում» իւր շինծու արամազդային բարձրութիւնից՝ բարեհաճեց ծաղրելնա և մի «ալեւոր ծերունկ» ևս, որոյ «Թորոս Առին» ներն, «Արկունքներն», «Թէոդորոս Ուրշտունի» ներն, չը նայելով իրանց այս և այն պակասութեանց, իբանց միջից ցոլացնում են բանաստեղծական խանդ, աւիւն, մաքի կորով, բառերի ոյժ և—որ ամենազխաւորն է—իրանց, բնականից չը շեղող, ձգտումով—տէնդէնցիայով—միշտ և հանապազ կարող են լինին սխմել Բաֆֆիի ցարդ զբաժ և դեռ գրելիք բոլոր «բանաստեղծութիւնների» և «Փոփոքրա-

Ֆիայի» նման ձիշղ զլուրջ վիպասանութիւններէ» վրայ:

Եւ այդ դիտէ՞ք ինչի համար:

—Նրա համար, որ պ. Ծերենց ուսում առած, «գիպ-լոմաուր» անձն է, հայ և օտար զրականութեան հետ ծա-նօթ է, Լւրօպական լեզուների գիտէ, Լւրօպայում և Տաճկա-հայաստանում շարունակ ձանապարհորդող է:

— Զարցնում եմ ձեզ, սրանցից ո՞րն ունեցել է և ունի
«մեր տաղանդաւոր վիպասանը» :

— Գլխազ կուգամ, որ ոչ մէկն էլ:

Ուրեմն՝ ծաղրել և քարկոծել հայ եկեղեցականութիւնը, հայ դրամական ոյժը (ամիրանները և վաճառականները) հայ զարգացած երիտասարդութիւնը, համեստափայլ հայ աղջիկն ու կինը, պատկառելի, աշխատասէր և փորձառու հայ ծերութիւնը, ծաղրել և վիրաւորել հայ ամբոխը,—մէջ տեղում, էլ ուրիշ են մնում:

— Օգնողան «էշի փալան Հասօներ», սատանի եղունգ Սագօներ, «խենթեր», Զուլօներ, Հիւբբիներ և Սաւրգեղցի խաչագող Պետրոսներ, որոնք իրանց էութեամբն, ու գոյութեամբ ոտքից ցզլուխ, նախատինք և անպատկըծիւն են միանգամային մեր զրականութեանը, այն զրականութեանը, որ չը նայած իւր համեստ ու անշուք դիրքին, այնու ամենայնիւ ունի մի «Վէրք Հայաստանի» — ճշմարիտ մարդասիրի սրտի անստերիւր փղձուկներ, և հլաշունչ մորմոքներ մի «Յարու թիւն և Սանուէլ», որ աշխատում է սիրտը և ուղեղը մէկզմէկու հետ հաշտեցնել և «Ժողովրդի հաստացած ու մամռակալած գլխուն» լսելի անել իւր երգերն թէ՛

Մի համբոյր կը տայի սազիդ սիմերին,

Բայց դու հաւատում ես սուտ սուտ խօսքերին,

Քեզ սուրբ Սարգիսը շնորհք է տուել

Պարզափայլ հայերէն խաբէլ, առաջ ասել:

Գրականութիւն, որ ունի առօրեայ, կենսական «Հացի խնդիր»-ներ, վերջապէս գրականութիւն, որ ունի մի համաշխարային հանճարի թարգմանութիւնները, այն հանճարի, որոյ նմանը հազիւ թէ աշխարհս ունենայ, թէպէտեւ

«Հարկը և հազար անգամ կը դառնայ

Աշխարհս գուցէ բեռներէ վրայ»:

Սեպտեմբերի հայ գրավաճառանոցները և ամենքի մօտ, դարակներում, կոյտ առ կոյտ դարսուած կը տեսնէք Շիլլերի «Ալէկէլմէն»-ը, «Գօն—Կարլսը», Շէքսպիրի «Օտտելլօն», Գէթթէի «Հէրման և Տօրօդէան»,—ինչի՞ պէտքերը չեն ծախվում, ձեռքից ձեռք չեն խլվում:

— Որովհետեւ մեր կարգացողների ճաշակը փչացրին զանազան «Փնջերի» նման անբանաստեղծական «Բանաստեղծութիւններ», կեղծ ու շինովի «Խենթեր», «Խաչագողի (ափեղցիփեղ) Յիշատակարաններ» և «էշի փալան Հասօներ», «սասանի եղունգ Սագօներ», Սարօներ, Գուլօներ և Հիւբբիներ:

Արդեօք ինչի՞ հայ կարգացողների սրտում արձագանք չը գտաւ մի հրապարակախօսի հրաւերը՝ Շիլլերի հայ թարգմանչի սեպհական բանաստեղծութիւնքը տպագրելու համար՝ մի-մի ու զոհել,—ինչի՞...

— Ի՞նչ մտխառն...

Բայց ինչ էլ որ լինի և երբ էլ որ լինի, ապագան ճիշդ մարիտ գեղարուեստի, առողջամիտ, անշամանդաղ մտքերի և հանճարների կողմն է և նրանց անխախտելի նեցուկը:

Պատարուն յուսով ակընկալենք, ընթերցող, այդ գեղեցիկ և ցանկալի ապագային, իսկ մինչև դրա գալը՝ մեր միակ

միջութարութիւնը թող լինի ուրախ մեծ բանաստեղծի գողարիկ տողերը՝

«Придетъ, придетъ и наше время
И наши внуки въ добрый часъ
Изъ міра вытѣснятъ и васъ».

*
* *

Այս չափ և վերջին խօսք:

«Աղբիւրի» խմբագրութիւնը հայ հասարակութեանը խոստացաւ պ. Բաֆֆի 25 ամեայ աշխատութեան նշանաբանը պարզել, պ. Փաւստոսն էլ ինչ գէժ սպառնաց պ. Բաֆֆի «Խաչագողի Յիշատակարանը» պաշտպանել:

— Հա առ ուրախ եմ: Մի հայ հին հեղինակ *) ասել է, «գաղափարների բաղխումից, ընդհարումից մարդկանց մշտեքը կը սրուին»:

— Ապա ուրեմն, պարոններ, ցկրկին տեսութիւն:

*) Կարծեմ եղնեկը:



Վ.Ե.Բ.:

ТИПОГРАФІЯ

Михаила Осиповича Волчкина

Принимаетъ разнаго рода заказы на Русскомъ, Армянскомъ, Французскомъ и Татарскомъ языкахъ книгъ, брошюръ, бланковъ, вѣдомостей, журналовъ, линованіе частныхъ конторскихъ книгъ, счетовъ и разныхъ другихъ, касающихся до Типографіи заказовъ, которые исполняются въ возможной скорости и съ полною аккуратностью; а также имѣются для продажи канцелярскія и чертежныя принадлежности по весьма умѣреннымъ цѣнамъ.

Адресъ: Въ Типографію М. О. Волчкина.

БАКУ.

ԿԻՐՈՍ ԵՆԹԱԴԻԿԱԿ Ե ՄԻԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

23/II
- 42 9.

ՀՀ Ազգային գրադարան



NL0685885

